ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ДУБЛЕТ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԹՈՒՄԱՆ [illegible]ՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա 92394



*ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007*

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 891.981.0
ԳՄԴ 83.3 Հ
Հ 854

Հովհաննիսյան Սուսաննա
Հ 854 Թումանյանը և հայ գրողների կովկասյան
ընկերությունը: Եր.: «Գիտություն», 2007, 340 էջ:

Հ $\frac{4603010000}{703(02)-2007}$ 2007 ԳՄԴ 83.3Հ

ISBN 978-5-8080-0681-2

©ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

# Հեղինակի կողմից



Նվիրվում է Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆի
կրտսեր դուստր Թամար ԹՈՒՄԱՆՅԱՆի և
ակադեմիկոս Էդվարդ ՋՐԲԱՇՅԱՆի հիշատակին

Աշխատությունը տպագրության են երաշխավորել
բանասիրական գիտությունների թեկնածուներ
Մագդա ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆԸ և Հասմիկ ԱԲԵՂՅԱՆԸ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների դոկտոր

Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2007

*Այս գրքի հրատարակությունը ուրախությունից բացի իմ մեջ առաջացնում է ցավ ու ափսոսանք, քանի որ այն չտեսավ այս աշխատանքի նախաձեռնողը, ղեկավարն ու ոգևորողը: Դեռ նոր էի հանձնել ասպիրանտական ընդունելության քննությունները, երբ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը, որ նաև ՀՀ ԳԱ ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենն էր, առաջարկեց ուսումնասիրել XX դարի 10-ական թվականների գրական կյանքի պատմությունը Թումանյանի ղեկավարությամբ, ներկայացնել մեծ բանաստեղծին իբրև նախախորհրդային շրջանի Հայ գրողների միության անփոփոխ նախագահ, որին ընտրելիս XX դարասկզբի հայ գրողների բազմանդամ ընտանիքի անդամներից և ոչ մեկի մտքով չէր անցնում դեմ քվեարկել: Թե՛ ընկերության ընդհանուր ժողովներում և թե՛ վարչության նիստերում Թումանյանը ընտրվում էր միաձայն, որովհետև նա իր գրչակից ընկերների ղեկավարը չէր, այլ ընկերը, եղբայրը, բարեկամը: Թումանյանն այդ ընտանիքի հայրն էր, իսկ ծնողին, հարազատին չեն ընտրում, հարազատին սիրում են և վստահում: Ջարդի և կոտորածի ծանր տարիներին, երբ գրական ֆոնդը դատարկ էր, իսկ հայթայթված չնչին գումարներն էլ հայ որբերի խնամքին էր տրամադրվում, երբ գրողները չէին կարողանում վճարել նույնիսկ տարեկան 5 ռուբլի անդամավճարները և կարիք ունեին նյութական օգնության, Թումանյանը անգամ փողոցում գրողներին հանդիպելիս իր բազմանդամ ընտանիքի ապրուստից բաժին էր հանում նրանց և փորձում էր համոզել, որ այդ ինքը չէ, այլ գրական ֆոնդը, որպեսզի չպարտավորեցներ, բարոյապես չճնշեր, չդիպչեր գրողի և մարդու նրանց արժանապատվությանը: Նա հրաժարվում էր Հայաստանի և Վրաստանի իշխանություններից իրեն տրամադրված դրեթե բոլոր նպաստներից՝ հօգուտ հայ կարիքավոր գրող-*

ների. որբերի ու սովյալների, վաճառում էր հեղինակի իր իրավունքը և բաժանում երեք մասի՝ Ռուսաստանի սովյալներին, Վրաստանի երկրաշարժից տուժածներին և հայոց որբերին, ոչ մի կոպեկ տուն չէր տանում և իր հարազատ երեխաների բազմաթիվ կարիքներին պատասխանում էր. «կա՛ ոչ»: Այո՛, Թումանյանը մեծ և անառարկելի հեղինակություն էր իր դրչակից ընկերների համար, հավասարապես սիրելի բոլորին, միշտ հաշտություն ու խաղաղություն տարածող: Եվ երբ նա վատառողջ ու չափից դուրս բազմազրաղ լինելու պատճառով հրաժարվեց գրողների ընկերության նախագահի պարտականություններից, վարչության նիստերում հաճախակի դարձան վեճերն ու անհամաձայնությունները, և 10-ամյա գոյությունից հետո՝ Թումանյանի՝ նախագահի պաշտոնը թողնելուց մի քանի ամիս անց, ընկերությունը դադարեց գործելուց: Ծանր էր համազգային ու հասարակական հոգսերի այն բեռը, որ ստանում էր իր ուսերին Թումանյանը, ծանր էր, դրա համար էլ հյուծեց բանաստեղծին թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես: Հյուծվեց ու սպառվեց, բայց լուսս տալով կյանքը արեց հրապարակ «ոտքի կոխան ամենքի», բայց ապրեց՝ տանելով ու ներելով, սիրելով և ամենուր բարություն սփռելով: Եթե Թումանյանը ինքն իրեն բնութագրելու լիներ, նա միայն մի բառ կօգտագործեր՝ «մարդ», այնպես, ինչպես Շեքսպիրի Համլետն էր բնութագրում իր հորը, ինչպես բանաստեղծն ինքն էր անվանում իր հորը՝ Տեր-Թադևոսին: Ամբողջ կյանքում և ստեղծագործության մեջ Թումանյանը, որոնելով մեծատառով «Մարդու», «անարատ մարդու» իդեալը, իր կյանքով և գործով է մատնացույց արել մարդ «ամենաբարձր կոչմանը» արժանանալու ճանապարհը և ապացուցել, որ ամենից դժվար բանը կյանքում մարդ լինելն է: Ոչ բոլոր անհատներին ու տաղանդներին է տրված մարդ լինելու արվեստը: Տաղան-դը նույնպես կարող է չար լինել: Իսկ Թումանյանին ի վերուստ տրված էր «բարի քնար», մարդ լինելու բարձրագույն կոչում:

Այս խոհերը ինձ հիշեցրին Էդ. Ջրբաչյանի այն միտքը, թե Թումանյանով ամեն մարդ չի՛ կարող և չպե՛տք է ղբաղվի: Եթե Թումանյանի մասին դներ մի ակնարկ կամ հոդված գրած հեղինակը, ընդունակ լիներ վատ արարքի կամ ունենար ոչ չիտակ, ան-

*հանդուրժող վերաբերմունք ցանկացած մարդու հանդեպ, Էդ. Ջրբաշյանը ասում էր. «Ափսո՜ս, որ նա զբաղվել է Թումանյանով»: Իհարկե, ամենայն հայոց բանաստեղծը ամենքինն է, քանի որ ապրում էր ամենքի հետ միասին, բայց Թումանյանագիտության մեծ երախտավորը՝ Էդ. Ջրբաշյանը կարծում էր, որ միայն բարձր նկարագիր ունեցողը կարող էր զբաղվել Թումանյանով: Գրականագետը իր բազմաթիվ աշխատություններում և բանավոր խոսքում հաճախ էր մեջ բերում Թումանյանի խոհերը մարդու մասին. «Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ... լավ մարդը – Էդ բնության, ավելի ճիշտ մարդկության մեջ ամենակատարյալ և ամենաազնիվ երևույթն է և ամենահազվագյուտ»:*

*Մարդկային այդպիսի նկարագիր ուներ ականավոր գիտնականը, որի պարտքի ու պատվի ճանապարհներից է եղել Թումանյանագիտության ասպարեզը, նրան մտահոգում էր այդ ասպարեզում առկա յուրաքանչյուր բաց: Իր աշխատանքային կենսագրության առաջին օրից մինչև վերջին դիրքն ու տողը, նույնիսկ վերջին ստորագրությունը՝ մահից մի օր առաջ, վերաբերում էր Թումանյանական թեմաներին, խնդիրներին ու նրա հիշատակը հավերժացնող թանգարանի հոգսերին ու նրա ժառանգներին: Իր վերջին «Թումանյանի գրական ժառանգությունը» գրքի հիշատակարանում Էդ. Ջրբաշյանը գրում է. «Ուրախ եմ, որ ես ուժ ունեցա նվիրվելու այդ չմշակված թեմաներին և մարելու իմ պարտքը, առանց որի իմ տասնամյակների աշխատանքը թերի կլիներ շատ կողմերով»:*

*Սակայն հեղինակի իսկ խոսքերով հոգու այդ պարտքը կատարելը եղել է հոգեկան մեծ վայելք: Էդ. Ջրբաշյանը այն գիտնականներից էր, որոնք իրենց երջանիկ են զգում միայն այն ժամանակ, երբ աշխատանքը ոչ մի ազատ րոպե չի թողնում: Նրա համար գործ չանելն ու գոյություն չունենալը միևնույն բաներն էին: Այդպես էլ կյանքում «արձակուրդ» չգնաց: Խոսքը միշտ խիզախ է գործից, իսկ Էդ. Ջրբաշյանը իր բազմաթիվ ուսանողներին ու ասպիրանտներին լավ է սովորեցրել թումանյանական դասը՝ «Գործն է անմահ, լա՛վ իմացեք, որ ապրում է դարեդար»: Խոսքը գործ դարձնելը դժվար է: Էդ. Ջրբաշյանը իր ղեկավարած բոլոր գիտաշխա-*

*տողներին սովորեցնում էր խոսքը գործ դարձնել, նույնիսկ խառնակ ու դժվարին օրերում կարողանալ սիրով ու նվիրումով ծառայել ընտրած մասնագիտությանը: Նա իր կյանքով ապացուցեց, որ աներկրայելի երջանկությունը մշտանորոգ խանդավառությունն է, մտքի աշխուժությունն ու երիտասարդի եռանդը գործի հանդեպ: Ասում են՝ չկա ավելի գեղեցիկ չռայլություն, քան չնորհակալության չռայլությունն է: Ես չհասցրի իմ այս աշխատանքի տպագրված ազդօրինակը նվիրել էդ. Ջրբաշյանին չնորհակալության, հարգանքի ու ակնածանքի, սիրո և խոնարհումի խոսքերով:*

*Չհասցրեցի այս գրքով չնորհակալություն հայտնել բանաստեղծի չնորհաշատ դուստրերից կրտսերին՝ Թամար Թումանյանին, որի տրամադրած արխիվային նյութերի չնորհիվ նաև գրվեց այս աշխատանքը: Ինձ համար մեծ պատիվ էր վայելել Թամար Թումանյանի բարյացակամ վերաբերմունքը, անձամբ ճանաչել նրան, զգալ նրա մայրական հոգատարությունը ոչ միայն իմ, այլև բոլոր նրանց հանդեպ, ովքեր ջերմությամբ ու սիրով էին մոտենում Թումանյանական թեմաներին, ովքեր «հոգու վայելք» էին համարում Թումանյանական աշխարհին առնչվելը, գեթ մի քար Թումանյանագիտության մեջ ավելացնելը: Նրանց երկուսի մահն էլ ինձ համար մեծ ցավ է, անփոխարինելի կորուստ, ինչպես Թումանյանը կասեր՝ «թանկ վշտերից»:*

*Ահա թե ինչու չնորհակալության և խորին ակնածանքի զգացումով ես այս ուսումնասիրությունը նվիրում եմ բանաստեղծի դստեր՝ Թամար Թումանյանի և՝ իմ գիտական աշխատանքի ղեկավար, ակադեմիկոս էդ. Ջրբաշյանի հիշատակին:*

# Ներածություն



*Գրականության պատմությունը հենվում է նաև գրական ընթացքի խորաղնին վերլուծության վրա, իսկ վերջինիս բազմակողմանի ու ճշմարիտ պատկերումը անհնար է առանց գրողների, գրականության ու արվեստի հրատապ, արդիական ու գործնական խնդիրներով մտահոգված մտավորականների համատեղ գործունեության, նրանց տարբեր տիպի միավորումների, գրական ընկերությունների գործունեության վերլուծության:*

*Յուրաքանչյուր գրողի ստեղծագործության բազմակողմանի քննության համար անհրաժեշտ է պարզել գրական կյանքում, գրողների ընտանիքում նրա ունեցած դերը, այդ կյանքի ընթացիկ խնդիրների հանդեպ նրա վերաբերմունքը, ժամանակի գրական բանավեճերի բնույթն ու բովանդակությունը: Չէ՞ որ ամեն մի գեղարվեստական երկի ստեղծման ընթացքի ուսումնասիրությունն կարևոր պայման է այդ ստեղծագործությունը ճիշտ հասկանալու և վերլուծելու համար: Իսկ այդ ընթացքը նաև գրական կյանքի բաղադրիչ մասն է: Գրողների ընտանիքում կատարվող քիչ թե շատ նշանակալի իրադարձությունները, գրողին չրջապատող ազգային-քաղաքական, հասարակական կյանքի փոփոխությունները չեն կարող իրենց կոնկրետ ազդեցությունը չունենալ նրանց գեղար-վեստական ստեղծագործության վրա:*

*Գրողի և կյանքի մտերմության չափը, ինչպես ասում են՝ «կյանքի և գրողի ամուսնությունը», հասարակական միջավայրի հետ ունեցած գրողի չփումների աստիճանը, որոշակիորեն ազդում են արվեստագետի ոչ միայն աշխարհայացքի, այլև ճաշակի ու գեղարվեստական ըմբռնումների վրա:*

*Գեղարվեստական գրականության ուսումնասիրության ուղիներից մեկն էլ գրողի և կյանքի, գրողի և հասարակական միջավայրի կապի հետազոտումն է, որը չի կարող անտեսել գրողների*

միավորումների պատմության հետազոտությունը, ինչը ոչ միայն երկրորդական չէ, այլև հաճախ էական նշանակություն է ձեռք բերում:

Տարբեր ազգերի մշակութային կյանքում լինում են գրական-գեղարվեստական ընկերություններ, որոնք հսկայական առաջադիմական դեր են կատարում թե՛ տվյալ ժողովրդի պատմության մեջ, նրա գրականության ու արվեստի զարգացման և թե՛ տարբեր ազգերի մշակույթների մերձեցման գործում: Հայ իրականության մեջ այդպիսի դեր խաղաց Թիֆլիսի Հայ գրողների կովկասյան ընկերությունը, որը հայ մշակույթի պատմության մեջ առաջին խոշոր և մինչև XX դարի 20-ական թվականների սկիզբը միակ պաշտոնական միավորումն էր. այն իր եռանդուն գործունեությունը ծավալեց դարասկզբի երկրորդ տասնամյակում:

Յուրաքանչյուր կոնկրետ ժամանակ, հասարակական կյանքի ցանկացած ոլորտ իր պայմաններն է դնում գրականության առջև, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է XX դարի 10-ական թվականներին, որոնք ոչ միայն մեկ հարյուրամյակի, այլև հայ ժողովրդի ողջ պատմության համար շատ նշանակալից ու ծանր տարիներ էին՝ ազգային աղետ, ցեղասպանություն, սոցիալական ցնցումներ, ազգային պետականության վերականգնում, ազդամիջյան ընդհարումներ և այլն... Պատահական չէ, որ այդ շրջանում են ստեղծագործել XX դարի հայազգի լավագույն արվեստագետները ու գրողները: ԵՒս աշխատանքը մի փորձ է ցույց տալու, որ հայ գրողների համերաշխ ընտանիքը ձգտել է դառնալ ժամանակի չունչը, միասնական ջանքերով հաղթահարել ժամանակի խոչընդոտները, արվեստագետի բարձր կոչմանը հավատարիմ մնալով՝ կատարել է ժամանակի հրամայականը:

Գրական այս խոշոր հաստատության պատմությունը, որը միաժամանակ 1910-ական թվականների ողջ համահայկական գրական կյանքի պատմությունն է, առայսօր առանձին քննության նյութ չի դարձել: Չկան նրա գործունեությունը արտացոլող որևէ հոդված ու մենագրություն կամ աշխատություններ մեջ որևէ գլուխ, առանձին հատված: Չի գրվել նաև ընկերության նախագահի՝ ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի կյան-

քի վերջին երկու տասնամյակի գիտական կենսագրությունը, կյանքի տարեգրությունը, որոնք անխզելիորեն առնչվում և ճուլված են Կովկասյան ընկերության պատմությանը: Այս իմաստով Թումանյանագիտության մեջ կարևոր ներդրում է Արամ Ինճիկյանի աշխատությունը, որը, սակայն, ընդգրկում է Թումանյանի կյանքի առաջին երեսուն տարին և գործունեության միայն մեկ տասնամյակը: Արժեքավոր է հատկապես գրականագետ Լուսիկ Կարապետյանի «Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (դրվագներ)» ուսումնասիրությունը (Ե., 1992):

Բայց չատ են նաև նույն ասպարեզում չպարզաբանված խնդիրներն ու պրոբլեմները:

Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը ստեղծվել է Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում պահվող ընկերության արխիվի՝ վարչության հերթական և արտակարգ նիստերի 138, ընդհանուր ժողովների 28 արձանագրությունների, վարչությանն ու նրա նախագահին ուղղված 1 000-ից ավելի նամակների, դրությունների և այլ փաստաթղթերի, ինչպես նաև Թումանյանի և նրան ժամանակակից գրողների անձնական արխիվների հսկայական քանակությամբ նյութերի (հոդվածներ, գրած և ստացած նամակներ, ծոցատետրեր, պատառիկներ և այլն) օգտագործմամբ:

Յուրաքանչյուր հինգշաբթի կամ շաբաթ ընկերության կազմակերպած գրական երեկույթների ու դասախոսությունների մասին հարուստ նյութեր են պահպանվել ինչպես ժամանակի մամուլում՝ համառոտ կամ ընդարձակ հաղորդումների ձևով, այնպես էլ ընկերության արխիվում՝ օրվա հերթակալների՝ (այսպես էին կոչվում գրական երեկոների պատասխանատու անձինք) վարչությանը տված հաչվետվությունների և զեկուցումների ձևով, նաև ընկերության անդամների ու նրանց մասին եղած հուշերում, Հովհ. Թումանյանի, Վրթ. Փափազյանի, Լեոյի, Վ. Տերյանի, Ալ. Շիրվանզադեի, Ն. Աղբալյանի և ընկերության մյուս անդամների ժառանգության մեջ: Ամեն մի երեկույթի համար կազմվում էր «ԳՈՐԾ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ», որի մեջ պահվում էր հերթակալի զեկուցումը, ուր համառոտ նկա-

բազրվում էր երեկույթի ողջ ընթացքը, չարադրվում էր դասախոսության նյութը, թեման, բովանդակությունը, վերջինիս չուրջ ծագած գրական բանավեճը, նշվում էր, թե երբ և որտեղ է կազմակերպվել գրական երեկոն: Յուրաքանչյուր գործում պահվում էր նաև քաղաքի ոստիկանապետին ուղղված գրությունը և պատասխան թույլտվությունը՝ տվյալ զեկուցումը, ասուլիսը կազմակերպելու համար: Այդ «Գործից» ենք տեղեկանում նաև ունկնդիր հասարակության, վաճառված տոմսերի քանակի, երեկոյի դրամական մուտքի ու ելքի և այլնի մասին: Հերթակալների զեկուցումների, նրանց վրա պահպանված ընկերության անդամների ստորագրությունների չնորհիվ ստույգ կարելի է ասել, թե մեր գրողներից ով որ երեկույթին է ներկա եղել, ինչպիսի մասնակցություն է ունեցել և այլն:

Հայ գրողների կովկասյան ընկերության՝ մոտ մեկ տասնամյակ տևած գործունեությունը հայ նոր գրականության պատմության ամենափայլուն էջերից է, որն արտահայտում է միաժամանակ Թումանյանի հասարակական աշխարհայացքի, գրական ու մարդկային նկարագրի լավագույն կողմերը, նրա գործի համազգային արժեքն ու կշիռը:

Սույն աշխատության նպատակն է փաստական ամուր հիմքի վրա շարադրել հայ մշակույթի պատմության և հայ գրականության ամենանշանավոր ընկերություններից մեկի, հայ գրողների առաջին խոշոր ու պաշտոնական միավորման ամբողջական պատմությունը, բացահայտել Հովհաննես Թումանյանի գրական-հասարակական գործունեության այն բոլոր ոլորտները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Հայ գրողների կովկասյան ընկերության հետ, որոշ չափով լրացնել և քննության նյութ դարձնել այդ տարիների (1912-1921) բանաստեղծի կենսագրությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ



# Հայ հասարակական միավորումները և Թումանյանը մինչև Հայ գրողների կովկասյան ընկերության ստեղծումը

# Հայ հասարակական ընկերությունների պատմությունից

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը իր ստեղծումով և գոյությամբ չարունակությունն էր այն երկարատև ու համառ պայքարի, որ մղել են հայ գրողներն ու հասարակական գործիչները արվեստի ու գրականության զարգացման, լուսավորության տարածման միջոցով ժողովրդի կրթական-մշակութային մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև գրողի դրությունը (թե՛ նյութական, թե՛ բարոյական առումով) հասարակության մեջ ապահովելու համար:*

*Հայ հասարակական առաջին ընկերությունները սկսեցին երևան գալ XVIII դարի վերջից: Ընդ որում, նրանք ձևավորվեցին նախ արևմտահայ իրականության մեջ, Պոլսում, Զմյուռնիայում, ապա Բոմբեյում, Կալկաթայում, Վիեննայում, ԱՄՆ-ում, Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում, Շուշիում, Բաքվում և այլուր: Դրանցից հիշատակության արժանի են «Լուսավորչաց Եղբայրություն» (1781), «Արշարունյաց» (1812), «Օճանսփյուռյան» (1815), «Ուսումնական», «Սյունյաց» (1841), «Արագածունյաց», «Արամյան» (Վիեննայի, 1843), «Արարատյան» (1845), «Համազգյաց» (1846), «Արամյան» (Պոլսի, 1846), «Նարեկյան» (1846), «Վերածնության Թանգարան» (1847) ընկերությունները:*

*Անցյալ դարի 50-60-ական թվականները ինչպես հայ նոր գրականության, այնպես էլ հայ թատրոնի կազմավորման շրջանն էր, հայ ժողովրդի՝ որպես ազգի կազմավորման շրջանը: Այս տարիներին 40-ական թվականների համեմատությամբ ազգային ընկերությունների թիվը զգալիորեն աճեց: Ստեղծվեցին «Մեսրոպյան եղբայրություն» (1847) միությունը, «Հայկական թատերական ընկերությունը» (1857) Պոլսում, «Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը» (1864) և այլն:*

11
Ա 92394

70-80-ական թվականներին հայ մշակութային-լուսավորական հիմնական կներ և հասարակական միավորումներ ավելի քիչ են ստեղծվում, քանի որ գնալով մեծանում էր մամուլի դերն ու տեսակարար կշիռը: Բայց այն ընկերությունները, որոնք արդեն գործում էին, կամ նոր էին ստեղծվում, շարունակում էին պահպանել իրենց առաջադիմական նշանակությունը: Այնուամենայնիվ, ազգային-հայրենասիրական, կրթական-լուսավորական ընկերություններ հիմնադրվում են նաև այս շրջանում հայության ամենատարբեր հատվածներում: Դրանցից իրենց գործունեությամբ Պոլսում նշանավորվեցին հատկապես «Արարատյան» ընկերությունը (1876), «Տնտեսական միություն Հայոցը», «Միացյալ ընկերություն Հայոց» միավորումը (1881), որը կազմավորվեց «Արարատյան» (1860), «Դպրոցասիրաց-Արևելյան» (1879), «Կիլիկյան» (1879), «Ազգանվեր Հայուհյաց» (1879) ընկերությունների միավորումից: Հայաշատ մյուս խոշոր կենտրոնում՝ Թիֆլիսում, ստեղծվեցին «Հայերեն դրքերի հրատարակության Թիֆլիսի ընկերությունը»՝ հետագայում՝ «Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերություն» (1880), ապա՝ «Կովկասի հրատարակչական ընկերություն», «Հայոց բարեգործական ընկերությունը Կովկասում» (1881), «Գեղեցիկ արվեստը խրախուսող կովկասյան ընկերություն» (1873), «Գեղարվեստական» ընկերությունները: Մոսկվայում սկսեց գործել «Հայրենասերների միությունը» (1882), իսկ ԱՄՆ-ում առաջացան հայրենակցական միություններ՝ «Հյուսեյնիկի ուսումնասիրաց» (1888), «Բալու Պաղին գյուղի ուսումնասիրաց» (1890), «Մորենիկի ուսումնասիրաց» (1890), «Խարբերդի Փերչենճ գյուղի ուսումնասիրաց» (1891), «Մալաթիո կրթասիրաց» (1904) ընկերությունները: Այս շրջանում թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ գրական-հասարակական գործիչներին մտահոգում էր հայության երկու հատվածների մերձեցման, կապի խնդիրը: Փորձեր էին արվում համատեղ ջանքերով հիմնել այնպիսի ընկերություններ, որոնք ծառայեին համազգային նպատակների: Խոշոր գումարներ են հանգանակվում արևելահայերից՝ հայության արևմտյան հատվածում ընկերություններ կազմելու համար:

Ընկերությունների և հասարակական կազմակերպությունների դերը կարևոր է բոլոր ազգերի կյանքում և բոլոր ժամանակնե-

*րում: Սակայն դրանց նշանակությունը անհամեմատ մեծանում է պետականություն չունեցող փոքր ազգերի համար: Դարեր շարունակ հայ ժողովուրդը վերևից հոգացող չունենալու պատճառով ստիպված է եղել հասարակայնորեն անհրաժեշտ բոլոր հարցերը լուծել ներքևից, ինքնուրույն: Ինչպես հայ կյանքի բոլոր բնագավառները, այնպես էլ գրականությունն ու արվեստը երբեք չեն զգացել պետական որևէ աջակցություն կամ հոգացողություն: Մի ամբողջ դար հայկական կյանքի արմատական վերակառուցման ծրագրերը առաջադրում և ձգտում էին իրականացնել կամ հասարակական զանազան ընկերություններն ու կազմակերպությունները, կամ կուսակցություններն ու անհատ գործիչները: Դեռ 1812 թվականից հայերեն առաջին աշխարհաբար թերթը՝ «Դիտակ Բյուզանդյանը», դնում էր ազգօգուտ միությունների պահանջ: «Արշարունյանցի» հիմնադիրները պայքարում էին գրական-հասարակական-լուսավորչական ընկերություններ կազմակերպելու համար: Այս իմաստով նշանակալից են հատկապես Հակոբ Տյուզի հոդվածներն ու գործունեությունը: Սակայն ընկերությունների նշանակության հարցը մեզանում առաջին անգամ հատուկ ուշադրության արժանացավ և լրջորեն արծարծվեց «Հյուսիսափայլ» ամսագրում, հատկապես 1859, 1862 թվականների համարներում: Ստեփանոս Նազարյանը իր ժողովրդից պահանջում էր բարձր գիտակցականություն դրսևորել նաև հասարակական միավորումներ հիմնելու գործում: Հրապարակախոսի՝ համազգային ընկերություններ հիմնելու կոչը արձագանքեց հայության ամենատարբեր հատվածներում: «Կռունկ հայոց աշխարհի» ամսագիրը, նկատի ունենալով Նազարյանի «Առաջարկություն մի ընդհանուր հայկական ընկերություն Ռուսաստանի մեջ, վասն բարեկարգելու չքավոր հայերի նյութական և բարոյական կյանքը» հոդվածը, գրում է. «Ամենայն հայ մարդ, որ փոքրիշատե հասկանում է մեր այժմյան վիճակի թերությունքը, պետք է, որ նմանապես հասկանա և մի այսպիսի հայկական ընկերություն հաստատելու կարևորությունը»[1]:*

*Լեոյի հավաստիացմամբ հենց 1860-ական թվականների սկզբից ռուսահայերի մեջ սկսվում է այդ հասկացողության հե-*

դաշլիջում. հասարակութեան մտքի մեջ հետզհետե հաստնանում է ավելի ընդարձակ կազմակերպութիւններով և ավելի բազմակողմանի ծրագրով գործելու գաղափարը[2]:

Այսպիսով, անցյալ դարի 60-ական թվականներից արդեն զգացվում էր ղեկավար դեր ունեցող մեկ ընդհանուր միութեան կարիքը, միութիւն, որը կարողանար ապահովել կապը ինչպես հայութեան երկու տարբեր հատվածների, այնպես էլ տարաբնույթ ընկերութիւնների միջև և մղեր նրանց մի ընդհանուր նպատակի՝ ազգի մշակութային զարգացմանը: Այդ մասին են գրում ժամանակի գրականութեան պատմաբաններ Լեոն, Հր. Աճառյանը[3]:

Իհարկե, այդպիսի խոշոր ու հզոր կազմակերպութեան ստեղծումը հեշտ իրագործելի չէր: Բայց չպետք է անտեսել վերը նշված փոքր միավորումների նշանակութիւնը, որոնք որոշակի դեր խաղացին հայ մշակութային կյանքում: Այդ ընկերութիւնների դերը պետք է գնահատել իբրև ժողովրդի ինքնագիտակցութեան գալու, գարթոնքի արտահայտութեան ձևերից մեկը: Գործելով անջատ, գտնվելով նյութական անբարենպաստ վիճակում՝ թեպետ նրանք չկարողացան իրականացնել խոշոր, հասարակական նշանակութիւն ունեցող գործեր ու նպատակներ, բայց զգալի չափով նպաստեցին կրթութեան ու լուսավորութեան տարածմանը: Այդ ընկերութիւններից առաջին կանոնավոր ընկերութիւնը՝ «Արշարունյանցն» էր միայն մտահոգված գրականութեան զարգացման, գրականութիւնը ժողովրդի մեջ տարածելու և գրքերի հրատարակման գործին նպաստելու խնդրով: Հրատարակչական բնույթ ուներ նաև Զմյուռնիայի «Արագածունյաց» ընկերութիւնը: Սակայն չկար զուտ գրական բնույթ ունեցող ընկերութիւն, թեև հաճախ կրթական միութիւնների ոչ միայն մասնակիցները, այլ նաև հիմն.ադիրներն ու կազմակերպիչները գրողներ էին: Նրանցից աչքի ընկան Մ. Պեշիկթաշլյանը, Ռ. Պատկանյանը, Մ. Թաղիադյանը, Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանցը, Ա. Արփիարյանը, որոնք ոչ միայն իբրև գրողներ, այլև իբրև գրական-հասարակական գործիչներ մեծ դեր խաղացին հայ մշակույթի պատմութեան մեջ:

Զգտելով հայ ժողովրդին առանց դավանանքի խտրութեան համազգային նպատակների շուրջը համախմբելու գաղափարի իրակա-

նացմանը՝ Մ. Պեշիկթաշլյանը իր ընկերոջ՝ Սրապիոն Հեքիմյանի հետ միասին հիմնեց «Համազգայց» բարեգործական ընկերությունը: Մ. Թաղիադյանի անվան հետ է կապվում Կալկաթայի «Արարատյան» ընկերության կազմակերպումն ու գործունեությունը, Մ. Նալբանդյանի անվան հետ՝ Պոլսի «Երիտասարդների ընկերությունը» (Թադվորյան խմբակցություն), պահպանողականների կողմից «Դռնամիջյան հերետիկոսներ» անունով հորջորջված խմբավորումը: Ա. Աբելիսարյանի դերը հսկայական էր Պոլսի «Արարատյան», «Միացյալ ընկերություն հայոց», Ն. Ռուսինյանի դերը՝ «Այրարատյան» ընկերությունների պատմության մեջ: Բազրատ Նավասարդյանի հիմնադրած «Կովկասի հայոց բարեգործականի» ամենաեռանդուն գործիչներից մեկը դարձավ Գաբրիել Սունդուկյանը:

Սակայն ո՛չ անցյալ դարի 50-60-ական թվականներին, ո՛չ էլ հաջորդ տասնամյակներում գեղարվեստական գրականությունը մեղանում չի ինքնորոշվում, չի առանձնանում, այլ շարունակում է ենթարկված մնալ հասարակական մտքին և նրա հոսանքներին: Ահա թե ինչու, ի տարբերություն թատրոնի, կերպարվեստի, երաժշտության, նոր գրականությունը՝ որպես հայ մտավոր կյանքի ինքնուրույն բնագավառ, չունեցավ իր միավորումը, ընկերությունը, որտեղ կարող էին քննության առարկա դառնալ և լուծվել միայն գրականությանը վերաբերող խնդիրներ:

## Գրական միավորումներ ստեղծելու փորձեր

Հայ իրականության մեջ գրական բնույթի առաջին ամենախոշոր ընկերությունը եղել է «ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ», որը հիմնվել է Թիֆլիսում 1912 թվականին: Մինչ այդ եղել էին արվեստի և գրական խմբակներ ստեղծելու, պաշտոնական միավորումներ և ընկերություններ կազմակերպելու փորձեր հայության տարբեր հատվածներում:

50-ական թվականներին, երբ հայ մտավոր կյանքի կենտրոնը դարձավ Մոսկվան, այստեղ ստեղծվեց «Գամառ-Քաթիպա» (1854)

*խմբակը, որն իր գրական բնույթով առանձնանում էր ժամանակի հայ զանազան միավորումների մեջ: Այն ղեկավարում էր Ռ. Պատկանյանը: Ընկերության անվանումը կազմված էր նրա երեք հիմնադիրների անունների սկզբնատառերից (Գ. Քանանյան, Մ. Թիմուրյան և Ռ. Պատկանյան): Խմբակի պարապմունք-ներին մասնակցում էին Քերովբե Պատկանյանը, Գևորգ Դոդոխյանը, Հարություն Միրիմանյանը: Նյութական օժանդակություն էին ցույց տալիս Ք. Քանանյանն ու Մ. Թիմուրյանը: Այս խմբակը մի յուրատեսակ օղակ էր Խ. Աբովյանի, Դորպատի հայ ուսանողության և «Հյուսիսափայլի» գործունեության մեջև: «Համառ-Քաթիպան» հիմնականում գրական միություն էր, թեև զուգահեռաբար խմբակը արծարծում էր ազգային-ազատագրական պայքարի տրամադրությունների արթնացման խնդիրներ: Պաշտպանելով կյանքի և գրականության սերտ կապի ու միասնության դաղափարը՝ նրանք գրողին առաջադրում էին կյանքի հրատապ խնդիրներին արձագանքելու, հայերենասիրական բովանդակությամբ գրական երկեր ստեղծելու պահանջ: Ռ. Պատկանյանը Պետերբուրգից Գ. Քանանյանին ուղղած 1855 թ. սեպտեմբերի 7-ի նամակում, խոսելով ընկերության հրատարակելիք տետրերի մասին, ասում է, որ դրանց բովանդակությունը կազմող ստեղծագործություններում օտարի լծի տակ տառապող հային պիտի քարոզվի ոչ թե անդորը կենցաղ, ոչ թե հնազանդ «կրոնասեր քրիստոնյայի վարք», այլ «... ամեն մի դորա մեջ պարունակած հոդվածը թող կարողանա արծարծել նոցա սրտի մեջ եթե ոչ ուղղակի կերպով հայրենասիրությունը, այլ գոնե թող հիշեցնեն նոցա կորցրած երջանկությունը: Թող կամաց-կամաց սովորի պաղարյուն նայել այն մահվան վերա, որ նա կարող է ստանալ՝ զոհելով անձը ազգի ազատությանը»[4]:*

*Նկատի ունենալով այս՝ գրական խմբակը ծրագրում էր ներկայացնել տարբեր ազգերի ազատատենչ մարտիկների՝ Գուստավ Ադոլֆի, Վիլհելմ Տելլի, Բոցարիսի, Դմիտրի Դոնսկոյի և շատ ու շատ ուրիշների կյանքը. «Իմ կարծիքով, – դրում է Պատկանյանը, – լավ է նկարագրել ապստամբ ավազակների կյանքը, զորօրինակ՝ Պուգաչովի, Ստենկա Ռազինի, Օտրեպևի, քան թե գեր-*

*մանական կյանքից առած մեղր ու կարագով ծեփած և սերով կոկած էռնեստներու, վոլդեմարներու և դյուվալներու»[5]:*

*Գրական այդ խմբակը պայքարում էր ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով նոր գրականության համար : Նոր գրականությունը սիտի ստեղծվեր նոր լեզվով: Հանդես գալով աշխարհաբարի պաշտպանությամբ՝ «Գամառ-Քաթիպան» իր հրատարակած առաջին իսկ տետրի բնաբանը ընտրեց Կարամզինի «Գրիր այնպես, ինչպես խոսում են, խոսիր այնպես, ինչպես գրում են» խոսքերը: Գրական բնույթի առաջին միավորումը հենց սկզբից առաջադրում էր գրավոր և բանավոր խոսքի համապատասխանության պահանջ, ելնում էր առաջին հերթին ժողովրդի և գրականության շահերից, գրականությունը ժողովրդին մոտեցնելու և ծառայեցնելու կարևորագույն խնդրից: Սակայն այս միության գործունեությունը երկար չտևեց: Տետրերի հրապարակումը, որոնցից միայն հինգը լույս տեսան երեք տարում, 1857-ին դադարեց: Գրական խմբակի անդամները հավակնություն չունեին կարծելու, թե իրենց կհաջողվի իրականացնել ողջ ծրագիրը և հասնել ցանկալի, ընդհանուր նպատակին, քանի որ միջոցներն ու հնարավորությունները շատ սուղ էին: Ռ. Պատկանյանը, որի ուսերին էր ծանրացած խմբակի բոլոր հոգսերը, գրում էր. «Բայց մենք եթե չհասնենք էլ մեր նպատակին, գոնե կմոտենանք, հնարը չիկա, որ հետևողներ չունենանք»[6]:*

*Եվ, իրոք, նրանց գործը ունեցավ իր հետևորդները, հանճինս «Հյուսիսասփյուռի» հիմնադիրների, Մոսկվայի և Պետերբուրգի հայ ուսանողության, Անանիա Սուլթանշահի, Կարապետ Եզյանցի, Գրիգոր Արծրունու և շատ ու շատ ուրիշների:*

*«Գամառ-Քաթիպայի» գործունեության դադարեցումից մի տարի անց՝ 1858 թվին, Մոսկվայում Միքայել Նալբանդյանի մասնակցությամբ ստեղծվեց ուսանողական մի ընկերություն, որի աշխատանքներում տեղ ունեին նաև գրականության ու արվեստի հարցերը: Այս ընկերության ամենագործուն շրջանը տևեց մոտ հինգ տարի: Մոսկովյան հայ մտավորականների գրական հավաքույթներից շատերն էլ տեղի էին ունենում Անանիա Սուլթանշահի՝ Մ. Նալբանդյանի մտերիմ ընկերոջ ու բարեկամի տանը:*

60-ական թվականներին գրական-մշակութային կյանքի նոր աշխուժություն է նկատվում Պետերբուրգի հայության շրջանում: Հայտնի են երիտասարդ մագիստրոս Կարապետ Եզյանցի տանը կազմակերպված հավաքույթները (1864): Ազգային-մշակութային և կրթական-լուսավորական խնդիրներից զատ նաև գրական հարցեր արծարծող այդ երեկույթների մշտական մասնակիցները դարձան Գրիգոր Արծրունին, Մարտիրոս Սիմոնյանցը, Ռուբեն Ջալալյանցը, Գևորգ Եվանգուլյանցը, Գևորգ Բաբայանը և ուրիշներ: Այդ խմբակցությունը նույնպես չվերաճեց գրական ընկերության:

XIX դ. վերջին տասնամյակներում հայության արևելյան հատվածի հայ մշակույթի գլխավոր կենտրոնը դարձավ Թիֆլիսը, որովհետև այն, Լեոյի խոսքերով. «...թեև նույնպես գաղթականություն էր, բայց մի գաղթականություն, որը նախ շատ խոշոր էր և երկրորդ՝ շատ մոտիկ էր հայի հայրենիքին»[7]: Ստ. Նազարյանը նույնպես հասարակական հաստատությունների և ընկերությունների գործունեության համար ամենահարմար տեղը համարում էր Թիֆլիսը: Եվ, իրոք, հենց Թիֆլիսը դարձավ ինչպես մեր մշակույթի, այնպես էլ հայ տարաբնույթ ընկերությունների կենտրոնը:

Անցյալ դարի 70-ական թվականներին հայ գրական-հասարակական գործիչները, մասնավորապես Ա. Արասխանյանը, Ս. Շահազիզը, Ղ. Աղայանը, Գ. Արծրունին մեծ սրտբությամբ զնում էին հայ կյանքի մտավոր և նյութական կողմերի վերափոխման խնդիրը: «Մշակ» լրագրի հրատարակման նախապատրաստական շրջանում Գրիգոր Արծրունին շաբաթը մեկ անգամ իր տանը կազմակերպում էր գրական երեկոներ, որոնց մշտական մասնակիցների թվում էին Գաբրիել Սունդուկյանը, Ստ. Պալասանյանը, Պերճ Պռոշյանը, Մարտիրոս Սիմոնյանցը, Րաֆֆին, Վասիլ Շահվերդյանը, Սենեքերիմ Արծրունին, Գևորգ Եվանգուլյանը, Աբգար Հով-Հաննիսյանը, Գրիգոր Իզմիրյանը, Ալեքսանդր Քիչմիշյանը, Միհըրդատ Ամերիկյանը, Գևորգ Զմշկյանը, Թիֆլիսի քաղաքագլուխ Պողոս Իզմայիլյանը, Ալեքսանդր Քալանթարը, Խաչատուր Մալումյանը, Վահան Արծրունին: 1871 թվականի սեպտեմբերից, երբ Գրիգոր Արծրունին կառավարությունից արդեն ստացել էր «Մշակը» հրատարակելու թույլտվությունը, գրական երեկոները ստացան ավե-

լի լուրջ բնույթ և վերաճեցին ընկերության: Նույն շրջանում գրական հավաքույթներ էին տեղի ունենում Սեներքերիմ Արծ-րունու տանը, որոնցից մեկի ընթացքում էլ կայացավ Րաֆֆու և Արծրունու հանդիպումը: 1878-79 թվականներին ևս գրողների մի խումբ (Պ. Պռոշյան, Գ. Սունդուկյան, Ստ. Պալասանյան, Ալ. Երիցյան և ուրիշներ)՝ մոտ 20-25 հոգի, հավաքվում էին «Փորձ» ամսագրի խմբագիր Աբգար Հովհաննիսյանի տանը: 1883-84 թվականներին գրական հավաքույթներ էին տեղի ունենում նաև Էմին Տեր-Գրիգորյանի տանը:

Այսպիսով, թեև անցյալ դարի կեսերից արդեն հայ հասարակական միտքը առաջադրում էր գրականության զարգացմանը ընդհանուր ուժերով նպաստելու գաղափարը և պահանջում էր վերջինիս իրականացումը՝ որպես օրվա առաջնահերթ խնդիր, բայց մինչև 90-ական թվականները գրական խոշոր, պաշտոնական միավորում, գրական ֆոնդ կամ ընկերություն ստեղծելու լուրջ փորձեր չեն արվում: 80-90-ական թվականներից սկսած և հատկապես 20-րդ դարի սկզբներին հայ նոր գրականության զար-գացման ընթացքը գրողների միավորման կարիքը դարձնում էր օրվա պահանջ: Գրքերի տպագրության, թերթերի ու ամսագրերի, պարբերական ժողովածուների հրատարակման դժվարությունները նույնպես ստեղծում էին այդպիսի միավորումների պահանջ, քանի որ, ինչպես հայտնի է, ընկերությունները սովորաբար ծառայում են գրական-հասարակական կյանքի նաև ընթացիկ շահերին:

Այս շրջանում և հատկապես XX դարասկզբին, գրականության զարգացումը առաջ էր բերել հայ գրականագիտական մտքի աշխուժություն: Փորձեր էին արվում և՛ գրական ստեղծագործությունները, և՛ գրականության զարգացման ուղիները գիտական համակարգի ենթարկելու: Գրականության հասունացող կենսական խնդիրների թիվը ավելանում էր, նրանց լուծումը դառնում էր անհրաժեշտ: Տեսական-քննադատական մտքի զարգացումը նույնպես առաջ էր բերում գրողների և գրականագետների միավորման պահանջ, մանավանդ որ շատ գրողներ նաև գրականության քննադատներ էին: Կար նաև մասնագետ քննադատների մի խումբ, որ նույնպես չուներ իր միավորումը:

80-90-ական թվականներին նոր սրությամբ դրվում է գրականության և կյանքի փոխհարաբերության, գրականության նոր բովանդակության, նոր թեմաների արծարծման, ոչ միայն սեր և անձնական այլ զգացումներ, այլ նաև հայրենասիրական և հասարակական, սոցիալական այլ խնդիրներ արտահայտելու պահանջ: Զգացվում էր գրողների ամբիոնի կարիք, ուր քննության առարկա կդառնային գրականությանը վերաբերող բոլոր հարցերը:

Եվ ահա, գրական կյանքի զարգացմանը նախանձախնդիր շատ առաջավոր գործիչներ աշխատում էին իրագործել գրողների և գրականության հոգսերով համակված այլ անձանց միության, ընկերության կազմակերպումը, որին զուգահեռ կատարվում էին նաև գրողներին ու քննադատներին նյութապես փոքր-ինչ ապահովող գրական ֆոնդ հիմնելու փորձեր:

1893 թվին հայագետ Մկրտիչ Էմինը Մոսկվայի Լազարյան ճեմարանին կտակեց 10 000 ռուբլի գումար, որով ստեղծվեց «Գաղտնի խորհրդական Մկրտիչ-Հովսեփյան-Լազարյան Էմինի ֆոնդը»[8] տարբեր ժողովածուների հրատարակության և այլ նպատակներով:

1892-93 թթ. Թիֆլիսում գրական ընկերություն և ֆոնդ հիմնելու ամենալուրջ փորձերն արվեցին[9]: 1892 թ. հունիսի 7-ին Ավետիք Արասխանյանի ջանքերով և նյութական օժանդակությամբ Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում տեղի ունեցավ ժողով, որը հրավիրվել էր՝ հայ գրողների միության և հայ գրականագետներին, լրագրողներին օժանդակող գրական ֆոնդ կազմակերպելու ու աշխատանքները նախապատրաստելու նպատակով: Ֆոնդը պիտի կոչվեր Սմբատ Շահազիզի անունով, քանի որ նրա գրականամանկավարժական 30-ամյա հոբելյանի առիթով հավաքվել էր 6000 ռուբլի գումար: Ժողովը նախագահում էր Ա. Արասխանյանը, քարտուղար ընտրվեց 23-ամյա Հովհաննես Թումանյանը: Բուռն վեճեր են ծավալվում օրակարգի կարևոր հարցերից մեկի շուրջը՝ ով-քե՞ր կարող են լինել ընկերության անդամ, իսկ ընկերություն ստեղծելու անհրաժեշտությունը ընդունվում է միաձայն: Ընտրվում է 5 հոգուց կազմված հանձնաժողով՝ կանոնադրությունը կազմելու համար: «Մուրճ» ամսագրին հղած հեռագրում Շահազիզը հայտնում է իր երախտիքն ու չնորհակալու-

*թյունը ոչ միայն հատկացված գումարի և իր անունով ֆոնդ հիմնելու համար, այլև այն բանի, որ իր հոբելյանը կարող է առիթ դառնալ հայ գրական ընկերության ստեղծման. «Մանավանդ թանկ է ինձ այն, որ իմ համեստ անունի հետ կապելին նաև բարի սկզբնավորություն բարեգործական նպատակով»[10], մի գործ, որ նա հայտարարում է ժամանակի անհրաժեշտ ու հրամայական պահանջը[11]:*

*1893 թվին ծրագիրը արդեն մշակվել և հանձնվել էր տպագրության հասարակական քննարկման համար, որից հետո միայն պետք է ներկայացվեր կառավարությանը՝ վավերացման: 1894 թ. հոկտեմբերի 2-ին Արասխանյանի նախագահությամբ տեղի ունեցավ երկրորդ ժողովը: Նախագահը իր բացման խոսքում հարցի ձգձգման պատճառը բացատրեց Արծրունու թաղման հետ կապված կառավարության խստություններով: Մասնակցում էր Հովհաննես Թումանյանը, որն՝ իբրև նախորդ ժողովի քարտուղար, կարդաց արձանագրությունը: Քննվում է հանձնաժողովի կազմած կանոնադրությունը և ծրագիրը: Սակայն գրական ֆոնդի և ընկերության ստեղծումը ձգձգվում էր: Փորձեր են արվում նաև Մոսկվայում ստեղծել գրական ֆոնդ ու ընկերություն, որոնք նույնպես անհաջողության են մատնվում: Հավաքված գումարը Շահազիզը 1898 թ. ուղարկում է Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը (նման առաջարկություն այդ ընկերությունը արել էր 1896 թվին) և խնդրում է հիմնվելիք գրական ֆոնդը անվանել Աբովյան-Նազարյան անունով՝ հավերժացնելու համար հայ նոր գրականության երկու երախտավորներին: Սակայն մեկ տարի անց՝ 1899 թ. հուլիսի 6-ին, հրատարակվեց Կովկասի հայոց բարեգործական ընկերության նոր կանոնադրությունը, որի համաձայն ընկերությունը զրկվում էր մասնաճյուղեր ունենալու իրավունքից և վերածվում սոսկ «Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության»: Նոր կանոնադրությունը պետական վերահսկողություն էր սահմանում ընկերության գործունեության վրա՝ արդելելով նրան զբաղվել լուսավորական-կրթական գործով: Եվ միայն 1908 թ. հունվարին Կովկասի փոխարքա Ի.Ի. Վորոնցով-Դաշկովը հաստատեց ընկերության նոր կանոնադրությունը, որով նորից վերականդ-*

նվեցին Կովկասի Հայոց բարեգործականի նախկին իրավունքները: Ահա թե ինչու բարեգործական ընկերությունը վերոհիշյալ գումարը ետ է վերադարձնում Շահազիզին, որն, ի դեպ, տարիներ շարունակ սեփական նախաձեռնությամբ նպաստ էր հատկացրել հայ գրողներին, այդ թվում նաև Թումանյանին: 1907 թ. աշնանը Սմբատ Շահազիզը Մոսկվայում հանկարծամահ եղավ: Նրա ազգականներ Սիմեոն ու Երվանդ Շահազիզյանները ժառանգած գումարը հատկացրին Բարեգործական ընկերությանը, որը և հիմնեց գրական ֆոնդ: Բայց շատ չուտով այդ Աբովյան-Նազարյան գրական ֆոնդը կազմալուծվեց:

Թիֆլիսում կատարված փորձերը ընդհանուր ոգևորություն էին առաջացնում ողջ հայ գրական կյանքում: Գրական ընկերություն հիմնելու անհրաժեշտությունը միաժամանակ զգում էին նաև հայության տարբեր հատվածներում:

Նոր Նախիջևանում եղած փորձերի մասին տեղեկանում ենք Ղազարոս Աղայանի 1898 թ. հոկտեմբերի 20-ի նամակից, որն ուղղված էր Հովհաննես Թումանյանին: Աղայանը գրում է. «Ահա երկու անգամ է, որ պ. Մինասի (Բերբերյան – Ս.Հ.) մոտ ժողովվում ենք մի գրական գործ սկսելու համար, բայց երևում է, որ խախալի գլխին ոչինչ չի մնալու, գրական գործ սկսել այստեղ շատ դժվար է, թեև Մինասը շատ տաք-տաք է»[12]:

Գրողների կազմակերպություն ստեղծելու ջանքերի հիմնական կենտրոնը մնում էր Թիֆլիսը, և բնական է, որ հենց այստեղ պիտի հիմնվեր Հայ գրողների կովկասյան ընկերությունը:

## Հովհաննես Թումանյանը հայ գրողների կովկասյան ընկերության նախապատրաստական շրջանում

Լինում են գրողներ, որոնց ոչ միայն գեղարվեստական ստեղծագործությունը, այլ նաև անձնական ողջ կյանքը դառնում է տվյալ դարաշրջանի ճշմարիտ արտացոլումը: Եվ ուսումնասիրել

*այդպիսի դրողների կյանքն ու գործունեությունը, նշանակում է ծանոթանալ տվյալ ժամանակի մշակույթին, ժողովրդի հասարակական-քաղաքական դրությանը, նրա ճաշակին, դրական-գեղարվեստական ձգտումներին և այլն: Այդպիսի դրողների թվին է պատկանում Հովհաննես Թումանյանը, որի կյանքի ուսումնասիրությունը պարզ պատկերացում է տալիս XIX դարի 90-ական թթ. և XX դարի առաջին երկու տասնամյակների Հայ ժողովրդի պատմության, նրա ազգային մշակույթի, դրական կյանքի մասին:*

*Հայ նոր դրականության մեջ ունեցած Թումանյանի վիթխարի դերը պայմանավորվում է ոչ միայն նրա թողած դրական ժառանգությամբ, այլև նրանով, որ հենց Թումանյանը դարձավ իր ապրած շրջանի դրական կյանքի ղեկավարն ու շարժիչ ուժը, իր պետականություն չունեցող երկրի պետական գործիչը: Այս առումով հետաքրքրական են համապատասխան Համբարձումյանի հուշերը, որոնք թեև վերաբերում են Թումանյանի՝ որպես Հայրենակցական միությունների միության նախագահ լինելու շրջանին, սակայն հավասարապես կարելի է տարածել նաև Թումանյանի դրական և ազգային ողջ գործունեության և այն տասնյակ ընկերությունների նառանդուն աշխատանքների վրա, որոնց ղեկավարն է եղել Թումանյանը:*

*«Համապատասխան, — ասում էր հաճախ Թումանյանը, — մենք երկուսս կարծես պետություն ենք պետության մեջ: Մեր ժողովուրդների հասարակական ու կուլտուրական կյանքին վերաբերող որևէ հարց կա՞ արդյոք, որը մեր իրավասության մեջ չմտնի... Իսկ ի՞նչ բան է պետությունը, եթե ոչ հենց այնպիսի մի ֆունկցիա, որ մշտապես կատարում ենք մենք երկուսս» (ԹԺՀ, 700):*

*Նույնն է հավաստում Մամիկոն Գևորգյանը, որի 1950 թ. մայիսի 2-ին պատմած հուշերը դրի է առել բանաստեղծի դուստրը՝ Նվարդը. «Պետություն չկա, բան չկա, ես էլ էնպես եմ զբաղված ընկերություններով ու ժողովներով, մեր կյանքի էս կամ էն գործով ու հարցով, որ ժամանակ չի լինում»[13]:*

*Թումանյանը եղել է այնպիսի մի հեղինակություն, որի խոսքը ավելի մեծ ազդեցություն է ունեցել ժողովրդի վրա, քան կարող էր ունենալ պետականորեն սահմանված որևէ օրենք կամ հրա-*

*ման: Անվերապահորեն կարելի է պնդել, որ Թումանյանը, իրոք, նահապետի հեղինակություն և ազդեցություն ուներ իր ժողովրդի վրա:*

*Բայց մեր խնդիրը ոչ թե Թումանյանի գործունեությունն է առհասարակ, այլ միայն նրա մի մասը կազմող գրական-հասարակական գործունեության ուսումնասիրությունը:*

*XX դարասկզբի հայ գրողներից ամենից շատ Թումանյանն է հետաքրքրություն ստեղծել դեպի գրականությունը և նպաստել հայ գրողի ժողովրդականացմանը: Հայ գրական ընթացիկ կյանքը կազմակերպելու, գրողներին միավորելու խնդիրը մշտապես եղել է ազգային մեծ գործչի ուշադրության կենտրոնում:*

*Ինչպես արդեն նշվել է՝ Թումանյանը մասնակցել էր առաջին գրական ֆոնդի նախապատրաստական աշխատանքներին:*

*Անդրադառնանք գրական խմբակ, սալոն և ընկերություն, գրական ֆոնդ ստեղծելու բոլոր փորձերին, որոնց մասնակցել կամ որոնք ղեկավարել է Թումանյանը:*

*Դեռ մանկությունից՝ Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին, Թումանյանը աչխատում էր մասնակցել դպրոցում կազմակերպվող գրական բոլոր հավաքույթներին:*

*Թումանյանի մասնակցությամբ գրական փոքրիկ միավորում ստեղծվեց 1887-88 թթ., որը հետագայում ստացավ «Հնդյակ» անունը: Գրողի դասընկեր Դավիթ (Դաթիկո) Շահլամանյանի առանձնասենյակում սկսեցին հավաքվել նախ Թումանյանն ու Արսեն (Սիմեոն) Ղլտճյանը, ավելի ուշ նրանց միացան Արամ Առաքելյանն ու Գրիգոր Վանցյանը, և հոյակը դարձավ Հնդյակ: Պարապմունքները տեղի էին ունենում չաբաթ օրերը: Անդամների հավաստմամբ դրանք հիմնականում ղեկավարում էր Թումանյանը: Քննարկման առարկա էին դառնում ոչ միայն գրական, այլև սոցիալ-քաղաքական խնդիրներ:*

*Նպատակ ունենալով զբաղվել ինքնակրթությամբ ու ինքնազարգացմամբ՝ խմբակը ուսումնասիրության առարկա էր դարձրել վերածնության շրջանի հեղինակներից սկսած մինչև ժամանակակից հեղինակների գործերը: Հաճախ էին քննարկում նաև ցարական գրաքննության կողմից արգելված գրականությունը, հենց*

իրենց՝ անդամների ստեղծագործությունները: Առաջին անդամ «Հնդկակը» ծանոթացավ Թումանյանի «Շունն ու կատուն», «Արև ու Լուսին», «Ամառվա դիշերը դյուղում», «Գութանի երգը», «Հին օրհնություն», «Մարո» և այլ ստեղծագործություններին և խորհուրդ տվեց հրապարակել, օգնեց Թումանյանին՝ կազմակերպելով բանաստեղծությունների բաժանորդագրումը: Արսեն Ղլտճյանի խոսքերով Դավիթ Շահլամանյանի սենյակը դարձավ Թումանյանի առաջին «Վերնատունը» (ԹԺՀ, 274):

1889 թվականից Թումանյանը անդամագրվում է Կովկասի հայոց հրատարակչական ընկերությանը, իսկ 1892 թ. մարտի 22-ից 1893 թ. հոկտեմբերը աշխատում է որպես դրասենյակապետ: Անուշավան Աբովյանը իր հուշերում նշում է, որ 1889-90 թթ. Հայոց հրատարակչական ընկերությունը իր անդուլ դոյությունը մի կերպ քարշ էր տալիս: Եվ երբ դրական չրջաններում միտք «արծարծվեց զարկ տալ նրա գործունեությանը», Թումանյանը պարտքով դրամ ճարեց ու անդամագրվեց: (ԹԺՀ, 229): Հրատարակչական ընկերության վերաբացումից հետո, 1910 թ. Թումանյանը վարչության անդամ էր:

1893 թ. հոկտեմբերին Հովհաննես Թումանյանը, Փ. Վարդազարյանը և Արշակ Բարխուդարյանը ձեռնարկում են հրատարակչական ընկերության հիմնադրման աշխատողները: Ըստ առաջին խմբագրական ժողովի (1893 թ. հոկտեմբերի 26) նիստի արձանագրության՝ ընկերությունը պետք է կոչվեր «Հեղեղ» կամ «Խրճիթներ և միայն խրճիթներ» կամ «Ժողովուրդ»: Ընդորում, այդ հաստատության խնդիրներից մեկն էլ պետք է լիներ ժամանակի պահանջներին համապատասխանող և «զանազան ընկերություններ հիմնելու միտք արծարծելու համար բրոշյուրների» հրատարակությունը[14]:

1894-95 թվականներին Թումանյանը հաճախում էր Թիֆլիսում կազմակերպված երեկույթների, որոնք կոչվում էին «վեչերներ» կամ «վեչերինկաներ»: Դրանք ոստիկանությունից դաղտնի դործող հասարակական խմբակցությանն հավաքույթներն էին, որոնցում արծարծվում էին նաև դրական հարցեր[15]:

1896 թ. Թումանյանը մասնակցում էր ժամանակի Հայտնի

բժիշկ Արիստակես (Ռուստեմ) Զարգարյանի տանը տեղի ունեցող գրական պարբերական հավաքույթներին, որոնք յուրօրինակ նախապատրաստական փուլ հանդիսացան գրական նոր խմբակի առաջացման համար: 1897 թ. վերջերից և 1898 թ. սկզբներից այդ գրական պարապմունքները կանոնավորապես չարունակվեցին այս անգամ արդեն իշխանուհի Մարիամ Թումանյանի բնակարանում: Գրական այս խմբակը ստացավ «Հինգշաբթիներ» անվանումը, որի մշտական անդամը դարձավ Հովհ. Թումանյանը Մարիամ Թումանյանի, Հովհաննես Քաջազնունու, Փիլիպոս Վարդազարյանի և Արիստակես Զարգարյանի հետ միասին: Արամ Նազարեթյանին ուղղված 1898 թ. փետրվարի 22-ի նամակում Թումանյանը հիշատակում է նաև այլ անուններ. «Մի գրական շրջան ենք կազմել՝ Փիլիպն է, Տ. Հովհաննիսյանն է ինժեներներ Քաջազնունին, բժ. Արծրունին, իշխանուհի Թումանյան, բժ. Զարգարյան և խոնարհ ծառադ» (9, 194):

«Հինգշաբթիների» հյուրերի և ակտիվ մասնակիցների թվում էին Լ. Շանթը, Ղ. Աղայանը, Շիրվանզադեն, Դ. Դեմիրճյանը, Ավ. Իսահակյանը: «Հինգշաբթիները» նույնպես գրական միավորում էր: Այստեղ քննարկվում էին և՛ հիմնական անդամների, և՛ հյուրերի ստեղծագործությունները, հատկապես Շիրվանզադեի ու Շանթի դրամաները: Ինչպես վկայում է Մարիամ Թումանյանը. «Շանթի մի դրաման այնպես խիստ քննադատեցինք, որ նա պատռեց ձեռագիրը» (ԹԺՀ, 471): Խոսքը, հավանաբար, հեղինակի «Եսի մարդը» դրամայի մասին է:

«Հինգշաբթիների» մտահոգության կենտրոնում չէր կարող չլինել այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսին էր ժամանակի առաջադրած գրողների միությունն և գրական ֆոնդ հիմնելու անհրաժեշտությունը: Ինչպես հետագայում հիշում է իշխանուհի Մարիամ Թումանյանը, այդ «Հինգշաբթի» երեկոներին հաճախ էր խոսվում գրողների մի ընկերություն հիմնելու, գրական ֆոնդ ստեղծելու և գրողների երկերը այդ ֆոնդի գումարներով հրատարակելու հարցերի շուրջ: (ԹԺՀ, 428):

Գրական այս սալոնն այցելելու ընթացքում Թումանյանը ավելի էր զգում գրողների մեծ չրջան, գրական ընկերություն հիմնելու անհրաժեշտությունը և ոչ մի չանք չէր խնայում այն կազ-

մակերպելու համար՝ միաժամանակ չարունակելով իր մասնակցությունը բերել այլ հասարակական միությունների աշխատանքներին: Նրան ցավ էր պատճառում այն ճշմարտությունը, որը նա արձանագրել էր Փ. Վարդազարյանին ուղղած 1902 թ. օգոստոսի 6-ի նամակում. «Բայց մեր աշխարհքում մենք ունենք դրողի տառապանքը՝ առանց ունենալու դրողի կյանքը» (9, 293):

Ջունենալով գրական որևէ հաստատություն, բայց զգալով գրականության հարցերի շուրջ համատեղ խորհելու կարիք, հայ դրողները և մշակույթի գործիչները ժողովներ էին գումարում հենց իրենց բնակարաններում: 90-ական թվականների վերջից Թումանյանի բնակարանը դարձավ մեր բոլոր դրողների սիրելի հավաքատեղին: 1897-98 թվականներին Թումանյանը տասնյակ այդպիսի ժողովներ է գումարում իր տանը, որոնց մասնակցում են Պռոշյանը, Ադայանը, Շիրվանզադեն, Մուրացանը, Փափազյանը, Լևոն Մանվելյանը և ուրիշներ: Կարելի է վկայակոչել Թումանյանի 1897 թ. մարտի 5-ի նամակը՝ ուղղված Սեդրակ Բալայանին և Արամ Նազարեթյանին, որտեղ ասվում է. «... ինձ մոտ հրավիրեցի դրողների մի խումբ, մի դրական (բելետրիստների) շրջան կազմելու, հարկ եղած ժամանակ գրական մարդկանց և գրականության շահերը պաշտպանելու և դրական զանազան խնդիրներ հարուցանելու և վճռելու... 6-7 ժողով ենք ունեցել և դուցե փոփոխվի, բայց կհարատևի» (9, 184):

Նույն շրջանում այդպիսի ժողովներ տեղի են ունեցել Պերճ Պռոշյանի տանը: Նման «մի տասը ժողով» էլ հրավիրվում է դարձյալ Թումանյանի տանը 1898 թվականին: Այդ մասին դրում է նաև հաջորդ տարվա մայիսի 6-ի նամակում, ուր վերստին արտահայտվում է բանաստեղծի մտահոգությունը դրողների լուրջ միավորման բացակայության համար. «Դժբախտաբար մեր դրողների մեջ կապ ու հաստատություն չկա, այնինչ մենք ունենք ընդհանուր ցավեր ու շահեր, որ կարևոր են դարձնում այդ հարաբերությունը, մենք զգացմունքներ ու մտածմունքներ ունենք, որ միայն կարող ենք հայտնել ու խոսել» (9, 210) – դրում է Թումանյանը և հույս հայտնում, որ դրողների միավորում ստեղծելու գործը «մոտիկ ապագայում, հարկավ, գլուխ կգա» (9, 210):

Բայց քանի որ մեր գարի առաջին տասնամյակում գրական-

հասարակական պաշտոնական միությունն հիմնելը կապված էր բազում դժվարությունների հետ, Թումանյանը հավաքատեղի է դարձնում իր տունը (Բեհբուդյան, այժմ Էնգելսի 50): Գրողների փոքրիկ այդ միավորումը ստացավ «Վերնատուն» անունը և նշանակալի դեր կատարեց (ինչպես և «Հինգշաբթիները») Հայ գրողների կովկասյան ընկերության ստեղծման ճանապարհին:

«Վերնատան» ծնունդը գրապատմական որոշակի հանգամանքների արդյունք էր:

Անցյալ դարի 90-ական թվականներին հայ պարբերական մամուլը կուսակցական պատկանելություն ուներ: Գրական ասպարեզի միակ տերը Լեոյի խոսքերով՝ հրապարակախոսությունն էր (ԹԺՀ, 50), որն ապրում էր «գրեթե միայն տաք, անսանձ բանավեճերով... Բանաստեղծը, վիպագրողը, թատերագրողը, քննադատը չէին կարող անկախ ու ազատ ստեղծագործական գոյություն պահպանել առանց լրագրողի կամ օրագրողի հովանավորության, առանց որևէ լրագրի կամ ամսագրի թևի տակ մտնելու» (ԹԺՀ, 50):

«Մշակը», «Նոր Դարը», «Արձագանքը» և այլ լրագրեր ու պարբերականներ, հասարակական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ էին և իրենց էջերում տեղ էին տալիս որոշակի հոսանքի ու գաղափարախոսության հեղինակների գործերի, մի երևույթ, որը փորձեց և կարողացավ հաղթահարել XX դարասկզբի մամուլը, հատկապես «Մուրճ» ամսագիրը: Եվ պատահական չէ, որ Թումանյանը իր արդարացի դժգոհությունը պարբերական մամուլից հայտնում է «Մուրճի» խմբագրին՝ Արասխանյանին (9,13), պարբերականների, հատկապես «Մշակի» կուսակցական կողմնակալ վերաբերմունքը անվանելով թշնամական՝ գրողի ու ճշմարիտ գրականության նկատմամբ. «Մեր լրագիրները փեշակ են չինել հալածել ու հայհոյել գրականությունն ու գրողներին, իհարկե, միշտ քննադատության անունով, գրականության վրա սրտացավ հսկողի հավակնությամբ, միշտ անաչառություն աղաղակելով...», — գրում է բանաստեղծը այդ շրջանի իր «Գրական վարք ու բարքից» հոդվածում (6, 113): Նույնատիպ զայրույթով լի խոսքեր մամուլի մասին հանդիպում

ենք Թումանյանի՝ Անուշավան Աբովյանին ուղղած 1890 թ. հունիսի 3-ի նամակում, ուր նա, բնութագրելով վայ լրագրողներին, անցնում է չափածոյի.

*Ահա գետնաքարշ և չարախնդում*
*Խումբերն անսիրտ մարդ-հրեշների*
*Վխտում են անվախ հրապարակներում*
*Իբրև առաջնորդ մարդոց մտքերի... (9, 17):*

*Գրողի արխիվում զանազան թղթերի պատառիկների վրա պահպանվել են Թումանյանի՝ մամուլից ունեցած դժգոհությունը արտահայտող խոսքեր. «Ջղային հիվանդություն՝ առաջացած հայոց մամուլից ու թատրոնից», «Լիրբ, ինչպես եպիսկոպոսի ծառա, հայհոյում է, ինչպես հայոց խմբագիր», «Ապրում է խմբագրի նման, այսինքն՝ ուտում է, խմում, պարապ նստում», «Ստախոս, ինչպես «Մշակի» խմբագիրը և այլն*[16]*: Մամուլից ունեցած Թումանյանի դժգոհությունը այն կարևոր պատճառներից էր, որ դրդում էր Թումանյանին ավելի մեծ ջանքեր ներդնել դրողների միությունն ստեղծելու գործում, քանի որ այդպիսի մթնոլորտում էլ ավելի հրատապ էր դառնում «գրականության մասին խորհող մարդոց շրջան» կազմակերպելու խնդիրը: Վերջինիս իրականացման հետ էր կապվում թե՛ «Վերնատան» և թե՛ Կովկասյան ընկերության հիմնադրումը: Լեռն, օրինակ, «Վերնատան» ստեղծումը բացատրում էր գրականության ինքնորոշման, այդ «սրբության սրբոցի» հրապարակախոսության լծից ազատագրման՝ ժամանակի պահանջով (ԹԺՀ, 62): Իսկ Դ. Դեմիրճյանի խոսքերով. «Վերնատան» ստեղծումը «...մի հասարակ քմահաճույք չէր և ոչ էլ պատահմունք... Դա հպարտ մարդկանց ինքնաուռանձնացում չէր «աննշան» մարդկանցից: Դա արվեստի և գրականության բացառիկ, նույն ձգտումների, ապա նաև ընկերական հատուկ կապերի մի կոլեկտիվ էր» (Դ.Դ., 12, 171):*

*Հիմնադրման թվականը ըստ գրականագետ Արամ Ինճիկյանի, պետք է համարել 1899 թ. դեկտեմբերը (ՈՒՀ, 3, 388): «Վերնատան» անդամներն էին Հովհաննես Թումանյանը, Ղազարոս Աղայանը, Լևոն Շանթը, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճ-*

յանը և Նիկոլ Աղբալյանը, որոնք բոլորն էլ ժամանակի հայ գրականության և քննադատության նշանավոր դեմքերից էին:

Վերնատունը ստեղծվեց «ուշ գիշերով, ընթրիքից հետո», ինչպես հիշում է Դ. Դեմիրճյանը և ավելացնում, որ անվանումը հիշեցնում էր այն վերնատունը, ուր հավաքվում էին Քրիստոսի աշակերտները: Ավ. Իսահակյանի հավաստիացմամբ «Վերնատուն» անունը առաջարկել է Թումանյանը՝ նկատի ունենալով Գոնկուր եղբայրների տան վերնահարկում հավաքվող դրողների խմբակի «Ամրար» անվանումը: «Որովհետև Օհանեսի բնակարանը այն ժամանակ հինգերորդ հարկում էր, կնքեցինք Վերնատուն անունով մեր հավաքավայրը» (ԹԺՀ, 12):

Թումանյանը այդ բնակարան (Բեհբության 50, հետագայում՝ 44) տեղափոխվել էր 1899 թ. աշնանը: Այն գտնվում էր բուսաբանական այգու դիմաց և երկու կողմից պարտեզ ուներ: Առհասարակ բնակարան վարձելիս Թումանյանը քաղաքի կենտրոնից հեռու, օդառատ, արևոտ, բնությանը մոտ տեղեր էր փնտրում:

«Վերնատան» անդամների կարծիքով, այդ նոր շարժման և կենտրոնի ավագն ու առաջատարը, շարժիչ ուժը, «ֆոկուսը» Թումանյանն էր: «Վերնատան» ստեղծումը նույնպես յուրօրինակ ապացույցն էր այն բանի, որ հենց Թումանյանի շուրջն էր կենտրոնանում գրական նոր շարժումը: Դա պայմանավորված էր ոչ միայն Թումանյան-գրական գործչի ջանքերով, այլև նրա անհատականության, բնավորության որոշակի գծերով: Նրա մարդկային նկարագիրը բնութագրելիս գրեթե բոլոր վերնականները (այդպես էին կոչվում «Վերնատան» անդամները) օգտագործում էին նույն արտահայտությունները. «Կենտրոնաձիգ անձնավորություն, մարդամոտ, հյուրասեր, զրույցի համար հոգի տվող»: Ըստ Լեոյի՝ հյուրասիրությունը այնպիսի մի պաշտամունք էր Թումանյանի համար, որ նա պարզապես «ընտանեկան աղետ» էր, իսկ կինը՝ Օլգան, «նահատակ»: Դեմիրճյանի կարծիքով նա պարզապես հյուրամոլ էր և չէր հանդստանում, մինչև մեկին չէր բերում տուն՝ նստեցնելու իր սեղանի շուրջը:

Աբովյանի դյուղացին, որ հյուրի համար կռիվ էր անում Հարևանի հետ, որ իր տունը հյուրանոցի պես էր պահում, Թու-

*մանյանի նախատիպն էր:*

*Իսկ այդքան հյուրերի բազմությունը, հաճախությունը, հազար ու մի առիթներով գնալ-գալը, այդ հացկերույթների աշխույժը նրա տունը դարձրել էին վանք, տոնախմբություն, չարունակական, հարատև տեսակցությունների վայր (Թ-Հ, 36): Բացի իր հյուրասեր-հյուրամոլությունից Թումանյանը դառնում էր կենտրոնաձիգ նաև այն պատճառով, որ գրողների ու արվեստագետների, առհասարակ մարդկանց անձնական շփումներին, միմյանց վրա ունեցած հոգեբանական ազդեցություններին մեծ նշանակություն էր տալիս: Իբրև ճշմարիտ արվեստագետ՝ նա լավ էր ճանաչում մարդուն՝ իր բոլոր լավ ու վատ կողմերով: Բայց յուրաքանչյուրի մեջ ձգտում էր տեսնել լավը՝ հաճախ անտեսելով վատը:*

*Տարել, ներել ու սիրել,*
*Վատը լավ եմ տեսել ես...*

*«Եվ դա ոչ միայն նրա համար, — գրում է Դեմիրճյանը, — որ շոյի դիմացինին, այլ նրա համար, որ վատը լավ տեսնի: Նա բռնի իդեալականացնում էր կյանքը:*

*Նա իդեալիստ էր և ձգտումներ ուներ բարձրանալու և բարձրացնելու» (Թ-Հ, 43):*

*Թումանյան-անհատի հոգու լույսը, նրա բնավորության անսահման բարությունը մեծացնում էր նրա ազդեցությունը շրջապատի վրա, դարձնում տիրական: Հայ ոչ մի գրողի ընտանիք այդքան գրող ու արվեստագետ, քննադատ ու մտավորական, պետական ու ազգային գործիչ չի հյուրընկալել իր հարկի տակ, որքան Թումանյանինը: Միայն Վերնատան բնակարանում 1 ամիս ապրել է Կարապետ Գալֆայանը, 2 ամիս՝ Դեմիրճյանը, հետո՝ Իսահակյանը, 4-5 ամիս՝ Շանթը:*

*Վերնականները 7-8 տարի չարունակ շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվում էին Թումանյանի բնակարանում, հիմնականում հինգշաբթի և շաբաթ օրերը:*

*Դասականների ուսումնասիրությանը նվիրվելը վերնականների համար չէր նշանակում կրկնել նրանց, քանի որ ո՛չ ժամանակը,*

*ո՛չ հասարակությունն ու ո՛չ էլ նաև անհատականության դրսևորում հանդիսացող արվեստը չեն կրկնվում: Այդ հետաքրքրությունը որոշակի նպատակ ուներ: «Դա վերաբերմունքն է դեպի արվեստը և ստեղծագործությունը: Կարելի է սովորել կլասիկներից նրանց խորացումը, ճիգերը, էնտուզիազմը, անձնուրացությունը արվեստի մեջ՝ հանուն ամեն մեկը իր էպոխայի» (Դ.Դ., 14, 295):*

*«Վերնատանը» քննվող սկզբունքային նշանակություն ունեցող հիմնահարցերից Արամ Ինճիկյանը առանձնացնում է հինգը.*

*ա/ Գրական նախորդների վերագնահատություն.*

*բ/ Հայ դասական գրականության արժեքների վերահանումը և լավագույն ավանդների զարգացումը.*

*գ/ Համաշխարհային դասական գրականությունը՝ որպես ուղենիշ.*

*դ/ Ժողովրդական բանահյուսությունը՝ որպես գրականության հիմք և ներշնչարան.*

*ե/ Գրականություն և ժողովրդայնություն. (ՈՒՀ, 3, 388):*

*Բացի այս խնդիրներից, որոնք, իրոք, շատ կարևոր տեղ էին գրավում խմբակի պարապմունքներում, «Վերնատունը» քննարկում էր նաև*

*1. Գրողի և քննադատության կապի*

*2. Գրականության տեսության*

*3. Գրական-հասարակական կազմակերպություն հիմնելու և գրական կյանքը զարգացնելու նպատակով գրական մշակի տնտեսական-սոցիալական դրությունը բարելավելու, գրական ընթացիկ կյանքին վերաբերող*

*4. Հասարակական-քաղաքական երևույթների մասին*

*5. Համաշխարհային մշակույթի պատմության*

*6. Տարբեր ազգերի պատմությանը վերաբերող հարցեր ու խնդիրներ:*

*«Վերնատանը» քննարկում էին հայ դասականների՝ Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Հ. Հովհաննիսյանի, Ղ. Աղայանի և հատկա-*

սես Սայաթ-Նովայի ստեղծագործությունները, անդրադառնում էին դրամայի ժանրային և առհասարակ արվեստի առանձնահատկություններին, գրականության ազգային ձևի ու ակունքների, երկերի բանաստեղծական, դեղարվեստական արժանիքներին և այլն:

Ավետիք Իսահակյանի հիշողության մեջ անջնջելի հետք թողեցին Թումանյանի «Ոչ մի քննադատ չի կարող իմ լավ ոտանավորը վատացնել և վատ ոտանավորը՝ լավացնել», «Բանաստեղծությունը չի գրվի հանգով ու վանկով, այլ սրտով ու զգացմունքով», «Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի» (ԹԺՀ, 12) խոսքերը, որոնք էական, առանցքային նշանակություն ունեին գրական խմբի բոլոր անդամների համար:

«Վերնատունը» պարբերաբար քննարկում էր նաև հենց իրենց՝ անդամների գեղարվեստական գործերը, ստեղծագործական ծրագրերը: Այդ պարապմունքներին մեծ կարևորություն էր տալիս հատկապես Թումանյանը: Նա, ավելի քան որևէ այլ մեկը վերնականներից, սիրում էր իր մտորումները կիսել գրչակից ընկերների հետ և կարծում էր, որ յուրաքանչյուր գրողի ու գրականության զարգացման համար անպայման կարևոր է փոխադարձ կապն ու չփումը, ինչպես Դեմիրճյանն էր դիպուկ նկատել, Թումանյանը ստեղծագործում էր հրապարակայնորեն, մի տեսակ կոլեկտիվ կերպով: Առաջին անդամ «Վերնատանը» քննարկվեցին Շանթի «Ուրիշի համար» դրաման, Դեմիրճյանի «Կյանքի տեսիլը», Թումանյանի «Հազարան բլբուլը» և այլն: Ղազարոս Աղայանի երկերին անդրադառնալիս նրա արվեստի արժեքը վերնականները տեսնում էին գրողի ստեղծագործության ժողովրդայնության մեջ: Մեծ տեղ հատկացնելով բանահյուսական արժեքների քննությանը՝ վերնականները ընթերցում և ուսումնասիրում էին թե՛ հայ ժողովրդական բանարվեստը, մանավանդ «Սասունցի Դավիթ» էպոսը, թե՛ ռուսական բիլինաները և թե՛ սերբական պոեմները: «Վերնատան» դրեթե բոլոր գրողները գրականության՝ ժողովրդական ակունքների հետ սերտ կապվածության կողմնակիցներ էին: Վարդգես Ահարոնյանը գրում է. «Բացի Լ. Շանթից, որ արիստոկրատ աղնվասեր գեղարվեստագետն էր այդ խմբակի մեջ, մյուսները և՛

նյութի, և՛ լեզվի ու ոճի տեսակետից ավելի ամփոփ գրագետներ էին: Սրանց կարծիքով երբեմն մինչև իսկ որոշ աստիճան ամփոփացումի գնով պետք է գրականությունը մոտեցնել ժողովրդին: Եվ հայտնի է, որ այդ ուղղությամբ մեր գրականության մեջ խոշոր դեր է կատարել «Վերնատան» մեջ հավաքվող գրողների այս խումբը»[17]:

Վերնականները ծրագրել էին հրատարակել հայկական ժողովրդական բանահյուսությունը ըստ ժանրերի, բայց միջոցների պակասի պատճառով իրականացնել չկարողացան:

Իհարկե, միշտ չէ, որ վերնականների հայացքները համընկնում էին: Հաճախ էին տեղի ունենում կրքոտ բանավեճեր, որոնցից էր, օրինակ, Ղ. Աղայանի և Դ. Դեմիրճյանի միջև ծագած վեճը հին ու նոր սերունդների փոխհարաբերության հարցի շուրջ: Քննարկման առարկա դարձնելով գրական ավանդների խնդիրը՝ Ղազարոս Աղայանը այդ երկու սերունդների մեջ սկզբունքային որևէ հակամարտություն չէր տեսնում, իսկ Դեմիրճյանը պնդում էր միանգամայն հակառակը:

Արտակարգ մեծ էր վերնականների և հատկապես Թումանյանի հետաքրքրքրությունը համաշխարհային, արևմուտքի և արևելքի դասականների արվեստի նկատմամբ: Յուրաքանչյուր շաբաթ պարտադիր կազմակերպվում էր հույն դասականներից մեկի՝ Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի, Էսքիլեսի որևէ ստեղծագործության լուրջ քննարկումը: Նրանց արվեստի գաղտնիքները լուսաբանելուց հետո վերնականները անցնում էին Շեքսպիրի, Բայրոնի, Գյոթեի, Հայնեի, Պուշկինի, Տոլստոյի, Լերմոնտովի, Սերվանտեսի, Շելլիի, Բերանժեի, Միցկևիչի, Սենկևիչի և այլոց գեղարվեստական ժառանգության ուսումնասիրությանը: Դասականների գործերում նրանց հրապուրում էր, իրենց իսկ խոստովանությամբ, հումանիզմը, արվեստի բարձր որակի ձգտումը, ժողովրդայնության ուժը, համաշխարհայնությունը: Ոգևորված դասականներով՝ վերնականները փոխ առան նաև նրանց անունները: Թումանյանը «Վերնատան» Շեքսպիրն էր, քանի որ նրա ամենամեծ երկրպագուն էր և նրա պես շատ երեխաներ ուներ. Աղբալյանը Բրանդեսն էր, քանի որ նա էր խմբի քննա-

դատը, Դեմիրճյանը Բայրոնն էր, Շանթը՝ Հայնեն, Իսահակյանը՝ Նիցչեն, քանի որ տարված ու ոգևորված էին նրանց արվեստով և փիլիսոփայությամբ: Իսկ Ղազարոս Աղայանին, որը «Վերնատան» ամենաավագ գրողն էր, Նահապետ էին ասում:

Բացի հիմնական անդամներից «Վերնատունը» ուներ նաև մշտական հյուրեր: Նրա շուրջը համախմբվեցին այդ շրջանի հայ մշակույթի շատ գործիչներ՝ Պերճ Պռոշյանը, Վրթանես Փափազյանը, իշխանուհի Մարիամ Թումանյանը, Փ. Վարդազարյանը, Արիստակես Զարգարյանը, Լեոն, Վահան Տերյանը, դերասան Կարապետ Գալֆայանը, նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը, երգահան Կոմիտասը և ուրիշներ:

«Վերնատան» գրական զրույցները տևում էին մինչև դիշերվա ժամը 2-3-ը, և հաճախ վերնականները գիշերում էին Թումանյանի տանը: Տևում էին այդքան երկար, որովհետև «Վերնատան» հավաքույթները ունեին իրենց երկրորդ մասը՝ ուրախ ժամանց, թեյ, ընթրիք, երգ, քեֆ: Սեղանին հաճախ լինում էր քիչմիշ-լաբլաբու, որի անունը դրել էին վերնահատիկ: Պատմում էին անեկդոտներ, զվարճալի ու սրամիտ պատմություններ գրական այլևայլ մարդկանց կամ իրենց կյանքից: Երգում էին «Ֆյորօղլին», Սայաթ-Նովայի երգերը, հատկապես «Դուն էն գլխեն իմաստունիս»-ը: Դեմիրճյանը ջութակ էր նվագում :

Առհասարակ հումորն ու կատակը իշխում էին «Վերնատան» պարապմունքներին: Օգտագործված թեմատիկայի, աշխարհայացքի, գրական նախասիրությունների տեսակետից վերնականները իրենց իսկ դերը կատակով նսեմացնում էին՝ տեղայնացնելով իրենց ստեղծագործության արժեքը: Աղայանը «Գուգարաց աշխարհից էր», Թումանյանը թագավորում էր Լոռիում, Ավ. Իսահակյանն ուներ իր երկիրը՝ Շիրակը: «Իսկ Շա՞նթը, ե՞ս, — հարցնում է Դեմիրճյանը: Որոշվեց, որ Շանթը «երկիր» չունի, իսկ ես «Ճորոխի հովտի հետ եմ»: Այս կատակների տակ, անշուշտ, կար ճշմարտություն, և էականն այն էր, որ Աղայանը, Թումանյանը, Իսահակյանը մեծապես կապված էին իրենց գավառների հետ. «Իսահակյանը ուսումնասիրում էր էպոսը՝ Աբդուլ Համիդի և հայ ժողո-

*վըրդի կռիվը պատկերելու համար» (ԹԺՀ, 29): Իսկ Շանթը չատ հետու էր ժողովրդական լեզուս, ժողովըրդական նյութ օգտագործելուց:*

*«Վերնատանը» տարբեր գրողների, ինչպես նաև հենց անդամների գեղարվեստական ստեղծագործությունների հանդեպ քննադատական վերաբերմունքը արտահայտվում էր ոչ միայն կարծիքների փոխանակությամբ, գրական բանավեճերով, այլև զավեշտական թերթիկներով և երգիծական կատակ-բանաստեղծություններով: Վերջիններիս հեղինակը հիմնականում Դերենիկ Դեմիրճյանն էր. «Ես զավեշտական թերթիկներ էի կազմում հատուկ այդ երեկոյի համար, ուր ծաղրանկարում էի զանազան անձնավորություններ: Մի անգամից ավելի Լեոն դառել է իմ նկարների հերոսը: Թումանյանին դա չատ դուր էր գալիս» (ԹԺՀ, 29): Թումանյանին հումորն ու կատակը միշտ է դուր եկել: Նա ինքը սիրում էր պատմել ծիծաղաշարժ դեպքեր իր և ընկերների կյանքից, առակներ, անեկդոտներ, որպեսզի օգնի մարդկանց ուրախ լինել, քանի որ ուրախ գալը համարում էր կյանքի ամենադժվար բաներից մեկը, պատահական չէ, որ խորհուրդ էր տալիս հիշել այն իմաստուն խոսքը, թե «Հաչվիր թե մեռած ես, ապրածդ օրը գտած համարիր ու վայելիր այն»: Վերնականներից Դեմիրճյանին ու Շանթին դիմելիս ասում էր. «Է՛յ, Պառնասի զավակներ»: Այդ հումորն ու կատակը արտահայտվում էր թե՛ վերնականների կողմից իրենց իսկ դրած անուններ ի մեջ և թե՛ Դեմիրճյանի գրչի հանաքներում, որոնք առ այսօր անտիպ են, իսկ մեզ տարիներ առաջ տրամադրել է բանաստեղծի կրտսեր դուստրը՝ Թամար Թումանյանը: «Վերջապես հասավ այն ծանր ժամը», «Սիրելի՛ Օհաննես», «Դե ել, ժամ է, երթանք պառկինք», «Ստորագրենք խոր հարգանոք», «Ողբ ասացեալ քերթողէ յումեմնէ», «Սիրելիք մեր, որ ի ժնև», «Զորսին նոր սլրծան կեր ու դավերը», «Եկանք տեսնելու Թամբալի հալը», «Մուզա չեմ կարող դառնալ ձեզ համար», «Առ նորին բարձրապաշտուբյուն», «Ո՛չ, ո՛չ, ավելի ոչ» սկսվածքով ոտանավորները, իհարկե, չեն փայլում գեղարվեստական արժանիքներով, և հեղինակները ամենևին էլ հետամուտ չեն եղել արվեստի գործ ստեղծելու նպատակին և չեն էլ ներկայացրել տպագրության: Բայց դրանք հետաքրքիր են «Վերնա-*

*տան» առօրյան, վերնականների ներմ ընկերական հարաբերությունները լուսաբանելու ուղղությամբ:*

*Ահա այդպիսի գրչի հանաքներից մեկը, որ գրել է Դերենիկ Դեմիրճյանը քեֆի սեղանի շուրջ հերթական անքուն գիշերը անցկացնելուց հետո:*

*Ջորսին նոր պրծան կեր ու դավերը,*
*Դատարկ տնկեցին դինու դավերը.*
*Ամեն մինն առավ բարձի լավերը,*
*Թողին սարսաղիս անքուն ցավերը,*
*Ու իրենք ընկան քնի ծովերը,*
*Հնդին կանչեցին բակից հավերը:*
*Ամենից առաջ Շանթը չնթռչեց,*
*Նրանից հետո Նիկոլը կոլոլ*
*երկուտակ սլառվեց,*
*Բթով վեր քաշեց զուռնա ու դհոլ,*
*Հանեսն էլ ներսից*
*խմածը մարսեց,*
*Այժմ, Դերենի՛կ,*
*Մնացիր մենիկ:*

*Այդ կատակներում Թումանյանը ներկայանում է մերթ իբրև աղնվական. «Առ նորին բալշճրաալաչաուբյուն, Իշխանն տան Մամիկոնեից և Մեծին մելիքին Լալվարա և նախարարին ձորաշատն Լոռվա», մերթ իբրև ծույլ ու թամբալ:*

*Բազմազբաղ բանաստեղծին մտերիմները ու հարազատները երբեք չեն տեսել ստեղծագործելիս: Դեմիրճյանը, օրինակ, այն թյուր կարծիքին էր, թե Թումանյանը «չգիտեր չարչարել իր գրվածքը Պուշկինի և Տոլստոյի պես» (ԹԺՀ, 43): Երբ պատասխանանամակը ուշանում էր, գրում էր. «Ուզում եմ ծուլությամբդ բացատրել այդ բանը»: Իսկ երբ գալիս է «Վերնատուն» և չի գտնում Թումանյանին, անմիջապես գրում է.*

*Եկանք տեսնելու*
*Թամբալի հալը,*

*Բայց հազար ափսոս*
*Ջրկար թամբալը.*
*Թամբալի տեղակ*
*(Որ սիրե կողակ)*
*Շանթ ու վարդապետ*
*Տեսանք... ըմ և իսկույն ևեթ-*
*Մի մի բաժակ սուրճ*
*Խմեցինք լուրջ-լուրջ,*
*Շանթն իր սենյակում*
*Դարձավ դերասան,-*
*Մենք էլ քաշեցինք*
*Մեր փասափուսան:*

*Հավանաբար այս ոտանավորը գրվել է 1902 թ. աշնանը, երբ Թումանյանը բժիշկների խորհրդով 4-5 ամսով Աբասթուման էր գնացել: Իսկ Շանթը, որ նոր էր վերադարձել արտասահմանից, Փիլիպոս Վարդազարյանի առաջարկությամբ փոխադրվել էր Թումանյանի բնակարան և «իր սենյակ» էր դարձրել բանաստեղծի աշխատասենյակը( Ն.Թ., 43): Թումանյանի բացակայությունը միշտ էլ տխրեցնում էր վերնականներին և դժգոհություն առաջացնում.*

*Բոտանիկյան այգու վզին*
*Բողոքում ենք, որ համանդամ*
*Մենք՝ վերնատան իբրև անդամ,*
*Բան չի տեսավ մեր խեղճ ատամ,*
*... Ու գնում ենք հիմա դարդակ,*
*Մեղավոր ես աստրծու տակ...*

*Այս ոտանավորներում աչքաթող չեն արվում նաև «Վերնատան» կին հյուրերը, որոնք կոչվում էին վերնանուշներ: Հիշատակվում է հատկապես Ջավոն՝ Ջավահիր Ներսիսյանը, որ Շանթի կինն էր, բայց 1900-01 թթ. անտարբեր չի եղել Ավետիք Իսահակյանի հանդեպ, որը, սակայն, չի փոխադարձվել. «Այժմ վախենում եմ, որ դու սիրահարվես վերաս և հետո շատ տանջվես», —*

*գրում է Ավ. Իսահակյանը 1901 թ. հունիսին Վենետիկից և հավաստիացնում, որ ինքը միայն եղբայրական զգացմունքներ ունի և չի կամենում խաթել որևէ աղջկա»[18]:*

*Իսկ Դեմիրճյանը իր գրչի հանաքներում Ջավահիրի անունից գրում է.*

*Մուզա չեմ կարող*
*Դառնալ ձեզ համար*
*Ասում է գող-գող*
*Մեր Ջավոն համառ*

*Իսկ իրենք էլ որոշում են.*

*Դե, ել, ժամ է, երթանք պառկինք,*
*Վաղը ունենք քնճ ու հարկինք,*
*Բազում օրիորդք այլ և շատ կինք,*
*Երկու, երանք, չորս, վեց ու հինգ:*

*Թվում է, թե այս ոտանավորները գրելիս հեղինակը ավելի հանդի ու վանկի մասին է մտածել, քան ասելիքի, բովանդակության:*

*Հա*
*Ահա*
*Մի նոր հանգ,*
*Հանդի հանք,*
*Ընկանք և կանգ,*
*Եվ միշտ մնանք*
*Մենք պոետներ*
*Հայոց աղքի,*
*Խեղճ ու անտեր*
*Առանց մոգքի*
*Առանց ոսկի*
*Ուսուցս խոսքի:*
*... Եվ վայ նրան*
*Հազար բերան,*

*Որ ձեր թխած*
*Երգ ու տաղին*
*Գործը թողած*
*Դժվար տեղին՝*
*Ականջ կանե...*

*Հանուն հանգի Օհանեսը դառնում է Հանես: Հանուն հանգի Դեմիրճյանի գրչի տակից դուրս են գալիս անմիտ, անիմաստ բազմաթիվ տողեր: Բայց դա ամենից առաջ քաջ գիտի ինքը՝ հեղինակը.*

*Անտրամաբան այս տողերիս*
*Դատարկ գրպան գրողներին*
*Այդ և ամեն մրողներին*
*Թող ողորմին աստեղք վերին:*

*«Վերնատան» պարապմունքներին միշտ չէ, որ ներկա էին լինում բոլոր անդամները: Բացակայության պատճառը հիմնականում քաղաքից բացակայելն էր՝ հեռավոր Մոսկվայում, Վենետիկում, Ցյուրիխում կամ Ժնևում գտնվելը: Ավելին, կեսկատակ թե լուրջ Ժնևում լուր էր տարածվել, որ Թումանյանը, Լեոն և Ա.Հարությունյանը Վիեննայում են, այնտեղից գնալու են Փարիզ, հետո՝ Ցյուրիխ: Այդ մասին 1907-08 թթ. գրում էր Շանթը Մարիամ Թումանյանին: Կեղծ լուրերի տարածման առիթը եղել էր բանաստեղծի արտասահման մեկնելու ցանկությունը: Այս անգամ արդեն փորձում է կատակել Շանթը. «Օհանեսը Թիֆլիսից Եվրոպա չի կարողանում գալ, ես էլ չեմ կարողանում Եվրոպայից Թիֆլիս գալ, բայց ոչինչ, շատ որ նեղը ընկնենք, իրար կհանդիպենք... Պոլսում» (ԹԺՀ, 471):*

*«Վերնատանը» գրված գրչի հանաքներում առանձնանում է 60-70 տողի սահմաններում մի ոտանավոր, որի Դեմիրճյանի գրչին պատկանելը խիստ կասկածելի է, ավելի ճիշտ, վստահ կարելի է ասել, որ նա չէ հեղինակը: 1906-08 թթ., երբ գրվել է այդ ոտանավորը, Դեմիրճյանը՝ Վերնատան Բայրոնը և Բրանդես-Ազբալյանը գտնվում էին Ժնևում: Եվ բանաստեղծությունն էլ հենց այդ մասին է: Այն ոտանավոր-նամակ է՝ ուղղված Դեմիրճյանին և*

*Աղբալյանին: Ոտանավոր-նամակի հեղինակներ բանաստեղծության մեջ երկու անգամ թվարկվում են Թիֆլիսում մնացած վերնականները, և երկու անգամ էլ առաջինը Հովհաննես Թումանյանի անունն է: Ոտանավորի հեղինակը Դեմիրճյանին և Աղբալյանին դիմում է երկրորդ դեմքով՝ իբրև բացակա անդամներ:*

*Ով նոր Բայրոն*
*Որ ի Շիլյոն*
*Եվ Բրանդես եգիպտացի,*
*Որ Վերնատան տվյալ քացի.*
*Փախար Սոմիզ*
*Գոնե էդտեղ դայիմ կացի*
*Որ չըկորսվիս,*
*Իսկ մենք — այն է՝*
*Շեքսպիր, Հայնե,*
*Նահապետ, Նիցշե,*
*Էս էլ քիչ չէ:*

*Բանաստեղծության հեղինակը, որն ամենայն հավանականությամբ Հովհ. Թումանյանն է, նախ կատոտով հիշում է բացակա վերնականներին.*

*Սիրելիք մեր, որ ի ժնև,*
*Նիկոլ, Դերենիկ և...*
*Այսօր ժողովյալ*
*Ի վերնատուն*
*Հիշեմք անցյալ*
*Մեր խնդություն*
*Ուրախ հանդես*
*Զ մեր Բայրոն և զ Բրանդես,*
*Որ արդ «Բարձր ափին վճիտ Լեմանի*
*... Վազում են թափով սիրատենչ էգին...*

*Այնուհետև մեկ-երկու բառից կազմված տողեր, որոնք ընթերցվում են չուտասելուվի պես.*

*Ջենք իմանում,*
*Ինչ են անում,*
*Ուր են գնում,*
*Ուր են քնում,*
*Ինչ են ուտում,*
*Թե հենց տըրտում,*
*Տըրտում, տըրտում,*
*Վիշտը սըրտում*
*Միշտ կըտըրտում,*
*Միշտ պըտըրտում...*

*Ամբողջ ոտանավորը ուղղված է պանդուխտ կորած եղբայրներին՝*

*Բայրոնա Երկրորդին*
*Եվ Բրանդես չանորդուն:*

*Եվ ավարտվում է այն վերստին «Վերնատան» անդամների, հատկապես առաջին հերթին Թումանյանի անունից:*

*Սակայն Հպարտ*
*Ու միշտ գերմարդ,*
*Մնում ենք ձեզ*
*Կարոտակեզ*
*Ես՝*
*Օհաննես,*
*Ավոն,*
*Լևոն...*

*Ելնելով ոճական որոշ յուրահատկություններից, էս-ի ու էն-ի առատությունից, ինչը գրեթե բացակայում է Դեմիրճյանի գրչի հանաքներում (բացառությամբ մեկ ոտանավորի), ի վերջո, գրեթե սատրագրության արժեք ունեցող խոսքերից, կարելի է կռահել, որ այս «Սիրելիք մեր, որ ի ժնև» սկսվածքով բանաստեղծությունը Թումանյանի հանպատրաստից գրված հանգավոր խոսքերից է:*

«Վերնատունը» իր գոյությունը պահպանեց վեց-յոթ տարի և դադարեց գործելուց անդամների բացակայության և արտասահմանյան տարբեր երկրներ մեկնելու պատճառով: Թեև 1908 թ. նամակներից մեկում Թումանյանը հավաստում է, որ «Վերնատունը» բանում է մեղվի փեթակի նման, և որ նրան անդամագրվել են Ավետիս Ահարոնյանն ու Լեոն: Այստեղ, սակայն, արտահայտվել է Թումանյանի մեծ ցանկությունը՝ վերականգնել «Վերնատան» բովանդակալից, հաճելի, ջերմ երեկոները: Գրական հավաքներ միշտ էլ տեղի են ունեցել Թումանյանի տանը, բայց դա արդեն այն Վերնատունը չէր, որին կարոտով հիշում էին նրա բոլոր անդամները թե՛ նրա գոյության տարիներին և թե՛ առավել ևս՝ նրանից հետո: 1900 թ. հոկտեմբերի 21-ին Յուրիխից Թումանյանին հղած նամակում Ավետիք Իսահակյանը առաջին հարցը, որ տալիս է, վերաբերում է «Վերնատանն ու վերնականներին. «Ի՞նչ է անում Շանթը, ո՞ւր է Դերենիկը, ի՞նչ հալի մեջ է մեր Վերնատունը»: 1901 թ. Ղազարապատից գրում էր. «Ես որ գամ, տեսնենք Վերնատան հալը ինչ է լինելու, երևի առանց դրան մեր օրը սև կանցնի»[19]: Առանց «Վերնատան» իր օրը սև համարող Ավետիք Իսահակյանը 1904 թ. հունվարի 8-ին գրաժայալ դիմում է «վերնատունյաններին», իսկ նույն թվի փետրվարի 23-ին գրում է. «Վերնատունը պիտի սկսե այսուհետև շատ եռանդուն գործել, և հասարակության մեջ իրեն մասին վկայել, մի հանդես հրապարակենք կամ այլ բան, մեր գեղարվեստական սկզբունքները պարզենք»[20]:

Իսկ Դերենիկ Դեմիրճյանը իր գրչի հանաքները գրում է ոչ միայն «Վերնատան» պատերի ներսում, այլ նրանցից շատ հեռու: «Վերնատունը» ներշնչում ու ոգևորում էր բոլոր վերնականներին անկախ նրանց գտնվելու վայրից: 1905 թ. մարտի 6-ին Դեմիրճյանը միևնույն հանգավոր նամակը միաժամանակ հասցեագրում է երեք վերնականների՝ Հովհաննես Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Շանթին:

*Եվ Ավոյին մեր տիրացու,*
*Լևոն փաչին գաղթականցու,*

*Մի պատվեր ունեմ տալու Ավոյին,*
*Որ իմ պոեմը ղրկի «Լումային»:*
*Պայմանի մասին թող այսպես խոսի,*
*Որ նախ՝ այն տպեն տետրում այս ամսի*
*... Նահապետին բարև ճամփի*
*Հազար ողջույն Օլիայինի*
*Եվ, մանավանդ, Նոր Հուկոյին (ԴԴ, 14, 307):*

*Հուկոն Թումանյանի նորածին դուստրն էր՝ Սեդան: Նույն հումորով մեկ այլ նամակում (1898 թ. մարտի 15) Դեմիրճյանը Ավետիք Իսահակյանին հավաստիացնում է, որ Նիկոլի գլխին բամփում է, որ Ավոյի «Մայրիկ հիվանդ եմ»-ը հասկանա. «Մի խոսքով ապուր է ուզում եփել, կրակը ես եմ թեժացնում: Մինչև անգամ պաչկաներով պապիրոս եմ խոստանում, որ լավ գրի» (ԴԴ, 14, 295):*

*1906 թ. մայիսին Ժնևից Թումանյանին գրում է «Վերնատան» բոլոր անդամների ու հավաքույթների հանդեպ ունեցած իր կարոտի մասին «այն հարկի տակ, ուր Աղայան, Շանթ, Աղբալյան, Վարդազարյան և Դերենիկ Դեմիրճյան քեֆ կանեինք: Նույնպես Ավոն կամ մեր Ջավոն կամ թե Օլյան՝ երեխանցով, գոռգոռոցով» (ԴԴ, 14, 309):*

*Անցած օրերի ափսոսանքը արտահայտում է նաև երկու տարի հետո՝ 1908 թ. հոկտեմբերի 29-ին, Ժնևից Թումանյանին ուղղած նամակում. «Էհ, հիմի էլ որտեղ երկու վերնատունցի կպատահենք»: Վերնատան կարծիքը, տարբեր գրողների, նաև իր ստեղծագործություններին տված գնահատականները այնքան էր կարևորում, որ երբ Շվեյցարիայից Քաջազնունուն ուղարկում է իր պոեմներից մեկը՝ շտապ տպագրելու և հոնորարը ուղարկելու հեռանկարով, գրում է. «Շատ կուզենայի նախ վերնատուն ուղարկել» (ԴԴ, 14, 310):*

*Տարիներ անց՝ 1917 թ. հուլիսի 9-ին, Բելի Կլյուչից Դ. Դեմիրճյանը Գարեգին Լևոնյանին ուղղված նամակով «Վերնատան» բոլոր անդամներին բանաստեղծություններ է նվիրում և խնդրում*

է «ՆՎԵՐ ՎԵՐՆԱՏԱՆ» վերնագրով այդ ճոնը տպագրել. «Սա մի նվեր է «Վերնատանը», որի գոյությունը չատերը չեն իմանում, բայց դու գիտես» (ԴԴ, 14, 317):

Գարեգին Լևոնյանը դրանք տպագրել է տալիս «Գեղարվեստ» հանդեսում, իսկ այսօր դրանք իրենց տեղն են գտել Դեմիրճյան-բանաստեղծի գրական ժառանգության մեջ՝ «Մեր Նահապետին՝ Ղ. Աղայանին, Ավ. Իսահակյանին», «Հովհաննես Թումանյանին», «Շանթին», «Ն. Աղբալյանին» և «Ինձ» վերնագրերով:

Աղայանը աղոթքի պես ճշմարիտ միչտ սլանում է դեպի վեր, դեպի երերի չինչ կապույտը, Հովհաննես Թումանյանը հասել է անհունի դռներին և լսում է հավիտենականության չունչը, Շանթի հետ ծիծաղով ու սիրով սար է բարձրանում, իսկ Ն. Աղբալյանին նվիրում է մի խաղալիք, որպեսզի նրա տիեզերական լրջությանը ունկնդիր հոգին մանկանա, քանի որ ամենամեծ իմաստության անունը մանկություն է: (ԴԴ, 1, 6-64):

Ամենից երկար բանաստեղծությունը՝ մոտ 28 տող, նվիրում է. Ավետիք Իսահակյանին

*... էյ, Ավո ջան, հիշում ես,*
*Ախ, ինչ լավ էր, հրաչալի,*
*Ես էլ Շիլլեր իբրև թե*
*Դու քեզ հաչվող մի Գյոթե.*
*երկուսս էլ վես պատանի՝*
*Հայրենի ծով դաչտերում*
*Փնտրում էինք, դեգերում*
*...Ուր են, ո՞ւր են այն օրեր*
*Այն ծաղկունքը ցոլցլուն*
*...Թռան, կորան այն օրեր*
*Հավքերի հետ, հովի հետ,*
*Մարոյի ղիլ երգի հետ*
*Կորան անհետ ու հավետ:*

Իսկ «Ինձ» ճոնում նորից չեչտում է, որ ամենագեղեցիկ բանը աչխարհիս երեսին կյանքն է:

«Վերնատան» անդամներից և ոչ մեկը չմոռացավ ճմեռվա

ուշ գիշերներին Թումանյանի տան վառվռուն բուխարիկի չուրջը հնչած կատակները, անցկացրած գեղեցիկ ժամերը, իմաստավորված, բովանդակալից, ներշնչող պահերը: Թեև գրչի հանաքների մեծ մասի հեղինակը Դեմիրճյանն էր, բայց Ավետիք Իսահակյանի հավաստիացմամբ Թումանյանն էր «Վերնատան» զարդը. «Ով որ նրան մի անգամ տեսներ, կուզեր շարունակ տեսնել: Նրա հետ լինելը, նրա զրույցները. կատակները, սրախոսությունները լսելը գերագույն հաճույք էր: Ուր որ գնար, գվարճությունը հետն էր տանում, նրա հետ եղողը մոռանում էր, թե աշխարհում վիշտ ու ցավ գոյություն ունի:

Նա հարբեցնում էր խնջույքներին ոչ թե գինով, այլ իր հումորով, իր կախարդիչ լեզվով, մտքի, խոսքի, ճաշակի հմայիչ գյուտերով» (ԹԺՀ, 20):

«Վերնատան» միջոցով Թումանյանը ձգտում էր նոր հոսանք առաջ բերել, նոր գրական հասկացություններ, ճաշակ, լուրջ վերաբերմունք, պատկառանք դեպի գրիչն ու գրչի մշակը, և գրչի անպայման մաքրություն:

Կյանքի վերջին տարիներին Թումանյանը անհուն սիրով ու կարոտով էր վերհիշում «Վերնատանը» անցկացրած ժամերը: 1919-ին ասում էր. «Լավ ժամանակ էր, շատ լավ չրջան էր՝ ջերմ, հարազատ, մտերիմ... ափսոս էլ չկան էն օրերը:

Հայ գիդի մեր Վերնատուն... մեր երեկոներ... ինչքա՜ն ենք հավաքվել, վիճել, լուսացրել»:

Թումանյանը քաջ գիտակցում էր, որ գրական-մշակութային ցանկացած շարժում ավելի հզոր և ուժեղ է, եթե սեփական հողի վրա է: Երբ 1921 թ. նա Ավետիք Իսահակյանին հորդորում էր վերադառնալ հայրենիք, ընդգծում էր, որ «Վերնատան» ծրագրերն ու երազները մոտ են իրականացման, որ «Թերևս այժմ կազմենք մեր Վերնատունը մեր երկրում» (10,396):

Թերևս իրողություն է Թումանյանի ժամանակակիցների այն հավաստիացումները, որ «Վերնատունը» բանաստեղծի կենդանության օրոք երբեք չի դադարել գոյություն ունենալուց, ինչպես ասում է Գևորգ Մեսյանը. «Նրա տունը «Վերնատունը» վերանալուց հետո էլ մնում էր «Վերնատուն» (ԹԺՀ, 621):

900-ական թվականները հայ գրականության զարգացման

որոշակի փուլ էր, որի բնորոշ առանձնահատկությունները իրենց յուրօրինակ արտացոլումը գտան «Վերնատան»՝ մեր դրականության պատմության ամենից նշանակալից ու արժեքավոր դրական խմբավորումներից մեկի գործունեության մեջ:

1900-1902 թվականներին Երվանդ Լալայանը եռանդուն գործունեություն էր ծավալել՝ իր «Ազգասիրական հանդեսը» նյութապես ապահովելու համար մի հրատարակչական մարմին ստեղծելու: Այս շրջանում կառավարությունը թույլ չէր տալիս հասարակական-ազգագրական ընկերություններ հիմնել, որի պատճառով Երվանդ Լալայանը որոշեց կազմակերպել Ազգագրական ընկերակցություն առևտրական հիմքերի վրա: 1900 թվին, երբ այն ստեղծվեց, նրան անդամագրվեցին Հովհաննես Թումանյանը, Պերճ Պռոշյանը, Գևորգ Ասատուրը, Գևորգ Ղարաջյանը և ուրիշներ: Վարչության նախագահն էր Ալեքսանդր Մելիք-Ազարյանը: Հետագայում Լալայանին հաջողվում է ընկերակցությունը դարձնել ընկերություն: Վարչության նիստերը տեղի էին ունենում Լալայանի բնակարանում: Այս խումբը նույնպես, ինչպես վկայում է Գևորգ Ասատուրը (Ասատվածատրյան), որոշել էր կազմակերպել դրական ընկերություն.

«Մենք նպատակ ունենք, — ասում է նա, — մեր դրական խմբակը ընդարձակել և վերածել դրական ընկերության» (ԹԺՀ, 353):

Այսպես, ևս մի դրական խմբակ, որին մասնակցում էր Թումանյանը, և որի նպատակն էր նաև դրական ընկերության հիմնադրումը: Սակայն այդ ցանկությունը չիրականացվեց: Այս անգամ պատճառն այն էր, որ կառավարությունը Գ. Ղարաջյանին կասկածեց ՌՍԴԲԿ-ի անդամության մեջ և բանտարկեց նրան 1902 թ. փետրվարի 17-ին խմբի մյուս անդամների՝ Ե. Լալայանի և Հ. Հակոբյանի, Գևորգ Ասատուրի հետ: Թեև 15 օրից նրանց ազատեցին, բայց խմբակի բոլոր անդամները հսկողության տակ էին:

Նույն շրջանում՝ 1900-ական թվականներին, շարունակվում էին դրողների միությունն և դրական ֆոնդ հիմնելու աշխատանքները: Այս նպատակով իշխանուհի Մարիամ Թումանյանը 1904 թ. մեկնեց Բաքու և այդ հարցով դիմեց Ներսես Աբելյանին: Իշխանուհին և Սամսոն Հարությունյանը դումարում են ժողով՝ Բաք-

վում այդ գործի համար համակիրներ գտնելու նպատակով: Գրական ֆոնդ և ընկերություն ստեղծելու նպատակին էր ուղղված նաև 1904 թ. Գարեգին Հովսեփյանի հրավերով Թիֆլիսի առաջնորդարանում տեղի ունեցած ժողովը, որին մասնակցում էին Հովհ. Թումանյանը, Աբգար Հովհաննիսյանը, Ալ. Շիրվանզադեն, Ղ. Աղայանը, Գ. Վանցյանը, Պ. Պռոշյանը և ուրիշներ (ԹԺՀ, 561): Սակայն ընկերությունն այդպես էլ չի հիմնվում: Քաղաքական պայմանները նպաստավոր չէին: Մարիամ Թումանյանի վկայությամբ վճռվում է առժամանակ հետաձգել գրողների ընկերության կազմակերպումը, քանի որ խառը քաղաքական իրավիճակում կառավարությունը դժվար թե հաստատեր նման մի ընկերություն (ԹԺՀ, 478):

1905-06 թթ., երբ Թումանյանը զբաղված էր հայ-թուրքական կռիվների և արյունահեղության դեմ պայքարով, Թիֆլիսում տեղի են ունենում գրական միություններ ստեղծելու մի քանի փորձեր: 1905 թ. «Աղբյուր-Տարազի» խմբագիր Տիգրան Նազարյանի հրավերով խմբագրատանը տեղի է ունենում մի հավաք՝ հիմնադրելու համար «Գրականագետների միություն, որի նպատակը հայ գրագետներից, առանց խտրության ուղղությունների և քաղաքական դավանանքների, կազմել մի գերդաստան»[21]: 1906 թ. Տ. Նազարյանը Բագրատ Նավասարդյանի հետ միասին նախաձեռնում է գրական ընկերության կազմակերպումը: Ընտրվում է 7 հոգուց կազմված հատուկ մասնաժողով (Ղ. Աղայան, Բ. Նավասարդյան, Ա. Աթանասյան, Ս. Թառայան, Տ. Նազարյան, Ս. Մամլումյան, Իս. Հարությունյան) կանոնադրություն մշակելու համար: Այդ ընկերությունը պիտի կոչվեր «ՇԱՂԿԱՊ», և հենց սկզբից նրա նախաձեռնողները հռչակում էին, որ հետամուտ չեն լինելու քաղաքական հարցերի արծարծմանը, այլ դնելու են գրական վարքուբարքի, մաքրության խստիվ պահանջ, ճշմարտությունը ոչ մի գնով չաղավաղելու պահանջ: «Շաղկապը» պետք է լիներ «Միջազգային մամուլի դաշնակցության մի մասը, օգնության հասներ իր անդամներին և նեցուկ լիներ նյութապես ու բարոյապես, խրախուսեր երիտասարդ գրական ուժերին»: 1906 թ. փետրվարի 2-ի և 14-ի խորհրդակցություններն

ու ժողովները նախագահում էր «Լումա» ամսագրի խմբագիր Գյուտ քահանա Աղանյանցը[22]:

1908 թվի փետրվարի 22-ին «Աղբյուր-Տարազի» խմբագրատանը դարձյալ նշանակված էր ժողով՝ հիմնելու համար «Գրականագետների ընկերություն»: Նույն թվի մարտի 9-ին Թիֆլիսի տարբեր ազգությունների բոլոր լրագրողներն ու գրականագետները հրավիրում են խորհրդակցություն «Թիֆլիսի գրականագետների, ժուռնալիստների և գրողների պրոֆեսիոնալ ընկերություն»[23] ստեղծելու նպատակով: Տարաձայնություններ են առաջանում միության անվանման, նպատակների և այլ հարցերի շուրջ: Վիճաբանություններին մասնակցում են Շեստովը, Գելեյշվիլին, Նադորսկին, Գլադոլևը, Գոտուան, Ա. Քալանթարը, Ա. Երզնկյանը, Եղ. Թումչյանը: Որոշվում է, որ այդ միության մեջ համախմբվելու են թե՛ լրագրողները և թե՛ գրողները: Կանոնադրությունը մշակելու համար ընտրվում է մի հանձնաժողով, որի կազմում էին Գոտուան, Հ. Առաքելյանը և Պիճեկյանը:

Գրողների ընկերություն ստեղծելու այս բոլոր փորձերը ձախողվում են, բայց որոշ չափով նպաստում են Հայ գրողների կովկասյան ընկերության կանոնադրության ստեղծմանը:

Այնուամենայնիվ, 1907 թվականից սկսած Թիֆլիսում աշխուժանում է նաև հայ մշակութային կյանքը: Թումանյանի վկայությամբ, նույնիսկ ռեակցիայի տարիներին «իրար ետևից զանազան ընկերություններ են երևում, միշտ կուլտուրական կամ հրատարակչական» (10, 23):

1907 թ. Թիֆլիսի «Օգտակար գիտելիքներ տարածող ընկերությունը» կազմակերպել էր «Կովկասյան ժողովրդական համալսարան», որն ուներ հայերեն, վրացերեն, օսերեն, թուրքերեն բաժիններ: Հայկականը ստեղծվել էր ապրիլի 17-ի ընդհանուր ժողովում: Հանձնաժողովը, որի կազմում էին Արտ. Աբեղյանը, Ալ. Խատիսյանը և Լ. Բաբայանը, միանալով 11 այլ հայ ներկայացուցիչների հետ, կազմակերպում էր զեկուցումներ ու դասախոսություններ: Նույն թվի հունիսի 10-ին Ջուբալովի անվան ժողովրդական տանը Թումանյանը զեկուցում է «Կյանք և գրականություն» թեմայով: Իսկ հոկտեմբերի 14-ին արդեն ժողովրդական համալ-

սարանի ընկերության վարչությունը Թիֆլիսի ոստիկանապետի միջոցով ստանում է գեներալ նահանգապետի պաշտոնական գրությունը, որով արգելվում էր հայերեն և վրացերեն լեզուներով դասախոսությունների ընթերցումը[24]: Հայկական բաժնի կյանքը տևեց մոտ մեկ տարի, այն լուծարքի 1908 թ. ապրիլին[25]:

«Ընդյակի», «Հինգշաբթիների», «Վերնատան» և այլ խմբակների ու ընկերությունների պարապմունքների ընթացքում Թումանյանի, Լեոյի և մյուս գրողների ու գրական գործիչների համար ավելի էր ընդգծվում գրողների միավորման կարիքն ու անհրաժեշտությունը: Մեծանում էր համատեղ գործելու եռանդն ու ցանկությունը: Դրանք եղան յուրօրինակ նախապատրաստական փուլ Հայ գրողների կովկասյան ընկերության ստեղծման ճանապարհին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# Թումանյանը և հայ գրողների կովկասյան ընկերության հիմնադրումը



XX դարասկզբին Թիֆլիսում գործում էին բազմաթիվ ընկերություններ, որոնցից յուրաքանչյուրը փորձում էր կազմակերպել կամ ղեկավարել քաղաքի բազմազգ բնակչության կենցաղի և մշակույթի որոշակի բնագավառ: 1912 թ. սկզբներին դեռ հայ գրողները չունեին իրենց միավորումը, մինչդեռ արդեն ստեղծվել ու գործում էին Կովկասի հայոց բարեգործական, Հայոց հրատարակչական, Հայուհյաց դրամատիկական, Հայ հառաջադիմական, Հայոց ազգագրական, Հայ գեղարվեստական, Հայուհյաց որբախնամ, Հայերի մեջ օգտակար գիտելիքներ տարածող, Հոգեբույժների, Էսպերանտիստական և զանազան այլ ընկերություններ: Նույնը կարելի է ասել հայաշատ մյուս գաղութների, Արևմտյան Հայաստանի և Հայության արևելյան հատվածի այլ կենտրոնների ու քաղաքների մասին: Պետերբուրգում, օրինակ, գործում էր Հայ գեղարվեստական, Թեհրանում՝ Թատերասիրաց, Եգիպտոսում՝ Հայկական բարեգործական, Բաքվում՝ Հայոց կուլտուրական, Վանում՝ Հայկական բարեսիրական, Օդեսայում, Վասպուրականում՝ Հայ կանանց, Երևանում՝ «Օգտակար գիտելիքներ տարածող», Կարսում՝ Աղքատախնամ և զանազան այլ ընկերություններ՝ աշխարհի ամենատարբեր մասերում: Որոշ ընկերություններ ճյուղավորվում էին, երբեմն էլ ստանում համահայկական բնույթ: Հայոց բարեգործական ընկերությունը Կովկասում, որի հիմնադիրն էր բժիշկ Բագրատ Նավասարդյանը, հայաբնակ վայրերում ուներ 59 ճյուղ: 1912 թ. դեկտեմբերի 30-ին բացվում է Թիֆլիսի Հայ երաժշտական ընկերությունը՝ ազգային երաժշտության զարգացմանը նպաստելու նպատակով: Ազգային գեղարվեստն ու մշակույթը դառնում են առանձնահատուկ ուշադրության ու հոգածողության առարկա:

Այս շրջանում Թումանյանը և հայ մշակույթի ուրիշ գործիչներ ոգևորված էին պատմագրության և հայագիտական աղբա-

յին ֆոնդ հիմնելու ծրագրերով: Ն. Մառին ուղղված ապրիլի 25-ի նամակից տեղեկանում ենք, որ Թումանյանը մեծ ցանկություն է ունեցել մասնակցելու այդ ֆոնդի կազմակերպմանը և իր ափսոսանքն է հայտնում, որ չհաստըրեց ու չկարողացավ: Նման ֆոնդ ստեղծելու առաջարկությամբ հանդես էր եկել Պետերբուրգի հայ գաղութը: Ստեղծվել էր հատուկ մասնաժողով, որի կազմում էին Մառը, նկարիչ Վ. Սուրենյանը և ուրիշներ: Մասնաժողովը հանդես եկավ էջմիածնի ճեմարանը հայագիտության հայկական ակադեմիա դարձնելու և գրական ֆոնդի հարցն էլ պատմադրական ու հայագիտական ֆոնդի հետ միաժամանակ դնելու առաջարկով: Այն իր պաշտպանությունը գտավ Մոսկվայի հայկական գաղութում, որի գրական հասարակայնության հյուրը եղավ Թումանյանը 1912 թ. ապրիլին: Երեք օր Մոսկվայում մնալուց հետո նա վերադարձավ Թիֆլիս և մտահոգված էր խնդիրը «հաստատ հողի վրա դնելու և ծրագրից գործին անցնելու» (10, 146) հարցով: Թումանյանը մեծ հույսեր էր կապում հատկապես Մառի հետ: «Ինչ խոսք, — գրում էր նա նշանավոր հայագետին, — որ այս ամենի մեջ Դուք եք լինելու գլխավոր դերակատարը, և ես սրտանց ուրախ եմ, որ հայկական ակադեմիայի և հայագիտության գործը մեր մեջ հաջողվելու է Ձեր ձեռքով, կապվելու է Ձեզ հետ...

... Եվ գործի ամբողջ հույսը Դուք եք» (10, 146):

Պատմագրության և հայագիտության ազգային ֆոնդը ծրագրում էր հավաքել, թարգմանել, ուսումնասիրել և հրատարակել հայ և այլազգի պատմագիրների տեղեկությունները հայերի մասին, տարբեր երկրների արխիվներում պահվող հայոց պատմության վերաբերյալ նյութեր և փաստաթղթեր, հայոց վանքերի ու հին հիշատակարանների արձանագրություններ: Թումանյանը, մեծ չահագրգռվածություն հանդես բերելով այս գործում, հայագիտության վերաբերյալ նյութեր հավաքելու և տարեկան մեկից մինչև երկու ժողովածու հրատարակելու առաջարկով դիմեց Կովկասի հայ ուսուցիչների միությանը: Այդ առաջարկը ընդունվեց միության 1912 թ. հունիսի 11-ի ընդհանուր ժողովում, ուր բանասուեղծը խոստացավ երկու ժողովածուների ծախսը անձամբ հոգալ: Թումանյանը այդ պահին այնքան էր ոգևորված այդ ֆոնդի

և հայկական ակադեմիա հիմնելու ծրագրով, որ գրական ֆոնդի հարցը նվազ կարևոր էր համարում (10, 148):

Սակայն 1912 թ. սկզբներին, երբ գրական ֆոնդի և գրողների ընկերության համար պայքարը մտավ նոր փուլ, ծավալվեց նոր թափով, ընդգրկեց աշխարհի հեռավոր մասերում ապրող հայությանը, դարձավ բառիս լայն իմաստով համահայկական հետաքրքրություն ներկայացնող խնդիր, Թումանյանը այդ գործի առաջամարտիկներից և պայքարի դեկավարներից մեկն էր: Արդեն հարցի գրական լուծմամբ չահագրգռված էր գրական ողջ հասարակայնությունը, մտավորականության զգալի մասը: Այս անգամ հարցի բարձրացման առիթը, որը և դառնում է Հայ գրողների կովկասյան ընկերության կազմավորման առիթը, մեր տպագրության 400-ամյա և հայ գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանի նախապատրաստությունն էր:

Գրեթե ամբողջ հայկական մամուլը, զանազան ընկերություններ և հաստատություններ, այս կամ այն չափով մասնակցելով տոնի կազմակերպման աշխատանքներին, որոշում են հավերժացնել այն՝ համազգային-մշակութային մեծ արժեք ներկայացնող որևէ ֆոնդի հիմնադրումով: Եվ ահա զարձյալ հրապարակի վրա է գրական ֆոնդի գաղափարը: «Ոստան» եռամսյա պարբերականը գրում է. «...Ոստան պիտի փափաքեր, որ հայ գրքի ներկա տոնը ըլլա զեղեցիկ առիթ մը բարվոքելու համար հայ հեղինակին նյութական վիճակը, ասով տալու համար իրեն կարելիություններ մտավորապես ալ ավելի արդյունավետ դառնալու»[1]:

Անշուշտ, բոլորի համար պարզ էր այն հայտնի ճշմարտությունը, որ հոբելյանական ցանկացած հանդիսություն, որքան որ անցյալի որևէ արժեքի հաստատումն է, հռչակումն ու գնահատությունը, նույնքան էլ ձգտում է ու բաղձանք՝ ապագայում ստացվելիք որևէ արժեքի: Էջմիածնում և Թիֆլիսում ստեղծվում են երկու միմյանցից անկախ հանձնաժողովներ, որոնք սուր պայքարի մեջ են մտնում հոբելյանի հետ կապված գրեթե յուրաքանչյուր հարցի շուրջ: Վեճի առարկա էին դարձել հատկապես տոնը երբ և ինչպես նշելու, ինչպիսի ֆոնդով հավերժացնելու հարցերը: Էջմիածինը առաջարկում էր տոնել հոկտեմբերի

13-ին և հիմնել դպրոցական ֆոնդ: Թիֆլիսի հանձնաժողովը, որ ստեղծվել էր 1912 թ. փետրվարին, Լեոյի ղեկավարությամբ առաջարկում էր տոնել նոյեմբերի 25-26-ին[2] և հիմնել գրական ֆոնդ: Եվ ահա Հովհաննես Թումանյանը այս հարցում նույնպես, ինչպես հաճախ իր կյանքում, հանդես է գալիս հաշտարարի դերով: Վստահ լինելով, որ համազգային տոնը նշելու համար անհրաժեշտ է նախ և առաջ ազգովին համախմբվածություն՝ 1912 թ. սեպտեմբերին նա գրում է «Հետաձգել և միասին տոնել» հոդվածը, ուր առաջարկում է հետաձգել մոտ վեց ամսով, որպեսզի տոնը կատարվի վայելուչ շքեղությամբ «ամեն տեղ միաժամանակ ու միասին» (6, 367):

Թումանյանի առաջարկը անմիջապես իր արձագանքն ու հավանությունն է գտնում: Նրա հոդվածի տպագրության հենց հաջորդ օրը «Հորիզոն» լրագիրը իր առաջին էջում զետեղում է «Պետք է համաձայնության գալ» առաջնորդողը, իսկ Մեսրոպ ա.ք. Մելյանը սեպտեմբերի 14-ին իր «Անհրաժեշտ է հետաձգել» հոդվածում պարզապես հայտարարում է. «Այսպիսով միացնում եմ իմ ձայնը պ. Հ. Թումանյանի ձայնին» (Հ, 1912, 211): Արձագանքներ եղան նաև Փարիզից, Թավրիզից և Վիեննայից: Արշակ Զոպանյանը գրեց իր «Րոպեին պահանջը», ուր հեղինակը կոչ արեց բովանդակ հայությանը վեր մնալ ամեն կարգի բանավեճերից, քանի որ «... Հովհաննես Թումանյանն իր հոյակապ հոդվածով մատնանիշ ըրած էր արդեն հույսի փակ նշույլը, որ կա մեր խավարչտին երկնքի մեջ» (Հ, 1912, 211): Իսկ Թիֆլիսի հանձնաժողովը, հետևելով Թումանյանի առաջարկին, տոնը պաշտոնապես հետաձգելու որոշում կայացրեց (Հ, 1912, 210):

Հոբելյանի հետ կապված նախապատրաստական ողջ փուլը առաջին իսկ օրերից կապվում է գրողների ընկերության հիմնադրման պատմությանը: Դեռ 1912 թ. հունվարի 28-ին Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը իր հայ տպագրության 400-ամյակին նվիրված հատուկ խորհրդակցությունում, լսելով հրատարակչական և գրական ֆոնդերը միացնելու, գրաշարների, հայոց պատմությունը հրատարակելու և այլ ֆոնդեր հիմնելու առաջարկները, 57 ձայնից 38-ի մեծամասնությամբ որոշել էր հիմնել

դրական ֆոնդ: (Մ, 1912, 21): Այսպես, 1912 թվի Հենց առաջին ամսում դրվում է դրական ֆոնդի կազմակերպման առաջարկը, որի իրականացմանը ձեռնամուխ է լինում նաև այդ նպատակով նույն թվի փետրվարի 8-ին ստեղծված Թիֆլիսի Հոբելյանական հանձնաժողովը: Վերջինս Լեոյի նախագահությամբ դառնում է դրական ֆոնդի համար ծավալված պայքարի հիմնական կենտրոնը: Կովկասի հայոց հրատարակչական ընկերության նախաձեռնությամբ ստեղծված այդ հանձնաժողովը բաղկացած էր 15 հոգուց, որոնց թվում էին Ալ. Շիրվանզադեն, Նար-Դոսը, Եր. Լալայնը, Ար. Զարգարյանը, Ալ. Խատիսյանը, Տ. Հովհաննիսյանը և ուրիշներ: Ահա այս հանձնաժողովն էր, որ մշակեց ընկերության կանոնադրությունը և ներկայացրեց Թիֆլիսի նահանգական ատյանին՝ հաստատման: Այդ կանոնադրության նախագիծը քննվել էր դեռևս 1909 թ. օգոստոսի 16-ին Թումանյանի մասնակցությամբ Ավ. Արասխանյանի հրավիրած ժողովում: Նախագծի տակ կար Թումանյանի ստորագրությունը: Նույն նպատակով էր հրավիրվել նաև 1910 թ. ապրիլի 24-ի ժողովը[3]: Ահա այդ կանոնադրությունն էր, որ 1912 թ. հունիսի 18-ին ներկայացվում է Թիֆլիսի նահանգական ատյանին՝ հաստատման:

Ինչպես նշվում է ընկերության տեղեկագրում, այն հաստատվել է նույն թվի օգոստոսի 2-ին, թեև «Հորիզոնը» հուլիսի 10-ին հայտարարում էր, որ այն արդեն հաստատվել է: Սակայն այդ «հաստատ աղբյուրը», որի վրա հենվում էր լրագիրը, մեզ անհայտ է:

Կանոնադրությունը կազմված էր 7 մասից և 39 պարագրաֆից, որոնցից առաջինում ձևակերպվում էր ընկերության նպատակը.

ա/ Իր անդամների նյութական դրության բարվոքումը.

բ/ Նրանց մտավոր, բարոյական և գեղարվեստական զարգացումը և...

գ/ Նյութական փոխադարձ օգնություն[4]:

Այս ամենը իրագործելու համար ընկերությունը պետք է վարձեր բնակարաններ, իբրև սեփականություն ձեռք բերեր շարժա-

կան ու անչարժ գույք, գրական և գեղարվեստական երկերի հեղինակային իրավունք, կազմակերպեր հայ գրողի չահերը պաշտպանող ժողովներ, հաշտարար միջնորդ դատարաններ՝ փոխադարձ համաձայնությամբ քննելու հրատարակիչների և գրողների միջև ծագած թյուրիմացությունները, հատուկ բյուրո՝ իրավական ու բժշկական օգնություն հասցնելու և տեղեկատու բյուրո՝ ընկերության գործադուրկ անդամներին աշխատանքով ապահովելու: Բացի գրողի նյութականի մասին մտահոգությունից՝ ընկերության կանոնադրության մեջ չեչտվում էր հարցի նաև բարոյական կողմը: Իր անդամների գեղարվեստական զարգացմանը նպաստելու համար ընկերությունը պարտավորվում էր կազմակերպել մատենադարաններ, ընթերցարաններ, հասարակական դասախոսություններ, գիտական արշավանքներ, համերգներ, ներկայացումներ, ընթերցումներ, հանրակրթական և կյանքի այնպիսի ընթացիկ խնդիրներ պարզաբանելու համար, որոնք չոչափում են գրողների չահերը:

Անդրադառնանք գրական ֆոնդ և ընկերություն հիմնելու թեևա ամենագլխավոր պատճառներից մեկին՝ հայ գրողի անապահով վիճակին, որն զգալիորեն խանգարում էր գրական չարժման առաջընթացին, գրական տաղանդների անկաշկանդ զարգացմանը: Տարբեր ազգերի համար գրականության զարգացումը հաճախ անմիջական կախման մեջ է եղել գրողի նյութականից, մեկենասների, հասարակական միավորումների, ընկերությունների գոյության անհրաժեշտությունից: Գրողի տնտեսական վիճակից գրականության անմիջական կախվածությունը, գրողի՝ գրականությամբ զբաղվելու դրեթե անհնարինությունը հայ նոր գրականության զարգացման ընթացքի կարևոր առանձնահատկություններից մեկն է: Պատահական չէ, որ այդ ցավալի խնդիրը նաև յուրաքանչյուր հայ գրողի, քննադատի, գրական ամեն մի գործչի, ազգի հոգևոր մշակույթի զարգացմամբ մտահոգված յուրաքանչյուր մարդու ուշադրության կենտրոնում էր: Իզուր չէր Թումանյանը հայ գրականությունը անվանում խանդարված գրականություն, իսկ հայ գրողին՝ խանգարված գրող, քանի որ ստեղծագործելու և միայն գրականությանը նվիրվելու փոխարեն նա ստիպված է լինում զբաղվել այլ աշխատանքով՝ իր և ընտանիքի գոյությունը պահպանելու համար:

«Հույս էլ չկա, որ կփոխվի այդ դրությունը, որովհետև պատճառը շատ է հիմնական. ազգը փոքր է, ընթերցող հասարակությունը՝ քիչ, գրականության չուկան՝ սահմանափակ: Այս տեսակ փոքր ազգերի մեջ գրականությունը միշտ պահվում է անհատի, հասարակության, թե պետության՝ արտաքին միջնորդությամբ ու օժանդակությամբ», – գրում էր Թումանյանը (6, 338): Այս կարևոր խնդրին Թումանյանը անդրադարձել է բազմիցս, միշտ էլ ընդգծելով, որ երբ գրողի ոգևորության վրա ծանրանում են ամենօրյա կենսական հոգսերը, նա անընդունակ է դառնում մուսային ծառայելու, իսկ «սերն ու խանդը դառնում են անպտուղ, դառն հուշմունքների աղբյուր և հառաջացնում են մի հարատև կռիվ, որի մեջ ընկած գրողը չի կարողանում յուր կոչմանը ծառայել» (9, 186), – գրում է Թումանյանը Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությանը ուղղած նամակներից մեկում:

Գրականությանը և գրողներին ապահովելու միտքը Թումանյանի կարծիքով հասու չէր որոշ «ինտելիգենտ կոչված հոգով տգետների», որոշ խմբագիրների ու «հրապարակախոսների» , որոնց կարծիքով երիտասարդ, թեկուզ տաղանդավոր գրողներին օգնելու կարիք չկա, քանի որ նրանք ֆիզիկապես առույգ են և կարող են իրենք հայթայթել իրենց ապրուստը, այդպիսի «դուքանչիները» չեն հասկանում «նյութապես անապահով գրողի հոգեկան անհանգստությունն ու դրա հետևանքները. նրանք չեն կարող տեսնել և հասկանալ այն դրաման, որն ապրում է գրող մարդը, որ «կյանքի բոլոր հոգսերի, ընտանեկան բոլոր պահանջների, անձնական բոլոր կարիքների դեմ միայն մի բան ունի՝ յուր ձիրքը, յուր տաղանդը, իսկ այդ ոչ ոք չի ընդունում՝ ո՛չ կինը, ո՛չ երեխան, ո՛չ դուքանչին, ո՛չ հացթուխը, ո՛չ չոր ծախողը և այլն, և այլն» (9, 184): Ոչ ոք չի հասկանում առօրյա կյանքի և գրական կոչման զարհուրելի երկպառակությունը, որ հոշոտում, քայքայում, պատառ-պատառ է անում մարդու բոլոր ուժերն ու ընդունակությունները:

Հայ գրողի բացահայտ անմխիթար դրության մասին են գրել ու խոսել Ալ. Ծատուրյանը («Այլանդակ երևույթներ»), Ղ. Ալաձանը («Տարրական ճշմարտություններ», Վրթանես Փափազյանը

(նամակներ, հոդվածներ), Գր. Զալխուչյանը, Լեոն, Շիրվանզադեն և ուրիշներ, քանզի ինչպես գրում էին ժամանակի լրագրերը. «Ու՞մ չէ հայտնի մեր նորագույն գրականության 50-60 տարվա մարտիրոսական պատմությունը» (Հ, 1912, 199):

Գրողների նյութական ապահովության հարցը դրվել էր դեռևս 19-րդ դարի 60-ական թվականներին Ստ. Նազարյանի՝ հայ հասարակական ընկերությունների անհրաժեշտությունը հիմնավորող հոդվածներում: «...Մարդկային իմացությունը եթե կամի ներդործել մարդկության հրապարակի մեջ, նա միշտ, ամենայն քայլափոխի մեջ կապված է նյութական պայմանների հետ»[5]: «Կռունկ» պարբերականը, արձագանքելով Նազարյանի հոդվածին, 1862-ին գրում է. «Այն հայ աշխատող հեղինակը, որ ունի շատ բան ընծայելու յուր ազգին՝ մեռած է, չունենալով միջոց կատարելու յուր գործը»[6]:

Իրոք, նյութական անապահովվածությունը մեծագույն չարիք է եղել հայ գրողի համար: Դրանում կարելի է համոզվել հայ ցանկացած գրողի նամակների, հաճախ նույնիսկ հոդվածների բովանդակությանը ծանոթանալիս: Կարիքից հուսահատ Ղազարոս Աղայանը Թումանյանին գրում է. «Ես ուրախ էի, որ պիտի աքսորեն»[7]: Վրթ. Փափազյանը Ա. Զոպանյանին հղած իր նամակում վկայում է. «Գրականությամբ Կովկասում ապրել անհնար է»[8]:

Նույնն է հավաստում Վրթանես Փափազյանը մեկ այլ առիթով. «Մեր ամենալավ բանաստեղծն ստիպված է ուսուցչությամբ պարապել, վիպասանն՝ թեմական վերատեսչությամբ», – գրում է նա և տխրությամբ արձանագրում այն փաստը, որ Հակոբ Պարոնյանի պես մեծ երգիծաբանը կարող էր ցրիչությամբ կամ նպարավաճառությամբ զբաղվել, քանի որ «Գրական աշխատությունը մի ծառայի ստացածի չափ անգամ չի վարձատրում մեզ:

Ցավեցիք և ի՞նչ արիք, երբ Պռոշյանը ածխավաճառություն էր անում... երբ Մուրացանը հաշվապահության դիմեց... երբ Լեոն աչքերը փչացրեց գրողին ոչ պատշաճ աշխատությունների վրա:

Ցավեցիք և ի՞նչ արիք, երբ Աղայանը դասագրքեր հորինելուց հոգնել էր և գեղարվեստական բան արտադրելը մոռացել, երբ Շանթը դասագրքեր էր կազմում և դասեր տալիս, երբ Ահա-

*րոնյանը ուսուցչության դիմեց... երբ Նար-Դոսը լրագրական հոդվածներ է չինում և Երիցյանի թերթի սև աշխատանքներով զբաղվում...»[9]:*

*Ղազարոս Ալպայանը չէր կարող մոռանալ, որ Րաֆֆու «Փունջերը» տպարանումը փակված՝ տպագրության վարձը չվճարելու համար և վերջը կչեռքով ծախեցին մանրուք փաթաթելու համար»[10]: Շարունակելով իր «Տարրական ճշմարտություններ» հոդվածը՝ Աղայանը դառը հեգնանքով կատակում է, թե Պերճ Պռոշյանին հացի խնդիրը ստիպեց դրել «Հացի խնդիր» վեպը:*

*Դեռ 90-ական թվականների սկզբներին դրվում էր դրականությունը դրողի համար մասնագիտություն դարձնելու պահանջը: Այս իմաստով արժանահիշատակ է «Մշակի» դերը այդ շրջանում: Խաչատուր Մալումյանը այդ լրագրի էջերում կոչ էր անում հայ ընթերցող հասարակությանը անել ամեն ինչ, որպեսզի դրողները չդառնան վարժապետ, վաճառական կամ լուսանկարիչ, էլքեն իրենց գլխավոր զենքը՝ գրիչը, չդառնան անպտղաբեր ու անարդյունավետ: Եվ քանի որ «Մեր դրողներից շատերը դեռ կենդանի ժամանակ մոռած են եղել հայոց դրականության համար» (Մ, 1892, 145), Մալումյանը պահանջում է հասարակական տարբեր հիմնարկություններից օգնության հասնել դրողներին, որպեսզի նրանք ծառայեն իրենց կոչմանը: Նույն այս խնդիրը իր ամբողջ սրությամբ դրվում է նաև տասական թվականների հենց սկզբից: Այս անդամ հարցի արծարծողը «Ընկեր» թերթն էր, ուր 1911 թ. հոդվածների մի ամբողջ շարք է հրապարակվում այդ թեմայով: Որոշ հեղինակներ, ինչպես օրինակ, Հակոբ Գենջյանը, ծայրահեղության էին հասնում՝ գրականության զարգացումը կապելով միայն դրողի նյութականի հետ: Հիշատակության արժանի են նաև Հ. Խոջիկի «Անխիղճ շահագործություն», Ալ. Աղաբյանի «Գրական վարձատրություն», Կ. Բուրչաքալյանի «Գրողի նյութական դրությունը» և այլ հոդվածներ[11]:*

*Մեկ տարի անց, երբ հրապարակի վրա էր հայ տպագրության 400-ամյա և հայ գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանը գրական ֆոնդով հավերժացնելու գաղափարը, վերստին նոր ուժով դրվում է դրողի համար գրականությունը մասնագիտու-*

թյուն դարձնելու հարցը: Այս շրջանում կարդացած իրենց դասախոսություններում այդ միտքն էին ընդգծում Լեոն, Գր. Վարդանյանցը, Շիրվանզադեն և ուրիշներ: Վերջինս պարզապես հայտարարում էր. «Գրական ֆոնդը էականն ու կենսականն է ներկայիս» (Մ, 1912, 158): Իսկ Արշալույս Տեր-Հովնանյանը իր հոդվածը վերնագրում է «Գրականությունը որպես պրոֆեսիա», ուր նա իրավացիորեն դժգոհում է, որ «Գրականությունը մեզանում չէ հայտնվում որպես ինքնուրույն պրոֆեսիա, որովհետև նրա մարդարենները... առաջին տեղը դնում են այն պաշտոնը, որը քիչ թե շատ դրամ է հասցնում... Ի՞նչ անել... Գրականությունը դարձնել պրոֆեսիա, որի համար պիտի ապահովել մի որոշ ընկերությամբ: ... Պետք է գրականությունը դարձնել պրոֆեսիա և ոչ թե «պարապ վախտի խաղալիք» (Մ, 1912, 38):

Սակայն դեռ շարունակվում էին տարբեր ֆոնդեր հիմնելու առաջարկները: Առհասարակ հայ հասարակական-մշակութային ողջ կյանքը ապրում էր վերոնշյալ տոնակատարության խնդիրներով: Սակայն դրա հետ կապված վեճերը դնալով ավելի էին բորբոքվում և դառնում անիմաստ, քանի որ երբեմն կողմերից որևէ մեկը չէր կամենում զիջել միայն այն պատճառով, որ որոշումը կայացվել էր այս և ոչ թե այն հանձնաժողովի կողմից: Մինչ շարունակվում էր գրական ֆոնդի համար պայքարը, «Հորիզոնում» տպագրվում է Հայ գրողների կովկասյան ընկերության ստեղծելու և նրան անդամագրվելու հայտարարությունը.

*Կովկասի հայ գրագետների ընկերության*
*Կանոնադրությունը պատշաճավոր իշխանությունից*
*հաստատված լինելով՝ ընկերության հիմնադիրները*
*հրավիրում են հայ գրողներին, գիտնականներին*
*և լրագրողներին անդամագրվել ընկերության:*
*Անդամ գրվել կարելի է Կովկասի հայոց*
*հրատարակչական*
*ընկերության գրասենյակում ամեն օր 10-2 ժամը,*
*մինչև սեպտեմբեր 23-ը:*

*(Հ, 1912, 204):*

*Հայտարարությունից պարզ է դառնում, որ ընկերությանը կարող էին անդամագրվել գրականության բոլոր մշակները՝ թե՛ գրողները, թե՛ քննադատներն ու լրագրողները:*

*Ընկերությունը նախատեսված էր հիմնադրել 1912 թ. սեպտեմբերի 29-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում հրավիրված հոբելյանական հանձնաժողովի և նրան ընտրող բոլոր հայկական հաստատությունների ներկայացուցիչների ընդհանուր ժողովում: Վերջինս տեղի է ունենում, սակայն օրակարգի երկրորդ հարցը՝ ընկերության բացումը, հետաձգվում է: Ժողովը հանձնարարում է նախաձեռնարկ անդամներին որքան հնարավոր է շուտ հրավիրել հատուկ ժողով՝ ընկերությունը հիմնելու նպատակով: Եվ, իրոք, այն չի ուշանում:*

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը ստեղծվում է 1912 թ. հոկտեմբերի 3-ին[12]:*

*Ժողովին մասնակցում էին հիմնադիր անդամները՝ Լեոն, Տիգրան Հովհաննիսյանը, Երվանդ Լալայանը և ուրիշներ: Բացակայում էր Շիրվանզադեն: Հովհաննես Թումանյանի նկարկայությունը հավանական է, թեև այդ մասին արձանագրության մեջ ոչինչ չի ասվում: Ընկերության հիմնադիր անդամներ համարվում էին միայն նրանք, ովքեր 1912 թ. փետրվարի 8-ին հայ գրերի ու տպագրության տոնի առիթով կազմել էին հանձնաժողով: Այդ ժամանակ Թումանյանը Պետերբուրգում էր և իբրև քաղաքական մեղադրյալ դեռ պետք է կանգներ դատարանի առջև: Նրա արդարացման դատավճիռը կայացվել է միայն մարտի 20-ին, իսկ վերջնական ձևակերպումով հայտարարվել ապրիլի 10-ին:*

*Հետևաբար և Թումանյանի անունը չէր կարող լինել փետրվարի 8-ին ստեղծված հոբելյանական հանձնաժողովի կազմում: Ահա թե ինչու նրա անունը չէր կարող լինել նաև ընկերության հիմնադիր անդամների ցանկում:*

*1912 թ. հոկտեմբերի 3-ի ժողովում, որին նախագահում էր Ար. Զարգարյանը, դաշտնի քվեարկությամբ ընկերության անդամ է ընտրվում Թումանյանը: Նույն օրը ընկերության անդամներ են ընտրվում ևս յոթ հոգի, այդ թվում՝ Նար-Դոսը, Ատրպետը, Փիլիպոս Վարդազարյանը, Ստեփան Լիսիցյանը[13]:*

Հաջորդ հավաքը, որը լրագրերը անվանեցին դարձյալ ընկերության հիմնադիր առաջին ընդհանուր ժողով, տեղի ունեցավ մի շաբաթ անց, հոկտեմբերի 10-ին: Մասնակիցների ընդհանուր թիվը 35-ն էր: Իր բացման խոսքում Ար. Զարդարյանը տվեց ընկերությունը կազմելու հանգամանքների համառոտ բացատրությունը՝ ընդգծելով Թիֆլիսի հոբելյանական հանձնաժողովի դերը վաղուց ցանկալի այդ ընկերության բացման գործում՝ չնչտելով, որ հենց նրա ջանքերով ստացավ գոյության իրավունք: Տիգրան Հովհաննիսյանը անդրադարձավ Պերճ Պռոշյանի և Շահազիզի գործունեությանը, որոնք գրողների ընկերությունը Թիֆլիսում ստեղծելու պայքարի առաջամարտիկներից էին: Աթանասյանի առաջարկով հոտնկայս հարգվեց նրանց, Ղ. Աղայանի և բոլոր այն գրողների հիշատակը, որոնք նուանդ չէին խնայել այդ գործի համար: Առաջարկությունն եղավ ի նշանավորումն ընկերության հիմնադրման, հրատարակել մի ժողովածու բոլոր գրողների մասնակցությամբ, որից գոյացած արդյունքը հատկացնել կարիքավոր գրողների ու գրականագետների ընտանիքներին, ձեռնարկել նրանց անտիպ երկերի հրատարակությունը: Ահա այս ժողովում էր, որ ընտրվեց նաև ընկերության վարչության կազմը 8 հոգուց (Հ. Թումանյան, Լեո, Արիստակես Զարդարյան, Տիգրան Հովհաննիսյան, Աչոտ Աթանասյան, Գյուտ Աղանյան, Արշակ Հարությունյան, Երվանդ Լալայան)[14], 9 փոխանդամ, վերստուգիչ մասնաժողով: Վարչության կազմում առաջարկված թեկնածուներից չեն ընտրվում Ալ. Շիրվանզադեն (հիմնականում ժողովից բացակայելու պատճառով) և Հակոբ Գևենյանը: Առաջինը ստանում է 9 կողմ 33 ձայնից, իսկ երկրորդը միայն երեք կողմ: Առաջարկված բոլոր թեկնածուներից միմիայն Թումանյանն էր, որ վարչության կազմում ընտրվում է միաձայն: Ժողովի փակումից առաջ հրատարակչական ընկերության վարչության նախագահը հայտնում է, որ ընկերության գրասենյակը դրվում է նորակազմ վարչության տնօրինության տակ:

Պետք է ենթադրել, որ հենց այդ գրասենյակում է տեղի ունենում վարչության անդրանիկ նիստը հոկտեմբերի 16-ին, որտեղ Թումանյանը դաղտնի քվեարկությամբ ընտրվում է ընկերության

նախապահ և անփոփոխ մնում իր պաշտոնում մինչև ընկերության փակումը: Հարուստ ղեկավար ընտրվում է Վ. Վալադյանը:

Այսպես, իրականացավ հայ գրողների պաշտոնական միավորման այն բաղձալի դաղափարը, որի համար հայ մշակույթի դործիչները իրենց պայքարը սկսել էին անցյալ դարի 60-ական թվականներից:

Ընկերության ստեղծման անհրաժեշտությունն ու նպատակները կարելի է ձևակերպել մի քանի կետերում:

1. Գրական նոր շարժման առաջացում:

2. Պայքար լիբերալ և պահպանողական մամուլի դեմ, դրականության և քննադատության ինքնորոշումն ու առանձնացումը մամուլի աղդեցությունից:

3. Գրողներին նյութապես ապահովելով՝ դրականությունը դրողի համար մասնադիտություն դարձնելը: Գրական փոնդի խիստ անհրաժեշտությունը:

4. Գրականության և հեղինակային իրավունքի պաշտպանություն:

5. Գրական նախորդների վերադնահատություն, հայ միջնադարյան, դասական դրականության արժեքների վերհանում և լավագույն ավանդների զարդացում:

6. Համաշխարհային դասական դրականության ուսումնասիրություն:

7. Գրականության միջոցով ազդերի միջև մշակութային փոխադարձ կապի հաստատում և ժողովուրդների բարեկամության ամրապնդում:

8. Ժողովրդական բանաստեղծի ուսումնասիրություն:

9. Գրականության տեսության, գեղարվեստի և քննադատության հարցերի ուսումնասիրություն:

10. Գրական ժողովածուների հրատարակություն:

11. Գրականության հարցերի շուրջ ստեղծագործական ծրադրերի ու մտքերի փոխանակություն:

12. Գրականության տարածում, լուսաբանում, նրա դերի ու նշանակության բարձրացում:

*13. Գրողի և ընթերցողի միջև անմիջական չփման ու կապի հաստատում:*

*Ընկերության երևան գալը իր արձագանքները գտավ մամուլի էջերում՝ առաջ բերելով և՛ ոգևորություն, և՛ քննադատական մոտեցում: «Հորիզոնի» սեպտեմբերի 20-ի առաջնորդողը հայ մտավորականներին կոչ է անում կանգուն պահել «մի համեստ, բայց մտերիմ ու հարազատ օջախ, որի չուրջը բոլորել են Եղիշեներ և Եղնիկներ, Նարեկացիներ և Շնորհալիներ, Աբովյաններ ու Ալպայաններ (Հ, 1912, 205):*

*Թերթը, սրտանց ողջունելով գրողների ընկերության սկզբնավորումը, մեծ հույսեր էր կապում նրա հետ և տեսնում էր «գրադետների ընկերության համեստ սկզբնավորության մեջ մի զորեղ աղբակ հայ գրականության չքեղ զարգացման» (Հ, 1912, 205):*

*Առաջնորդողում առաջ է քաշվում գրող-ընթերցող կապի խնդիրը, որը բազմիցս եղել է Թումանյանի ուշադրության կենտրոնում: Հայ գրողի և գրականության խանգարվածությունը «բացատրվում է հայ ընթերցողի զարգացման մակարդակով, սակավությամբ: Այս երևույթին հաճախ է անդրադարձել նաև Թումանյանը իր հոդվածներում ու նամակներում: Ինչպես վկայում է Վահան Թոթովենցը, Թումանյանը սիրել է կրկնել. «Բանը եվրոպացի գրող լինելը չէ, այլ հայ գրող լինելն է» (ԹԺՀ, 141): Առաջնորդողը կարծես այս մտքի շարունակությունն ու բացատրությունն է «...բավական է, որ մի եվրոպացի հեղինակ մի հաջող երկ արտադրէ և նրա մի քանի տարվա ապրուստը ապահովված է: Պարզ չէ՞, թե որպիսի խեղդող և սպանիչ պայմանների մեջ է դրված հայ գրականությունը...» (Հ, 1912, 205): Գրականությունը հայ գրողի ապրուստը չի ապահովում նաև այն պատճառով, որ բավարար չափով չեն սպառվում գրքերը» ... և այստեղից պարզ է, որ ընթերցողի քանակը կենսական նշանակություն ունի թե՛ գրողի և թե՛ նրա ստեղծագործության համար» (Հ, 1912, 205):*

*Պատահական չէ, որ ընկերության հիմնական նպատակներից մեկն էլ դարձավ երեկույթների կազմակերպման միջոցով գրողի և ընթերցողի միջև անմիջական կապի ստեղծումը և այդ ճանապարհով գրական-մշակութային մակարդակի բարձրացումը:*

*Բայց նորաբաց ընկերությունը առաջին իսկ քայլերից հանդիպեց որոշակի դժվարությունների: «Մշակ», «Баку» , «Каспий» լրագրերը մեղադրում էին ընկերությանը միաումնավոր գործելակերպով առաջնորդվելու մեջ, իբր. «Նրանք փոխանակ հրավիրելու իսկական գրողներին անդամ ընտրելու ինքնաբերաբար, դիմեցին քվեարկության եղանակի, որպեսզի կարողանան իրենք, իբրև հիմնադիր քվեարկողներ, ընտրել կամ չընտրել սրանց, ում իրանք հարկավոր կհամարեն: Եվ այդպիսի կուսակցական վերաբերմունքի հետևանքն այն եղավ, որ վարչական ընտրությունների ժամանակ, օրինակ՝ իսկական հայ գրող Շիրվանզադեն ընտրական քվե չստացավ» («Մ», 1912, 248): «Каспий» թերթը հայտարարում էր, որ ընկերության առաջացրած ոգևորությունը սոսկ մակերևութական է և միայն թղթի վրա գոյություն ունեցող, որ այն անխուսափելիորեն կկործանվի և կդադարի իր նպատակին ծառայելուց. «...չար ու դաժան մի եզրակացություն, և այն էլ «Հայոց առաջին գրական ընկերության հենց առաջին քայլերի հանդեպ», – գրում է Թումանյանը և համոզված հայտարարում. «Ո՛չ, չպետք է կործանվի Հայոց գրական ընկերությունը: Քանի որ մի երկրում, մի հասարակության մեջ էդ տեսակ մարդիկ կան՝ էդ տեսակ մամուլ ու էդ տեսակ վերաբերմունք կա դեպի գրողն ու գրականությունը – նա, ընդհակառակը, պետք է հաստատուն կանդնի, մեծանա, ուժեղանա, հարազատ ու տաք օջախ դառնա Հայոց Հալածական գրականության համար և բարձր պատվար՝ ամեն չարության ու հալածանքի հանդեպ» (3,384): Հ. Թումանյանը «Կովկասի Հայոց գրական ընկերությունն ու իր քննադատները» հոդվածում բողոքում է Հակոբ Գեջյանի (Կարա-Դարվիշ), «Մշակի» հարձակումների, անհիմն մեղադրանքների դեմ՝ համարելով դա հրեշավոր երևույթ, զարմանալի ու զարհուրելի վարմունք: Վեճի ծագման առիթ հանդիսացավ Շիրվանզադեի ոչ այնքան բարյացակամ վերաբերմունքը ընկերության վարչության կազմի նկատմամբ: Նա մի կարճ նամակով հերքեց մամուլի էջերում տարածված այն կեղծ լուրը, թե իբր ժողովականները չեն կամեցել վարչության կազմում տեղ տալ «իսկական գրող» Շիրվանզադեին:*

«Ես ինքս, – գրում է նա, – չեմ կամեցել քվեարկել և նույնիսկ ներկա չեմ եղել այդ ժողովին» (Հ, 1912, 251):

Շիրվանզադեն, իհարկե, մասնակցել էր ընկերության կազմակերպման աշխատանքներին, միշտ էլ արտահայտել էր իր «խորին համակրանքը դեպի գրողների ընկերությունը» (Հ, 1912, 251), որի չահերը մոտ համարելով իր սրտին՝ խոստանում էր երբեք չմերժել և հնարավորին չափ օգտակար լինել նրան: Բայց նա այն կարծիքին էր, որ նորաստեղծ միավորումը պետք է դարձնել միայն գրականությամբ զբաղվողների ընկերություն՝ անտեսելով այն փաստը, որ հայ իրականության մեջ դժվար էր գտնել որևէ գրող, որը ստիպված չլիներ իր ապրուստը այլ մասնագիտությամբ ձեռք բերելու: Ահա թե ինչու նորընտիր վարչության կազմը նրան թվում էր անհասկանալի մի խառնուրդ: Շիրվանզադեի առաջարկը որքան էլ արդարացի հիմքեր ունենար, այնուամենայնիվ գործնական տեսակետից հայ իրականության համար անիրագործելի էր ու սխալ: Շիրվանզադեն չէր կարող մատնացույց անել (չնչին բացառությամբ) հայ գրողների, որոնք, գրականությամբ պարապելով հանդերձ, չլիներին ուսուցիչ, սրբագրիչ, բժիշկ, իրավաբան, գրաշար և այլն. ... Մինչև «զուտ գրողների» ընկերության ստեղծումը անհրաժեշտ էր ունենալ «զուտ գրողներ», իսկ դրա համար պետք էր ստեղծել այնպիսի միավորում, որը նախ հնարավորություն տար հայ գրողին չշեղվելու, գրականությունը մասնագիտություն դարձնելու և միայն նրանով զբաղվելու: Նաև այս նպատակով էր ստեղծվել Հայ գրողների կովկասյան ընկերությունը: Նույնքան իրավացի չէր նաև Տիգրան Նազարյանը, երբ «Մշակում» հրապարակայնորեն նկատողություն արեց Սեդրակ Մանդինյանին՝ գրական միությանը անդամագրվելու համար, երբ այդ անդամակցությունը «առնվազը չէ թախանձվել»: Վերջինս միայն իր ցավն ու զարմանքն է արտահայտում՝ ասելով, որ մի՞թե այդքան «հարազատ, երազած ու ցանկալի ընկերությանը» անդամագրվելու համար պետք է ապասել ինչ-որ հրավերի: Այդ «հարկադրված զրույցին» անդրադարձավ Թումանյանը իր «Հրավիրելու իրավունք չկա» հոդվածով. «Բայց ո՞վ պետք է հրավիրեր, երբ մեջտեղը ոչ հարսանիք կա, ոչ հոբելյանական հանդես, ոչ ազգա-

*լին խնջույք, այլ պետական օրենք, հաստատված որոշ կանոնադրությունով մի ընկերություն, որին անդամ դրվելու համար պետք է ենթարկվել դաղտնի քվեարկության» (6,386):*

*Պատասխանելով հարցի շուրջ աղմուկ բարձրացրած բոլոր մտավորականներին՝ Թումանյանը պնդում էր. «Հայ գրողը եթե ուզում է գրականության մեջ գոյչ լինի ու խստապահանջ՝ թող էդպես լինի իր գրչի ու գրականության վերաբերմամբ» (6, 383):*

*Ծագած այս վեճերի պատճառով Թումանյանը 1912 թ. նոյեմբերի 25-ի ժողովը սկսում է կանոնադրության առաջին կետի բացատրությամբ, թե ովքեր կարող են լինել ընկերության անդամ. «Նրանք, որոնք հայոց մեջ աշխատում են գրականության, դիտության և մամուլի ասպարեզներում:*

*Այսպիսով պարզվում է, որ ընկերությունը ընտրյալների մի կաճառ չէ, հայկական ակադեմիա չէ, այլ մի հաստատություն, որի հարկի տակ կարող են ժողովվել խոշոր ու տաղանդավոր մարդկանցից սկսած մինչև ամենահամեստ աշխատավորն այդ ասպարեզում՝ փոխադարձ օգնության և բարոյական-գեղարվեստական զարգացման նպատակով» (ՀԳԿՀ ֆ, 181):*

*Հետագայում, երբ ընկերությունը հինգ տարի էր, ինչ գոյություն ուներ, դարձյալ բանավեճի առարկա է դառնում այն հարցը, թե ովքեր կարող են լինել ընկերության անդամ: Թումանյանը վերստին պնդում է իր տեսակետը. «Իհարկե, ամեն մեկը, որ իր ուժերի ներածին չափ աշխատում է գիտության, գրականության ու հրապարակախոսության ասպարեզում, շատ թե քիչ՝ էդ մեկնույն է: Փորձը ցույց է տալիս, որ հենց շատ համեստ ուժերի համախմբումն է ստեղծում էն տաք ու հարուստ մթնոլորտը, ուր կյանք ու հարգանք է ունենալու մեր գեղարվեստագետը, գրողը, գիտնականը կամ հրապարակախոսը» (ՈՒՀ 2, 389):*

*Բայց շատ ավելի մեծ էր ընկերության բարեկամների ու աղջունողների թիվը: Ընկերությանը անդամագրվելու Թումանյանի կոչը լայն արձագանք գտավ և մեծ ոգևորություն առաջացրեց Ռուսաստանում և աշխարհի այլ հատվածներում: Կոչում ասվում էր. «Վերջապես իրականություն է դառնում մեր գրական-հասարակական գործիչների վաղեմի երգը՝ համախմբված տեսնել հայ*

մտքի ու գրչի մշակներին: Այսպիսով, հայ գրողն ունի մի հիմնարկություն, որին նա կարող է ապավինել կարիքի ժամանակ և մի ժամադրավայր, ուր հայ դրականության հարցերն ու խնդիրները կարող են պարզաբանվել ու հանգել բանավոր լուծման» (6, 379): Թումանյանի խոսքը հասավ հայության ամենատարբեր հատվածներին, ուրախացրեց ու հուսավառեց հայ մտավորականությանը, գրողներին: Ալ. Ծատուրյանի՝ ընկերության նախագահին ուղղած նամակում կարդում ենք. «Սրտագին բարեմաղթություններ անդրանիկ հայ գրողների ընկերությանը, որի ծնունդն այնքան ջերմ փափագել ու երազել է ամեն մեկը մեզանից՝ իր չարքաշ կյանքի սև ու մութ օրերում» (Հ, 1912, 251):

Միայն կանոնադրության հաստատման լուրը ստանալով՝ դեռ Ժնեվից նա արտահայտել էր իր ոգևորությունն ու ողջույնը. «Վերջապես... սրտիս խորքից բացականչեցի ես: Այժմ հայ գրողներն էլ հանդես կգան իբրև հավաքական մի մարմին, իբրև նյութապես և բարոյապես կազմակերպված մի զորեղ ուժ... Հայ գրողների միության գաղափարը հրաշալի է և սրտանց ողջունելի» (Հ, 1912, 199):

Թումանյանը Մոսկվայից, Պետերբուրգից, Բաքվից, Գյուլագարակից, Ղազվինից, Դուշեթից, Ռոստովից և այլ վայրերից ստանում է բազմաթիվ շնորհավորական հեռագրեր ու նամակներ, որոնցում ընկերության երևան գալը համարվում է ուրախալի երևույթ, «սրբազան օջախ», «ազգային կուլտուրայի վերակենդանացում» (Թ ֆ, 99/22), դեղեցիկ գործ, որով միայն կարելի է առաջ մղել գրական կյանքի «արգասաբեր դործը» (Թ ֆ, 99/21), ընկերություն, որը պետք է «պահպողը լինի դեպի ինքը տածած բոլոր սրտերի լավ սպասելիքների». ահա թե ինչու նրա երևան գալը պետք է «ողջունվի ոչ թե ամեն մի հայ գրողի, այլև ամեն մի հայի կողմից» (ՀԳԿԸ ֆ., 99/47):

Ընկերության հիմնադրման և այլ առիթներով այս նամակների հեղինակները՝ Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Կոստանյանը և բազմաթիվ լրագրողներ ու հասարակական գործիչներ, խոնարհվելով ընկերության «մեծ միտքայի» առջև, մաղթում էին դեղեցիկ ու արդյունավետ, հավիտենական կյանք» (ՀԳԿԸ ֆ, 99/47, 99/7, 99/3):

*Վահան Տերյանը 1914 թ. հունվարի 12-ին Թումանյանին դրում է. «Կուզեի հավատացնել Ձեզ, որ իմ ուժերի ներածին չափ սիրտ չանամ անօգուտ ու անպետք անդամ չլինելու ընկերության, որի առաջադիմությանն ու հաջողությանը նպաստելը ամեն դրասեր հայի պարտքը պետք է համարել» (Թ ֆ, լ ց, 120):*

*Իսկ դրականագետ, լրագրող և ուսուցիչ Յոլակ Խանզադյանը, հավատալով, որ Թումանյանի «ձեռնարկած գործը մի խոշոր երեվույթ սիրտ դառնա մեր կուլտուրական կյանքում», ընկերության նախագահին ուղղած իր նամակում համեստորեն հարցնում է. «Ես Հայ դրողների ընկերության անդամ չեմ և չգիտեմ, որքան հարմար կլինի, եթե առաջարկեմ քվեարկիք ինձ» (Թ ֆ, 49):*

*Նաև Հին Նախիջևանից, Վլադիկավկազից, Արդահանից, Զաքաթալայից, Յալթայից ստացվող մաղթանքներից, ողջույնի նամակներից ու հեռագրերից բացի գրողների նորաստեղծ միությունը ստանում էր նյութական օժանդակություն, որը նույնպես համընդհանուր ոգևորության արդյունք էր: Ընկերության ստեղծման հենց առաջին օրերին մեծահարուստ Համբարձում Մելիքյանը անձամբ Թումանյանին է հանձնում իր նվիրատվությունը՝ 1 000 ռուբլի, Սամսոն Հարությունյանը՝ 100: «Մի ոմն» սոորադրությամբ» անհայտ անձնավորություն նվիրում է 500 ռուբլի՝ ապացուցելով, որ հանրության մեջ արդեն կա այն գիտակցությունը, որ բարեգործությունը իրոք որ պետք է անշահախնդիր լինի, որ դրականությունը հենց այդպիսի օգնության կարիք ունի:*

*Այսպես, քանի որ ստեղծվել էր դրական ընկերություն, նրա հետագա գոյության համար անհրաժեշտ էր ամրացնել նյութական հիմքերը, ստեղծել դրական ֆոնդ: Գրողների ընկերությունը իր հիմնադիր առաջին իսկ ժողովից անմիջապես հետո ձեռնարկում է դրական ֆոնդի ստեղծմանը: Հարցը քննվում է նախ 1912 թ. դեկտեմբերի 2-ի ընդհանուր ժողովում, ուր Արիստակես Զարդարյանի կարդացած զրույցից պարզվում է, որ ընկերության նյութականը պետք է գոյանար անդամավճարներից, շաբաթական դասախոսություններից ու երեկույթներից, ներկայացումներից ու համերգներից, նվիրատվություններից հավաքված դրամարից: Հետաքրքիր են այն տարաձայնությունները, որոնք ծագեցին հա-*

*բուստներին դիմումներ անելու հարցի շուրջ: Առաջարկներ եղան՝ երբեք չդիմելու որոշում կայացնել: Լեոն կարծում էր, որ ժամանակն ու պայմանները այնպիսին են, որ ընկերությունը հաճախ ստիպված կլինի դիմումներ անելու: Իսկ Թումանյանը պնդում էր, որ ընկերությունը ոչ թե նյութապես պետք է բարձրացնել, այլ բարոյապես: Ժողովականները, լսելով վարչության նախագահի խոսքը, քվեարկում են նրա առաջարկը և որոշում՝ ոչ մի դիմում չանել:*

*1912 թ. դեկտեմբերի 3-ին Ախալքալաքում մահացավ հրապարակախոս և հասարակական գործիչ Ավետիք Արասխանյանը: Կովկասյան ընկերության վարչությունը, ստանալով այդ լուրը, նույն օրը գումարեց արտակարգ նիստ, որտեղ որոշվեց հանգուցյալի հիշատակը հավերժացնելու համար հիմնել գրական ֆոնդ: Այդ մասին խոսվեց նաև դեկտեմբերի 9-ի ընդհանուր ժողովում, ուր վճռվեց ընտրել գրական ֆոնդի կանոնադրությունը քննող մասնաժողով, տպագրել և տարածել անդամների մեջ գրական ֆոնդի հրահանգը, ինչպես նաև հրատարակել մի ժողովածու, դրանով բացահայտել Արասխանյանի գրական-հասարակական գործունեությունը, որը հայ մտավոր կյանքի ու գրականության որոշակի չրջափուլի անմիջական արտահայտությունն էր: 1912 թ. դեկտեմբերի 23-ի վարչության նիստի օրակարգի հիմնական հարցը դարձյալ գրական ֆոնդի խնդիրն էր, սակայն այն հետաձգվում է, որովհետև Թումանյանը բացակայում էր հիվանդության պատճառով: Ի վերջո, ընկերության 1913 թ. հենց առաջին ընդհանուր ժողովը (մարտի 2-ի) ընդունում է հիշված մասնաժողովի կողմից (Գր. Վարդանյան, Փ. Վարդազարյան, Հ. Ալիխանյան, Տ. Գյուզալյան և ուրիշներ) մշակված կանոնադրության նախագիծը: Վերջինս ընդունվում է նոր փոփոխություններով, նոր ծանոթագրումներով: Կանոնադրության փոփոխությունները մեծ մասամբ կատարել է ինքը՝ Թումանյանը: Այդ է վկայում ընկերության արխիվում պահպանվող կանոնադրության ռուսերեն մի օրինակ լեզվով, որի էջերում պահպանվել է մի պատառիկ՝ գրված բանաստեղծի ձեռքով: Նա կարմիր մատիտով ավելացրել է մի քանի կետ, որոնցից են.*

*6. Ընկերության անդամագրվողը առաջին ընդհանուր ժողովից մեկ ամսից պետք է վարչությանը ներկայացնի իր աշխատանքների ցուցակը և առանձին տպված դործերից մի օրինակ: Վարչությունը այս բոլորը հանձնարարում է իր կամ ընկերության անդամներից մեկին՝ պարտավորվելով քննադատական համառոտ դեկուցում պատրաստել ընկերության ժողովի համար:*

*9. Ընկերությանը կարող են անդամագրվել նաև դրասերները՝ վճարելով տարեկան 5 ռուբլի:*

*10. Դրասերները ևս ընտրվում են ընդհանուր ժողովում, դրողների քվեարկությամբ (ՀԳԿԸ ֆ, 210, 211):*

*Թումանյանը սկզբում մտադիր էր դրասերներին տալ միայն խորհրդակցական ձայն և հնարավորություն ընձեռել օգտվելու բոլոր իրավունքներից, բացի դրամական օժանդակությունից, բայց հետո նա դրողների ու դրասերների իրավունքները հավասարեցնում է:*

*Այսպիսով, ընկերության կանոնադրությունը՝ կազմված հայ տպագրության 400-ամյակի Թիֆլիսի հոբելյանական հանձնաժողովի կողմից և հաստատված 1912 թ. օգոստոսի 2-ին փոխնահանգապետ Ե. Պանովի թույլտվությամբ, վավերացվեց ընկերության 1913 թ. մարտի 2-ի ժողովում: Կովկասյան ընկերության հիմնադրումից մի քանի ամիս անց կազմվեց նաև դրական փոնդը:*

*Սակայն հենց սկզբից որոշ դրողներ ու դրական դործիչներ փորձեցին սահմանափակել ընկերության իրավունքները՝ նույնացնելով դրողների միությունը դրական փոնդին: Այդպիսիների թվում էր Հայոց ազգադրական ընկերության նախագահ և Հայ դրողների կովկասյան ընկերության վարչության անդամ Երվանդ Լալայանը: Ինչպես նկատեցինք վերևում, դրական փոնդի չտապ ստեղծման առիթներից մեկն էլ Ավ. Արասխանյանի մահն էր: Մեծ էր դրողների ընկերության և նրա նախագահի հարդանքն ու հոգածողությունը հրապարակախոսի դործի ու հիշատակի հանդեպ: Ընկերությանն են հանձնվում Արասխանյանի ձեռագրերի մի մասը: Մյուս մասը և Արասխանյանի՝ աճուրդի հանված իրերը ընկերությունը որոշում է դնել, բայց ուշանում է էջմիածնում կազմա-*

կերպված այդ աճուրդին մասնակցելուց: Մոսկվայից եկած Արասխանյանի ազգականը՝ Մ. Բունիաթյանը, խոստանում է Թումանյանին և Հայ գրողների ընկերությանը պահ տալ Արասխանյանի գրադարանը: Այդ մասին նախագահը հայտնում է վարչության հերթական նիստերից մեկում, որին իբրև վարչության անդամ ներկա էր Ե. Լալայանը: Վերջինս, առանձին հանդիպելով Բունիաթյանին, համոզում է նրան գրադարանը նվիրել Ազգագրական ընկերությանը՝ պատճառաբանելով, թե իբր գրողների ընկերությունը գրադարան պահելու իրավունք չունի: Բունիաթյանը խնդրում է ժողով գումարել և անպատճառ հրավիրել նաև Թումանյանին: Սակայն Լալայանը ընկերության նախագահի փոխարեն հրավիրում է Ար. Զարգարյանին, որը ներկա չէր եղել գրողների վարչության վերոհիշյալ ժողովին, ուր խոսվել էր Արասխանյանի գրադարանը ընկերության տնօրինությանը հանձնելու Բունիաթյանի խոստման մասին: Այնուհետև Բունիաթյանը անձամբ գրքերը հանձնում է Ազգագրական ընկերությանը: Իր այս վարմունքով Լալայանը փաստորեն նեղացնում էր ընկերության դերն ու նպատակները, իրավունքները: Նա դատապարտում է ընկերությանը այն բանի համար, որ իբր նրա այժմյան վարիչները ամեն բան էլ ուզում են անել՝ և՛ բանաստեղծի մասին երեկույթներ են կազմակերպում, և՛ գրքերի մասին ազգագրական-պատմական դասախոսություն «սարքում», և՛ Արասխանյանի երկերը մոռածում հրատարակել, և՛ աչուղ Սայաթ-Նովայի երգերը տպագրել, իսկ որ գլխավորն է, մինչև այժմ ընկերության բուն նպատակի համար՝ խեղճ գրողին օգնել՝ մի կոպեկ անգամ չեն ծախսել: Ընկերության նպատակից բոլորովին դուրս է գրադարան ունենալ: Նրա դերը պիտի կայանա միմիայն փոխադարձ օգնության մեջ» (Հ, 1913, 65):

Գրողների ընկերությունը նույնացնելով գրական ֆոնդին՝ նա անտեսում էր կանոնադրության այն կետերը, որոնք նախատեսում էին գրողների մտավոր, բարոյական ու գեղարվեստական զարգացումը ապահովելու նպատակով թե՛ գրադարաններ ու ընթերցարաններ, թե՛ հասարակական դասախոսություններ ու գիտական արշավներ, թե՛ համերգներ ու ներկայացումներ կազմակերպելը: Եվ ինչպես իրավացիորեն նկատում է Հովհ. Թումանյանը

*«Մի զարմանալի վարչության անդամ» հոդվածում, անկարելի է, որ Լալայանը անտեղյակ լիներ ընկերության ծրագրերին ու կանոնադրությանը, որովհետև նա ընկերության վարչության անդամ էր (7, 37):*

*Թումանյանին վրդովեցնում էր ընկերության իրավունքների սահմանափակումը: 1913 թ. մարտի 24-ի ժողովում նա հայտարարում է, որ հարցը ամենևին էլ այն չէ, թե Արասխանյանի դրքերը ստացել է Ազգագրական և ոչ թե Գրողների ընկերությունը, այլ այն, որ Լալայանը, լինելով ընկերության հիմնադիր և վարչության անդամ, մոլորեցրել է մարդկանց՝ հավատացնելով, թե Գրողների ընկերությունը զուրկ է գրադարան պահելու իրավունքից: Թումանյանը այդ վարմունքը որակում է իբրև տգեղ արարք և, չեչտելով հարցի բարոյական կողմը, պնդում, որ ընկերության մեջ չի կարելի հանդուրժել փաստերի աղավաղում հանուն, նույնիսկ, բարի նպատակների: Անտեղյակ պահելով Թումանյանին դեպքերի ընթացքից և թյուրիմացության մեջ ձգելով Արասխանյանի հարազատներին՝ Լալայանը առաջնորդվել էր, անշուշտ, Ազգագրական ընկերության շահերով, որի նախագահն էր նա: Թումանյանը շեշտում էր, որ «առհասարակ էդպես անել չի կարելի, ում համար ուզում է լինի: Չի կարելի գնալ ուրիշներին խաբել, էն, ինչ որ կա՝ հավատացնել, թե չկա, և դրա անունը դնել կարծիք» (7, 41):*

*Ընկերության իրավունքների հետ կապված Լալայանի և Թումանյանի միջև ծագած վեճը սուր բնույթ է ստանում և արծարծվում է ինչպես ընկերության վարչության նիստերում ու ընդհանուր ժողովներում, այնպես էլ մամուլի, հատկապես «Հորիզոնի» և «Մշակի» էջերում: 1913 թ. մարտի 24-ի ժողովում երկար քննարկումից հետո ընդունվում է ժողովի նախագահ Նիկ. Աղբալյանի բանաձևը. «Ժողովը ցավ է հայտնում պ. Եր. Լալայանի դեպի ընկերության շահերն ցույց տված անկոռեկտ ու անհարազատ վերաբերմունքի համար» (ՀԳԿԼ ֆ, 40): Վեճը ավարտվում է նրանով, որ Լալայանը վերջնականապես հեռանում է դրողների միությունից: Բանավեճի մեջ մտնելով հանուն ընկերության շահերի և իրավունքների՝ Թումանյանը միշտ շեշտում էր հարցի բարոյական կողմը. «Հարցը բնավ նյութականի մեջ չի կայանում, այլ բարո-*

*յական կշռի մասին է խոսքը» (ՀԳԿԸ ֆ, 40), – ասում էր նա, իսկ Լալայանին տված գրավոր պատասխաններից մեկում վերստին շեշտում է. «Թեև ընկերության վնասն էլ կա, բայց դա գոնե ինձ համար խնդիր չի, ոչ էլ մի մեծ կորուստ, և խնդրի բարոյական կողմն է միշտ մնում լուրջ ու վերին աստիճանի ցավալի» (7,41):*

*Ազգագրական ընկերության քարտուղարի և Հայ գրողների միության նախագահի միջև առաջին հայացքից աննշան թվացող վեճը լրացուցիչ ապացույցն է այն բանի, որ Թումանյանը չէր հանդուրժում իր ղեկավարած ընկերության կանոնադրությամբ նախատեսված իրավունքների ամեն մի ոտնահարում կամ անտեսում: Մենք բնավ նպատակ չունենք ստվեր ձգել երվանդ Լալայանի ազգային-հասարակական գործունեության վրա: Նա մեր դարի նշանավոր հայ ազգագրագետներից, բանահավաքներից ու գիտնականներից մեկն է, 1896 թ. լույս տեսած «Ազգագրական հանդեսի», 1906-ին ստեղծված Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերության հիմնադիրը, բազմաթիվ հայ բանահյուսական արժեքավոր նյութերի առաջին գրի առնողն ու հրատարակիչը, Հայ գրողների կովկասյան ընկերության ստեղծման համար պայքարի գործուն մասնակիցներից մեկը: Մենք անդրադարձանք այս վեճին նաև այն պատճառով, որ վերջինս առիթ է դարձել, որ Թումանյանը դրսևորի հրապարակախոսի իր տաղանդը Լալայանին ուղղված հոդվածներում և բանավոր պատասխաններում: «Հայոց ազգագրական ընկերության քարտուղարին և նրա վարմունքի առիթով» հոդվածում, որը Լալայանի բաց նամակի պատասխանն էր, Թումանյանը դրսևորում է իր խստապահանջ վերաբերմունքը հասարակական գործչի նկատմամբ, միաժամանակ բնութագրում մարդու բարոյական նկարագիրն ու մարդկայինը առհասարակ: Արժեքավորելով մարդուն՝ Թումանյանը վկայակոչում է նրա անսահման մեծ ու անփոխարինելի դերը հասարակական կյանքում, անվանում է նրան այն հիմնական աղբյուրը, որից ծնվում են աշխարհի ամենալավ բաները. «Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, – գրում է նա, – որ հավասար լինի և կարելի լինի համեմատել ՄԱՐԴ կոչումի հետ...*

*Մարդկային կյանքում մարդն է ամեն բան և ամեն գործ ու գործունեություն բխում է նրանից: Նա աղբյուրն է» (7, 39):*

*(Ընդգծումը հեղինակինն է Ս. Հ.:) Սակայն լավատես Թումանյանը քաջ գիտեր նաև, որ մարդ-արարածը ոչ միայն ամեն լավի, այլև ամեն վատի, չարի աղբյուրն է.*

*Չարն էլ է միշտ ապրում անմեռ...*

*կամ Կոպիտ աշխարհ է, մարդը միշտ չար է,*
*Կյանք է կործանում...*

*Գիտեր, որ նույնիսկ ամենալավ աղբյուրը կարող է պղտորվել, իսկ վատի ջուրը միշտ վատ է ու վտանգավոր, ինչպես կուզնք գործ ածեք» (7, 39): Որքան էլ բանաստեղծը իր հոգու յուրօրինակ կենսագրությունը հանդիսացող քառյակներում խոստովաներ. «Տարել, ներել ու սիրել, վատը լավ եմ տեսել ես», այնուամենայնիվ, նա իր ողջ կյանքում միշտ էլ անդիջում պայքար է մղել մարդ-արարածի բարոյական պատկերը աղարտող յուրաքանչյուր անճի կամ երևույթի դեմ՝ չկորցնելով, իհարկե, ներելու իր անսահման մեծ կարողությունը, միաժամանակ լավ պատկերացնելով ներման սահմանները:*

*Վատի, բացասական երևույթների դեմ լռելն ու անհանդուրժողականություն չցուցաբերելը դատապարտելի է հասարակայնորեն: «Գործիչը եթե պատահմունքով սխալ է արել,— գրում է Թումանյանը, — մենք կլռենք և կաշխատենք նույնիսկ ղգալ չտալ իրեն, որովհետև սխալական է մարդ արարածը: Գործիչը եթե մի դժբախտ դեպքի պատճառ է դարձել չդիտենալուց, չհասկանալուց, տգիտությունից՝ մենք նրան կներենք, որովհետև մարդը ամենագետ չի, նա էլ մարդ է ու չի հասկացել: Բայց եթե գործիչը վատություն է անում դիտմամբ, դիտակցաբար և համառում է նրա վրա ու էդպես է իր կյանքի ճամփեն, էլ ոչ լռելու իրավունք ունենք, ոչ ներելու, քանզի էս դեպքում ս. Գրքի ոճով ասեմ, մեր գործը չի փչանում, այլ աստծո գործը՝ մարդ արարածի բարոյական պատկերն է փչանում» (7,40):*

*Եվ Թումանյանը միշտ բանավճռի էր բռնկվում այն պահին, երբ ղգում էր, որ այդ պայքարն ունի հասարակական խոր արմատներ ու բովանդակություն, երբ ղգում էր, որ աղճատվում,*

աղարտվում է մարդ-արարածի բարոյական պատկերը: Այս առումով հետաքրքրության արժանի է բանաստեղծի և «Մշակ» թերթի խմբագիր, հրապարակախոս Համբարձում Առաքելյանի միջև ծագած վեճը, որին չանդրադառնալ չենք կարող մի քանի պատճառներով:

Նախ՝ այդ բանավեճը անմիջականորեն առնչվում է ընկերության գործունեության: Թումանյանը այստեղ ներկայանում է իբրև մի ղեկավար, որը չէր հանդուրժում իր նախագահած ընկերության շահերի ու իրավունքների որևէ անտեսում կամ ոտնահարում:

Դրողի կենսագրության այդ շրջանը առայսօր հանգամանորեն չի ուսումնասիրված: Այդ շատ տհաճ միջադեպը մեծ ցավ է պատճառել բանաստեղծին, պղտորել է նրա հոգին, թույլ չի տվել լիաթոք ապրել բանաստեղծական ներշնչանքի պահեր և ստեղծագործել: Թումանյանը անառարկելի մեծություն է, հետևաբար նրա կյանքի յուրաքանչյուր օրն ու ժամը, յուրաքանչյուր դրվագը ուսումնասիրության արժանի է, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ու կարևորվում է ժողովրդի հետագա սերունդների համար:

Հիշյալ բանավեճը առիթ է դարձել Թումանյանի մի քանի արժեքավոր հոդվածների («Փաստեր», «Դոկումենտներ», «Առայժմ») ստեղծման, որոնք մինչև վերջերս գիտական շրջանառության մեջ չեն եղել, անհայտ են եղել հայ ընթերցողին, քանի որ չեն զետեղվել դրողի դիտական առաջին և որևէ այլ հրատարակություններում, իսկ «Փաստերը» և «Առայժմը» առհասարակ անհայտ է եղել Թումանյանագիտությանը: Մինչ դիտական 2-րդ հրատարակության՝ Թումանյանի 10-հատորյակի մեջ զետեղելը մենք դրանք հրապարակեցինք Հանրապետության մամուլի տարբեր օրգաններում՝ «Հայաստանի Հանրապետություն» լրագրում և «Նորք» հանդեսում (1994 թ. փետրվար): Այս հոդվածներում արտահայտվել են Թումանյանի բարոյաբանական հայացքները, միայն փաստերի լեզվով իր ճշմարտությունը հաստատելու, հակառակորդի դեմ սկզբունքային ու անդիջում պայքար մղելու կարողությունը: Ազգային գործիչը այստեղ պայքարում է հասարակական բարքերի ապականության դեմ՝ նպատակ ունենալով նպաստել այնպիսի մթնոլորտի ստեղծմանը, որում հնարավոր լիներ ստեղծագործական ներշնչումն ու ոգևորությունը, ճշմարիտ արվեստի ստեղծումը:

*Դեռևս Վերնատան, ինչպես և դրողների ընկերության ստեղծման հիմնական պատճառներից մեկը դրականության՝ մամուլից անկախ, ինքնուրույն զարգացման ապահովումն էր: Ժամանակի մամուլի հաճախ սխալ, երբեմն էլ սուբյեկտիվ գնահատականները վերածվում էին դրողների և դրականության նկատմամբ հալածանքի: «Այո՛, նեղ անձնականը, կիրքն ու դառնությունը երբեք չեն պակասել մեր մամուլի էջերից: «... Եվ երբ մեր դրականությունը երկար տարիների ջանքերից հետո ունեցավ մի հարկ – Հայ դրողների ընկերությունը – հենց էդ հարկի վրա էլ կենտրոնացավ ու փուլ եկավ հին թշնամությունը», – գրում է Թումանյանը 1914 թ. «Առավոտ» հոդվածում (Թ ֆ. լց, 22)[15]:*

*Եվ դրողների ընկերությունը ստիպված էր շարունակել այդ պայքարը, մամուլի էջերում տեղի ունեցող բանավեճերին տալ հասարակական բնույթ, զերծ պահել նեղ անձնական չհապրդռությունները, ուղղել հասարակական առաջադեմ դաղափարների և մշակութային ընդհանուր զարգացման նպատակին: Ահա թե ինչու մամուլում ծավալվող բանավեճերը ընկերության երեկույթներից մեկում դարձան առանձին քննարկման առարկա: «Բանակռիվը մամուլի մեջ» թեմայով դրական ասուլիսում (1914 թ. հունվարի 2) շատերի համար պարզվեց, որ բանավեճի բնույթն ու բովանդակությունը մեծ չափով պայմանավորված են ժամանակի պատմահասարակական հանգամանքներով, զանազան կուսակցությունների, դրական և քաղաքական հոսանքների, ուղղությունների դույությամբ, սերտորեն կապված են միջավայրի դրական բարքերի հետ: Բանավեճերը օգտակար են ու խրախուսելի, եթե դրված են լուրջ ու օբյեկտիվ հիմքերի վրա, եթե նրանցում պաշտպանվում է ճշմարտությունն ու առաջադիմությունը: Սակայն պարբերական մամուլում տեղի ունեցող վեճերի ընթացքում հաճախ դաղափարական լայն խնդիրները տեղի էին տալիս, և բանակռվող կողմերը կամ նրանցից մեկը, սկսում էին ղբաղվել նեղ անձնական հարցերով:*

*Ընկերության հիմնադրման առաջին իսկ օրերից «Մշակ» լրագիրը ոչ բարյացակամ վերաբերմունք դրսևորեց դրողների ընկերության հանդեպ: Վերջինիս ընդունած յուրաքանչյուր որոշում, նախաձեռնություն, երեկույթ ու դասախոսություն այս կամ այն*

չափով քննադատության էր ենթարկվում «Մշակի» էջերում: Բացասական բովանդակություն ունեցող հոդվածների հեղինակները, որոնք գրեթե ժխտում էին դրականը ընկերության գործունեության մեջ, մեծ մասամբ հանդես էին գալիս ծածկանուններով: Այսպես, «Նորեկ գրող» ստորագրությամբ մեկը ծաղրում է բանավեճի մասին գրական երեկոյի կազմակերպիչներին: (Մ, 1914, 2): «Մշակում» լույս ընծայվող այս կարգի բոլոր հոդվածներին տոն տվողն ու նրանց հեղինակներին քաջալերողը նույն թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանն էր: Նրա և Թումանյանի միջև 1910–11 թթ. տեղի էր ունեցել մի մեծ բանավեճ, որի մասին հանգամանորեն չարադրված է Լուսիկ Կարապետյանի «Դրվագներ Թումանյանի հասարակական գործունեությունից» հոդվածում (ՈՒՀ 4, 69-128), ուր բանասիրական ճշգրտությամբ ներկայացված են այդ բանակռվի բազմաթիվ հետաքրքիր մանրամասներ, որոնք արդյունքն են այդ միջադեպի առիթով գրականագետի բանասիրական լուրջ պրպտումների, հատկապես նրա հայտնաբերած Թումանյանի մի շարք անստորագիր հոդվածների:

Դեռ 1910–11 թթ. ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանի մահից հետո (1910 թ. դեկտեմբերի 11) նոր կաթողիկոսական ընտրություններին համար մղվող պայքարում, երբ «Հորիզոնն» ու «Մշակը», ինչպես միշտ, հայտնվում են հակառակ բևեռներում, Թումանյանը՝ հանձին Համբ. Առաքելյանի ձեռք է բերում գրեթե անձնական թշնամի: «Մշակի» խմբագրին զայրացրել էր Թումանյանի այն ելույթը, որում դատապարտվում էին էջմիածնի բանսարկու մի քանի հոգևոր գործիչներ (այդ թվում Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը), որոնք հալածել ու թունավորել էին կաթողիկոսի կյանքը և արագացրել նրա մահը: «Մշակը» վերտառին դիմում է ստի ու կեղծիքի, իսկ Համբ. Առաքելյանը Թումանյանին սպառնում է միջնորդ դատարանով, ուր բանաստեղծին հրավիրում են ներկայանալ 1911 թ. հունվարի 12-ին: Սակայն այդ դատը տեղի չի ունենում: Առաքելյանը հետևողականություն չի ցուցաբերում, հավանաբար, փաստերի բացակայության պատճառով դատը տանուլ տալու անհանգստությունից:

Եվ ահա երեք տարի անց կրկնվում է դատի տալու տհաճ պատմությունը, ուժեղանում է թշնամանքը: Առիթը Հայ դրողնե-

րի ընկերության կազմակերպած 1914 թ. հունվարի 2-ի երեկույթն էր, որի համերգային մասը առավել խնամքով էր կազմված և ունկընդիր հասարակության մեջ աշակերտության թիվը սովորականից ավելի էր դպրոցական արձակուրդների և ամանորյա տոնների պատճառով: Եվ դա բավական էր, որպեսզի Համբ. Առաքելյանը, դիմելով ընկերության «վարիչներին», անվանի նրանց կուսակցական ու թայֆայական մարդիկ և պարզապես հայտարարի «Դուք անբարոյականացնում եք մատաղ սերունդը» (Մ, 1914, 2): «Համբակ», «Թերուս», պատանիների համար Հ. Առաքելյանը «անմարսելի» էր համարում, օրինակ, Լեոյի կարդացած Գրիգոր Արծրունու, Խաչատուր Աբովյանի մասին դասախոսությունները, դրական բանավեճերի մասին զրույցը և զանազան այլ ասուլիսներ: Բնական է, որ այս հանիրավի հարձակումը չէր կարող պայրուքի չառաջացնել հայ դրական շրջաններում, չէր կարող իր արժանի պատասխանը չստանալ և նույնքան բնական է, որ պատասխանողը պետք է հենց Թումանյանը լիներ, թե՛ իբրև գրողների միության նախագահ և թե՛ իբրև գրողի ու գրականության մեծագույն պաշտպան: «...Ես որքան իմ պաշտոնից, ավելի շուտ դեպի ընկերությունն ունեցած սիրուց դրդված ստիպված էի դարձյալ մի անգամ դուրս գալու «Մշակի» և իր խմբագրի դեմ» (Հ, 1914, 31)- խոստովանում է Թումանյանը : Նրա պատասխան հոդված-ներից մեկում («Հ. Առաքելյանը հսկում է մատաղ սերնդի բարոյականության վրա») բերվում են զանազան փաստեր «Մշակի» անհարդալից վերաբերմունքից: Ըստ հեղինակի՝ տգեղ ու պարսավելի է դատապարտել մի ամբողջ հասարակական մարմին և թաքնվել ինչ-որ ծածկանվան հետևում՝ հրապարակախոսության ասպարեզում վերածվելով լոկ չարախոսի, «դանոսչիկի»:

Թումանյանի եղույթը թեև խիստ էր, բայց տեղին, օբյեկտիվ ու համարձակ, գրական-լրագրային պատշաճի սահմաններում: Մինչդեռ նրան պատասխանելիս Առաքելյանը կորցրեց չափի զգացումը, մոռացավ իր առաջադրած «սկզբունքային» հարցի հասարակական նշանակությունը, անտեսեց ընկերության վարչության որոշումը՝ հատուկ աշակերտական երեկույթներ կազմակերպելու մասին և սկսեց անվանարկել Թումանյանի անձը: Որևէ հրապա-

*բակախոսի կամ լրագրողի պատիվ չբերող հերյուրանքները չարտադրված են «Հ. Թումանյանն էլ է խոսում բարոյականության մասին» հոդվածում, ուր հեղինակը գրում է. «Բայց որ ամենից ծիծաղելին է, Հ. Թումանյանը խոսում է... գիտե՞ք ինչի մասին. Բարոյականության մասին...»: Նա սպառնում է բանաստեղծին արխիվների փոշիներից դուրս բերել այնպիսի մերկ ու կուռ փաստեր, որոնք ապագա սերունդների առջև կպարզեն, թե «ի մեծ ամոթ Հայության՝ մի ժամանակ եղել է մի «բանաստեղծ, որ բարոյական հրեչ է եղել... Եվ թող չհամարձակվի նա բարոյականության մասին խոսել» (Մ, 1914, 11):*

*Իսկ երբ «Հորիզոնի» հունվարի 22-ի առաջնորդողը Հ. Առաքելյանի այս արարքը որակեց հայ հասարակական խղճի բացակայություն և հայ հասարակության անտարբերության հետևանք, Առաքելյանը պատասխանեց «Հորիզոնի» փարիսեցիությունը և դեմագոգիական կոչը» ելույթով: Նա պահանջում էր իր նկատմամբ հարգալից վերաբերմունք: Նրա կարծիքով «Հորիզոնը» պարտավոր էր արդելել Թումանյանի հոդվածների տպագրությունը իր էջերում՝ «ի հարգանս տպագրական խոսքի», հաշվի առնել հրապարակախոսի իր 40-ամյա գործունեությունը և այլն, և այլն (Մ, 1914, 11):*

*Այնուհետև «Մշակը» աշխատում էր ոչ մի առիթ բաց չթողնել՝ Թումանյանի և գրողների ընկերության մասին վատ ու բացասաբար արտահայտվելու համար: Այդ առիթը շատ չուշացավ: Դա Պողոս Մակինցյանի ոչ այնքան հաջող դասախոսությունն էր Ալ. Ծատուրյանի քննարերգության մասին[16]:*

*Թումանյանի անձի ու հեղինակության պաշտպանությամբ հանդես եկավ թե՛ ընկերության վարչությունը և թե՛ Թիֆլիսի գրական հասարակայնությունը, առաջադեմ մամուլը[17]: Վ. Տերյանի, Ցոլակ Խանզադյանի ու Պողոս Մակինցյանի սոորագրությամբ «Հորիզոնում» լույս տեսավ մի հեռագիր[18], որը հսկայական աղմուկ բարձրացրեց: Արդյունքը եղավ այն, որ Վահան Տերյանը հրաժարվեց «Մշակին» աշխատակցելուց: Իր պաշտոնական հարաբերությունները «Մշակի» հետ խզեց նաև Հայ գրողների ընկերության վարչությունը՝ տպագրելով իր «Հերքումն» ու բա-*

ցատրությունները ի պաշտպանություն նախագահի: Հերքելով այդ «Հերքումը»՝ Հ. Առաքելյանը պնդում էր, որ Հայ գրողների ընկերությունը ոչ թե ազգային մշակութային հաստատություն է, այլ կուսակցական նեղ ձգտումներ արտահայտող, «թայֆայական ոգի ունեցող» մի հիմնարկություն, որին մարակելը «Մշակը» իր բարոյական պարտքն է համարում: Մամուլը, հրապարակախոսի կարծիքով, հանցանք գործած կլիներ, եթե չնշավակեր ընկերության «անմաքուր գործելակերպը», այն, որ նա «ժամանակ ու միջոց գտավ դասախոսություններ կազմակերպելու այնպիսի բարբաջանքների մասին, թե Սայաթ-Նովան տիրացու է եղել, թե վարդապետ, թե Աբովյանը ազգադավ մարդ է եղել»: (Մ, 1914, 43):

«Մշակը» զգուշացնում էր, որ քանի գրողների ընկերության ղեկավարները Թումանյանի պես «վարկաբեկված մարդիկ» են, ինքը կշարունակի բացասաբար վերաբերվել ընկերության գործունեությանը: Վարչությունը հարկ համարեց վերստին հերքել այդ զրպարտությունը և հանձնարարեց իր նախագահին «պատրաստել մի պատասխան՝ հիմնված իր ձեռքը գտնված փաստերի վրա» (ՀԳԿԸ ֆ, 43): Մենք առաջինը գիտական շրջանառության մեջ դրեցինք Թումանյանի գրած այդ նամակը, որը մինչ այդ անհայտ է եղել թումանյանագիտությանը և չի հրապարակվել որևէ անգամ հեղինակի անունով, քանի որ ժամանակին լույս էր տեսել վարչության ստորագրությամբ և «Փաստեր» վերնագրով: Բայց այն, որ նամակը ամբողջությամբ պատկանում է Թումանյանի գրչին, անկասկած է: Ապացույցը 1914 թ. մարտի 13-ի ընկերության վարչության նիստի արձանագրությունն է, ուր որոշակի և հստակ գրված է, որ Թումանյանի ներկայացրած նամակը «թեթև փոփոխություններով ընդունվեց և որոշվեց տպագրել վարչության ստորագրությամբ» (ՀԳԿԸ ֆ., 43/13): Այս նամակում ընկերության նախագահը հերթով թվարկում է «Մշակի» այն բոլոր համարները (1912 թ. N 227, 235, 248, 268, 255 և այլն), որոնցում ընկերությունը ենթարկվել է հանիրավի հարձակումների, հռչակվել է հավատ ու վստահություն չներշնչող, կործանման արժանի, դատապարտվել է յուրաքանչյուր նոր գործի, ամեն մի քայլի հա-

մար՝ սկսած առաջին ընդհանուր ժողովից, որի մասնակիցները բնորոշվել են «պղնձե ճակատների հնչուն դատարկություն» ունեցող անձինք, «բալվանների չարք», «խամաճիկներ», «հայկական կլակյորներ», իսկ ընկերության ամբիոնը ներկայացվել է որպես «Թիֆլիսի մեյդան» (Մ, 1912, 235): Վարչության անունից իր նամակը Թումանյանը եզրափակում է հետևյալ տողերով. «Եվ որովհետև տակավին անընդհատ չարունակվում են թշնամական հարձակումները, զրպարտությունները, Վարչությունս այս բացատրությունները հրապարակելով՝ փաստերը պաշտոնապես դնում է հրապարակ՝ այս թերթի վերաբերմունքը ենթարկելով հայ ընթերցող հասարակության և հայոց գրականության պատմության դատաստանին» (Հ, 1914, 58):

Իսկ Հ. Առաքելյանը այդ ընթացքում իր թերթի էջերում տեղ էր տալիս զանազան հոդվածների՝ ուղղված բանաստեղծի եղբոր՝ Իոստոմ Թումանյանի դեմ և սպառնում էր «նորանոր փաստեր» հրապարակել Թումանյանների ընտանիքի բարոյական կերպարը հասարակության առջև բացահայտելու նպատակով: Այդ սպառնալիքներին Թումանյանը պատասխանում է «Դոկումենտներ» հոդվածով, որտեղ խոստովանում է, որ նրան չատերը՝ ծանոթ ու անծանոթ բարեկամներից խորհուրդ են տվել չիջնելու, վեճի չբռնվելու այդ մարդու հետ: Ժամանակին վերը նշված կաթողիկոսական ընտրությունների առիթով ծագած բանակռվի ընթացքում նույն խորհուրդը Լեոյին տվել էր ինքը՝ Թումանյանը՝ համոզելով նրան ուշադրություն չդարձնել «Մշակի», հատկապես Հ. Առաքելյանի հարձակումներին: Ի պատասխան այդ նամակի՝ Լեոն 1911 թ. հուլիսի 24-ին գրում է. «Համաձայն չեմ քո կարծիքին Հ. Առաքելյանի վերաբերմամբ: Լռել միշտ չի լինի: Լռությունը քաջալերում է հանցավորներին... Եվ թո՞ւյլ տալ, որ անպատիժ կատարվի սրբապղծությունը... Էլ ո՞ր օրվա համար ենք: Դու, իհարկե, կասես, թե լրբության բերանը դրանով չես փակի: Բայց մարդկային ո՞ր հանճարն է կարողացել լիրբ բերան փակել: Եվ, այսուամենայնիվ, պարտք է խոսելը, մերկացնելը...» (Թ փ, 704):

Եվ Թումանյանը ինքը եկավ այդ եզրակացության՝ քաջ գիտակցելով, որ խնդիրն ունի ոչ թե անհատական, այլ հասարակա-

*կան բնույթ: Թումանյանը պնդում էր, որ սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե «...մի որևէ համբարձում Առաքելյանի, մի սոսկական անհատի, անջատ, սեպարատ խնդիր է սա: Ո՛չ: Հազար անգամ ո՛չ:*

*Սա հասարակական բարքի խնդիր է: Լավ ու վատ բարքից են ծնունդ առնում կյանքի մեջ բարիքն ու չարիքը: Եվ վայ էն ժողովրդին, որի բարքն ընկած է: Նրան փրկություն չկա»: (Հ, 1914, 31):*

*Հանուն հասարակական բարքերի մաքրության պայքարի ելնելով՝ Թումանյանը չխուսափեց անձնական թշնամի ձեռք բերելուց, որովհետև նա չէր կարող անտարբեր անցնել չարի, սուի ու կեղծիքի, մարդկային առաքինությունների և բարոյական անկման, մարդու հոգեկան աշխարհի զանազան աղավաղումների կողքով: Եթե չլինեին վերոհիշյալ բանավեճերը, հասարակական չահի համար բանաստեղծի անձնական ընդհարումները՝ հազիվ թե թղթին հանձնվեին Թումանյանի բարոյաբանական հայացքները, և ինչ-որ բան թերի կլիներ նրա հրապարակախոսական ժառանգության մեջ:*

*«Մեզանում, — գրում է Թումանյանը, — դժբախտաբար, բարոյականություն ու անբարոյականություն ասելիս՝ սեռական մտքով են հասկանում.... Հասարակությունը «անբարոյական» անվանելով հալածում է էս կամ էն անմեղ սիրահարներին, մինչդեռ մյուս կողմը մի ուրիշը... Առաջ սուտը գրում: Մի քանի օրից հետո գրում է «ինչպես հայտնի է», իսկ սրանից հետո էլ «ինչպես արդեն ամենքը գիտեն»: Զարհուրելի է անկման էս աստիճանը: Սա բարոյական մի սոսկալի ցեխ է, որի մեջ այլևս առաջ դնալն անկարելի է, ապրել չնչելն անկարելի է, ուր մնաց ոգևորվելն ու երդելը... Ջլետք է լինի էս ցեխը... Թե չէ բարքերի ապականության մեջ միշտ կարող են խեղդվել ամեն վեհ ու վսեմ հղացումներ ու գեղեցիկ գործեր» (Հ, 1914, 31):*

*«Առայժմ» հոդվածում Թումանյանը բացատրում է իր հակառակորդին, որ նույնիսկ թշնամու դեմ պայքարելիս պենքերը պետք է ազնիվ ու արդար լինեն, որ չի կարելի մարդուն բարոյազուրկ հռչակելու համար վկայակոչել նրա մերձավորի՝ հոր կամ եղբոր ապօրինի վարմունքը, որ չափանիշը պետք է լինի միմիայն*

*տվյալ մարդու վարքագիծը: Իսկ բանավեճը ունեցավ տխուր վախճան: Այն ավարտվեց 1914 թ. սեպտեմբերի 6-ին Թիֆլիսի նահանգական դատարանում: Գործը հարուցել էր Համբ. Առաքելյանը՝ մեղադրելով Թումանյանին զրպարտության մեջ: Դեռ մարտի 22-ին բանաստեղծը ներկայացել էր քննիչին և հրաժարվել ներողություն խնդրելուց, իսկ սեպտեմբերի 6-ին Թումանյանի դատապաշտպանը՝ Գ. Լյատիսյանը, հաշտվում է դատարանում Առաքելյան եղբայրների հետ: Թումանյանը ստիպված եղավ մեկ անգամ ևս զրիչ վերցնել և եզրափակիչ խոսքով վերջ տալ մասնավոր թվացող, բայց հասարակական կարևորության խնդրին. «Թե՛ համամարդկային, թե՛ ազգային կյանքի էս ահավոր մոմենտին, — դրում է նա, — Հ. Առաքելյանով... զբաղվելը համարելով միանգամայն անկարելի, ես հավատում եմ, սակայն, որ կգա մի օր, երբ բաց հրապարակ կլինի ճշմարտությունը և միանգամ ընդմիշտ անհերքելի կհայտնվի, թե ինչ հրեշավոր պատմություն է էս իբրև թե մասնավոր ազմուկը... Նրանից հետո պարզ կլինի, թե ինչ դրամա է եղել մեր ազգին Հ. Առաքելյանի ու Հ. Առաքելյանների և իմ հանդիպումը, ի բնե և ի ծնե ծայրահեղորեն իրար ներհակ և իրար համար անտանելի մարդկանց հանդիպումը» (7, 155):*

*Թումանյանի համար իբրև «տարրական առաքինություն և մխիթարանք» էր այն, որ նա ոչ մի ասպարեզում չկարողացավ հանդուրժել Հ. Առաքելյանին՝ իբրև երևույթ: Բանաստեղծը վստահ էր, որ ի վերջո սերունդների համար երևան կգա ճշմարտությունը, քանի որ չէր հավատում ստի ու կեղծիքի վերջնական հաղթանակին, մանավանդ, որ այդ ամենի դեմ պայքարը մղվում էր արդար, ազնիվ ու չիտակ միջոցներով, համարձակորեն, առանց բարոյական բնկճվածության ու հուսահատության զգացումի: Յուրաքանչյուր արդար ու ազնիվ գործի, անձի, երկրի ու ժողովըրդի հաղթանակի դաղտնիքը բանաստեղծը տեսնում էր անարդարության ու կեղծիքի, ստի դեմ ազնիվ ու արդար զենքով պայքարելու մեջ. «Ինձ համար, — դրում է Թումանյանը, — արդեն կյանքի մի անսասան օրենք կա — եղիր անկեղծ, չիտակ ու բարի, դու էլ զինվիր էս զենքերով, և նրանից հետո անպարտելի ու ապահով ես ամեն չարու թյան ու չարախոսության դեմ... Եղիր անկեղծ, չիտակ ու*

*բարի, այնուհետև թեկուզ ամբողջ աշխարհքը վեր կենա քո դեմ, վերջը դու ես հաղթելու» (Թ ֆ, լ ց 22):*

*Հասարակական բարքերի անկման դեմ պայքարելիս Թումանյանը՝ իբրև բանաստեղծ, հետամուտ էր նաև մեկ այլ նպատակի: Նա ձգտում էր ստեղծել այնպիսի հասարակական մթնոլորտ, որում հնարավոր լիներ ստեղծագործական ներշնչումն ու ոգևորությունը, ճշմարիտ արվեստի ստեղծումը:*

*Այս տհաճ միջադեպի հետևանքով խզվեց կապը «Մշակի» և ընկերության մյուս: Թիֆլիսում բրյուսովյան նշանավոր օրերից հետո, երկու տարի անց, փորձեր են արվում հաշտեցնելու Հայ գրողների կովկասյան ընկերությունը «Մշակ» լրագրի հետ: Դավիթ Անանունը երկու բաց նամակ է ուղարկում վարչությանը (Մ, 1916, 10, 27,46 ՀԳԿԸ ֆ, 45/2) լրագրի հետ նախկին հարաբերությունները վերականգնելու առաջարկությամբ: Մի քանի ամիս անց «Ս» ստորագրությամբ «Մշակում» լույս է տեսնում «Հրավիրում ենք կողմերին վերջ տալ» ակնարկը: Հայ գրողների ընկերությունը և նրա վարչությունը 1916 թ. նոյեմբերի 17-ին որոշում է «առանց անցյալի քննության մեջ մտնելու՝ վերականգնել իր խզած հարաբերությունները թերթիդ հետ» (Մ, 1916, N 259): Այս որոշումից հետո «Մշակը» սկսում է արձագանքել ընկերության գործունեությանը, նրա բոլոր երեկույթներին:*

*Թումանյանը պայքարի մեջ մտավ հանուն ընկերության շահերի: Այնուհետև այդ բախումը վերաճեց անձնական ընդհարման: Սակայն չդավաճանելով հանդերձ իր սկզբունքներին՝ նա կարողացավ հաշտվել՝ դարձյալ ընդհանուրի, հասարակական շահերից ելնելով: Նա հաշվի առավ այն հանդամանքը, որ համահայկական նշանակություն ունեցող գրողների ընկերության գործունեությունը իր արտոցոլումը չէր գտնում մի լրագրում, որն ուներ մեծ թվով ընթերցողներ:*

*Աշխատանքի այս գլխում մենք փորձեցինք լուսաբանել ընկերության հիմնադրման պատմությունը, ստեղծման անհրաժեշտությունը, այն դժվարությունները, որոնց հանդիպեց գրողների միությունը իր ստեղծման առաջին իսկ օրերից, այդ դժվարությունների դեմ պայքարն ու հաղթահարումը՝ Թումանյանի գեկավա-*

րուքյամբ: Բերեցինք Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությանը առնչվող ընդամենը երկու դեպք Թումանյանի կյանքից, որոնք լոկ ակնարկ էին նրա և ժամանակի երկու հայտնի հասարակական գործիչների՝ Ե. Լալայանի և Հ. Առաքելյանի միջև եղած հարաբերությունների պատմությունից: Երբեմն, նույնիսկ տհաճ միջադեպերը մեծերի կյանքում համարվում են հետագա սերունդների համար բարեբախտություն, քանի որ առիթ են դառնում չատ արժեքավոր հոդվածների կամ նամակների ու գեղարվեստական գործերի ստեղծման, որոնք նոր լույս են սփռում գրողի, արվեստագետի աշխարհայացքի վրա, օգնում են ավելի մոտիկից ծանոթանալու աշխարհին, կյանքի ու մարդու նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքին, հնարավորություն են ընձեռում ավելի ճիշտ ընկալելու նրանց բարոյաբանական հայացքները և հենց իրենց՝ մեծերին՝ իբրև մարդ-անհատականություններ:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը միայն իր ստեղծումով և առաջին քայլերով մեծ աշխուժություն առաջացրեց: Ակնհայտ էր, որ նորաբաց ընկերությունը պիտի զբաղվեր գրական կյանքի ոչ միայն ընթացիկ խնդիրներով: Նրա առջև ծառանում էին գրականության պատմությանը, անցյալին, ներկային և ապագա ճակատագրին վերաբերող խնդիրներ, դրանց դիտական ընորոշմանը, գրական քննադատությանը վերաբերող զանազան հարցեր:

Թումանյանի՝ գրական կյանքի զարգացմանը նախանձախնդիր գործչի ջանքերով իրագործվեց գրողների ու գրականության հոգսերով համակված անձանց միությունը՝ Հայ գրողների կովկասյան ընկերությունը, որով, իրոք, բացվեց «Գործի ասպարեզը»:

Գլուխ երրորդ

# Հայ գրողների Կովկասյան ընկերության պատմության համառոտ ակնարկ



# Գրողների ընկերության դերը հայ ազգային-հասարակական կյանքում

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը իր գործունեությունը ծավալեց բազմաթիվ այլ ուղղություններով, ընդգրկեց համազգային, մշակութային, քաղաքական- հասարակական կյանքի տարբեր ոլորտներ:*

*1912 թ. ընկերությունը ուներ 119 անդամ, այդ թվում՝ Լեո, Շիրվանզադե, Վրթ. Փափազյան, Դ. Դեմիրճյան, Նար-Դոս, Ալ. Ծատուրյան, Ե. Շահազիզ, Ն. Ադոնց, Լ. Մանվելյան, Աթ. Խընկոյան, Ն. Աղբալյան, Հ. Հովհաննիսյան: Հետագայում ընկերությունը համալրվեց հարյուրավոր նոր անդամներով, որոնցից են՝ Ավ. Իսահակյանը, Շանթը, Սիամանթոն, Թ. Թորամանյանը, Վ. Տերյանը, Ստ. Զորյանը, Յոլակ Խանզադյանը, Հ. Սուրխաթյանը և ուրիշներ: Բացի Թիֆլիսից, ընկերության անդամները ապրում էին 30-ից ավելի քաղաքներում, գավառներում ու գյուղերում (Պոլիս, Մոսկվա, Պետերբուրգ, Բաքու, Երևան, Էջմիածին, Յալթա, Վլադիկավկազ, Ալեքսանդրապոլ, Արդահան, Ռոստով, Նովոռոսիյսկ, Աստրախան, Նոր Նախիջևան, Հին Նախիջևան, Ախալքալաք, Շուշի և այլն):*

*Թումանյանը, կարևորն ու էականը համարելով գրականության ժողովրդականության, ժողովրդի և գրականության անխզելի միասնության հարցերը, համախմբեց տարբեր հայացքների, գրական-գաղափարական, նաև հասարակական-քաղաքական տարբեր ըմբռնումների, կուսակցական ամենահակառակ հայացքների տեր մարդկանց, հասարակական տարբեր հոսանքների ներկայացուցիչների:*

*Վարչության նիստերը տեղի են ունեցել կիրակի օրերը ազդագրական ընկերության դահլիճում, Ներսիսյան դպրոցի հին շենքի երկրորդ հարկում և այլուր: Ընկերության գրասենյակը եղել է*

մերթ բարեգործական, մերթ հրատարակչական ընկերությունների շենքերում և անվերջ տեղից տեղ է փոխադրվել: Սակայն ավելի հաճախ վարչության նիստերը տեղի են ունեցել նրա նախագահի՝ Թումանյանի բնակարանում (Վոզնեսենսկայա 18):

Ընկերության ժողովները և ամեն շաբաթ կազմակերպվող երեկույթները տարբեր տարիներին տեղի էին ունենում Կովկասի հայոց բարեգործական, Կովկասի կայսերական, Հայոց ազգագրական, Երաժշտական ընկերությունների, Գայանյան, Մանթաշյան-Առևտրական (Բեհբության 50), Թանդոյան դպրոցների, Կոնսերվատորիայի դահլիճներում, Վաճառականական բանկում, Արտիստական թատրոնում և այլուր: Քաղաքային դումայի դահլիճը երբեմն անվճար տրամադրում էր Թիֆլիսի քաղաքագլուխը: Մշտական դահլիճ չունենալը հաճախ էր խանգարում ընկերության աշխատանքներին: Գրական երեկոներին հասարակությունը այնպես էր հաճախում, որ նշված բոլոր դահլիճներն էլ փոքր էին թվում: Մամուլում հաճախ կարելի էր հանդիպել այսպիսի հաղորդումների. «ամբողջ դահլիճը, վերնահարկը և միջանցքները, չնայելով շոգին, այնքան լեփ-լեցուն էին, որ շարժվելու տեղ չէր մնացել» (Հ, 1914, N 119): «Անվերջ նոր կարգեր էին ավելացնում, բայց չատերն էին մնում ոտքի վրա, իսկ չատերն էլ՝ դրսում» (Հ, 1916, N 226): Առհասարակ ունկնդիրների թիվը առնվազն 400-ի, երբեմն էլ 1 000-ի էր հասնում:

Գրական երեկոներն ու դասախոսությունները տեղի էին ունենում սկզբում հինգշաբթի օրերը, իսկ 1916 թ. հոկտեմբերից տեղափոխվում են ուրբաթ օրերը: Երեկույթներից առաջ «Հորիզոնում», «Մշակում» և «Կովկասի լրաբերում» տպագրվում էին դասախոսությունների ծրագրերը, որոնք երբեմն այնքան հանգամանալից ու ծավալուն էին, որ, տվյալ նյութի մասին քննադատի բոլոր թեզերի շարադրանքը լինելով, ամբողջական պատկերացում էին տալիս դասախոսության մասին[1]:

Յուրաքանչյուր երեկույթից առաջ վարչությունը ընտրում էր հատուկ մասնաժողով, որի պարտադիր անդամը Հ. Թումանյանն էր, դասախոսությունները կազմակերպելու (թեմաները ճշտելու, դասախոսներին հրավիրելու և այլնի) համար: Երբեմն գրա-

կան ասուլիսներն ու բանավեճերը տեղափոխվում էին դասախոսությունների հաջորդող բանկետներն ու ճաշկերույթները, որոնք տեղի էին ունենում Հավլաբարի հասարակական ժողովարանի ակումբի ամառային չենքում, Միքայելյան փողոցում գտնվող ըժիշկ Կարապետյանի այգում:

Բացի գրական հինգշաբթիներում տեղի ունեցող հասարակական դասախոսություններից, ընկերությունը որոշել էր յուրաքանչյուր ամիս կազմակերպել հատուկ դասախոսություններ՝ «գրական-գիտական բովանդակության» զրույցներ, «գիտական-գրական մասնագիտական ըրուցատրություններ»՝ միայն ընկերության անդամների համար» (ՀԳԿՀ ֆ, 46/7):

Այդպիսի փակ երեկոներից էր 1917 թ. մայիսի 12-ի նիստը, որտեղ Թումանյանը պետք է զեկուցեր «Հայոց գրականության վիճակը և բովանդակությունը» թեմայով (Մ, 1917, 97):

Փակ երեկոների մասին մամուլում հաղորդումներ չեն պահպանվել և հայտարարություններն էլ ոչ միշտ են տպագրվել. դրա համար էլ ընկերության գործունեության այդ ոլորտը մեզ համար մնում է դրեթե անծանոթ: Կարևորը, սակայն, զուտ մասնագիտական, գրականագիտական դասախոսությունների կազմակերպման փաստն է, որը լրացուցիչ հավաստումն է այն բանի, թե ինչպես լրջորեն էին վերաբերվում ընկերության զեկավարները գրականագիտության զերին գրողի և գրականության զարգացման գործում և ինչպես իրավացի էին՝ զանազանելով գրականության մասին գրողին ուղղված խոսքը գրական լայն շրջաններին, ընթերցող լայն հասարակությանն ուղղված խոսքից:

Ինչպես նշվեց, գրական համարյա յուրաքանչյուր երեկոյի ու դասախոսության կազմակերպիչը հիմնականում նախագահն էր: Վարչությունը լիազորել էր նրան դասախոսներ գտնել և առանց իրեն՝ վարչությանը, նախօրոք տեղյակ պահելու՝ հրավիրել դասախոսելու: Միշտ երեկույթները բացվում ու փակվում էին Թումանյանի «բովանդակալի ու համով» ներածական ու եզրափակիչ խոսքերով: Ունենալով իր սեփական հայացքը քննվող ամեն մի հարցի շուրջ՝ նա հարգում էր գրական վիճաբանությունների ընթացքում արտահայտված յուրաքանչյուր կարծիք, «մտքի

*բոլոր երանգները» (ԹԺՀ, 109): Մշտապես տեղի ունեցող մտքերի ու հայացքների բախումների, բուռն վեճերի ու կրքերի բորբոքման ընթացքում Թումանյանը, ներկաների վկայությամբ. «իբրև նախագահ, հանդես էր գալիս իր զարմանալի տակտով, նուրբ վերաբերմունքով ու լայնախոհությամբ» (ԹԺՀ, 109):*

*Երեկույթներին մշտապես ուղեկցող բանավեճերը մեծ խանդավառություն ու աննախընթաց եռուզեռ էին առաջացնում հասարակության մեջ:*

*Եվ իրոք, մեծ էր ընկերության երեկույթների նշանակությունը: 1916 թ., երբ պատերազմի պատճառով երկար ընդմիջումից հետո (1914 թ. հոկտեմբերի 1-ՀԳԿԸ ֆ, 45/9) վերսկսվեցին երեկույթները, լրագրերը, նկատի ունենալով այդ գրական ասուլիսների ու դասախոսությունների դերը հայ մշակութային-հասարակական կյանքում, ողջունեցին ընկերությանը և գրեցին. «Իսկապես, որ շատ ուրախալի է այս երևույթը, ստեղծվում է մի տեսակ գրական միջավայր, որը կնպաստի, անշուշտ, նորանոր տաղանդների հանդես գալուն, և որ գլխավորն է, այդ երեկույթների շնորհիվ աստիճանաբար հաստատվում է մի կենդանի կապ գրականության և հասարակության միջև» (Հ, 1916, N 276): Տողերի հեղինակը, անտարակույս, իրավացի էր, քանի որ ընթերցողի ու գրողի փոխադարձ չփման շնորհիվ շահում էր թե՛ գրականությունը և թե՛ ընթերցողը՝ ժողովուրդը: Գրողների ստեղծագործությունները քննության էին ենթարկվում թե՛ ժողովրդի տարբեր խավերի և թե՛ ժամանակի քննադատական մտքի կողմից. արդյունքում մնում էր ժամանակակից գրողի քննախույզ հայացքը իր իսկ գործի նկատմամբ, ավելի զգաստ ու պահանջկոտ վերաբերմունքը սեփական անձի հանդեպ: Դասական գրականությանը, անցյալի արվեստի լավագույն գործիչներին նվիրված դասախոսությունները բարձրացնում էին ժողովրդի ինքնագիտակցությունը, արթնացնում էին սեր ու հոգատարություն սեփական մշակույթի նկատմամբ: «Հայ մարդը սկսում է ճանաչել իրեն, գիտակցել իր անցյալն ու ներկան» – գրում էին ժամանակի լրագրողները: (Հ, 1914, N 4):*

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը իր գոյությունը պահպանեց 10 տարի, բայց նրա տարեգրության մեջ գրականու-*

թյան պատմության համար նշանակալից էին հատկապես 1912-1914, 1916-1917 թվականները, որոնք աչքի ընկան դրականության լուսաբանման, պրոպագանդման եռանդուն գործունեությամբ: Այդ տարիների հրեկույթները կազմակերպվում էին պարբերաբար, ամեն շաբաթ, գրեթե առանց բացառության: Ընդմիջումները լինում էին կանոնավոր, ամառվա ամիսներին, երբ հասարակության զգալի մասը բացակայում էր քաղաքից: Բարեկեցիկ շրջաններն էին դումարվում նաև վարչության նիստերը, ընդհանուր ժողովները, կազմակերպվում էին բազմաթիվ հետաքրքիր գործեր ու միջոցառումներ:

1912-1914 թթ. տեղի ունեցած նիստերից պահպանվել են 43, իսկ ընդհանուր ժողովներից 10 արձանագրություն: (ՀԳԿՀ ֆ, 41/1-25, 42/1-9, 57/1-4, 40/1-10): 1914 թ. հունվարի 1-ից մինչև 1916 թ. դեկտեմբերի 18-ը վարչությունը ունեցել է 57 նիստ, կազմակերպել է 16 դասախոսություն, որից 14-ը տեղի է ունեցել 1916 թ. վերջին ամիսների ընթացքում (ՀԳԿՀ ֆ, 43/1-4, 44/1-7, 30/3-4, 45/1-16, 46/7):

Հաջորդ տարիներին՝ մինչև 1923 թ. ապրիլի 10-ը տեղի ունեցած ժողովների ու նիստերի արձանագրություններից պահպանվել է 39-ը: Գնալով նվազել է նաև դրական երեկույթների ու դասախոսությունների թիվը:

Ընկերության աստվածներում արծարծվում էին ոչ միայն դրական, այլ նաև հասարակական ամենաբազմազան բնույթի հարցեր, որոնք իրենց հրատապությամբ հուզում էին ժողովրդի տարբեր խավերին:

Ընդհանուր քննարկման նյութ էին դառնում նաև Հայաստանի աշխարհագրական դիրքի, պատմության, ժողովրդի ազգային նկարագրի վրա թողած դրանց ազդեցության, ազգաբնակչության ու նրա դասակարգային կազմի, պետության քաղաքական ձևերի, տնտեսագիտական, բնապլիտական բնույթի զանազան հարցեր (1917 թ. հունվարի 20):

Արտակարգ մեծ ու հարուստ ծրագիր ուներ ընկերության 8-րդ երեկույթը, որը նվիրված էր կանանց հարցին (1913 թ. մարտի 28, ապրիլի 4): Առհասարակ այս շրջանում ևս կանանց ազատագրու-

թյան, նրանց ու տղամարդկանց իրավահավասարության հարցը շարունակում էր հուզել և հետաքրքրել հասարակական ամենալային խավերին:

Գյուղացիների արտագաղթը դեպի քաղաք մեծագույն չափի էր դարձել նաև XX դարի առաջին տասնամյակում: Երևույթը մեծ վնաս էր հասցնում գյուղերին, որոնք օրեցօր ավելի ու ավելի էին զրկվում կենսունակ, երիտասարդ, աշխատող ուժերից: Աշոտ Աթանասյանը «Արտագաղթը և նրա պատճառները» թեմայով իր զեկուցման մեջ (1913 թ. նոյեմբերի 14) փորձում էր մեկնաբանել փոքր Հայրենիքը լքելու պատճառները, նշել դրանց դեմ պայքարի ուղիները: Գյուղացու տնտեսական զարհուրելի վիճակի, ժողովրդի ահավոր դրության մասին գիտեին բոլորը: Եվ դա չէր կարող չմտահոգել գրականության ու մշակույթի հարցերով զբաղվող ընկերությանը, քանի որ ըստ Թումանյանի՝ հենց դրա պատճառով «խախուտ է մեր բոլոր երազների ու հույսերի հիմքը» (7, 534):

Կովկասյան ընկերության գործունեության տարիներին տեղի ունեցան պատմական այնպիսի խոշոր իրադարձություններ, ինչպիսիք են 1917 թ. Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունները, կամ ինչպես ընդունված է ասել՝ պետական հեղաշրջումները: Փետրվարյանից անմիջապես հետո ընկերությունը որոշեց կազմակերպել մի շարք դասախոսություններ աշխարհում տեղի ունեցած մեծ հեղափոխությունների և քաղաքական հեղաշրջումների մասին: Այս շարքի առաջին դասախոսությունը նվիրված էր ֆրանսիական հեղափոխությանը (Հ, 1917, N 54):

1917 թ. ապրիլի 28-ին կայացավ Վ. Տեր-Գևորգյանի «Սոցիալիզմը և բարոյականությունը» թեմայով զեկուցումը:

Բայի դասախոսություններից Հայ գրողների կովկասյան ընկերությունը ձեռնարկեց բազմաթիվ հետաքրքիր գործեր ու միջոցառումներ, որոնք ունեին հասարակական-մշակութային կարևոր արժեք:

Դեռ 1913 թ. հունվարի 20-ին ընկերության վարչությունը որոշել էր հիմնել գրադարան (ՀԳԿԸ ֆ, 41)՝ կազմված հիմնականում ընկերության անդամների հրատարակած աշխատություն-

ներից ու դրքերից: Գրողների ընկերության գրեթե բոլոր անդամների, ինչպես նաև «Ջավախք», շաբաթաթերթի, «Ասպարեզ», «Նոր հոսանք» ամսագրերի, «Պատանի», «Մեր ուղին» ժողովածուների անմիջական օգնությամբ կազմավորվեց Հայ գրողների կովկասյան ընկերության հարուստ գրադարանը (ՀԳԿԸ ֆ, 62/1-6):

Վաղուց արդեն Թումանյանին, ինչպես և այդ շրջանի մշակույթի այլ գործիչների, մտահոգում էր Հայկական ակադեմիայի, համալսարանի բացակայությունը: Հայ մշակույթի, դիտության ու գրականության զարգացումը առաջադրում էր ազգային այնպիսի խոշոր հաստատության ստեղծման պահանջ, որը զբաղվեր հայագիտական, հատկապես պատմագրական ու գրականագիտական գիտելիքներ ուսուցանելու և տարածելու գործով: Ընկերության ժողովներում, վարչության նիստերում ու երեկույթներում բազմիցս արծարծվել է նաև այս հարցը: «Անհրաժեշտ է, որ բացառապես հայագիտությամբ և հնագիտությամբ զբաղվողների թիվը շատանա, որը մի հաստատուն գրավական կլինի մեր կուլտուրական հետագա առաջադիմության համար» (ՀԳԿԸ ֆ, 45/7, Հ, 1914, N 119), — ասում է Աշխարհաբեդ Լոռու Քալանթարը ընկերության երեկույթներից մեկում: 1916 թ. մայիսի 25-ի վարչության նիստում Թումանյանը առաջարկում է բացել հայ գրականության կուրսեր: Նախատեսվում էր դասընթացներ բացել հինգ կիսամյակով՝ աշնանն ու գարնանը, 1916 թ. սեպտեմբերից: Դասերը պետք է տեղի ունենային չաբաթական երկու անգամ, երեկոյան ժամերին: Նույն թվի աշնանից ընկերությունը որոշել էր հրատարակել նաև իր օրգանը: Ըստ Նվարդ Թումանյանի անտիպ դրառումների՝ այդ օրգանը պետք է կոչվեր «Հուշագրեր հայոց գրականության»: Դասընթացների մասին Թումանյանը 1916 թ. հունիսի 3-ի նամակով տեղյակ է պահում փոխնախագահին՝ Տիգրան Հովհաննիսյանին. «Աշունքից էստեղ հայոց գրականության կուրսեր են բացվում: Առայժմ երեք հոգի ունենք ի նկատի – Ագբալյան, Աբեղյան (Մանուկ) և Մատենճյան» (10, 240): Հոկտեմբերի վերջերին Հայ գրողների ընկերությունը հրավիրում է պրոֆ. Մաուին՝ դասախոսություններ կարդալու հայագիտություն և կովկասագիտություն առարկաներից: Հրավիրվում են նաև Աճառյանը, Գր. Ղափանցյանը և ուրիշներ:

Ինչպես միշտ, ընկերության այս ձեռնարկը ևս առաջացնում է մեծ ոգևորություն: Ամենատարբեր զբաղմունքի տեր մարդկանցից Թումանյանը ստանում է բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները խնդրում են իրենց մասնակից դարձնել գրականության և հայագիտության դասընթացներին (Թ ֆ, 904, 500, ՀԳԿՀ ֆ, 112, 179):

Սակայն դրականության կուրսերի բացումը հետաձգվեց, քանի որ մասնակցել ցանկացողների թիվը այնքան շատ էր, որ անհրաժեշտ էին սպասվածից ավելի մեծ ծախսեր[2]: Այնուհետև Թումանյանը իր նախադահած երկու՝ Գրողների և Հայկազյան ընկերությունների միջոցով ամեն ինչ անում էր էջմիածինը հայագիտական կենտրոն դարձնելու և Հայաստանում ազգային համալսարան բացելու ուղղությամբ: Չնայած Հայ գրողների կովկասյան ընկերության, կազմավորվող Հայկազյան ընկերության և հատկապես Թումանյանի բոլոր ջանքերին՝ հայկական ակադեմիա կամ համալսարան ստեղծել չի հաջողվում:

1919 թ. մարտի 12-ին և 30-ին Հայ գրողների կովկասյան ընկերության հրավերով տեղի է ունենում ժողով՝ Հայաստանի Լուսավորության նախարարությանը կից գեղարվեստական-գիտական դեպարտամենտ հիմնելու խնդրի քննության նպատակով, տարբեր ընկերությունների վարչությունների մասնակցությամբ և Թումանյանի նախագահությամբ[3]: Սակայն գեղարվեստի և գրականության առանձին հաստատություն վերստին չի ստեղծվում:

1920 թ. հունվարին, երբ Հայաստանի նորաստեղծ Հանրապետությունում բացվում է հայկական առաջին համալսարանը, ինչը, անշուշտ, պատիվ էր բերում սոցիալական ու քաղաքական դերրարդ պայմաններում գործող հայկական երիտասարդ կառավարությանը, Թումանյանը գրողների ընկերության անունից ողջույնի հեռագիր է ուղարկում՝ արտահայտելով իր մեծ ուրախությունն ու ջերմ շնորհավորանքները, որոշակի ընդգծելով. «Հայ գրողների կյանքն ու բախտը անխզելի կապված են հայոց համալսարանի կյանքի ու բախտի հետ»[4]:

1917 թվականից ընկերության վարչությունը փորձեր է անում փոփոխելու կանոնադրությունը: Գրողների միության ան-

վանումից հանվում է «Կովկասյան» բառը և ընկերությունը պարզապես կոչվում է «Հայ դրողների ընկերություն», քանի որ դրական այդ հաստատությունը ստեղծման հենց առաջին օրերից իր կազմում ընդունում էր ոչ միայն Կովկասում ապրող հայ դրողներին, այլ անդամագրում էր աշխարհի տարբեր մասերում ապրող հայ դրողներին, իր գործունեությունը ծավալում էր նաև Կովկասի սահմաններից դուրս՝ ողջ հայ իրականության մեջ: Որոշ ձևակերպումներ առհասարակ հանվում են, արվում են որոշ ավելացումներ (ՀԳԿԸ ֆ, 46/7, մ, 1917, 92):

1919-20 թվականներին, երբ հայ դրողների ընկերությունը շատ ավելի քիչ էր կազմակերպում դրական երեկույթներ ու դասախոսություններ, երբ խառը ժամանակների ստիպմամբ նվազ ուշադրություն էր դարձնում դրական խնդիրներին ու դրողներին, Թիֆլիսի հայ դրական հասարակայնության մեջ դրողների նոր միություն ստեղծելու պահանջ է առաջանում: Պատճառներից մեկն էլ այն էր, որ Թումանյանը ավելի պակաս հետաքրքրություն ու եռանդ էր ցուցաբերում ընկերության աշխատանքների նկատմամբ՝ մանավանդ խորհրդային կարգերի հաստատումից հետո: Հավանաբար հույսը դնում էր դրողին ու դրականությանը ցուցաբերվելիք պետական աջակցության վրա: Բացի այդ ազգային գործունեությունը կլանում էր նրա գրեթե ողջ ժամանակը: 1921 թ. մարտի 29-ին[5] Թիֆլիսում կազմակերպվեց Վահան Տերյանի անվան Հայ արվեստի տունը (Հայարտուն), որի նախագահը դառնում է Թումանյանը: Եվ հայ դրականության նշանավոր գործիչը այս անգամ ավելի ղբաղվում էր Հայարտան երեկույթներով ու ժողովներով, «Նոր օրեր» ամսագրի հրատարակությունը նախաձեռնելով, այնուհետև ՀՕԿ-ի (Հայաստանի օգնության կոմիտե) նախագահի պարտականությունների կատարմամբ: Բացի այդ Թումանյանը ուզում էր անկեղծ հավատալ, որ «վերջապես դրականությունը պաշտպանված է, կառավարություն կա, սրանից հետո քեզ համար հանդիստ նստիր ու պարապիր»[6]:

Սակայն դրողների հոգսերը առանձնապես չէին թեթևանում ո՛չ խորհրդային և ո՛չ էլ նախախորհրդային շրջանում: Վերստին առաջանում է դրողների ընկերության մեջ դրական ֆոնդը վերա-

կենդանացնելու պահանջ: Դեռ 1919 թ. հուլիսի 21-ի՝ հայ գրողների ժողովի մի արձանագրության մեջ նշվում էր. «Մի խումբ հայ ծանոթ գրագետներ (գեղարվեստական գրողներ) հանդիպելով՝ որոշեցին կազմել «Հայ գրողների (գեղարվեստական գրողների) Միություն» (ՀԳԿԸ ֆ, 48): Միաձայն հիմնադիր անդամներ են առաջարկվում Հ. Հովհաննիսյանը, Շիրվանզադեն, Նար-Դոսը, Վրթ. Փափազյանը, Հովհ. Թումանյանը, Շանթը, Ավ. Իսահակյանը, Ավ. Ահարոնյանը, Վ. Տերյանը, Ե. Օտյանը: Իսկ 1920 թ. սեպտեմբերի 29-ի «Մշակ» լրագրի հայտարարություններ բաժնում հանդիպում ենք հետևյալ հաղորդմանը. «Մի խումբ հայ գրականագետներ որոշել են հիմնել «Հայ գրականագետներին օգնող ընկերություն: Ձեռնարկված է կանոնադրության մշակումը» (ՀԳԿԸ ֆ, 48):

Հայ գրողների կովկասյան ընկերությունը գործեց նաև Հայ գրչի մշակների միություն անվան տակ: Այս փոփոխությունը կատարվում է 1921 թ. սկզբներին, փետրվարի 22-ից առաջ, քանի որ նշված օրը տեղի է ունեցել ընդհանուր ժողով, որի արձանագրության մեջ ընկերության անունը արդեն փոխված է: Սակայն միայն 1921 թ. մայիսի 14-ին Հայաստան դահլիճում կայացած ընդհանուր ժողովը պաշտոնապես ընդունեց «Հայ գրչի մշակների միության» անդամների ցուցակը հայ գրողների և գրասերների կովկասյան ընկերության կողմից» (ՀԳԿԸ ֆ, 46): Մինչ այդ գործում էր վարչության ժամանակավոր կազմ:

Հայ գրչի մշակների միությունը նախ ցանկություն է հայտնում իբրև «հայկական սեկցիա» մտնել Թիֆլիսի ընդհանուր գրչի մշակների պրոֆեսիոնալ միության մեջ: Որոշվում է նաև Հայ գրողների կովկասյան ընկերության կանոնադրությունը վերանայել՝ ըստ նոր ժամանակների պահանջների: Սակայն ընկերությունը աստիճանաբար կազմալուծվում էր: Միայն 1921 թ. հոկտեմբերին վարչությունից հեռանում է հինգ անդամ Հայաստան տեղափոխվելու պատճառով: Հոկտեմբերի 27-ից մինչև 1922 թ. մարտի 26-ը 16 նիստ է հրավիրվում, որից երկուսը տեղի չի ունենում անդամների բացակայության պատճառով, և Հայ գրչի մշակների միությունը 1921 թ. դեկտեմբերի 5-ից որոշում է մտնել Հայարտան մեջ: Ընկերության վարչության նախագահը մինչև

1922 թ. մարտի 26-ը Հովհաննես Թումանյանն էր: Ընկերության գոյության առաջին իսկ օրերից նա կարծես դարձավ անփոխարինելի ղեկավար: Այդ են հավաստում բոլոր նրանք, ովքեր առնչվել են Թումանյան-նախագահի հետ: Ընկերության փոխնախագահ Տիգրան Հովհաննիսյանը ասում է. «Թումանյանի ջանքերի շնորհիվ ընկերությունը նշանավոր չափով պարտական է իր գոյությամբ և արդի մխիթարական վիճակով» (Հ, 1913, 122): Մարգար Ավետիսյանը հավատացնում է, որ Թումանյանը «Իբրև գրողների միության նախագահ... այնքան պաշտոնական անձնավորություն չէր, որքան մտերիմ ընկեր. «Թումանյանի ղեկավարությամբ անդամները ավելի հեշտ էին որոշում կայացնում» (ԹԺՀ, 190):

Իրոք, Թումանյանի բացակայության թեև քաղաքից հեռու լինելու պատճառով չէին գումարվում վարչության նիստեր, ընդհանուր ժողովներ, չէին կազմակերպվում գրական երեկոներ և այլ բնույթի միջոցառումներ: Մի առիթով ինքը՝ Թումանյանը, խոստովանել է. «**Պետք է ավելացնեմ, որ վերջին տարիներս ես իմ անձնական միջոցներից եմ արել ընկերության ծախքերը** և իր հաշիվներն էլ մնացել են առանց ծախսելու ի բացառյալ անցյալ տարվա վերջերքը, երբ և՛ իբրև նախագահ և՛ Հայարտան ու գրողների ընկերության, Հայարտան միջոցներից բաժին էի հանում գրողների ընկերությանը»[7]: (Ընդգծումը մերն է. Ս.Հ.)

1922 թ. մարտի 26-ին Հայ գրչի մշակների միության ընդհանուր ժողովում ընտրվում է վարչության նոր կազմ՝ բաղկացած ինը հոգուց և առաջին անդամ ընկերության հիմնադրման օրից Թումանյանը չկար այդ կազմում: Պատճառը բանաստեղծի առողջական վիճակն էր: Նրան դեռ նոր էին վիրահատել (մարտի 9-ին), իսկ այդ օրը, մարտի 26-ին նոր միայն դուրս էին գրել հիվանդանոցից: Վարչության նախկին փոխնախագահ Լեոն դարձավ նախագահ: Սակայն Հայ գրողների կովկասյան ընկերության 10-ական թվականների սկզբի եռանդուն գործունեությունը վերակենդանացնելու բոլոր փորձերը իզուր անցան: Ի վերջո, 1923 թ. ապրիլի 7-ին Հայ գրչի մշակների միությունը ձուլվեց Վահան Տերյանի անվան Հայ արվեստի տանը:

*Այսպես ավարտվեց Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը, որը կարևոր դեր խաղաց դարասկզբի հայ մշակույթի ողջ պատմության մեջ: Նա ամեն կերպ ձգտեց հայ հին ու նոր գրականությունը, հայոց պատմությունը, ազգային արվեստը պրոպագանդելու միջոցով նպաստել մեր ժողովրդի ընդհանուր մշակութային վերածնությանը, ծրագրեց բացել միջնակարգ և բարձրագույն դասընթացներ, ապահովել կարիքավոր գրողներին, պաշտպանել հայ գրողի, քննադատի և հրապարակախոսի հեղինակային իրավունքը, հիմնել գրականության թանգարան, հավաքել գրողների արխիվները (ձեռագրեր, իրեր, հիշողություններ և զանազան այլ կարգի նյութեր նրանց մասին), բարձրացնել գրականության դերն ու հեղինակությունը ժողովրդի աչքում: Միության կարևոր խնդիրներից էր գրական համազգային միասնական լեզվի ստեղծմանը և զարգացմանը վերաբերող բոլոր հարցերը: Թեպետ ընկերության ծրագրերի զգալի մասը չիրականացավ, բայց Թումանյանի ղեկավարությամբ այդ հաստատությունը ունեցավ համազգային արձագանքներ և, գրականությունը դարձնելով ժողովուրդների մերձեցման ու բարեկամության ամրապնդման միջոց, փոխադարձ կապերի մեջ մտավ այլ ազգերի մշակութային հաստատությունների, գրական-հասարակական գործիչների ու գրողների հետ:*

## Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

*Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը համընկավ հայ ժողովրդի համար պատմական դաժան մի ժամանակահատվածի հետ: Մինչ Թումանյանը երազում էր տեսնել իր ժողովրդի հոգևոր մշակույթի ազատությունը քաղաքաքրքիր ժողովուրդների եղբայրության մեջ, ծագեց համաշխարհային պատերազմը: Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը դրվեց վտան-*

*դի տակ, և Հայաստանը 1915 թ. կոտորածից հետո դարձավ ողբի ու որբի հայրենիք: Այդ տարիների մամուլը ամբողջությամբ հեղեղված էր հայատարարություններով, որոնց միջոցով մայրը փնտրում էր երեխային, երեխան՝ մորը, կինը՝ ամուսնուն, եղբայրը՝ քրոջը և այլն: Ելնելով ժամանակի պահանջից՝ Հայ դրողների ընկերությունը ստիպված 1914 թ. հոկտեմբերի 1-ի որոշմամբ դադարեցրեց իր աշխատանքները: Մոտ երկու տարվա ընթացքում կազմակերպվեցին միայն Բրյուսովի երկու դասախոսությունները, Մ. Նալբանդյանի, Շեքսպիրի և Սերվանտեսի հիշատակին նվիրված երեկոները: Պատերազմի չրջանում իրականում դադարեցվեց ընկերության միայն դրական գործունեությունը:*

*Թեև ընկերությունը չարդի ու կոտորածի, պատերազմի տարրիներին չէր կազմակերպում երեկույթներ՝ նվիրված դրողներին ու դրականությանը, բայց դասախոսներ էր հրավիրում՝ զեկուցելու հայկական հարցի մասին և այդ երեկույթների արդյունքը մասամբ կամ ամբողջությամբ հատկացնում էր հայ վիրավորների օգտին (ՀԳԿԸ ֆ, 43/31): 1915 թ. մարտին «Մեղու» ընկերությունը դիմում է Թումանյանին և խնդրում կազմակերպել երեկույթ՝ եկամտի կեսը կամավորների ընտանիքներին հատկացնելու նպատակով: Երբ նախագահը այդ մասին տեղյակ է պահում վարչությանը, վերջինս, նորից անդրադառնալով իր նախկին որոշմանը, վճռում է երեկույթների բովանդակությունը անպայման համապատասխանեցնել ժամանակի պահանջներին (ՀԳԿԸ ֆ, 44/2):*

*«Հայկական հարցի» մասին առաջին երեկույթը տեղի ունեցավ 1914 թ. դեկտեմբերի 17-ին: Զեկուցում էր Լեոն «Հայոց խնդիրը Տաճկահայաստանում» թեմայով: Այդ պահին Լեոն հայկական հարցի լուծումը կապում էր ռուսական զենքի հաղթանակի հետ. [և, անշուշտ, չէր սխալվում] այդպես էր մտածում նաև Թումանյանը՝ վստահեցնելով, որ Ռուսաստանը եղել է և մնում է հայկական հարցի մեծ պաշտպանը:*

*Այս քաղաքական հարցերի մասին դրողների ընկերության անդամները դասախոսություններ էին կարդում նաև ընկերության երեկույթներից դուրս:*

*Պատերազմը դրողների ընտանիքին բերում էր բազմաթիվ այլ հոգսեր: Երբ դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը,*

պետք էր սատար կանգնել գաղթականներին, փրկել սովատանջ ժողովրդին, ապաստան գտնել որբերի, անօգնական կանանց համար. գրողների ընկերությունը ավելի, քան որևէ այլ հաստատություն, չէր կարող անտարբեր մնալ ժողովրդի օրհասական վիճակի, անլուր տառապանքների և ահավոր ողբերգության հանդեպ: «Ամեն օր նիստերի ենք, ջղային, հուզված, հոգնած: Էսօր էլ ահա երեք նիստ ունեմ: Սպասում եմ մի մանաժողովի, որ գալու է մոտս խմբագրենք գրողների ընկերության կոչը», – գրում է Թումանյանը (10, 224): Այս կոչը կազմելու առիթը Թումանյանի ստացած հեռագրերն էին Մակուից, Վանից, Էրզրումից և այլ վայրերից, որոնցից պարզվում էր, որ Կիլիկիայի և ողջ Արևմտյան Հայաստանի ժողովուրդը ենթակա է կողոպուտի և կոտորածի (ՀԳԿԸ ֆ, 43/31, 49): Նախագահն անձամբ ընկերության անունից գրում է կոչը՝ ուղղված աշխարհի տարբեր ազգերին, մեծ ու չեզոք պետություններին, նրանց գրական ընկերություններին, ակադեմիաներին, լրագրերի խմբագրություններին ու նշանավոր գրողներին: Այդ մասին որոշակի ասված է նաև ընկերության վարչության 1914-1916 թթ. գործունեության տեղեկագրում[8]: Թումանյանը հայ գրողների անունից հայտարարում էր, որ «այսօր էլ համաշխարհային իրարանցումի մեջ չրջապակված ու մեն մենակ իր դարավոր զոհի հետ, թյուրք կառավարությունը վեր է կացել գերազանցելու մինչև օրս կատարած ոճիրները, կոտորածով մի անգամ ընդմիշտ վերջ դնելու հայ ժողովրդի բողոքին ու դատին: Սկսել է կոտորած Էրզրումից մինչև Կիլիկիա, Սև ծովից մինչև Միջագետք:

Հայոց գրողների ընկերությունը, այս ահավոր ճգնաժամին, դիմում է ազգերի խղճմտանքին ի դեմս նրանց լուսավոր հաստատությունների և լավագույն զավակների, խնդրում է բարձրացնելու իրենց ազգու ձայնը այս անօրինակ ոճիրի հանդեպ հանուն մարդասիրության...» (7, 166):

Կոչը հղվում է ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով Իտալիայի, Բուլղարիայի, Ռուսաստանի, Ռումինիայի, Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի և այլ երկրների կառավարություններին 1915 թ. ապրիլի սկզբին:

*Ամերիկա ուղարկված հեռագրերը թյուրիմացաբար հետ եկան, իսկ մյուս երկրների լրագրերը ինչ-որ չափով արձագանքեցին:*

*Պատերազմական հոգսերով ապրող ընկերությունը իր հերթական հինգշաբթիներից մեկում քննում է կռվող զինվորի հոգեբանության, այդ մասին Լ. Տոլստոյի ու Դոստոևսկու հայացքների, զվարթության, հրճվանքի, քաջության, սարսափի, միաժամանակ մահվան նկատմամբ ունեցած անտարբերության, անձնազոհության և այլ բնույթի հարցեր, քննադատվում է բնազդի և բանականության փոխհարաբերության մասին վոլյունտարիստական տեսակետը և այլն: Ռազմական բոլոր ապրումների արմատը և աղբյուրը համարելով բնազդը՝ «Ռազմի դաշտում» թեմայով զեկուցման (1917, փետրվարի 3) հեղինակը՝ Վալադյանը, հայտարարում է, որ. «Ամեն մի պատերազմ ինքնին գերազանցապես բնազդային անբնական երևույթ է» (Հ, 1917, N 28):*

*Ուշադրավ է այն, որ Վալադյանը ընդգծում է պատերազմի դաշտում մարդու և անհատի կյանքի արժեքի չնչինությունը և նրանց շահի ստորադասումը ընդհանուրի՝ խմբի, զորամասի, բանակի, ժողովրդի շահին: Այս հարցերի քննարկման ընթացքում ելույթ է ունեցել նաև Հովհաննես Թումանյանը: Թեև նրա խոսքի մասին հաղորդումը չի պահպանվել, բայց դժվար չէ ենթադրել, թե այն ինչպիսի բովանդակություն է ունեցել, եթե հաշվի առնենք, որ դա 1917 թիվն էր, և բանաստեղծը անձամբ արդեն երկու անգամ եղել էր ռազմի դաշտում ու իր մտքերը դրի առել երկու օրագրերում, արդեն հեղինակն էր իր հոդու կենսագրությունը հանդիսացող այն քառյակների, որոնց զգալի մասը արծարծում էին կյանքի և մահվան փոխհարաբերության փիլիսոփայական հարցերը: Անշուշտ, նա ուշադրություն էր դարձրել դասախոսի այն մտքին, ըստ որի՝ պատերազմն ու սպանդը կարող է որոշ մարդկանց նույնիսկ զվարճություն ու հաճույք պատճառել: «Պատերազմն ու բնության արհավիրքները, — ասում էր Վալադյանը, — և առհասարակ, օրհասական վիճակները շատ մարդկանց հաճույք են պատճառում, թեև նրանք (արհավիրքները) բերում են իրենց կործանում և մահ» (Հ, 1917, N 28):*

*Պատահական չէ, որ Թումանյանը այնքան մեծ նշանակություն է դարձրել մարդ-գազան թեմային: Լինելով ռազմի բեմում,*

տեսնելով իր ժողովրդի գլխին կախված արհավիրքը, ջարդն ու կոտորածը՝ Թումանյանը անձամբ հանդիպել էր մարդ-գազանին և հասկացել, որ հայերին կոտորում էին ոչ միայն այն բանի համար, որ պետք էր հայկական հողն ու ունեցվածքը՝ առանց հայերի, ոչ միայն այն բանի համար, որ պետք էր հայերին ոչնչացնել հայկական հարցը միջազգային ատյաններում մեկընդմիշտ լուծելու համար, այլ նաև այն բանի համար, որ մեր բարբարոս հարեվանը ֆիզիկական ինչ-որ բնազդային հաճույք ու բերկրանք էր ստանում արյան ու տանջանքի խրախճանքից, և որպեսզի այդ հաճույքը ավելի մեծ լինի, ցուցաբերում էր, այսպես ասած, ստեղծագործական մոտեցում և ուղեղն աշխատեցնում էր միայն մեկ ուղղությամբ, ինչպես գործածել սուրն ու բազուկը, որ ավելի հետաքրքիր լինի: Ահա թե ինչ է ասում բանաստեղծը մարդակեր-գազան մարդու մասին ռազմի դաշտում գրած իր ծոցատետրում.

«Թուրքերն ու քրդերը հայ գյուղերում կոտորելիս ամեն տեղ մի ձև են մտածել — մի տեղ խաչել են, խփել կամ խորովել, ինչպես Գործոթ ու Տիրամերիկ, մի տեղ փորերը ճղել են աղիքներով զանազան խաղեր հորինել — վզներով ոտներով փաթաթել են, մի տեղ մորթոտել են, մի այլ տեղ գետն են ածել կապած (Աբաղա, Բերկրու կամուրջը) մի այլ տեղ (Խնձորկեն, 100 տնից ավելի) բոլորին՝ երեխաներին, կանանց կախել են իրենց տներում, օճորքների գերաններից (տղամարդկանց ձորումն էին կոտորել, Դատվան և շրջակայքում ցորենի հորերը դատարկել են, ժողովրդին ածել մեջ, ծածկել, մի տեղ շտիկով փորերն են կոխել — գլխներին կացնով զարկել») (ԹՖ N 258):

Մարդկային նկարագիրը կորցրած մարդակեր-գազան մարդու թեման արծարծեց այդ տարիներին գրված «Հոդեհանդիստ», «Դըժոխքի հանդեպ» բանաստեղծություններում և իր անզուգական քառյակներում: Ուսուցիչ Մարտիրոս Ջամալյանը իր հուշերում պատմում է, թե Ազգային բյուրոյի նիստում ինչպես է արձագանքում Թումանյանը Սասունի ջարդերի ականատես զինվորի՝ Մարտիրոս վարժապետի պատմածներին՝ կոտորածի զարհուրանքների (անդամահատված մարմիններ, կտրտված ստինքներ) մասին. «Ամենքս ցնցված էինք, իսկ Թումանյանի դեմքը սպիտակ ծեփի

գույն էր առել: Երբ պատմեց, թե ինչպես հայ կնոջը ստիպել էին խմել սեփական զավակի արյունը սուլթանի կենացը՝ Թումանյանը ելավ տեղից և դողդողջ քայլերով մեկնեց նիստից: Մի ամբողջ շաբաթ նա հիվանդ էր»[9]: Ահա այս ծանր ու դաժան տպավորությունից է ծնվում «Դժոխքի հանդեպ» բանաստեղծությունը, որը լույս է տեսնում «Հորիզոնում» 1916 թ. փետրվարի 28-ին, իսկ հաջորդ օրվա՝ մարտի 1-ի համարում խմբագրությունը հարկ է համարում նշել, որ «բանաստեղծության մեջ ակնարկված երեխայի արյունը մորը խմեցնելու դեպքը վերջին օրերի իրականությունից է առնված», ինչը և ապացուցում է Ջամալյանի հուշերի հավաստիությունը: Հայոց դժոխքը բանաստեղծին ներկայանում է անթաղ դիակների, բազում մարդկային կմախքների ու ոսկորների տեսքով, ոռնացող հողմերի առջև կանգնած խենթացած մոր տեսքով.

*Հողմերի առջև կանգնած է մի կին,*
*Որդու արյունը իր ձեռքն են տվել*
*– Խմիր սուլթանի կենացը դու էլ...*

Բանաստեղծության այս տխուր տողերում Թումանյանը մեկ անգամ ևս արձանագրում է գազան-մարդու գոյության փաստը, արտահայտում հայ ժողովրդի անհուն խորության վիշտն ու մնծ ողբերգությունը: Եվ բանաստեղծը հանգում է չափազանց տխուր մի եզրակացության.

*Սարսափի պիտի աչխարհ բովանդակ,*
*Եվ մարդն ամաչի գիլից ու չանից,*
*Որ մարդ է ծնվել մարդու նմանից:*

Իհարկե, ռազմի դաշտում ստացած Թումանյանի տպավորությունները, դինվորի ու պատերազմի մասին նրա հայացքների լուսաբանումը և հատկապես այդ շրջանում ծանր տպավորությունների անմիջական ազդեցությամբ գրված գեղարվեստական երկերի վերլուծությունը առանձին ուսումնասիրության նյութ է, սակայն պատերազմի և նման արտասովոր պայմաններում մարդու

Հոգեկան աշխարհում կատարվող փոփոխությունների, նրա բարոյական-հոգեբանական ամենատարբեր դրսևորումներին վերաբերող խնդիրներ արծարծող դասախոսությունների կազմակերպումը, ինչպես նաև Թումանյանի՝ գրողի ու գրողների ընկերության նախագահի անձնական օրինակը՝ պատերազմի չրջանում կրակի առաջին գծում լինելու, ժողովրդի ու նրա զինվորի հետ անմիջական կապի մեջ մտնելու, լրացուցիչ վկայությունն են երևույթի նկատմամբ ունեցած բանաստեղծի առաճնահատուկ վերաբերմունքի, ժամանակի հրատապ խնդիրները համընդհանուր քննարկման դարձնելու նրա ջանքերի: Ընդ որում, այդ տարիներին Թումանյանը պարբերաբար նամակներ էր ստանում ռազմաճակատի ծանոթ ու անծանոթ զինվորներից: Նրանք դիմում էին ընկերության նախագահին պանազան խնդրանքներով: Այսպես, Գերմանիայում գերի ընկած Նահապետ Մուրադյանը խնդրում է Թումանյանին ծանրոց ուղարկել ուտելիքներից ու հագուստից: Առաջին հայացքից մանրուք է թվում այս և նման խնդրանքներով լի բազմաթիվ այլ նամակները, սակայն դրանք բոլորը գալիս են հավաստելու, թե ինչպիսի բարի համբավ ուներ Թումանյանը, որին կարող էր դիմել յուրաքանչյուր մարդ հազար ու մի խնդրանքով՝ նրան համարելով ամենակարող և ամենքին հասնող (Հ, 1917, 271), դրանք բոլորը գալիս են հավաստելու, որ միանգամայն անկեղծ ու ճշմարիտ է նույն այդ չրջանում արված բանաստեղծի խոստովանությունը.

*Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի...*

Ընկերությունը հրավիրում էր բազմաթիվ խորհրդակցություններ հասարակական-քաղաքական զանազան հարցերի չուրջ: Նրա հրավերով կայացավ Թիֆլիսի հայ մտավորականների արտակարգ ընդհանուր ժողովը (1917, դեկտեմբերի 21), ուր փորձեցին գնահատել Հոկտեմբերյան հեղաչրջումից հետո ստեղծված դրությունը Անդրկովկասում, և քննվեց «մոմենտի խնդիրը» (Հ, 1917, 271): Հիմնական զեկուցողը Թումանյանն էր: Առաջարկվեց նրա ելույթի բովանդակությանը համապատասխանող մի բանաձև, որը կոչ էր անում «գործել ռուսական դեմոկրատիայի և Կովկասի բոլոր ազգե-

*րի ինտելիգենցիաների հետ համերաշխ՝ ընդհանուր դեմոկրատական խաղաղության հասնելու և հեղափոխության հայտարարած մեծ սկզբունքները իրականացնելու համար» (Հ, 1917, 267, 268):*

*Այդ «մոմենտի խնդրի» մեջ կար հրատապ մեկ այլ հարց, որին, անշուշտ, անդրադարձել է Թումանյանը, քանի որ այն տագնապի մեջ էր դրել ողջ հայ ժողովրդին, հատկապես մտավորականությանը: Հեղափոխության հաղթանակից հետո ռուսական բանակը բոլշևիկների կոչով թողնում էր արդեն գրավված հայկական հողերը, մինչդեռ պետք էր պահպանել ոչ միայն ռուսների, այլև հայ ժողովրդի՝ մեծ զոհերի գնով ձեռք բերած հաղթանակը: Ռուսական բանակին հետ կանչող բոլշևիկյան հայտնի կոչը և Ռուսաստանում տիրող քաոսն ու ներքին խառնակությունները, ի վերջո, քաղաքացիական պատերազմը չատ թանկ նստեցին հայ ժողովրդի վրա և ունեցան ճակատագրական նշանակություն: Մեր ժողովուրդը մնում էր մենակ պարտությունից գաղափած թուրքական հրոսակների բարբարոսությունների հանդիման: Արյունով գնված հողը նվիրաբերվում էր թշնամուն երրորդ ուժի կողմից՝ հանուն սեփական իշխանության հաստատման ու ամրապնդման: Բոլշևիկ նորաթուխ իշխանավորները, տարված համաշխարհային հեղափոխության չուտափույթ հաղթանակով, ռուս ժողովրդի իրական հաղթանակները հեչտությամբ զոհում էին ի վնաս հենց Ռուսաստանի ռազմա-քաղաքական չահերի: Այդ օրերին «Հայաստան» օրաթերթը տպագրում է Անդրանիկի կոչը, որի առաջին արձագանքողը դառնում է Թումանյանը՝ զորավարին ուղղված իր հայտնի պատասխանով: «Հորիզոն» լրագիրը չի տպագրում 1917 թ. դեկտեմբերի 21-ի մտավորականության ժողովի բանաձևը, որովհետև թերահավատորեն էր մոտենում Անդրանիկի ու Թումանյանի ջանքերին, բացի այդ կոչեր ու բանաձևեր հրապարակելու իրավունքը հիմնականում վերապահվում էր Ազգային խորհրդին, որը հայության գերագույն մարմինն էր համարվում Թիֆլիսում:*

*Կովկասյան ընկերությունը պատերազմի տարիներին մեծ չափով զբաղվեց նաև գաղթականության, հատկապես կոտորածից հրաշքով փրկված որբերի վիճակով: Երեկույթներից մեկում Կարեն Միքայելյանը կարդաց «Որբերի աչխարհում» թեմայով (1916, դեկտեմբերի 28) դասախոսությունը:*

*Ամիսներ չարունակ նա չրջել էր Երևանի նահանգում գտնվող որբանոցներում, զրուցել եղեռնին ականատես մանուկների հետ, գրի առել նրանց տխուր հուշերը, միաժամանակ հավաքել գեղարվեստական գործերը: «Շատ հետաքրքրական և սրտառուչ է, — գրում է Կարեն Միքայելյանը Թումանյանին հղած նամակներից մեկում, — թե ինչպես է երգում երեխան իր վիշտն ու ուրախությունը, իր կրած տանջանքները, իր տեսած սարսափները» (ԹՓ, 913):*

*Երեկույթի սկզբում Թումանյանի առաջարկով հասարակությունը հոտնկայս հարգում է որբերի նահատակ ծնողների հիշատակը: Դասախոսը ներկայացնում է որբերի այն բանաստեղծությունները, որոնցում արտացոլված էին Արևմտյան Հայաստանի վերջին արյունալի դեպքերը և թե իր պատմվածքները, որոնց նյութը 4-16 տարեկան որբ երեխաների ու պատանիների պատմածներն էին, նրանց ողբերգությունը: Սոսկալի ծանր տպավորություն էին թողնում այդ երեխաների բանաստեղծությունները: Մնացականն ու Հայրիկը նկարագրում էին սգավոր գետակները, որոնք իրենց ալիքների մեջ դիակներ են ճոճում: Գրիգորը դիմում է Հայաստանի սգավոր թռչուններին, որպեսզի նրանք գնան օտար երկրներ և ի լուր աշխարհի պատմեն հայ ժողովրդի ցավը, իսկ Արշակը նույն այդ թռչուններին պատվեր է տալիս «Առեք ձեր ճանկերով հողը և ծածկեցեք արևի տակ հոշոտված դիակները»: Միսակը, նկարագրելով մայրերի սուգն ու աղերսը, դիմում է անտարբեր լուսնյակին՝ «Վկա կլինի՞ս, ասա, ո՛վ լուսին»: Հայաստանը թեև շատ փոքր է, բայց արդեն գիտակցում է, որ հարազատ մորից մնացել է միայն չիրիմ, այն էլ հեռու՛-հեռու՛, հայրական տան չեմին:*

*Ու կհյուսեմ հեծկլտանքս*
*Ուշ դիշերվա խենթ հողմերին,*
*Թող որ բերեն սուգ ու լացս*
*Հաղորդելու, մա՛յր, քո չիրմին:*

*Իսկ փոքրիկ Սողոմոնը ոչ մի կերպ չի հաշտվում մոր կորստյան վշտի հետ, երազում է նրան տեսնել գեթ երազում.*

*Ախ, մայրիկս, ո՞ւր ես, եկուր մի դիշեր,*
*Տարին վերջացավ, որ քեզ չեմ տեսեր,*
*Մի՞թե դուն որդուդ կարոտ չե՞ս քաշեր,*
*Մի օր երազում քեզ ինձ չե՞ս հայտնվե:*

*Ուշադիր լսելով որբերի հուշերը և նրանց դեղարվեստական այս թոթովանքները՝ Թումանյանը երեկոն եզրափակում է՝ հայտարարելով, որ դրողների ընկերությունը որոշել է որդեգրել որբերից ընդունակներին և տաղանդավորներին, որոնք վաղվա զարհուրանքի, սոսկումի և ավերի միակ արտահայտիչներն են լինելու և «... մենք նրանց վերաբերվենք հարազատների պես, — առաջարկում է բանաստեղծը, — եթե ոչ նրանք, որ դեռ իրանց մատաղ հասակում բողոքի ու խիզախության նետեր են ուղղում «հայոց ոխերիմ աստծուն», երկնքի թռչուններին աղերսում, որպեսզի իրենց ճանկերով հող առնեն դետնից և տանեն ցանեն հազարավոր անթաղ դիակների վրա, վաղը կարող են նույն արդար ղայրությով մեր դեմ ծառանալ» (7, 549):*

*Թեև Կ. Միքայելյանն էլ է առաջարկում որբերի համար ընկերության մեջ հիմնել հատուկ ֆոնդ, բայց ընկերության կողմից որբերի որդեգրման նախաձեռնությունը պատկանում է Թումանյանին: Նա հիշյալ դասախոսությունից դեռ տասը օր առաջ՝1916 թ. դեկտեմբերի 18-ին, առաջարկում է ընկերության վարչությանը որդեգրել որբերից ամենաընդունակներին և ամենաչնորհալիներին: Այդ առաջարկը 1917 թ. մայիսի 3-ի ընդհանուր ժողովում հանդիպում է որոշ առարկությունների, իբր դրողների ընկերությունը որբախնամ մարմին չէ, սակայն Թումանյանը համոզում է բոլորին՝ ընդգծելով, որ արտակարգ «ժամանակներում կարելի է և չղեկավարվել սոսկ կանոնադրությամբ» (ՀԳԿԸ ֆ, 46/7): Նույն թվի հունիսին ընկերությունը որդեգրում է երեք չնորհալի որբերի՝ Վաղարշակ Երիցյանին (Նորենց), Միհրան Թյուրքունջյանին և Նորայր Դաբաղյանին, և չարունակում է տեղեկությունները հավաքել այլ չնորհալի որբերի մասին: Ընկերության որդեգիրները դարձան կարծես Թումանյանի որդեգիրները: Բանաստեղծի պատվերով, ինչ կարիք որ ունենային, դիմում էին անձամբ իրեն, լի-*

նում էին նրա տանը, ճաշում այնտեղ և ամեն անգամ գտնում ջերմ ընդունելություն: Սկզբում երեք որդեգիրներն էլ ապրում էին նույն որբանոցում՝ Կրծանիսում՝ Միրանավոր եկեղեցու բակում: 1917 թ. աշնանը Թումանյանի միջնորդությամբ երեքն էլ՝ որպես ընկերության սաներ, ընդունվում են նորաբաց Հայկական գիմնազիան: Թումանյանն անձամբ էր հոգում նրանց թե՛ ուսման, թե՛ հագուստի ու ապրուստի վարձը: Բանաստեղծին ուղղված նամակներում որդեգիրները պատմում էին իրենց մեծ ու փոքր հոգսերի, դպրոցի հեռավորության, դասագրքերի պակասի, ծանր աշխատանքի և այլնի մասին, խնդրում էին իրենց տեղափոխել Միրանավորից այլ որբանոց՝ միաժամտաբար կարծելով, թե Թիֆլիսի մյուս որբանոցներում ավելի լավ պայմաններ կան: Թումանյանին դիմում էին ոչ միայն որդեգիրները, այլև բազմաթիվ այլ որբ երեխաներ, որոնք երազում էին դառնալ ընկերության որդեգիրներ: Արխիվային նյութերում պահպանվել են բազմաթիվ փաստեր, ելքի ու մուտքի մատյաններում արված նշումներ, որոնցից պարզվում է, որ հենց Թումանյանի ձեռքով են գնվել որբերի համար գրքեր ու տետրեր, նոր տարվա նվերներ, հագուստ ու կոշիկներ:

«1918 թ. օգոստոս.

Որբերի հաշվին գրքեր ու տետրակներ են գնած պ. Թումանյանի ձեռքով 58ռ. 70 կ., թոշակներ են տրված հայկական գիմնազիայի որբեր Նորայր Դաբաղյանին և Մհերան Թյուրթունջյանին (258 ռ.70 կ.), որբերի համար 1918 թ. թոշակ է տրված 900 ռ.

1919 – Որբերի հաշվին գրքերի և տետրակների – 50 ռ.

Որբերին նվեր է տրված նոր տարվա օրը – 30 ռ.» (ՀԳԿԸ ֆ, 85, 215, 220):

Ընկերության որբերի ֆոնդին տրվող նվիրատվությունների մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել նաև մամուլում: Դրողների ընկերության այսօրինակ ուշադիր ու հոգատար վերաբերմունքը որբերի նկատմամբ պետք է բացատրել նաև նրա նախագահի՝ Թումանյանի՝ հարցին տված կարևորության աստիճանով, նրա քաղաքացիական պարտքի բարձր գիտակցությամբ:

*Տակավին մեծ եղեռնից առաջ՝ 1913 թ. ապրիլի 11-ին, Հովսեփ Խունունցին ուղղված վարչության նամակում հայտարարվում էր, որ ընկերության երեկույթների ձրի տոմսեր է հատկացվում բոլոր միջնակարգ դպրոցների և Բարեգործական ընկերության որբանոցի որբ երեխաներին (ՀԳԿՀ ֆ, N 767): Թումանյանի հայրական ջերմ հոգատարությունը ամենից վառ արտահայտվել էր էջմիածնում: 1915թ. հուլիսին Թումանյանը Տաքախմելա ամառանոցում էր, երբ լսեց հայ ժողովրդի համատարած գաղթի լուրը ու թեև վատառողջ էր, նույն երեկոյան որոշեց դնալ Էջմիածին և հաջորդ օրն արդեն ճանապարհ ընկավ, իսկ էջմիածնում, ինչպես հիշում է նրա դուստրը՝ Նվարդը. «...ամբողջ օրը զբաղված էր գաղթականների ու որբերի վիճակը թեթևացնելու, նրանց կերակրելու, բուժելու գործը կազմակերպելով... Թիկնոցի մեջ փաթաթված տեղատարափ անձրևի տակ առաջ էր գնում, նրան հետևում էր հազարավոր գաղթականությունը իրենց կապոցներով, երեխաներով, նույնիսկ հարազատների դիակներով. ... Սարսափելի տեսարան էր»[10]:*

*Թումանյանի կոչով բազմաթիվ երիտասարդներ, աղջիկներ ու կանայք, անձնվիրաբար վտանգելով իրենց կյանքը, գնում էին էջմիածին, Երևան կամ Իգդիր և զբաղվում որբ, տիֆով ու վարակիչ այլ հիվանդություններով տառապող երեխաների խնամքով: Նրանցից մեկի՝ 32-ամյա Սաթենիկ Օհանջանյանի մահվան առիթով Թումանյանը գրեց «Թանկ մարդու հիշատակին» հոդվածը: Վերջինս ապացույցն է այն բանի, թե ինչպիսի մեծ ազդեցություն էին ունենում Թումանյանի վրա այն զարհուրելի տեսարանները, որոնց ականատեսն էր նա: Հայտնի է, որ բանաստեղծը կյանքում ամեն ինչ անում էր անկեղծ սրտով, ինքնամոռաց նվիրումով, «խելագար անձնվիրությամբ», քանի որ դիտեր, որ այդ զարհուրանքի տարիներին «ամենից առաջ հարկավոր էր սիրտ, սրտալի վերաբերմունք, բայց անհրաժեշտ էր մանավանդ Մանուկների ապաստարանում, որ միշտ Որբանոց կոչվեց» (7, 178):*

*Թումանյանագիտության մեջ նրա երախտավորների՝ Ա. Ինճիկյանի, Էդ. Ջրբաշյանի, Լ. Հախվերդյանի կողմից բազմիցս ընդգծվել է բանաստեղծի երկերի ընդհանրացման հզոր ուժը՝ սկսած*

«Փիսիկի գանգատից» մինչև նրա անմահ քառյակները: Նույնը կարելի է ասել գրողի հրապարակախոսության վերաբերյալ: Այդպիսի ուժ ունեն Թումանյանի հոդվածների բազմաթիվ արտահայտություններ, ամբողջական վերնագրեր: Թանկ մարդ ասելով՝ նա նկատի ուներ ոչ միայն Սաթենիկ Օհանջանյանին, այլև յուրաքանչյուր գթության քրոջ, ընդհանուրի, ժողովրդի, բարձր նպատակի ու գաղափարի, լավի ու բարու հաղթանակի համար ինքնազոհության գնացող ցանկացած անհատի:

1916 թ. Թիֆլիսում Սաթենիկ Օհանջանյանի հիշատակին հիմնվեց գրադարան-ընթերցարան «Մեղու» ընկերության նախաձեռնությամբ: Բացումը տեղի ունեցավ նոյեմբերի 13-ին: Ընթերցվեց Թումանյանի ողջույնի խոսքը Հայ գրողների կովկասյան ընկերության անունից (Մ, 1916, N 256):

Էջմիածնում Թումանյանի վրա ավելի ծանր էին ազդում երեխաների վիճակն ու մահը. «Սաստիկ, սաստիկ ծանր էր նրանց հետ խոսելն ու խոսեցնելը... Եթե խոսել ու խոսեցրել եմ՝ էն էլ շատ քիչ, պատահմունքով ... Սակայն չարունակ աչքիս առաջն է նրանց բազմությունը, նրանց վտիտ, քաղցած ու մերկ բազմությունը... համատարած խուլ աղմուկի ու իրարանցման մեջ ամեն կողմից առաջ են հրում անթիվ կմախքներ, կմախքներ, որ դեռ չնչում էին» (ՈՒՀ 2, 383-384):

Հետագայում այդ ծանր տպավորությունների տակ 1918 թ. հուլիսի 12-ին բանաստեղծը գրում է.

Ու՞ր հեռանաս, կոխած տեղերդ արյունոտ,
Ու՞մ մոտ գնաս, ծանոթ, ընկերդ արյունոտ,
Ո՞նց մոռանաս էս աշխարհքը արյունոտ,
Երգ ես լըսում, լըսած երգդ արյունոտ:

Իր մահից մեկ տարի առաջ՝ 1988-ին, բանաստեղծի կրտսեր դուստրը՝ Թամար Թումանյանը Թումանյանագիտությանը տրամադրեց իր ընտանեկան արխիվից մի շարք նոր նյութեր, որոնք մեծ չափով օգնում են Էջմիածնում բանաստեղծի գործունեության լուսաբանմանը, մեկ անգամ ևս ապացուցում, թե որքան մեծ նվի-

*րումով է Թումանյանը կազմակերպել որբերի խնամքը: Նրա միջնորդությամբ ու հրահանգներով էին աշխատանքի ընդունվում որբանոցի ուսուցիչները, հիվանդանոցների բժիշկներն ու բուժքույրերը: Եվ ինչ միայն չէր անում Թումանյանը էջմիածնում որբանոցների համար. որբեր էր ընդունում ու խնամում, կազմակերպում նրանց փոխադրումը մի վայրից մի ուրիշ վայր, մի որբանոցից մեկ այլ որբանոց, զբաղվում էր նրանց ուսման ու դաստիարակության, մոտ ու հեռու ապագայի, նրանց ողջ ու առողջ «երկիր վերադարձնելու, տիֆ, սև ծաղիկ, դիզինտերիա և այլ հիվանդություններին դիմագրավելու, դրանց դեմ պայքարի դործը կազմակերպելու, երեխաներին նռացրած ջրով, հացով ապահովելու և զանազան այլ խնդիրներով, իսկ, որ սարսափելի էր, թաղման հարցով: Նա էր հոգում անթաղ դիակների «միայն մի արշին» փոսը ավելի խորացնելու, դիակներ հավաքող ու թաղող բանվորների և նույնիսկ պատգարակների թիվը ավելացնելու մասին, որոշում էր, թե համաճարակի ղոհ դարձած երեխային ինչ միջոցներով պիտի թաղեն, տվյալ որբանոցի պաշտոնեության, թե՞ որբերի ընդհանուր միության... Թումանյանն էր կազմում կամ հավաքում առողջ երեխաների ցուցակները և մտահոգվում նրանց հիվանդներից զերծ պահելու, վարակը կանխելու խնդրով, վճարում էր որբեր փոխադրող այն կառապանին, որին հրաժարվում էին դրամ տալ որբախնամ մարմինները, «Դլխավոր կարդադիր հանձնաժողովը», որովհետև, չգիտես ինչու, «Ծուրդունչին չատ էր ուղում»: Վեճի էր բռնվում կաթողիկոսի հետ, որբերին վճհարանի նորակառույց շենքում տեղավորելու, նրանց անձրևից պատսպարելու համար՝ իրեն հռչակելով «ամենայն հայոց բանաստեղծ», քաջ դիտակցելով անհատի ու դործչի իր պատմական դերը: Թումանյանը քաջատեղյակ էր Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր հայ որբանոցների կյանքին ու հոգսերին, քանի որ նրան դիմում էին ամենքը՝ բոլոր որբանոցների կառավարիչները ու շարքային աշխատակիցները, հայտնում նրան իրենց պատծի ու անելիքների, կարիքների ու պետքերի մասին: Եվ բանաստեղծը ձգտում էր ուժերի դերլարումով, առողջության քայքայման, կյանքը վտանգի ենթարկելու գնով օգտակար լինել բոլոր հայ որ-*

բանոցներին: Իսկ դրանք չատ չատ էին և գտնվում էին Հայաստանի ու Կովկասի ամենատարբեր մասերում (Էջմիածին, Դիլիջան, Նոր Բայազետ, Ախալքալաք, Ղարաքիլիսա, Կարս, Իգդիր, Բաթում, Սանահին, Ալեքսանդրապոլ, Աշտարակ, Բաքու, Երևան, Թիֆլիս և այլուր): Սակայն, ինչ խոսք, որ Թումանյանի անմիջական մասնակցության և ֆիզիկական ներկայության առումով ավելի չահում էին Թիֆլիսի որբանոցները: Միայն 1916 թ. Թիֆլիսում կար 9 մանկատուն, որոնք պատսպարում էին 743 երեխա: Երկու-երեք տարի անց թե՛ որբանոցների, թե՛ որբերի թիվը կրկնապատկվեց ու եռապատկվեց՝ չնայած երեխաների մահացության բազմաթիվ դեպքերի:

Ընկերության որդեգիրներից վաղարշակ Նորենցի հավաստիացմամբ Թումանյանը չատ էր լինում որբանոցներում, զրուցում էր երեխաների հետ ու հուսադրում, որովհետև գաղթի ու եղեռնի ժամանակ հոգեկան մեծ տվայտանքների ենթարկված երեխաները ոչ միայն, գուցե և ոչ այնքան օթևանի, սննդի ու հագուստի, որքան հարազատի ջերմության կարիք էին զգում: Բանաստեղծը հաճախ էր մասնակցում նաև երեխաների դրական երևակոներին՝ իր հետ տանելով Դ. Դեմիրճյանին, Ս. Դորոդեցկուն, Իս. Հարությունյանին: Այդ հանդիպումները գրեթե երջանկացնում էին որբերին: Հիշելով իրենց տխուր կյանքի այդ երանելի օրերը՝ Յոլակ Հայկազյանը այդ հանդիպումները անվանել է լույսի մի ճառագայթ դեգերումների իրենց անճրևոտ ճանապարհներին: Բոլոր երեխաների վկայությամբ Թումանյանը նրանց ամենալավ բարեկամն էր, և նրանք երազում էին իրենց յուրաքանչյուր միջոցառմանը մասնակից դարձնել բազմազբաղ բանաստեղծին: Ի պատասխան 1919 թ. Հուլիսի 20-ի աշակերտական ցերեկույթի հրավերի՝ Թումանյանը որբ-աշակերտական միության վարչությանը գրում է հետևյալ նամակը. «Շատ եմ ցավում, որ պաշտոնական արտագնա նիստ ունենալու պատճառով չեմ կարողանում ներկա լինել ցերեկույթին:

Հրճվում եմ Ձեր պայծառ ոգևորությամբ և վսեմ խլրտումով: Հայ գրողների խորհրդի և գրողների ընկերության վարչության կողմից իմ տրամադրության տակ եղած դումարից (2 000) երկու հազար ռուբլի հատկացնում եմ ձեր հրատարակությունների դործին,

որ և կբերեմ անձամբ»[11]: Այդ դումարը զրողների ընկերությունը հատկացնում էր «Փարոս» չաբաթաթերթի հրատարակությանը:

1917-1918 թվականներին որբանոցներում երեխաների վիճակը ավելի սոսկալի էր: Սովն ու համաճարակը օրական հազարավոր երեխաներ էին տանում: Թիֆլիսից նոյեմբերին (1918) խնամատարության անունով տրված հեռագրում ասվում էր. «Որբանոցները զրամ չունեն... Դրությունը կրիտիկական է»[12]: Հայկական բարեգործական ընկերությունը նույն թվի գարնանը հեռագրում է. «Որբանոցների զրությունը Թիֆլիսում զարհուրելի է: Աղգային խորհուրդը հրաժարվում է օժանդակել: Խնդրում ենք անհապաղ օգնել»[13]:

Թեև այս հեռագրերը անձամբ Թումանյանին չէին ուղղված, բայց նա ահազանգերի կարիք չէր զգում և միշտ էլ այնտեղ էր, ուր անհրաժեշտ էր անհապաղ, չտապ օգնություն: Մանավանդ, որ նման ահազանգեր ու հեռագրեր Թումանյանը ստանում էր թե՛ որբ երեխաներից, թե՛ բազմաթիվ դաղթականներից, որոնք իրենց միակ հույսը նրա հետ էին կապում: «Դհե դյուղի վախտականներ» ստորագրությամբ Թումանյանին ուղղված նամակում կարդում ենք. «Մեր դյուղը 350 տնից էր բաղկացած՝ 2 000 բնակչով, բոլորը անխտիր կոտորվեցան: Սակայն, ցավոք սրտի... այստեղ՝ էջմիածնում, սովածությունից պիտի մեռնինք, դիմում ենք, մեզ չեն օգնիր, բոլորն էլ մերժում են, մեր հույսը ամեն կողմից կտրած Ձեզ ենք դիմում և խնդրում, որ մեր խնդիրքը չմերժեք և ապրելու հնարավորություն տաք, մինչև որ կարողանանք մեր հայրենիք վերադառնալ» (ԹԹ, ՆՆ, թղթ 60):

Նույնպիսի խնդրով բանաստեղծին դիմող ալաշկերտցի դաղթականների 1915 թ. օգոստոսի 7-ի կոլեկտիվ նամակում ասվում էր. «Դիմում ենք Ձեզ, պ. Թումանյան, համոզված լինելով, որ ամենքեն պայծառ կերպով Դուք կհասկնաք մեր տառապանքը, ամենից քաջ ծանոթը կ՛լինեք մեր ցավերին...

Ձեր մարդասիրության չնորհիվ չի թողնվիր, որ անիրավ քրդի ու տաճիկի սրից ճողոպրած հայ ժողովրդի բեկորը սովից ու քաղցից մարի» (ԹԹ, ՆՆ, թղթ 60):

Թումանյանի արխիվում պահպանվել են նման բովանդակությամբ բազմաթիվ նամակներ ու հեռագրեր, որոնց բոլորի հեղինակները էլ խնդրում են ապրելու հնարավորություն:

Պատահական չէ, որ երբ Վրաստանի հայոց ազգային խորհրդին կից Հայաստանի գերագույն կոմիսար դնդապետ Հասկելի նախաձեռնությամբ կազմվեց Հայ որբերի և գաղթականների օգնության հանգանակիչ կոմիտե, նախագահ ընտրվեց Թումանյանը: Եվ նա արդեն ի պաշտոնե ստանձնեց դժվարին մի գործ, որը վաղուց նախաձեռնել էր անձամբ: Թումանյանը՝ որպես այդ հանգանակիչ մարմնի նախագահ, խորհրդակցությունները հրավիրում էր իր տանը: Կարելի է հիշատակել 1920 թ. մարտի 24-ի նիստը, որին մասնակցում էին հանգանակիչ կոմիտեի անդամները, Ամերիկյան կոմիտեի նախագահ Յարոուն, մամուլի ներկայացուցիչներ և այլն: Վճռվում է կարճ ժամանակում սկսել հանգանակության գործը: Որոշվում է այդ նպատակով հրատարակել կոչ և անդորրագրեր բաժանել հասարակական հիմնարկություններին: Եվ վերստին հասարակությանը կոչ անողը Թումանյանն էր՝ թե՛ իբրև Որբախնամ ընկերության նախագահ, թե՛ իբրև անառարկելի մի հեղինակություն, որի խոսքը հսկայական ուժ ուներ: Դիմելով իր ժողովրդին՝ բանաստեղծը ասում է. «Հանձնաժողովը կարծում է, որ էս գործը ինչքան նյութական՝ էս առավել բարոյական արժեք ունի, հետևաբար սա հարուստների գործ չի, այլ ամենից առաջ մեր մտավորականության ու աշխատավոր չրջանների:

Ով ինչքանով կարող է՝ օգնության պիտի գա մեր որբերին և գաղթականներին և իր գրպանում ունենա հանձնաժողովիս անդորրագիրը» (ՀԳԿԸ ֆ, 107/3):

Այդ անդորրագիրը Թումանյանը անվանում է մի բարոյական անցաթուղթ, որ պարտավոր է ունենալ ամեն մի հայ «մեծ, թե փոքր, որ մարդկային սիրտ ունի իր կրծքում և ազգային զգացմունք» (ՀԳԿԸ ֆ, 107/3)[14]:

Հանգանակիչ կոմիտեի անդորրագրերից ուղարկվում են Թիֆլիսի Վաճառականական և Կովկասյան բանկերին, Վրաստանի Հայոց ազգային խորհրդին, «Աչխատավոր», «Մշակ», «Слово» թերթերի խմբագրություններին և այլուր[15]: Ինքը՝ Թումանյանը կամովին տուրք է վերցնում՝ իր ընտանիքի անունից ամսական որբերի ու գաղթականների ֆոնդին՝ վճարելով 300 ռուբլի:

Իր անձնական օրինակով Թումանյանը առաջարկում էր Կովկասի հայությանը մեջ մտցնել կամավոր ընդհանուր տուրք: Բնա-

կան է, որ նրա ղեկավարած դրոշների ընկերությունը չէր կարող անմասն մնալ ինչպես այդ ընդհանուր տուրքից, այնպես էլ որբերին ու գաղթականներին օգնող ցանակացած միջոցառումից: Վրաստանում հայոց ազգային խորհրդին կից գործում էր նաև Գաղթականական բաժին, որի խորհրդակցություններին հիմնականում (ինչպես օրինակ՝ 1918 թ. հոկտեմբերի 1-ին) հրավիրվում էին դրոշ-ների ընկերության ներկայացուցիչները (ՀԳԿԸ ֆ, N 10713):

Թումանյանի ընտանեկան արխիվում պահպանվել է մի լուսանկար, որը ներկայացնում է ընկերության որդեդիրներից մեկի՝ Միհրան Թյութունջյանի թաղումը, ինչպես նաև այդ թաղման մասին 1920 թ. ապրիլի 17-ի մի փաստաթուղթ: Ականատեսներից մեկը՝ դրոշների ընկերության մյուս որդեդիրը՝ Վաղարշակ Նորենցը պատմում է. «Դադաղի ետևից գնում էին հազարավոր որբեր իրենց դաստիարակներով: Թաղման թափորի մեջ առանձնակի բարձրանում էր մի հասակ, ինչպես մատղաշ անտառի մեջ մի վեհ կաղնի: Դա «որբաչխարհից» դուրս եկող հայ հասարակության ամենաճանաչված և սիրված մարդն էր, նրա միակ ներկայացուցիչը մեր մեջ, որբերի մեջ, որոնք տանում էին թաղելու իրենց ննջեցյալ ընկերոջը: Այդ մարդը մեր «Հայրիկն» էր, մեծ Թումանյանը: Նա տխուր ուղեկցեց մեր որբ ընկերոջ դագաղը մինչև գերեզմանոց, ներկա եղավ թաղման ամբողջ արարողությանը, մեզ հետ բաժանեց մեր վիշտը, տխուր խոսքեր ասաց, գերեզմանատնից հեռացող վերջիններից մեկը եղավ: Այդ թաղման լուսանկարը բազմաթիվ օրինակներով գտնվում էր շատ որբերի մոտ, և նրանք այդ պահում էին իրբև սրբություն: Հայ ժողովրդի մեծագույն բանաստեղծը հազարավոր որբերի հետ կանգնած մի որբ պատանու մոտ: Դա լուսանկար չէր միայն: Դա մի էջ էր հայ ժողովրդի պատմությունից» (ԹԺՀ, 856):

Երբ բոլոր որբերին Թիֆլիսից տեղափոխում էին, Թումանյանը դրոշների ընկերության որդեդիրներին տեղափոխեց Բարեգործական ընկերության կազմատան արհեստանոցը, որը աշակերտների հանրակացարան և փրկեց նրանց նոր աղետից, որ սպասվում էր երեխաներին Կարսում:

Որբերի նկատմամբ հայրական ջերմ հոգատարությունն ու խանդաղատանքը երբեք չմարեց: 1920 թ. նա, գրքերի հրատարա-

կության իր իրավունքը վաճառելով, ստացած գումարից 10 000 ռուբլի հատկացրեց հայ որբերին, 10 000 ռ. Վրաստանի երկրաշարժից տուժածներին, 10 000 ռ. էլ՝ Ռուսաստանի սովյալներին[16]: Եվ քանի որ Թումանյանը ապրեց «ողբի ու որբի» հայրենիքում, ամեն ինչ արեց այդ որբաչխարհի, հայ ողջ գաղթականության անլուր տառապանքները փոքր-ինչ թեթևացնելու համար՝ դառնալով անմայր մանուկների ամենահարազատ անձը, «ամենայն հայոց որբերի հայրիկը»:

* * *

1918-1919 թվականներին Անդրկովկասը վերստին դառնում է ազգամիջյան ընդհարումների թատերաբեմ: Ազերի մուսաֆաթականների ոտնձգություններից և վրաց մենշևիկների ազգայնական հարձակումներից հայերի հողի ու ժողովրդի պաշտպանությունը ստանձնել էր դաշնակցությունը: Եվ Հովհաննես Թումանյանը ստիպված էր դարձյալ առժամանակ դադարեցնել ընկերության գրական գործունեությունը: Նա լիազորվել էր կառավարությունից գնալ Ղազախի և Բորչալուի շրջանները, ազգաբնակչության մեջ բարի-դրացիական հարաբերություններ հաստատելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով: Նրա տրամադրության տակ դրվել էր հատուկ զորամաս (Հ, 1918, 63): Թեև, իհարկե, այդ դժվար պահին Թումանյանը Լոռի էր գնում առաջին հերթին ժողովրդի խնդրանքով և իր հոգու կանչով: 1918 թ. հունիսի վերջին Թումանյանը Լոռուց արդեն վերադարձել էր: Նրա հետ հարցազրույցից պարզվում էր, որ ճանապարհները փակ էին, երկաթուղին գործում էր մինչև Քոլագերան կայարանը, իսկ դեպի Թիֆլիս բոլոր կայարաններում կանգնած էին գերմանական ու վրացական զորքեր: Բանաստեղծը պատմում է Ախթալայում մնացած գաղթականության, Անդրանիկի զորամասի եռևից գնացող տասնյակ հազարավոր մարդկանց, Ղարաքիլիսայի կոտորածի, թուրքերի հարձակման, Դիլիջանի և Ջալալ-Օղլու հայության վիճակի մասին: Լուրեր էին տարածվել, որ Թումանյանը իր դուստրերի

*հետ գերի է ընկել, բայց բանաստեղծը հերքում է այդ լուրերը (Հ, 1918, N 124):*

*Վերադարձից հետո Թումանյանը վերստին փորձում է իր նախագահած ընկերությանն անունից դիմելու քաղաքակիրթ աշխարհին ու մարդկությանը՝ հանուն հայ ժողովրդի արդար դատի պաշտպանության:*

*1918 թ. հուլիս-օգոստոսին գրվում և դարձյալ աշխարհի տարբեր մասերն է ուղարկվում հայ գաղթականներին օգնության հրավիրող կոչը գրողների ընկերության և Հայրենակցական միությունների միության (որի նախագահը դարձյալ Թումանյանն էր) անունից: Կոչում ասվում էր. «Մի ամբողջ ժողովուրդ, որ դարեր շարունակ որոնում է իրավունք ու արդարություն... որ ձգտում է նպաստավոր պայմաններ ստեղծել իր քաղաքակրթական հակումների համար, ուժասպառ է եղած ու անկարող ինքն իր ուժերով պաշտպանել ու պահպանել իր գոյությունը:*

*Այս հանդամանքը ավելի զարհուրելի է դարձնում մեր ազգային աղետը և իրավունք է տալիս Հայ գրողների ընկերությանը... դիմել մարդկության մտքին ու խղճին հանուն մարդկայնության» (ՀԳԿԸ ֆ, N 44/6): Այդ հեռագիրը հղվել է ռուսներեն, անգլերեն, գերմաներեն: Միայն ֆրանսերենով ուղարկվել է 200 օրինակ: Պահպանվել են ռուս և ուկրաինացի ժողովուրդներին հղված կոչի պատճենները, որոնցից առաջինը անթվակիր է, երկրորդը ունի «1918 թ. օգոստոսի 3» թվագրությունը[17]: Ինչպես վկայում է «Кавказское Слово» թերթի օգոստոսի 22-ի համարը, կոչի տեքստը աշխարհի բոլոր պետությունների համար միևնույնն էր, տարբերվում էին միայն այն օրինակները, որոնք նախատեսված էին Հայաստանի սահմանակից անմիջական հարևանների՝ Թուրքիայի, Պարսկաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար: Կոչը նամակների ու հեռագրերի ձևով ուղարկվում է աշխարհի բոլոր երկրների կառավարություններին, ակադեմիաներին, համալսարաններին ու հասարակական խոշոր միավորումներին, հանձնվում էր Թիֆլիսում գտնվող եվրոպական երկրների ներկայացուցիչներին: Այսպես, 1918 թ. օգոստոսին Թումանյանը այցելում է Թիֆլիսում գերմանական պատվիրակության ղեկավար գեներալ Ֆոն-Կրեսսին և հանձնում նրան*

*կոչի տեքստը՝ խնդրելով այն հղել գերմանական կառավարությանն ու ժողովրդին: Նա ծանոթացնում է Ջոն-Կրեսսին հայ ժողովրդի դրության և նրա անհետաձգելի կարիքների հետ և խնդրում է օգնել հայ գաղթականներին:*

*Լրագրերի հավաստումով Ջոն-Կրեսը բանաստեղծին ընդունել է շատ հարգալից ու սիրալիր: Նրանց զրույցը տևել է մոտ մեկ ու կես ժամ, որի ընթացքում առանձնահատուկ ուշադրության է արժանացել գաղթականության հարցը: Թումանյանը խնդրում է Ջոն-Կրեսսին նպաստել հայ գաղթականության հայրենիք վերադարձին, աջակցել, որ նրանց տրամադրվի իրենց թողած ցորենի կեսը: Հայ-թուրքական, հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին խոսելիս Ջոն-Կրեսսը նշեց, որ Անդրանիկի որոշ ելույթներ բացասական դեր ունեն և խորհուրդ տվեց Թումանյանին ազդել զորավարի վրա՝ նրան ետ պահելով ազգամիջյան հարաբերությունները սրող ելույթներից և գործերից: Բանաստեղծին հաջողվում է ինչպես հարկն է պաշտպանել Անդրանիկին՝ իր լավագույն բարեկամներից մեկին և հայ ազգի ամենասիրելի զորավարին: Միաժամանակ Թումանյանը չեչտում է երկու հանգամանք՝ ասելով, որ նախ Անդրանիկը գործում է առանց Հայաստանի կառավարության հետ որոշակի համաձայնության, և որ Անդրանիկի ելույթները դրական արձագանք են գտնում հենց թուրք ժողովրդի մեջ, հետևաբար ազդել նրա վրա այնքան էլ հեշտ չէ: Թումանյանը բացատրում է նաև, որ Անդրանիկի վարքագիծը միանգամայն օրինաչափ է ու բնական: Թուրքական կառավարությունը բացահայտ արգելում է հայ գաղթականներին վերադառնալ իրենց հարազատ բնօրրանը: Բացի այդ թուրքերը ամենուրեք հավաքում են հատկապես հայ երիտասարդներին և ուղարկում անհայտ ուղղությամբ: Ահա նրանք էլ սուված, տանջված հազարներով հավաքվում են Անդրանիկի շուրջը՝ նրա մոտ փնտրելով պաշտպանություն և փրկություն: Եվ ազգային մեծ զորավարը, ամենաժողովրդական ու սիրված հերոսը, այն քաջը, որը վախենում էր միայն վախենալուց, որն ապրում էր միայն ազգային վշտով ու հոգսերով, տառապում ու պայքարում միայն հանուն ազգի փրկության, չէր կարող չանսալ ժողովրդի կանչին,*

չէր կարող անարձագանք թողնել մեծ ողբերդությամբ, բայց և հուսով ու սպասումով լի իրեն ուղղված միլիոնավոր հայացքները:

Գեներալը բարձրացնում է նաև հայերի անգլիամետ տրամադրությունների հարցը՝ զարմանք հայտնելով, որ թեև հայերը անգլիացիներից ոչ մի կոնկրետ օգնություն չեն ստացել, բայց շատ ջերմորեն են ընդունում նրանց: Թումանյանը, արձանագրելով այն փաստը, որ խոստումներ տվեցին Անգլիան ու Ֆրանսիան, մինչդեռ Կովկասում առաջինը հայտնվեցին գերմանացիները, հավաստիացնում է, որ հայերը հավասարապես լավ են վերաբերվում Եվրոպայի բոլոր քաղաքակիրթ ժողովուրդներին և նրանցից ունեն միայն մի խնդրանք՝ օժանդակություն հայ ժողովրդի կյանքի և ունեցվածքի ապահովության, մշակութային զարգացման գործում: Թումանյանը հույս է հայտնում, որ այնպիսի մի հզոր պետության համար, ինչպիսին Գերմանիան է, դժվար չի լինի այդ խնդրանքի կատարումը:

Նույն օրը և նույն նպատակով Թումանյանը այցելում է Ավստրիայի ներկայացուցիչ, գեներալ Ֆրանկելշտեյնին[18]:

Այսպես, Թումանյանը՝ ամենայն հայոց ողբերի հայրիկն ու բանաստեղծը, Ռուսաստանի սովյալներով ու Վրաստանի երկրաշարժից տուժածներով մտահոգված հումանիստ քաղաքացին, ակամայից ստանձնում է ազգային-քաղաքական գործչի, դիվանագետի պարտականություններ՝ պետական կարևոր առյաններում ներկայացնելով իր ժողովրդի շահերը:

Այս նույն շրջանում տեղի են ունենում հայ-վրացական ընդհարումներ, և Թումանյանը սկսում է իր ալյքքերը հանուն հայ և վրաց բարեկամության վերականգնման, նրանց մեջ ծագած կռիվների դադարեցման՝ այդ գործում ներգրավելով նաև իր նախագահած գրողների ընկերությանը:

1919 թ. մարտի 17-ին հրավիրվեց գրական դատ «Հանցավո՞ր է Վրաստանի հանդեպ Հայաստանը, թե՞ ոչ» թեմայով: Հայ երգվյալատենակալների թվում էին ընկերության անդամները՝ Հ. Թումանյանը, Շիրվանզադեն և ուրիշներ: Հայ գրողների կովկասյան ընկերությունը հարևան ազգերի մեջև ծագած կռիվները դադարեցնելու գործում որոշ հույսեր էր կապում Անդրկովկաս-

յան կոնֆերանսի հետ, որը բացվեց Թիֆլիսում 1919 թ. ապրիլի 25-ին: Ընկերությունը կոնֆերանսին ուղարկեց ողջույնի հեռագիր, որում մասնավորապես ասվում էր.

«Միջցեղային վեճերով պատակտված՝ մեր երկրի ժողովուրդները հոգնել են իրար հանդեպ ատելությունից և ծարավի են խաղաղության՝ հիմնված փոխադարձ հասկացողության և այն գիտակցության վրա, որ մեր այսօրվա անցողակի նպատակները, որքան էլ տարբերվեն իրարից, այսուամենայնիվ, մեզ ամենքիս եղբայրության կապերով է միացնում մի ընդհանուր և հավիտենական նպատակ-ձգտում դեպի ազատությունը, երջանկությունն ու կատարելությունը»[19]:

Նույն բովանդակությամբ հեռագիր ուղարկվում էր նաև Հայ հայրենակցական միությունների միության անունից, որի նախագահը նույնպես Թումանյանն էր: Ամենայն հավանականությամբ հեռագրի հեղինակը Թումանյանն էր, որը ընկերության և միության անունից անհողդողդ հավատ էր հայտնում, որ կոնֆերանսի արդյունավետ աշխատանքների հիմքում կդրվեն համերաշխության և եղբայրության դաղափարները[20]:

1919 թ. մայիսին Հայ գրողների ընկերությունը չնորհավորում է նաև Վրաստանի անկախության տարեդարձը[21]:

Եթե հայ-վրացական հարաբերությունների կարգավորման դործում Թումանյանի ջանքերը որոշակի արդյունք տվեցին, ապա 1918-1919 թթ. հայ-ադրբեջանական կռիվները դադարեցնելու և խաղաղության հաստատմանը ուղղված Թումանյանի պայքարը որևէ չոշափելի արդյունք չտվեց և այդ շրջանում չէր էլ կարող տալ: 1918-1919 թթ. ադրբեջանցի մուսաֆաթիստների նախաձեռնությամբ զավթողական նպատակներով հայկական ջարդերի նոր շրջան է սկսվում: Պարբերական մամուլում հաճախ կարելի էր հանդիպել «Հայորսություն» ընդհանուր խորագրով հաղորդումներ, որոնք պարունակում էին տեղեկատվություն ադրբեջանական երևաթուղու սահմաններում հայերի անհետացման մասին. «Գնացքներ են մտնում ղինված թուրքերը, հայերին հանում են գնացքներից և անհայտացնում»[22] բովանդակությամբ հաղորդումներ հանդիպում էին թերթերում դրեթե ամեն օր:

Դրությունը սրվեց հատկապես Ղարաբաղում: Ադրբեջանական նորաստեղծ ազգայնամոլական իշխանությունները սկսեցին Ղարաբաղի հայության ամենօրյա կոտորած: Մեկ օրվա ընթացքում սպանելով 600 կին ու երեխա՝ ադրբեջանցի ազգայնականները իրականացնում էին և շարունակում Թուրքիայի ծրագրած հայաջինջ քաղաքականությունը: Զգտելով անջատել պատմական Արցախը մայր Հայաստանից՝ ադրբեջանցի հրոսակախմբերը ու վանդալիստները մեկ տարվա ընթացքում ոչնչացրին Հայաստանի ղարաբաղյան հատվածի 300 000 բնակչության գրեթե կեսը: Եվ ահա ի պաշտպանություն Ղարաբաղի անմեղ բնակչության դաժան կոտորածի, նրա՝ մայր երկրի հետ ապրելու սրբազան իրավունքի՝ Թիֆլիսում հրավիրվում է համահայկական բազմահազարանոց միտինգ, որի նախաձեռնող և մասնակից կազմակերպություններից մեկը Հայ գրողների կովկասյան ընկերությունն էր: Այդ համաժողովը, որ տեղի ունեցավ 1919 թ. հունիսի 22-ին, ներածական խոսքով բացեց Թումանյանը՝ իբրև մի քանի հասարակական հաստատությունների և այդ միտինգի նախագահ: Բանաձևը, որը ընդունվեց բազմահազար մասնակիցների կողմից, ընթերցեց Թումանյանը: Իր ելույթում նա որոշակի ընդգծեց, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ղարաբաղի կոտորածի պատճառներից մեկն էլ այն է, որ նրանք Ռուսաստանի հետ էին և ապավինում էին ռուս ժողովրդին, մի բան, որ չէր հանդուրժի Ադրբեջանի իշխանությունը: Ղարաբաղի հայության հերոսամարտը, տարբեր համագումարներում նրանց ընդունած հայաստանին միանալու վճիռները Թումանյանը համարում էր հայկական միջնաբերդի՝ Ղարաբաղի ողջ բնակչության սրբազան կամքի արտահայտություն. «մայր երկրի կյանքով ապրելու սրբազան իրավունքի» արտահայտություն, անդրդվելի ցանկություն, ադրբեջանական ոտնձգություններից հեռու պահելու միակ, այլընտրանք չունեցող հնարավորություն: Միտինգն իր ցասումն ու զայրույթն է հայտնում Ղարաբաղի անզեն կանանց և երեխաների վերաբերմամբ ունեցած վանդալիզմի հեղինակներին, իր ողջույնն է ուղարկում Ղարաբաղի հայությանը իր հերոսական կռվի ու մարտիրոսության համար, պահանջում է անպայման պատժել կոտորածի

հեղինակներին, անպայման հեռացնել ամբողջ հայկական Ղարաբաղից Ադրբեջանի իշխանությունը: Ուշագրավ է, որ բանաձևում որոշակի չեշտվում էր այն ճշմարտությունը, որը հաստատվեց պատմության հետագա ընթացքով, այն, որ Ղարաբաղի հայությունը երբեք չի՛ ճանաչել և երբեք չի՛ ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը, ինչ ձևի մեջ էլ այն լինի[23]:

Նաև ազգամիջյան ընդհարումները դադարեցնելու նպատակով գրողների ընկերության և անձամբ Թումանյանի ջանքերով Թիֆլիսում ապրող Անդրկովկասի տարբեր ազգերի մտավորականները տարբեր չրջաններում խորհրդակցություններ անցկացնելուց հետո համատեղ որոշում կայացրեցին Թիֆլիսում ստեղծել Կովկասյան ազգերի կուլտուրական միություն:

Ժամանակի պահանջով Հայ գրողների կովկասյան ընկերությունը ժամանակավորապես դադարեցրեց իր գրական գործունեությունը, իսկ ավելի ուշ, թեև վերականգնեց, բայց զուգահեռաբար չարունակեց պայքարը հայ ժողովրդին ծայրահեղ ծանր ու ղժվարին դրությունից փրկելու և դեպի ապագան նրա ճանապարհը հարթելու համար:

Գլուխ չորրորդ

# Թումանյանը և ընկերության գրական գործունեությունը



*Ծանր ու դժվարին էին 10-ական թվականները, բայց որքան էլ Հայ գրողների կուլկասյան ընկերությունը ստիպված լիներ հարմարվել ժամանակին, ընդլայներ իր գործունեության ոլորտները գրական հարցերի արծարծումից հեռանալու դնով, այնուամենայնիվ, գրողն ու գրականությունը եղան նրա մշտական հոդացողության առարկան, և որպես գրողների ու գրական միության նա մնաց իր կոչման բարձրության վրա: XX դարասկզբին ավելի մեծացավ գրականության՝ իբրև ժողովրդի հոգևոր գոյության, ազգային մշակույթի պահպանման դյխավոր միջոցի դերը: Ժողովրդի ֆիզիկական բնաջնջման վտանգին կարելի էր և անհրաժեշտ էր դիմագրավել նաև մշակութային վերածնությամբ: Իսկ վերջինս անհնար էր առանց անցյալի մշակութային արժեքների վերհանման ու վերագնահատման:*

*Գրողների ընկերության գլխավոր նպատակներից մեկն էլ մեր հին ու նոր գրականության մեջ ներհմուտ լինելն էր, անցյալի հեղինակների գործերի խորաթափանց ուսումնասիրությունն ու լուսաբանումը, նրանց պարզ հասկանալն ու պարզ հասկացնելը: Պատահական չէ, որ Թումանյանը՝ իբրև ընկերության նախագահ, գրական երեկույթներից մեկի բացման իր խոսքում հայտարարեց. «Կխոսենք, կմտածենք, կխորհրդածենք, թե ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս, ու՞ր ենք գնում, ի՞նչ ունենք... և ի՞նչ չունենք» (6,389): Հայ ժողովրդի ճակատագրական պահերին այս հարցերը մտահոգել են մեր մշակույթի շատ նշանավոր գործիչների՝ Խորենացի, Աբովյան և ուրիշներ: Ինչպես Ն. Աղբալյանն է ասում 1914 թ. ընկերության երեկույթներից մեկում,*

երբ ազգը մղում է կյանքի ու մահու կռիվ, «ժողովուրդը ճգտում է պահպանել ոչ միայն իր գոյությունը ազգային չարժման միջոցով, այլև պահպանել իր կուլտուրան և հոգևոր դեմքը մտավորական չարժման միջոցով» (Հ, 1914, 119):

XX դարի սկզբին հայ միջնադարյան գրականությունը գրեթե անծանոթ էր ընթերցող հասարակությանը, լայն մասսաներին, իսկ գրասերների և մտավորականության մեջ նոր-նոր էր արթնանում հետաքրքրություն հին գրականության նկատմամբ, գրողներն ու բանասերները նոր-նոր էին սկսում ուսումնասիրել միջնադարի հայ հեղինակներին: Լեոն 1916 թ. Բրյուսովի հայտնի ելույթի մասին «Հայ գրականության հարցեր» հոդվածում, բանավիճելով Վերմիշյանի հետ, ասում է. «Քանիսնե՞րն են հայտնի Քուչակները, Նագաշները, Աղթամարցիները, Առաքել Սյունեցիները, Կոստանդին Երզնկացիները: Ու՞ր է նրանց գրականության պատմությունը: Ե՞րբ և որտե՞ղ ենք մենք ենթարկել նրանց մանրամասն ուսումնասիրությունների, ի՞նչ ենք արել այդ անցած դեմքերը ժողովրդականացնելու ուղղությամբ» (Հ, 1916, 42):

Կարևոր է, որ գրականության պատմաբանը դնում էր միջնադարյան հայ գրականության ոչ միայն ուսումնասիրության, այլև ժողովրդականացման պահանջը: Իսկ դա կարելի էր իրականացնել և՛ հայ հին գրականության հեղինակների գործերը առանձին գրքերով հրատարակելու, և՛ նրանց մասին գրականագիտական հանրամատչելի ուսումնասիրություններ ստեղծելու, և՛ գրական ընկերության մեջ երեկույթներ, զանազան ժողովրդական հանդեսներ կազմակերպելու միջոցով: Ժամանակը պարտադրում էր ժողովրդական տարբեր խավերի մեջ արթնացնել ակնածանք ու սեր միջնադարյան գրականության նկատմամբ,որպեսզի ազգը հասնի ինքնաճանաչման: Նպատակ, որի իրագործումը համընդհանուր մտահոգության առարկա էր դարասկզբի բոլոր ազգային գործիչների համար: Սակայն չպետք է մոռանալ, որ միջնադարի նկատմամբ եղած հետաքրքրությունը պատահականություն չէր և պայմանավորված էր ոչ միայն հայ իրականությամբ: Դա ժամանակի գրական գործընթացի դրսևորումն էր հայ գրականագիտության մեջ: Ե. Անիչկովի վկայությամբ՝ «20-րդ դարի սկզբին

*պահանջ զգացվեց ժողովրդականացնել, պրոպագանդել մլջնադարյան գրականությունն ու բանահյուսությունը» (Հ, 1914, 56):*

*Եվ ահա Հայ դրողների կովկասյան ընկերությունը ձեռնամուխ եղավ այդ գործին՝ իր երեկույթներում մեծ տեղ հատկացնելով մլջնադարյան գրականության ու արվեստի հարցերին: Ընկերության նախագահը, ժողովրդի տարբեր խավերին հրավիրելով այդ բովանդակությամբ երեկոներին, ասում էր. «Թող դան հայերը, տեսնեն ու համոզվեն, որ իրենք մլչտ էն ժողովուրդը չեն եղել, ինչ որ հանդիսանում են էսօր, թե ի՛նչ են ստեղծել, ու ի՛նչ են եղել անցյալում, որ հոգեպես բարձրանան ու լցվին հավատով դեպի իրենց ազգային ապագան» (7,137):*

*Խորենացուն, Նարեկացուն, Շնորհալուն, Դոշին, Այգեկցուն, Սայաթ-Նովային և մլջնադարյան հայ այլ հեղինակներին նվիրված դասախոսություններով ու երեկույթներով Թումանյանը ուզում էր առաջացնել հպարտության զգացում և հավատ ապագայի նկատմամբ:*

*Հայ դրողների կովկասյան ընկերության շնորհիվ մեր մլջնադարյան դրողներից ամենից շատ Սայաթ-Նովան ժողովրդականություն ու լայն ճանաչում ձեռք բերեց ժողովրդի տարբեր խավերի մեջ: Հայ մլջնադարյան վերջին տաղերգուին նվիրված երեկույթների, նրա մահարձանի բացման, ձեռագրերի հրատարակման ու տարածման, նրա հետ կապված պանազան հարցերի շուրջ տարբեր բնույթի որոշումներ են կայացվել վարչության 23 նիստերում, ընդհանուր ժողովներում[1]: Սահմանվում է Սայաթ-Նովայի մահարձանի բացման հատուկ մանսաժողով, որի կազմում էին Վահան Տերյանը, Արմեն Տիգրանյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Նվարդ Թումանյանը և ուրիշներ: Միայն «Հորիզոնում» 1913-14 թթ. այդ նիստերի որոշումների մասին տպագրվում է 40 հայտարարություն ու հաղորդում, հրատարակվում են երեկոների և այլ հանդիսությունների ծրագրերը: Այս չրջանում է Թումանյանը դրում Սայաթ-Նովայի մասին հոդվածների իր շարքը: Իսկ ընկերության առաջին երեկույթը՝ նվիրված աշուղ-բանաստեղծին, 1913 թ. մարտի 14-ին էր: Դասախոսում էր Ն. Աղբալյանը: Վարչության նախագահը իր բացման խոսքում*

ընդծեց, որ ընկերության այդ և հետագա երեկույթները՝ նվիրված Սայաթ-Նովային, նպատակ ունեն ծանոթացնել հասարակությանը բանաստեղծական մի հոյակապ դեմքի, որին շատ քչերը գիտեն: Նրա առաջարկով ներկաները հարգում են Գևորգ Ախվերդյանի՝ «մի իսկական եվրոպական մտքով լուսավորված» մարդու հիշատակը: Ն. Աղբալյանը իր զեկուցումը սկսում է՝ Սայաթ-Նովայի ստեղծագործության նշանակության մասին խոսելով: Ըստ նրա՝ Սայաթ-Նովայի երգերը խոր զգացմունք են պատճառում, և ընթերցողը «ազդվում է, բայց մանրամասնորեն հասկանալ, խորասուզվել նրանց մեջ շատ դժվար է» (Հ, 1913, 59): Դասախոսը բերում է այդ դժվարությունները բացատրող 11 պատճառներ, այդ թվում՝ պարսկերեն, վրացերեն, արաբերեն ու թուրքերեն բառերով խճողված լեզուն, որը գուտ Թիֆլիսի բարբառն է և այն էլ հին բարբառը, անցյալի մոռացված սովորույթների հիշատակությունը, անծանոթ բանաստեղծական ձևերն ու կառուցվածքը և այլն: Ինչպես այդ չրջանի շատ քննադատների, այնպես էլ Աղբալյանին բնորոշ էր գեղարվեստական երկի վերլուծությունը կատարել՝ կապված ժամանակաշրջանի, միջավայրի ու նրա կենսագրության, հոգեկան-անհատական ապրումների հետ: Հենց այդ տեսանկյունով էլ հայ հին ու նոր հեղինակներին ներկայացնող մյուս քննադատները առաջնորդվում էին՝ ունենալով մեկ ընդհանուր միտում՝ «պրոպագանդել, ծանոթացնել հայ գրողին ու նրա ստեղծագործությանը»: Միաժամանակ ընկերության մեջ համախմբված քննադատների ու գրողների ջանքերով ստեղծվում էր հնարավորություն ընդհանուր ուժերով ձեռնամուխ լինել հայ գրականության պատմության ստեղծման կարևորագույն խնդրի իրականացմանը: Դիտելով գրողի կյանքն ու ստեղծագործությունը անբաժան միասնության մեջ՝ Աղբալյանը ներկայացնում է իր բանասիրական պրպտումները, որոնց համաձայն Սայաթ-Նովայի թուրքերեն երգերից հնագույնը գրվել է 1742 թ., իսկ հայերեն առաջին բանաստեղծությունը՝ 1752 թ., երբ գրողը 40 տարեկան էր, այսինքն՝ Սայաթ-Նովան հայերեն սկսել է գրել հասուն տարիքում, ուժերի ծաղկման չրջանում: Զեկուցողը մատնացույց է անում նաև պարսկականի ու վրացականի, արևելյանի ու արևմտյանի ազդեցությունը Սայաթ-Նո-

վայի ստեղծագործության վրա: «Վրաց կուլտուրան գլարճության ու անփոխթության էր բերում, պարսկականը՝ գլարճասիրության, դեղեցկագիտության և իմաստասիրության, — ասում է նա՝ նկատի ունենալով Թիֆլիսի միջավայրը: — Պարսից կուլտուրան բերում էր արվեստի նրբության, մեծ էր պարսիկ բանաստեղծների ազդեցությունը: Ապա այդ կուլտուրան տալիս էր նուրբ գործվածքների, թանկագին քարերի, կերպասեղենի, ճոխ գույների մի զգացում, տների և նիստ ու կացի նրբին ճաշակ» (Հ, 1913, 59):

Աղբալյանը իրավացիորեն նկատում է, որ Սայաթ-Նովայի սիրային երգերը համեմված են իմաստասիրական և խոհախրատական տարրերով: Այնուհետև քննադատը ներկայացնում է Սայաթ-Նովայի սիրո իդեալին թե՛ արտաքին, թե՛ ներքին հոգևական բարեմասնություններով՝ բանաստեղծի սիրո մեջ տեսնելով «սկզբում հիացք, ապա վարանք և վերջում՝ հիասթափություն» (Հ, 1913, 59):

Բնութագրելով Սայաթ-Նովայի պոեզիան ընդհանրապես՝ Աղբալյանը ասում է. «Նրա զգացմունքներն իր երգերի մեջ անկեղծ են, ուժեղ և խորը. դեպի կինը քնքուշ է, իր սերը առողջ է, աղնիվ ու զուսպ: Նրա վիշտը խորն է, բայց ազնվացնող, և նա մաքառում է տառապանքի դեմ: Իր արվեստը ճարտար է... իր լեզուն գունագեղ է, տաղաչափությունը՝ անթերի... իր պատկերները թարմ են, մտքերը ուժեղ, աղնիվ ու թռիչք ունին: Սա իր իդեալը որոնում է կյանքի, իրականության մեջ» (Հ, 1913, 59):

Իր ելույթը Սայաթ-Նովայի մասին ժամանակի հայտնի քննադատը ավարտում է այսպես. «Մեր ժողովուրդը իր արմատում առողջ է, ժողովրդի հոգևական չուր խմող բանաստեղծները միշտ առողջ են լինում և մեր ներկան այդ տեսակետից շատ բան ունի սովորելու Սայաթ-Նովայից» (Հ, 1913, 59):

Աղբալյանի «Ժողովրդական երգիչ Սայաթ-Նովան» դասախոսության չուրջը ծավալված գրական գրույցին, որին նախագահում էր Գ. Բաշինջաղյանը, մասնակցեցին Հ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Տ. Հովհաննիսյանը, Լեոն:

Վերջինիս կարծիքով, դեկուցողը պարտավոր էր անդրադառնալ աշուղական արվեստին և նրանում ընդունված կարգերին, այն հանգամանքին, որ Սայաթ-Նովայի տաղանդը շատ է ճնշվել աշուղական ձևերին ենթարկվելու պատճառով:

Դերենիկ Դեմիրճյանը Սայաթ-Նովայի քնարերգության մեջ ընդգծում է արևելյան ու արևմտյան, հեթանոսական ու քրիստոնեական շերտերն ու երանգները. «Նրա փիլիսոփայության մեջ էլ, – ասում է Դեմիրճյանը, – նկատվում է այդ երկու գիծը» (Հ, 1913, 59): Թումանյանը որոշ ուղղումներ է անում Աղբալյանի տված այն բացատրություններին, որոնք վերաբերում էին «քաղաքում չորս տարի քարվան չմտնելու, մազերի հետ ուհան հյուսելու և ծովի տակ թաքնված վանքի մասին» (Հ, 1913, 59): Թումանյանի ելույթի մանրամասները մեզ հայտնի չեն, նրա գրավոր խոսքը այդ մասին չի պահպանվել:

Ընկերության ամբիոնից Թումանյանի հաջորդ ելույթը միջնադարյան տաղերգուի մասին 1913 թ. ապրիլի 5-ին էր: Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի ունեցող երեկոն նվիրված էր աշուղ-բանաստեղծի հիշատակին: Դեռ 10 օր առաջ ընկերության գրասենյակում տեղի ունեցավ այդ երեկույթի փորձը: Ըստ արխիվային նյութերի՝ «երեկոյի ընթացքում տարածելու համար» Թումանյանը ձեռք է բերում Ախվերդյանի 1852 թ. հրատարակած Սայաթ-Նովայի երգերի առաջին ժողովածուի 100 օրինակ, կպցնել տալիս և տրամադրում հայ ընթերցողին: (ՀԳԿՀ Ֆ, 8): «Մշակը», «Հորիզոնը», «Կովկասի լրաբերը» և ժամանակի այլ լրագրեր բազմաթիվ առաջնորդողներ են տպագրում ընկերության՝ Սայաթ-Նովայի ժողովրդականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին: Հիշենք, թեկուզ, «Այսօրվա հանդեսը», Գ. Բաշինջաղյանի «Սայաթ-Նովայի մահարձանը», «Մահարձանի բացումը», «Այսօրվա երեկույթը» հոդվածները և այլն: Ինչպես ասացինք, այս շրջանում Թումանյանը գրում է Սայաթ-Նովային նվիրված իր հոդվածների շարքը: «Հորիզոնի» առաջնորդողներից մեկում ապրիլի 5-ի երեկոյի մասին ասվում էր. «Երեկույթներ շատ է տեսել Թիֆլիսի հայ հասարակությունը և տեսնում է ամեն շաբաթ, բայց այս մեկը իր տեսակի մեջ եզակի պետք է համարվի, եզակի, եթե ոչ իր արտաքին շուքով, գոնե գաղափարական նշանակությունով:

Այդ երեկույթը կարելի է մի սիմվոլ, մի խորհրդանշան համարել այն գիտակցական վերաբերմունքի, որ հայ հասարակու-

*թյունը սկսում է ցույց տալ դեսլի իր մայրենի գրականությունը» (Հ. 1913, 75): Իսկ բուն երեկոն համարվեց հազվադեպ երևույթ, ոչ միայն իր բովանդակության բազմազանությամբ ու ճոխությամբ, այլ առավել իր սրտալիությամբ ու անկաուն հաճելիությամբ: Հանդիսատեսները զբաղեցրել էին ոչ միայն ընդարձակ պահլիճի բոլոր անկյունները, այլև նախասենյակն ու կից բոլոր սենյակները: Իսկ շատ շատերին պարզապես տոմս չէր հասել «Եվ այդքան բազմություն հայոց երեկույթներին... իսկապես չտեսնված երևույթ էր» (Հ, 1913, 77):*

*Երեկույթին իբրև պատվավոր հյուրեր ներկա էին Սայաթ-Նովայի թոռները, Գ. Ալամերդյանի քույրն ու աղջիկը: Երեկույթի կառավարչուհին էր իշխանուհի Մարիամ Թումանյանը: Իր բացման խոսքում Թումանյանը վերստին շեշտում է, որ նշանակալիցը մեր ազգի հոգևոր կյանքը խոսքերով ու հնչյուններով անմահացնողներին ճանաչելու հասարակության ունեցած ձգտումն է, որ Սայաթ-Նովային վայելելն էլ առանձին արվեստ պետք է լինի: Եվ ինչպես ճշմարիտ արվեստը՝ քամանչան, չի կարող «նաքաղ մարթու» համար մատչելի լինել, այնպես էլ Սայաթ-Նովային հատկանալը հեշտ չէ: Նույն օրը Թումանյանը կարդում է երեկոյի առթիվ իր դրած բանաստեղծությունը.*

*Խաղով եկավ,*
*Ախով դնաց Սայաթ-Նովան,*
*Երգով եկավ,*
*Վերքով դնաց Սայաթ-Նովան,*
*Սիրով եկավ,*
*Սրով դնաց Սայաթ-Նովան,*
*Սիրով մնաց Սայաթ-Նովան:*

*Թումանյանի ելույթի ունկնդիրները նրա խոսքը համարեցին հիացմունքի մի ներքող՝ ուղղված հանճարեղ ժողովրդական երգչին: Ապրիլի 5-ին տեղի ունեցավ նաև աշուղական մրցույթ-հաղթրիի և Գիդոյի միջև: Պահպանվեցին այդ մրցույթի ավանդական բոլոր կանոնները: Հաղթողը՝ Հաղիրին, ճիշտ պատասխանելով Գի-*

գոյի հարցերին, ստացավ հակառակորդից նրա չոնգուրը, իսկ ընկերության նախագահից՝ «Թիրմայի չալ» և «Բաղդադի մի թաչկինակ»: Ներկաների խոսքերով ինչ-որ հարազատություն էր տիրում ամբողջ դահլիճում, ամենուր լսվում էին հիացական բացականչություններ, թևածում էր հայկական ոգին և «հետզհետե բարձրացող տրամադրությունը մնաց մինչև վերջ, և ժողովուրդը ցրվել սկսեց շատ մեծ դժվարությամբ» (Հ, 1913, 77): Հազիրին այդ երեկոյի առիթով աշուղական խաղ հորինեց Սայաթ-Նովայի մասին և չմոռացավ բանաստեղծորեն ձևակերպել դրողների ընկերության դերը բանաստեղծի հիշատակի հավերժացման գործում:

Հասարակության պահանջով ապրիլի 5-ի երեկույթը նույն ծրագրով կրկնվեց մայիսի 25-ին: Ունկնդիրները Թումանյանի ընթերցմամբ ծանոթացան Սայաթ-Նովայի նորահայտ մի բանաստեղծության, որը չկար Ախվերդյանի ժողովածուում: Նույն օրը ընթերցող հասարակությունը ծանոթացավ Թումանյանի «Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը» վերնագրով հոդվածին, ուր հեղինակը, բանաստեղծորեն, խոր ու դեղեցիկ վերլուծելով Սայաթ-Նովայի սիրո երգերը, միաժամանակ բացատրություն էր տալիս նրա անվան շուրջը ծավալված անսահման մեծ հետաքրքրությանը ու նաև այն թերահավատներին, որոնք կարծում էին, թե Սայաթ-Նովայի երեկույթի արտակարգ հաջողության պատճառը նորությունն էր կամ նորաձևությունը. «Մոդա չի, – գրում է Թումանյանը, – որ ձանձրացնի ու փոխվի, այլ դեղեցիկ ձևի մեջ մի մշտավառ հուր հոգի է նա, մի ազնիվ ու լիքը սիրտ, մի հարազատ, հզոր չունչ» (7, 58):

Շարունակելով իր բանասիրական պրպտումները սայաթնովադիտության մեջ՝ Թումանյանը ընկերության հերթական ասուլիսներից մեկում, 1913 թ. դեկտեմբերի 5-ին կարդաց դասախոսություն «Սայաթ-Նովան Դավիթ եպիսկոպոս և առաջնորդ Հախպատա թեմի» խորագրով: Ընկերության արխիվում պահպանվել է այդ օրվա հերթակալ (պատասխանատու) Ն. Աղբալյանի հաշվետվությունը երեկոյի և Թումանյանի ելույթի մասին (ՀԳԿԸ Ֆ, 8): Հերթակալների նման բնույթի զեկույցները արժեքավոր են իբրև գրապատմական վավերաթղթեր: Նրանցում որոշ չափով ար-

*տահայտվում է ժամանակի դրական կյանքը, տարբեր գրողների և նրանց մասին եղած ելույթները, կենսագրական տեղեկություններ, որոնք այլ աղբյուրներում, մամուլում կամ նրանց անձնական արխիվներում չեն կարող լինել: Ըստ Աղբալյանի՝ վարչության ներկայացրած հաշվետվության՝ Թումանյանը, հիմնվելով «Դիվան հայոց պատմության» ժողովածուի մի քանի փաստաթղթերի վրա, ջանաց ցույց տալ, որ Սիմեոն կաթողիկոսի ձեռնադրած Դավիթ վարդապետը, որ Ղուկաս կաթողիկոսի ժամանակ հասնում է արքեպիսկոպոսության աստիճանի, նույն ինքը՝ Սայաթ-Նովան է: Հաղբատի միաբաններից այդ արքեպիսկոպոսն է միայն, որ կարող է Սայաթ-Նովան լինել: Թե՛ իր բարքը, թե՛ իր վայելած հովանավորությունը Հերակլ երկրորդ թագավորի կողմից և մի քանի ուրիշ հանգամանքներ այդ են ապացուցում: Զևկուցումն առաջ բերեց կենդանի հետաքրքրություն: ՀՀ Բոլոր առարկողները համաձայն էին մի կետում, որ պ. Թումանյանի են թագրությունն ապացուցող ուղղակի ցուցմունքներ չկան բերված վավերագրերի մեջ: Դրանից դուրս խոսողների մի մասը հավանական էր համարում բանախոսի ենթադրությունը...» (ՀԳԿԸ Ֆ, 8):*

*Մեր դարի տասական թվականներին, չնայած հայ դրողների ու բանասերների ջանքերին, Սայաթ-Նովայի կենսագրության շատ էջեր մնում էին անհայտ: Բայց ինչպես Թումանյանն էր ասում, գլխավորը Սայաթ-Նովայի հոգու կյանքն էր, որ ապրում էր իր անմահ երգերի մեջ:*

*Այսպիսով, միայն մի տարվա ընթացքում, իր գործունեության առաջին տարեշրջանում ընկերությունը միջնադարյան մի այն մի բանաստեղծի նվիրեց չորս դասախոսություն: Այդ երեկույթները ունեցան չտեսնված հաջողություն, կրկնվեցին մի քանի անգամ և լայն արձագանք գտան: Ստեփան Տեր-Ավետիքյանը հավաստում է, որ Թիֆլիսեցիներից քչերը միայն գաղափար ունեին Սայաթ-Նովայի մասին, նույնիսկ մտավորականները նրա անունն անգամ չէին լսել. «Բայց Հայ դրողների ընկերությունը դուրս հանեց վոչինների տակից այդ բանաստեղծին և նրան իր տաղանդին համապատասխան տեղը հատկացրեց մեր դրականության մեջ: Այսօր կարելի է հաստատապես ասել, որ մայրենի լեզ-*

վին տեղյակ ոչ մի հայ չկա, որ փոքրիշատե ծանոթ չլինի Սայաթ-Նովային» (Հ, 1913, 124):

Իսկ լրագրերը, արտահայտելով գրասերների ընդհանուր կարծիքն ու ցանկությունը, գրում էին. «Լավ օպերաները տարվա մեջ կրկնվում են մի քանի անգամ, Սայաթ-Նովայի երեկույթները, որ պետք է մի գեղարվեստական դյուտ համարել, այսուհետև կարելի է տարին մի քանի անգամ կրկնել մեզանում և նրանք անկասկած միշտ հաջողություն կունենան» (Հ, 1913, 124):

Այս ոգևորության հետևանքներից մեկն էլ այն եղավ, որ սպառվից Գևորգ Ախվերդյանի 1852 թ. տպագրած ու մինչև այդ օրերը չվաճառված Սայաթ-Նովայի բանաստեղծությունների գիրքը, և առաջ եկավ նոր հրատարակության անհրաժեշտություն: Հայ գրողների կովկասյան ընկերությունը որոշեց որքան կարելի է շուտ հրատարակել Սայաթ-Նովայի երկերի ժողովածուն, ըստ հնարավորին ավելի լրիվ ու լիակատար, սկզբում 2 500, հետո 2 400 տպաքանակով՝ կցելով նաև Ախվերդյանի կենսագրությունը: Ի դեպ, Թումանյանը առաջինն է ընկերության վարչությանը հայտնում, որ կայսերական ակադեմիայում կան Սայաթ-Նովայի ինքնագրերից, և անհրաժեշտ է հնարավոր բոլոր երգերը հավաքել և նոր միայն անցնել հրատարակության գործին: Բայց քանի որ գրքի տպագրությունը կարող էր ուշանալ, ընկերության վարչությունը 1913 թ. սեպտեմբերի 26-ի նիստում որոշում է. «այժմեն իսկ լույս ընծայել Հանդեսի բացման առիթով նրա երգերի մի ժողովըրդական հրատարակություն, որոնց ընտրությունը հանձնել պ.պ. Հովհ. Թումանյանին, Ն. Աղբալյանին, Գ. Բաշինջաղյանին» (Հ, 1913, 124): Վերջիններս Ախվերդյանի հրատարակած Սայաթ-Նովայի երգերին ավելացրեցին Պետերբուրգի կայսերական գրադարանի բանաստեղծի ձեռագրերի հիման վրա Գ. Աստվածատրյանի հրատարակած թվով 8 նորահայտ երգերը, որոնք լույս էին տեսել 1903 թ. «Ազգագրական Հանդեսի» 10-րդ գրքում: Ընդորում, ժողովրդի լայն խավերին մատչելի անելու համար ընկերությունը որոշեց այս տպագրության գինը նշանակել էժան, քան նստում է իրեն՝ ընկերությանը» (ՀԳԿԼ Ց, 41), — ասվում է Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության լույս ընծայած «Մի քանի խոսքում»:

*Երևույթներին հաջորդած խանդավառությունը Սայաթ-Նովայի անվան չուրջը պահպանվեց չատ երկար և լայն տարածում գտավ: Թումանյանը տարբեր վայրերից ստանում էր բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները խնդրում էին նրան տեղեկություններ հաղորդել Սայաթ-Նովայի կյանքի մասին, մատնացույց անել այն աղբյուրները, որոնցից կարելի է օգտվել Սայաթ-Նովայի կյանքըն ու ստեղծագործությունը լուսաբանելու համար: Վաղարշապատից ուսուցիչ Մկրտիչ Ստեփանյանը գրում էր. «Տեղիս երիտասարդությունը հետաքրքրության նշաններ է ցույց տալիս ճանաչելու համար մեր այդքան սիրելի աշուղին: Ուզում եմ գեթ տարրական ծանոթություն հաղորդել հետաքրքրվող մարդկանց, որ համարում ենք նաև մեր սրբազան պարտականությունը: Վերըստին խնդրում եմ աջակից լինեք լինճ՝ հետաքրքրվողների պահանջին բավարարություն տալու գործում» (ՀԳԿԸ Ֆ, 103):*

*Իրոք, ժողովրդի մեջ ոգևորությունը միջնադարյան բանաստեղծի արվեստի նկատմամբ գնալով մեծանում է: Հիշյալ երեկոներից 7-8 ամիս անց մամուլում դեռ շարունակում էին գրել այդ մասին՝ նշելով, որ դրանք առիթ եղան, որ հասարակությունը «առժամապես գոնե մոռանա օրվա և ժամանակի ճնշիչ տրամադրությունը» (Հ, 1914, 3): Այդ երեկույթների շնորհիվ չատերը համոզվեցին, որ անցյալի մշակութային արժեքների վերականգնումը անհրաժեշտ է արվեստի բոլոր բնագավառներում: Հակոբ Հովհաննիսյանը, մտահոգված հայ ազգային ու աշուղական երաժշտության զարգացման հեռանկարներով, գրում է. «Հայ գրողների ընկերությունն էր, որ վերականգնեց Սայաթ-Նովայի մոռացության փոշիով պատված գրական արժեքը: Թող երաժշտական ընկերությունն էլ հանձն առնի վերականգնելու նրա հարազատ եղանակները» (Հ, 1914, 6):*

*Նույնքան, գուցե և ավելի մեծ էր Սայաթ-Նովայի մահարձանի բացման հանդիսության առաջացրած ոգևորությունը: Վարչության հանձնարարությամբ Թումանյանը բանակցություններ է վարում Բերնարդո Վիլլա և Ա. Րիցցի մարմարի ընկերության հետ՝ Սայաթ-Նովայի մահարձանի պատրաստման համար: Այն պատրաստվում է Ռուբեն Մարտիրոսյանի նախագծով և Գևորգ*

Բաչինջաղյանի անմիջական հսկողությամբ: Իսկ 1913 թ. սեպտեմբերի 30-ին ընկերությունը դիմել էր Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին Կաթողիկե եկեղեցու գավթում մահարձանը կանգնեցնելու թույլտվություն ստանալու համար: Մահարձանի բացումը տեղի ունեցավ 1914 թ. մայիսի 15-ին: Ընկերությունը վաղօրոք հայտարարել էր, որ բոլոր մասնակիցները վարդերի սիրահար աշուղին այցելեն վարդերով, «զարդարվեն Սայաթ-Նովայի սիրած ու երգած ծաղկով»: Ինքը՝ Թումանյանը, մայիսի 15-ի առավոտյան ստանում է 1 000 վարդ «100 և մի տեսակի»: Հրավիրելով հասարակությանը Ս. Գևորգ եկեղեցու (Կաթողիկե) բակը՝ Թումանյանը Սայաթ-Նովայի չիրիմը համարում է այն պայծառ գերեզմաններից մեկը, որը ժպտում է մարդկանց սրտերին հավիտենական ժպիտով և կյանքը հաշտեցնում է մահի հետ: Մահարձանի բացման արարողությունը տեղի ունեցավ արտակարգ մեծ շուքով: Ներկա էին զանազան հաստատությունների պատգամավորներ, մամուլի ներկայացուցիչներ, աշուղների խումբ, ռուս, վրացի և այլ ազգերի գրականության ներկայացուցիչներ: Իոսեբ Գրիշաշվիլու վկայությամբ՝ Սայաթ-Նովայի այդ տոնակատարությունը ստիպեց իրեն ձեռնամուխ լինել չորս տարվա աշխատանքի, որի արդյունքը եղավ Սայաթ-Նովայի վրացերեն տաղերի հրատարակությունը 1918 թ., առանձին գրքով մենագրության հրապարակումը[2]:

Հասարակության հանդիսավոր երթը սկսում է Աբաս-Աբայան հրապարակից, ուր գտնվում էր Հայ գրողների կովկասյան ընկերության գրասենյակը: Ճանապարհին թափորին մոտենում է Գայանյան դպրոցի երգչախումբը (Շելկովնիկյան փողոցում), Գայանյան դպրոցի աշակերտությունը (Գեորգինսկայա հրապարակ), իսկ եկեղեցու մոտ աշուղների խումբը՝ Թիֆլիսեցու հին տարազներով, Հազիրիի գլխավորությամբ: Հոգեհանգստից հետո Թումանյանը բացման խոսք է ասում և ընկերության անունից դափնյա պսակ դնում մահարձանի վրա: Ընկերության արխիվում պահպանվել է 14 տուն մի բանաստեղծություն՝ նվիրված Սայաթ-Նովայի հիշատակին: Այն ընթերցվել է մահարձանի բացման օրը: Բանաստեղծությունը անստորագիր է: Չի բացառվում, որ հեղի-

նակը Հազիրին լինի, որը նմանատիպ մի բանաստեղծություն հորինել էր նաև ապրիլի 5-ի երեկոյի համար: Այստեղ էլ Սայաթ-Նովան ներկայանում է իբրև «չատ լավ քամանչա ածող աչուղ, չորս լեզվով ստեղծագործող բանաստեղծ, Թիֆլիս քաղաքի քաջ պաշտպան, որը հաստատ մնաց իր հավատին: Նախավերջին տան մեջ հիշատակվում է Թումանյանը՝ իբրև Սայաթ-Նովայի հիշատակի հավերժացման գործի նախաձեռնող:

Թերևս դրողների ընկերության կազմակերպած ոչ մի հանդիսություն այնպիսի մեծ խանդավառություն չէր առաջացրել, որքան Սայաթ-Նովայի մահարձանի բացումը: Այն համարվեց ոչ միայն հարգանքի արտահայտություն հայ միջնադարյան քնարերգուի հիշատակի հանդեպ, այլև նախ և առաջ «հայ հասարակության կուլտուրական հաղթանակի տոն» (Հ, 1914, 103): Այդ օրերին Թիֆլիսի՝ տարբեր լեզուներով հրատարակվող թերթերում կարելի էր հանդիպել գրեթե նույն բովանդակությամբ հոդվածներ, որոնցում արձանի բացումը համարվում է բացառիկ հանդամանք, որով հայ հասարակությունը ոչ թե Սայաթ-Նովայի տաղերի արժեքն է մեծացնում, այլ միայն «իր կուլտուրականության համար մի չափանիշ է տալիս, որովհետև միայն կուլտուրական ժողովուրդներն են, որ վեր են հանում անցյալի ստեղծագործությունները և ներկայի համար արժեքավորում» (Հ, 1914, 103): Իսկ «Թեմի» լրագրերը արձանի օրհնությունը անվանում է ազգային տոնախմբություն, որի սիրտն ու հոգին Հովհաննես Թումանյանն էր: Ի դեպ, Սայաթ-Նովան միջնադարի առաջին բանաստեղծն էր, որի հիշատակը հայ ժողովուրդը հարգեց մահարձան կանգնեցնելով:

Կովկասյան ընկերությունը ձեռնարկեց Սայաթ-Նովայի ժողովրդականացման հետ կապված, նաև այլ միջոցառումներ: Վարչությունը 1913 թ. նոյեմբերին Թիֆլիսի ոստիկանապետին և քաղաքագլխին ուղարկեց պաշտոնական դրություններ ու դիմումներ, որոնցում, հիշեցնելով աչուղ-բանաստեղծի ծառայությունը, խնդրում է Սայաթ-Նովայի հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքի «Մեյդան» կոչվող հրապարակը հուշարձանի բացման օրը կոչել Սայաթ-Նովայի անունով: Այդ խնդրագիրը ներկա-

յացնելիս վարչությունը վստահ էր, որ հարցը կլուծվի դրական, քանի որ դեռ 1913 թ. ապրիլի 16-ին Թումանյանը հայտնեց, որ ինքը արդեն խոսել է այդ մասին քաղաքագլխի հետ և ստացել նրա համաձայնությունը: Ավելին. «Քաղաքագլուխը պատրաստակամություն է հայտնել և առաջարկել, որ մեր ընկերությունը կարող է Սայաթ-Նովայի անվան հետ կցել նաև մի չարք Թիֆլիսում ապրած ուրիշ նշանավոր հայ գրողների անուններ» (ՀԳԿԸ Ֆ, 56): Եվ ընկերությունը որոշել էր դիմել նաև Րաֆֆու, Սունդուկյանի, Ղ. Աղայանի հիշատակների հավերժացման համար: 1914 թ. հունիսի 12-ին լրագրերում հայտարարվում է, որ Հայ գրողների կովկասյան ընկերության միջնորդության համաձայն «քաղաքի փողոցների անուններ տվող հանձնաժողովը» որոշել է «մեյդանը» անվանել «Սայաթ-Նովայի հրապարակ» (Հ, 1914, 125): Բայց երեք օր անց նույն թերթի էջերում հայտնվում է մեկ այլ հայտարարություն, ըստ որի՝ քաղաքային հանձնաժողովը չի հաստատել դումայի հանձնաժողովի վճիռը և որոշել է «Մեյդանը» թողնել նախկին անունով, որպես պատմական անուն, իսկ «Մեյդանի» մոտ գտնվող կրասիլնայա փողոցը կոչել Սայաթ-Նովայի անունով:

Սայաթ-Նովայի թոռան որդի Բագրատ Տեր-Մովսիսյան-Սայադյանը ընկերությանն է նվիրում Սայաթ-Նովայի երգերի ձեռագիր «Դավթարը»: 1913 թ. ապրիլի 16-ին ընկերության վարչությունը, շնորհակալություն հայտնելով նվիրատուին, որոշում է ձեռագրերը, «պահ տալ նախագահին» (ՀԳԿԸ Ֆ, 41): 1921 թ. Հայ գրչի մշակների (նախկին Կովկասյան) միության վարչությունը Թումանյանի ղեկավարությամբ ու նրա առաջարկով որոշում է ձեռագրերը ուղարկել Հայաստան: Նույն թվի հոկտեմբերի 19-ին Խորհրդային Հայաստանի Հանրապետության լուսժողկոմին հղած նամակում Թումանյանը գրում է. «Տետրակը բաղկացած է 140 էջից, թվահամարված է հետագայում իմ ձեռքով: Հայերեն երգերը գրված են վրացերեն տառերով, թուրքերեն երգերը՝ հայկական տառերով» (ՀԳԿԸ Ֆ, 57/25):

Թիֆլիսում Սայաթ-Նովայի արվեստի նկատմամբ սկիզբ առած սերն ու խանդավառությունը չարունակվում են մինչև օրս: Ամեն տարի Ս. Գևորգ եկեղեցու բակում՝ Սայաթ-Նովայի մահար-

ձանի մոտ տեղի է ունենում նրա պոեզիային նվիրված մի հանդիսություն, հայ և վրացի հազարավոր ունկնդիրների առջև: Այս տոնախմբությունը ստացել է «Վարդատոն» անունը: Նույնիսկ անվանումը վկայում է, որ Հայ դրողների կովկասյան ընկերության հանդեսն է ավանդույթ դարձել և պահպանվել մինչև մեր օրերը:

Վստահ կարող ենք ասել, որ Սայաթ-Նովայի ժողովրդականացման սկիզբը դրվեց XX դարի 10-ական թվականներին և նրա նախաձեռնողն ու իրականացնողներ էին նախ Թումանյանը՝ իր նախագահած Հայ դրողների կովկասյան ընկերության հետ միասին, նկարիչ Գ. Բաշինջաղյանը, ժամանակի հայտնի քննադատ ու քաղաքական գործիչ Ն. Աղբալյանը, որ, ի դեպ, Սայաթ-Նովայի մասին դասախոսություններ կարդալուց բացի հրաչալի երգում էր նրա տաղերը՝ վկա՝ Ավետիք Իսահակյանը: Այսօր էլ Թումանյանի ասույթները Սայաթ-Նովայի մասին հնչում են հարազատի ջերմ սիրով, միջնադարի վերջին տաղերգուին ներկայացնում իբրև մի հոյակապ, վիթխարի երևույթ, իբրև «հանճարի կնիքը ճակատին» հայ ժողովրդի «կյանքի ու տանջանքի» խորհրդանշան:

Սայաթ-Նովային նվիրված երեկույթներից բացի հետագայում ընկերության ասուլիսներում կազմակերպվեցին դասախոսություններ հայ հին բանաստեղծության, հայ պատմիչների փիլիսոփայական աշխարհայացքի, Նարեկացու և հայ միջնադարյան գրականության այլ հեղինակների ու հարցերի շուրջ: Հայ հին գրականությանը վերաբերող երեք դասախոսություն կարդաց միայն Մանուկ Աբեղյանը: Դրանք էին՝ «Հայոց հին բանաստեղծության մասին» (1916 թ. հոկտեմբերի 14), «Գր. Նարեկացին և իր շրջանը» (1916 թ. նոյեմբերի 4) և «Հայոց միջնադարյան առակները» (1917 թ. հունվարի 27):

Մանուկ Աբեղյանի՝ տաղանդավոր բանասերի, քննադատի ու գրականագետի բոլոր դասախոսություններն էլ հագեցած էին միջնադարյան գրականության հարուստ նյութերով, հետաքրքիր վերլուծություններով, գրական նուրբ դիտողություններով: Ի դեպ, նրա դեկուցումներից և ոչ մեկի ժամանակ չծագեցին գրական սուր բանավեճեր ու տարաձայնություններ, որոնք գրեթե պարտադիր էին բոլոր դասախոսությունները քննարկելիս: Պատճառը ոչ մի-

այն այն էր, որ այդ ելույթները աչքի էին ընկնում գիտական ամուր տրամաբանությամբ, փաստերի ու գիտելիքների հավաստիությամբ, հարցերի գիտականորեն համոզիչ և իր ժամանակի համար բավարար պատասխաններով, այլև այն, որ ընկերության անդամների մեջ քչերը կարող էին այդքան մանրամասնորեն տեղյակ լինել հայ միջնադարյան գրականության հարցերին, այդքան բանիմաց ու հմուտ լինել այդ ասպարեզում:

Մանուկ Աբեղյանի առաջին և երկրորդ դասախոսությունների միջև ընկած հատվածում ընկերությունը որոշում է կազմել հայ քնարերգության ժողովածու, որի մեջ մեծ տեղ էր տրվելու հին բանաստեղծությանը: Ժողովածուն բաղկացած էր լինելու մի քանի հատորներից (Հ, 1916, 241):

Բացի հայ միջնադարյան գրականության մասին դասախոսություններ ու հանդիսություններ կազմակերպելուց՝ գրողների ընկերությունը մեր գրականության հին շրջանը ուսումնասիրելու և լուսաբանելու, ժողովրդի մեջ տարածելու նպատակով ձեռնարկում է նաև այլ գործեր՝ կապված այդ և հետագա շրջանների հայ գրողների երկերի հրատարակության, նրանց ձեռագրերի, կյանքի և ստեղծագործության հետ առնչվող յուրաքանչյուր մասունքի պահպանման հետ: Իր գործունեության հենց առաջին շրջանում հայ գրողների կովկասյան ընկերության վարչությունը, ցանկանալով կորստից փրկել հայ հին գրականության նշանավոր ստեղծագործությունները, որոշում է ձեռնարկել «ԴԻՎԱՆ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» խորագրով ժողովածուի հրատարակությունը: Այս կապակցությամբ 1913 թ. դեկտեմբերի 19-ին ընտրվում է հատուկ մասնաժողով: Նախատեսվում էր տարեկան նույն վերնագրով հրատարակել ընդհանուր մատենաշարով երկու-երեք ժողովածու՝ յուրաքանչյուրը 500-600 էջ: Ժողովածուներում պետք է տեղ գտնեին հայ գրողների նամակները, ինքնուրույն և անտիպ երկերը, նույնիսկ ոչ հայտնի մարդկանց նամակները, որոնք թեկուզ փոքր չափով կարող էին լուսաբանել գրական այս կամ այն երևույթը, որևէ գրողի կյանքն ու գործունեությունը և այլն: Յուրաքանչյուր գրքին պետք է կցված լինեին անհրաժեշտ ծանոթություննները: Որոշում են կազմել նաև «ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ

*ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ», որտեղ պետք է պահվեին հայ գրողների իրերը, ձեռագրերը, նամակները և այլն: Այդ թանգարանին ընկերության վարչությունը տալիս էր նաև «ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆ» անունը (ՀԳԿԸ Ֆ, 38): Թղթի թանկությունը նկատի ունենալով՝ Թումանյանը առաջարկում է տարեկան միայն երկու մեծ հատոր հրատարակել: Որոշվել էր հրատարակել նաև գրական-գեղարվեստական մի ամսագիր: Բայց այդպես էլ ընկերությանը չի հաջողվում լուծել հրատարակությունների հարցը: 1917 թ. մայիսի 3-ին՝ ընդհանուր ժողովից հետո, վերստին արձանագրվում է. «... մինչև օրս հնարավոր չի եղել դասախոսությունները, «Դիվան հայոց գրականությանը» հրատարակել (Հ, 1917, 93): Փաստորեն և՛ «Դիվանը» և՛ «Նյութերը» վերաբերում էին թե՛ հին և թե՛ նոր գրականությանը, այսինքն, անցյալի ողջ գրականությանը: Այդ օրգանը պետք է ունենար դուտ գրական բնույթ: Ընկերության վարչության նիստերում ընթերցվում էին այդ մատենաշարի տարբեր հատորների համար ներկայացվող նյութերը: Դրանցից մեզ հայտնի են Արսեն Բագրատունու, Ղևոնդ Ալիշանի, Արսեն Այանյանի, Խրիմյան Հայրիկի, Մաթեոս Մամուրյանի նամակները, որոնք տրամադրել էր Գ. Աղանյանը: 1916 թ. դեկտեմբերի 18-ին որոշվում է. «Նյութերի» առաջին դրքի մեջ տեղադրել Բագրատունու չորս, Ալիշանի յոթ, Այտնյանի երկու, իսկ Խրիմյանի ու Մամուրյանի բոլոր նամակները» (ՀԳԿԸ Ֆ, 45/15): Գրքի ծավալը սլիտի լիներ 320 էջ:*

*Գրողների ընկերության գործունեությունը հայ հին գրականության պատմություն ստեղծելու և գրական հասարակայնության մեջ տարածելու, պրոպագանդելու ուղղությամբ ուժեղանում է հատկապես 1916 թ. Բրյուսովի դասախոսություններից հետո և շարունակվում է մինչև 1917 թ. կեսերը:*

*1916 թ. հոկտեմբերի 21-ին է տեղի ունենում Հայկ Հովհաննիսյանի «Հայ պատմիչների պատմափիլիսոփայական աշխարհայացքը» թեմայով զեկուցումը, ուր հեղինակը նկատում է Խորենացու «Հայոց պատմության» յուրահատկություններից մի երկուսը: Նա բացատրում է պատմիչի վերաբերմունքը իր օգտագործած աղբյուրների նկատմամբ, նրա արտահայտվելու հանճարեղ ձիրքն ու մասնագիտական հմտությունը (Հ, 1916, 238): Ինչպես*

արդեն նկատեցինք, Մանուկ Աբեղյանի դասախոսությունները նույնպես 1916-1917 թվականներին են ընթերցվել:

Երբեք միջնադարը այնպիսի մեծ ուշադրության առարկա չէր դարձել, որքան ընկերության գործունեության տարիներին: Հայ իրականության մեջ դեռևս ոչ մի գրական կամ որևէ այլ միավորման, անհատ գործչի չէր հաջողվել այնպիսի մեծ հետաքրքրություն առաջացնել հայ գրականության պատմության և առհասարակ գրականությանը վերաբերող հարցերի շուրջը, որքան Թումանյանին ու նրա ղեկավարած գրողների ընկերությանը:

* * *

Հայ գրողների կովկասյան ընկերությունը մեծ չափով զբաղվեց նաև հայ նոր գրականության հարցերով: 1912 թ. դեկտեմբերի 16-ին ընկերության առաջին երեկույթի իր ելույթում Թումանյանը շեշտեց, որ գրողների ընկերությունը ղբաղվելու է ոչ միայն միջնադարյան, այլև մոտիկ անցյալի՝ նոր գրականության արշալույսին հանդես եկած գրողների կյանքով ու գործունեությամբ՝ դրանց տալով մեծ նշանակություն:

Նախորդների ժառանգության ուսումնասիրությունը, նրանց գրապատմական տեղի ու դերի որոշումը, կյանքի և ստեղծագործության պրոպագանդումը դեռևս չէր գոհացնում Թումանյանին: Գրականության, գրողի ստեղագործության յուրաքանչյուր ուսումնասիրողի, դասախոսի կարծիքը ենթարկվում էր ընդհանուր քննության: Կարևորը գրական բանավեճերում գրողի ստեղծագործության հնարավորին չափ ճիշտ գնահատումն էր. «...այո՛, – ասում էր Թումանյանը, – հարգենք հներին, ինչպես ամենքին, բայց և ճիշտ ճանաչենք» (7, 533):

Այս իմաստով՝ ճիշտ ճանաչելու և գնահատելու համար մեծ նշանակություն էին ձեռք բերում դասախոսություններից հետո տեղի ունեցող գրական ասուլիսները, ընդդիմախոսների ելույթները և այլն: Նախորդների գրական ժառանգությանը համակողմանի

ծանոթանալը, անցյալից դասեր առնելը գրողների ընկերության համար ուներ ոչ միայն «համընդհանուր տպիտուքյունը» վերայնելու նպատակ, այլև գրողների, գրասերների ու ընթերցողների մեջ գրական նուրբ ճաշակ դաստիարակելու, գրականության և գրողի հեղինակությունը բարձրացնելու և ազգային ինքնաճանաչման հասնելու նպատակ:

Իր գոյության տասնամյակի ընթացքում գրողների ընկերությունը կազմակերպեց բազմաթիվ դասախոսություններ՝ նվիրված նոր գրականության հեղինակներին, նրանց ստեղծագործություններին ու գրական-հասարակական գործունեությանը: Կարելի է հիշատակել Լեոյի դասախոսությունները Արծրունու (1913 թ. դեկտեմբերի 26) և Րաֆֆու (1913 թ. ապրիլի 18,25) մասին, Ծերենցի հիշատակին նվիրված երեկոն, Մ. Բերբերյանի զեկուցումը Միքայել Նալբանդյանի, Րաֆֆու և Արծրունու մասին (1913 թ. դեկտեմբերի 12), Միքայել Նալբանդյանին նվիրված երեկոն, Սունդուկյանի «Պեպոյի» մասին Մ. Մաուենճյանի դասախոսությունը և այլն: Նշված դասախոսություններից շատերում դրսևորվում էր ոչ միայն տվյալ գրականագետի վերաբերմունքը հիշված գրողների ստեղծագործությունների, աշխատությունների վերաբերյալ, այլև բերվում էին նորանոր փաստեր, կատարվում էին դիտական հրապարակումներ, որոնք մեր գրականության պատմությունը ուսումնասիրողների բանասիրական լուրջ ալրպտումների արդյունք էին: Այսպես, Մինաս Բերբերյանը հրապարակեց Մ. Նալբանդյանի՝ բանտից գրած նամակները, բերեց կենսագրական նոր տեղեկություններ նրա կյանքից, դատավարության ընթացքից, խալիբյաննների դեմ մղած պայքարից: Նալբանդյանի կյանքին ու ստեղծագործությանը ընկերությունը անդրադարձավ նաև գրողի մահվան 50-ամյակի կապակցությամբ: Ազատության երգչին նվիրված այդ երեկոն (1916 թ. մարտի 31) ականատեսների վկայությամբ՝ «Միք. Նալբանդյանի ապոթեոզն» էր, հայ գրականության և քաղաքակրթության «համազգային մի հոյակապ տոնը» (Հ, 1916, 74): Մի երեկոյի ընթացքում գրականագետների կոլեկտիվ ուժերով (Ս. Թորոսյան, Ա. Հարությունյան, Ա. Աբեղյան, Մ. Բերբեյան) հայ գրասեր հասարակությանը ներկայացվում է Մ. Նալբանդյանի կյան-

քի, հասարակական գործունեության, հրապարակախոսության, տնտեսագիտական, մանկավարժական հայացքների թեև ոչ ամբողջական, բայց համառոտ ու հետաքրքիր ընութագիրը: 1916 թ. մարտի 20-ին ընկերության վարչությունը որոշում է հեռագրել Նոր Նախիջևան և Գրիգոր Զալխուշյանից խնդրել Նալբանդյանի երկերից 100 օրինակ Թիֆլիսում տարածելու համար:

Առանձին-առանձին դասախոսություններ նվիրվեցին հայ պատմավիպասաններից Րաֆֆուն և Մերենցին: 1913 թ. ապրիլի 25-ին լրանում էր Րաֆֆու մահվան 25-ամյակը: Այդ առթիվ ապրիլի 18-ին, ընկերության հինգշաբթիներից մեկում Լեոն կարդաց մի դասախոսություն, որը բավականին հարուստ նյութ էր պարունակում Արևելյան Հայաստանի պատմա-քաղաքական դրության, Րաֆֆու կյանքի և գործունեության մասին: Գրականության պատմաբանը փորձում է որոշել Րաֆֆու տեղը հայ նոր գրականության շղթայի մեջ, ընութագրում է հայ գրականության վիճակը մինչև Րաֆֆու հանդես գալը: Նոր գրականության նախարաֆֆիական փուլը համարելով գերազանցորեն գաղութային գրականության շրջան՝ Լեոն պատմավիպասանի ստեղծագործությունը արժեքավորում էր նրանով, որ առաջին անգամ Րաֆֆու երկերում ուժգնորեն հնչեց հայրենիքի, հարազատ «երկրի» ձայնը: Բռնությունների դասական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, ճանապարհորդելուց հետո բռնությունների աշխարհում ծնված հեղինակի երկերում ահագնանում է պայքարն ու ատելությունը ամեն մի բռնության, ազգերի և առհասարակ մարդու ազատությունը կաշկանդող յուրաքանչյուր երևույթի հանդեպ: Րաֆֆու ժողովրդականությունը Լեոն իրավացիորեն բացատրում էր նրա տաղանդի ազգային արմատներով ու ազգային բովանդակությամբ, տաղանդ, որում դրսևորվել էր մեր ժողովրդի դարավոր հոգեբանությունը: «Նա ամբողջովին հայ հարազատություն է, այսինքն՝ հայը իր ազգային ուրույնությունը, իր հայության զգացմունքը Րաֆֆիի արվեստի մեջ է գտնում» (Հ, 1913, 84):

Ընկերությունը Րաֆֆուն նվիրված ջերմ երեկո կազմակերպեց նաև 1913 թ. ապրիլի 25-ին: Բացելով երեկույթը՝ Թումանո-

*յանը հուշեր է պատմում դրողի առաստղելական աշխատասիրության, հայ ժողովրդի՝ Րաֆֆու նկատմամբ ունեցած մեծ սիրո մասին (7, 531): Շիրվանզադեն ելույթ է ունենում Րաֆֆու մարդկային նկարագրի շուրջ: Սովորաբար այդ երեկոներում պատմվում էին հուշեր դրողների կյանքից: Դրանք կազմակերպվում էին նրանց մահվան կամ ծննդյան տարելիցների կապակցությամբ: Ուշագրավ է, որ այս երեկույթի ընթացքում տարբեր ելույթների մեջ ընդգծվում է Րաֆֆու նորարարությունը մեր գրականության մեջ՝ հատկապես եվրոպական տիպի վեպ ստեղծելու առալարեզում, նաև այն, որ խոշոր վիպասանը երիտասարդ սերունդներ է կրթել և դաստիարակել հայրենասիրության ոգով, գրական նոր շարժման սկիզբ դրել (Հ, 1913, N 90):*

*Բացի պատմավիպասաններից, ընկերության երեկույթներում քննվեցին, գնահատվեցին և լուսաբանվեցին հայ նոր գրականության առաջին շրջանում հանդես եկած դրամատուրգների և բանաստեղծների գործերը: Սունդուկյանի և Պատկանյանի մասին զեկուցումները կարդաց Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, ժամանակին հայտնի քննադատ, հրապարակախոս, ընկերության ամենաակտիվ անդամներից մեկը՝ Մամբրե Մատենճյանը: Մեծ չափով ուշադրության առնվեց հատկապես Ռ. Պատկանյանի պոեզիան: Մատենճյանը սովորաբար իր խոսքը սկսում էր դրողի կենսագրությունից, կյանքի պայմանների և անհատական խառնվածքի համառոտ պատկերը տալուց: Քննելով Պատկանյանի բանաստեղծությունների բնորոշ գծերը՝ կապված դրողի անհատական խառնվածքի ու նկարագրի հետ, Մատենճյանը դրանք բխեցնում էր ժամանակի պատմական հանգամանքներից և առաջադրած գեղագիտական պահանջներից: Գրական այդ ասուլիսներում ծագեց գրականության և դրողի ազգային լինելու չափանիշների խնդիրը, որն այնուհետև դարձավ ընկերության երեկույթների մշտահղով թեմաներից մեկը: Ա. Ղազարյանը գտնում էր, որ Պատկանյանը չի կարող ազգային բանաստեղծ համարվել, քանի որ նա միայն ազգի նվիրական ձգտումներն է արտահայտել, իսկ «ցեղի ամբողջ ոգին» արտահայտել չի կարողացել: Դ. Դեմիրճյանը, տարբերելով ազգային և ազգայնական բանաստեղծներին, Պատկանյանին*

դասում է վերջիններիս շարքը և եզրակացնում է, որ ազգային երգիչ մենք դեռ չունենք և չենք կարող ունենալ (Հ, 1913, N 110):

Թումանյանը, իր երկերում գեղարվեստորեն մարմնավորելով հարազատ ժողովրդի ոգին, նրա ազգային բնավորությունն ու մտածողությունը, միաժամանակ ընկերության երեկույթների իր ելույթներում բանավոր ձևակերպեց նախահեղափոխական շրջանի հայ գրականության կարևոր առանձնահատկություններից մեկը, որն էական նշանակություն ունեցավ հայ գրականության և քննադատական մտքի զարգացման համար: Նա, Մատենադարանի դասախոսության առթիվ գրական զրույցում ցույց տալով Ռ. Պատկանյանի լեզվական սխալները և անտեղյակությունը հայ կյանքի շատ կողմերից, ասում է. «Հայ գրականությունը կարելի է երկուսի բաժանել՝ բնաշխարհիկ և տարաշխարհիկ. առաջինն այն է, որ ծնվում և սնվում է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում: Երկրորդն այն է, որ կտրված հայրենիքից զարգանում է օտար երկնքի տակ՝ հայ գաղութներում. նկատվել է, որ այս վերջինները հայրենասիրության մեջ մեծ կորով են երևան բերում. օրինակ՝ Ալիշանը, ինչպես և Գ. Քաթիպան, բայց հենց որ նրանք վերացական մտքերից դիմում են հայ կյանքի կոնկրետ ձևերին, անմիջապես ցույց են տալիս իրենց անծանոթությունն այդ կյանքին» (7, 532):

Բանաստեղծի այս հայացքը արտահայտվել էր ավելի վաղ՝ 1902 թ. Յուրի Վեսելովսկուն ուղղած նամակում, ուր ընդգծվում էր, որ ճակատագրի քմահաճույքով մեր բանաստեղծները ապրել ու երգել են «խորթ ու հեռու մեր աշխարհից» և լինելով օտար աշխարհում՝ չեն նկարագրել «ո՛չ մեր բնությունը, ո՛չ մեր ժողովուրդը» (9, 380): Տարիներ հետո, 1907 թ., վերստին անդրադառնալով այդ հարցին՝ «Կյանք և գրականություն» հոդվածում Թումանյանը համոզված չեշտով գրում է, որ օտար երկրում բուսած ծաղիկը չի կարող հարազատ երկրի չունչն ու փարթամությունն ունենալ, որ նա, ով իր երկիրը չի տեսել, չի կարող այդ երկրի իսկական պատկերը տալ, հետևաբար և լինել իսկական ազգային (6, 532): Թումանյանը, հստակ պատկերացնելով ազգայինի ու ժողովրդայինի սահմանները, քաջ գիտակցում էր իր ազգային լինելը, բայց և չէր մեղադրում նախորդներին ազգային չլինելու

մեջ: Նա դնում էր նաև ազգայինի և համամարդկայինի անքակտելի միասնության, միաժամանակ նախ ազգային, ապա համամարդկային լինելու խնդիրը: Նրա այս բնույթի հղումները մեծ նշանակություն ունեցան: Նաև Թումանյանի հեղինակավոր, դիտակամորեն համոզիչ խոսքի շնորհիվ դարասկզբի քննադատական միտքը ճիշտ պատասխան տվեց ազգայինի ու ժողովրդայինի հարցին:

Ընկերության տարբեր գրական աուդիտորիաներում ու բանավեճերում, ընդգծելով ազգայինի զարգացման դերը արվեստում, ոչ ոք չէր առաջարկում կղզիացում և համաշխարհային մշակույթի ավանդների անտեսում: Ա. Շահաթունյանը, պնդելով, որ շատ շուտով ազգային, հայկական մթնոլորտի ստեղծումը մշակութային աստիճարեղում իրականություն կդառնա, ասում էր. «ազգային կուլտուրա, ազգային գրականություն պետք է հասկանալ միջազգային մտքով» (Հ, 1914, 64): Նույն կարծիքին էր նաև Ա. Ղազարյանը: Ն. Աղբալյանը ևս, համոզված, որ գրականությունը ազգի ոգին է և դերազանցորեն կախված է նրա վիճակից, ասում է. «Ճիշտ է, բնականաբար, մեր գրականությունը սկզբում պիտի լինի ազգային, ապա միջազգային դասնալորում պիտի ստանա»[3]: Ազգային գրականություն ասելով՝ նա հասկանում էր ազգային և հասարակական կյանքի «հայի պատկերացումը, հայի աչքով հայի սրտում»[4]: Ազգայինի, ժողովրդայինի, համամարդկայինի մասին ընկերության մեջ համախմբված գրականագետների ընդհանուր կարծիքով մերժվեց Մատենճյանի ղրուլքը Ռ. Պատկանյանի ազ-գային բանաստեղծության հիմնադիր լինելու մասին:

Ընկերության գրական ղրուլցներում ղգալի տեղ հատկացվեց նաև հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանին: Առանձին դասախոսություն կարդաց Լեոն (1913 թ. դեկտեմբերի 5) և հրապարակեց նոր փաստաթղթեր Աբովյանի կյանքի մասին:

Ազգային խոշոր քննարկում պետրոս Դուրյանին նվիրված դասախոսության հեղինակը Մ. Մատենճյանն էր: 1914 թ. սպտեմբերի 17-ի նրա ելույթը Թումանյանը դնահատեց իբրև մեծարանքի ոգևորված ճառ, մի ձոն՝ նվիրված տաղանդավոր բանաստեղծի հիշատակին: Այսօր միամիտ ու պարզունակ է հնչում Դուրյանի կյանքի ու մահվան փիլիսոփայական թեմայի շուրջ գրած բանաստեղծությունների մատենճյանական վերլուծությունը, որը մեծ

բանաստեղծի համամարդկային տառապանքը, անսահման մեծ հումանիզմն ու կենսասիրությունը հանգեցնում է զուտ նեղ անձնական զգացմունքների արտահայտության:

Ընկերության գրական ասուլիսների ամենաակտիվ մասնակիցներից էր Դ. Դեմիրճյանը: Նա գրեթե բոլոր գրական երեկոներում արտահայտում էր իր կարծիքը տվյալ գրողի, նրա ստեղծագործության, գրական երևույթի կամ չոշափվող որևէ այլ հարցի շուրջ: Մեր կարծիքով հենց այս շրջանում , նաև ընկերության երեկույթներում արտասանած նրա բանավոր ելույթներում զարգացման նոր աստիճանի հասան Դեմիրճյան-քննադատի, գրականության և արվեստի տեսաբանի՝ դեռևս «Վերնատան» շրջանում ձևավորված հայացքները: Դուրյանի մասին խոսելիս Դեմիրճյանը եղրակացնում է, որ նա շատ ավելի նկարիչ-բանաստեղծ է, որ նրա պոետիկական պատկերները շատ ավելի տեսանելի են, քան երաժշտական, և գլխավորապես անկեղծությունն է Դուրյանին մեզ սիրելի դարձնում: Նա հայ նոր գրականության առաջին հանճարեղ քնարերգուի մեծությունը տեսնում էր հոգուց բխող արվեստի մեջ և արտակարգ բարձր էր գնահատում Դուրյանի բանաստեղծական տեխնիկան:

Ընկերությունը նախաձեռնել էր կազմակերպել նաև հայ նոր գրականության այլ ներկայացուցիչների (Արշ. Ագապյանի, Հ. Ճուղուրյանի, Ստ. Տեր-Ավետիքյանի և Արշ. Շահնազարյանի) մասին դասախոսություններ, որոնք, սակայն, ինչ-ինչ պատճառներով տեղի չունեցան:

Այսպես, հայ նոր գրականության առաջին շրջանի գրեթե բոլոր նշանավոր գրողները իրենց կյանքով ու գործունեությամբ, գրական ժառանգությամբ ընկերության գործունեության հենց առաջին տարիներին դարձան քննարկման նյութ, բազմաթիվ վեճերի առարկա: Հայ գրականության պատմության համար նույնքան հետաքրքրական են նաև այն պարբերացումները, մեր ողջ գրականությունն ու գրողներին տարբեր հոսանքների ու խմբերի դասդասումները, որոնք կատարվեցին ընկերության երեկույթներում: Այսպես, Ն. Աղբալյանը Ավ. Իսահակյանին նվիրված երեկոյում մեր գրականության նոր շրջանի գրողներին բաժանեց հիմ-

նականում երկու հոսանքի: Առաջին խմբի ներկայացուցիչներ հռչակեց Ստ. Նազարյանին, Գ. Արծրունուն, Րաֆֆուն և այլոց, իսկ երկրորդ շղթայում դասեց Հովհ. Հովհաննիսյանին, Թումանյանին, Իսահակյանին: Այս բաժանման հիմքում քննադատը դնում էր ժողովրդի, բանաբվեստի հետ գրողի ստեղծագործության աղերսները: «Հայ գրականության ընդհանուր տեսություն» թեմայով իր մեկ այլ զեկուցման մեջ Աղբալյանը մեր գրականության պատմությունը բաժանում է հիմնականում երկու շրջանի՝ 5-18-րդ դարեր և 18-20-րդ դարի սկիզբ: Սակայն քննադատը, անշուշտ, սխալվում էր կարծելով, որ առաջին շրջանում մեր գրականությունը միայն անկում է ապրել, իսկ երկրորդ շրջանում՝ բարձրացել: Գրականագետը սլարբերացումը կատարելիս հավանաբար հաշվի չէր առել արվեստի անհամաչափ զարգացման օրինքը, նրա որոշ առանձնահատկություններ: Դրա համար էլ չնկատեց այն էական տարբերությունները, որ կան հայ գրականության առաջին շրջանի երկու փուլերի մեջ (5-13-րդ և 13-18-րդ դարեր)՝ հիմք ընդունելով միայն Հայաստանի պատմա-քաղաքական տարբեր իրավիճակները: Աղբալյանի դնահատականները ավելի ճիշտ ու դիպուկ էին, երբ վերաբերում էին հայ նոր և ժամանակակից գրականության հարցերին: Բնութագրելով երկրորդ շրջանի գրականության յուրահատկությունները՝ նա անդրադառնում է նաև գրական ընթացիկ կյանքին և հայտարարում է, որ սկսված գրական շարժման հիմնական նպատակը ազգային գրականության ստեղծումն է, իսկ շարժման զեկավարներն են Թումանյանը, Իսահակյանը և Դեմիրճյանը: Հայ գրականության հաջորդ սլարբերացումը Աղբալյանը կատարում է ընկերության մեկ այլ երեկոյի ընթացքում, «Հայ գրականության ասլագան» թեմայով դասախոսության մեջ (1914 թ. մարտի 20): Մեր նոր գրականության պատմության մեջ մատնանշում է երեք աստիճան, որոնցից առաջինը նա անվանում է անցյալի փառաբանության շրջան՝ նկատի ունենալով հայրենիքի անցյալի կարոտը երգող Մխիթարյաններին: Երկրորդ շրջանը Աղբալյանը կոչեց հայրենասիրական՝ նկատի ունենալով Խ. Աբովյանի, Րաֆֆու, Ռ. Պատկանյանի, Պ. Պռոշյանի և Ղ. Աղայանի ստեղծագործության բովանդակությունը:

Սկսած երրորդ, նոր շրջանի, հայ նոր գրականության վերջին փուլի պլխավոր ներկայացուցիչը իրավամբ համարելով Թումանյանին՝ քննադատը համոզված էր, որ հայ գրականությունը սկսել է ազգայնանալ և գնում է միայն այդ ճանապարհով (Հ, 1914, N 64):

Հայ հին ու նոր գրականության մասին կազմակերպվող դեկուցումները երեկույթների ընթացքում ստիպում էին մեր գրողներին ու քննադատներին վերակենդանացնել իրենց հիշողության մեջ տվյալ գրողին ու նրա ստեղծագործությունը, խորհել բազմաթիվ կոնկրետ ու ընդհանուր գրական հարցերի շուրջ, բարձրաձայն և մտովի եզրակացություններ անել, զարգացնել իրենց գրական ճաշակը, լայնացնել հետաքրքրությունների շրջանակը: Հրապարակային այդ դասախոսությունները կարելի է գնահատել նաև իբրև սեփական մշակույթը ճանաչելու, ազգային գիտակցության հասնելու յուրօրինակ ճանապարհ. «Ճանաչենք մեզ և ուժեղ լինենք», – ասում էր Դեմիրճյանը» (Հ, 1914, 119):

Համաշխարհային գրականության զարգացումը հրամայաբար պահանջում է բազմաճև ավանդույթների աշխուժացում: Գրողների կովկասյան ընկերությունը մեզանում առաջին գրական միավորումն էր, որ աշխատեց ամեն կերպ կատարել բոլոր ժամանակների համար հրատապ և անհրաժեշտ այդ պահանջը: Ընկերության գրական ասուլիսների շնորհիվ հրապարակայնորեն մեծ հետաքրքրություն առաջացավ նախընթաց ողջ գրականության բոլոր նշանավոր գործիչների նկատմամբ: Հայ գրական հասարակայնության լայն շրջանների, մտավորականության զգալի մասի, օտարազգի գրասերների, գրողների ու գրականագետների համար առաջին անգամ հայտնագործվեցին հայ միջնադարի մի շարք տաղանդավոր գրողներ ու գեղարվեստական նշանավոր գործեր: Շատ բան պարզվեց նաև նոր գրականության արշալույսին հանդես եկած գրողների կյանքից ու գործունեությունից, գրական և հրապարակախոսական ժառանգությունից: Եվ եթե այսօր վիճաբանի հետաքրքրասիրություն է առաջացել մեզանից մի ամբողջ հազարամյակով բաժանված Գրիգոր Նարեկացու բանաստեղծական արվեստի, մեր միջնադարյան առակագիրների՝ Դոշի ու Այգեկցու, տաղերգուների՝ Քուչակի, Կոստանդին Երզնկացու և հատկա-

*պես Սայաթ-Նովայի ստեղծագործությունների նկատմամբ, ապա դրանում իր մասն ունի Հայ գրողների կովկասյան ընկերությունը: Նրա ջանքերով դրվեց մի մեծ գործի սկիզբը, որ շարունակվում էր հետագա տասնամյակներում և դնալով ավելի մեծ նշանակություն էր ձեռք բերում հայ հին ու նոր, դասական ողջ գրականությունը համաշխարհային ասպարեզում ներ-կայացնելու, լուսաբանելու համար:*

## Ժամանակի գրական ընթացքը

*Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը հայ քննադատության, գրականագիտության և գրականության մերժեցման մի ուսանելի օրինակ է: Գրական ասուլիսներում գրողներն ու քննադատները միացյալ ուժերով փորձում էին խորամուխ լինել արդի գրական կյանքի մեջ, համընդհանուր քննարկման առարկա դարձնել ժամանակակից գրողների գեղարվեստական երկերը, ժամանակի գրականության առանձնահատկությունները և օրինաչափությունները: Այս իմաստով հիշատակության արժանի են ընկերության կազմակերպած դասախոսությունները Թումանյանի, Իսահակյանի, Շանթի, Շիրվանզադեի, Զոհրապի, Վարուժանի, Սիամանթոյի, Տերյանի, Զոպանյանի և այլոց մասին: Գրողների ընկերությունը փորձում էր իրագործել ուժեղ ու ամուր գիտական քննադատության ստեղծման պահանջը: Դարասկզբի դրաքննադատությունը, լինելով գրական ընթացքի յուրօրինակ գործողը, ձգտում էր ընկերության երեկույթներում, հրապարակային դասախոսություններով, նաև բանավոր խոսքով ուղղություն տալ գրականության ու ժամանակակից գրողին: Մասնագետ քննադատների և իբրև քննադատ հանդես եկող գրողների նման բնույթի զեկուցումները որոշակի դեր ունեին ժամանակի գրողների, հատկապես սկսնակների ստեղծագործական հնարավորությունների բացահայտման գործում: Ընկերության ամբիոնից լսվում էր գրական որոշակի ճաշակ ունեցող, համակողմանի զար-*

գացած, գրականության պատմության և գեղարվեստի օրենքներին գիտակ ընթերցողի կարծիքը: Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթները լրացուցիչ վկայությունն են այն բանի, որ դարասկզբին մեր քննադատությունը ինքնորոշվեց որպես առանձին գիտություն, հասարակական գիտակցության ձև և ձեռք բերեց որոշակի պրոֆեսիոնալիզմ: Այդ ինքնորոշումը պայմանավորված էր նաև նույն շրջանի գրականության զարգացման բարձր մակարդակով: Խոսելով ներկայի մասին՝ մեր քննադատները դնում էին նաև ազգային գրականության զարգացման հեռանկարների հարցը: Այս իմաստով նույնպես հետաքրքիր նյութ են ծառայում վերը նշված գրական երեկոների մասին պահպանված հաղորդումները:

Հ. Հովհաննիսյանին, Ալ. Ծատուրյանին և ժամանակակից այլ գրողներին նվիրված դասախոսությունների շարքով Թումանյանը ձգտում էր անմիջական կապ ստեղծել ինչպես իրենց՝ գրողների, այնպես էլ ընթերցողի և գրողի միջև, ու դրանով իսկ նպաստել ընթերցողի, այսինքն՝ ժողովրդի գրական ճաշակի և կուլտուրական մակարդակի բարձրացմանը: Նրա ջանքերի շնորհիվ ընկերության երեկույթները մեծ չափով նպաստեցին գրականության պրոպագանդմանը, գրավեցին ավելի լայն ընթերցող շրջաններ, ստեղծեցին ամուր կապ գրողի և ընթերցողի միջև: Իր «Հայ գիրքը ընթերցողներ չէ գտնում» հոդվածում Զալխուչյանը դժգոհում է, որ հայ ընթերցողները քիչ են, և շատ հեղինակներ մնում են անհայտ: Ի պատասխան նրա՝ Արտաշես Աբեղյանը գրում է. «Համեմատեցեք դուք ներկան և թեկուզ մոտիկ անցյալը ու կգտնեք մեծ տարբերություն — հօգուտ ներկայի» (Հ, 1916, N 49): Աբեղյանը, անշուշտ, իրավացի էր՝ պնդելով, որ այդ գործում փոքր չէր Հայ գրողների ընկերության դերը: Մ. Մատենճյանի հավաստիացումով գլխավորն այն էր, որ «այդ երեկույթների շնորհիվ աստիճանաբար հաստատվում էր կենդանի կապ գրականության և հասարակության միջև» (Հ, 1916, 276): Այցելելով գրական ասուլիսներին՝ գրողները անմիջականորեն մասնակցում էին գրական կյանքին, լսում էին իրենց գրչակից ընկերների, մասնագետ քննադատների կարծիքը, հաճախ էին խրախուսվում, ոգևորվում, երբեմն

էլ՝ զգաստանում, մտահոգվում, ավելի լուրջ ու խստապահանջ մոտենում իրենց իսկ ստեղծագործություններին: Ընկերության բոլոր երեկույթների գրական բանավեճերն ավելի սուր բնույթ էին ստանում, ավելի կրքոտ էին դառնում, հատկապես, երբ խոսքը վերաբերում էր ժամանակակից գրողներին, արդի գրականության զանազան հարցերին: Եվ դա բնական է, քանի որ հայտնի ճշմարտություն է, որ ի սկզբանե քննադատի և գրողի միջև եղել է ներհակություն: Մեր օրերում չատ քննադատներ, դրականագետներ իրավացիորեն դժգոհում են հայ գրական կյանքում բանավեճի օտարումից և գրեթե բացակայությունից, մինչդեռ Թումանյանի նախագահած ընկերությունը հաջողությամբ էր կազմակերպում այդ բանավեճերը և հենց դրանով չարժման մեջ դնում ժամանակի քննադատական միտքը.

Հայ գրողների կովկասյան ընկերության դործունեությունը մի վառ օրինակ է դրական բանավեճերի չափազանց օգտակարության թե՛ քննադատական միտքը զարգացնելու, և թե՛ դրական-գեղարվեստական հարցերը լուսաբանելու դործում: Ընկերությունը, իրոք, դարձել էր դրական չարժման յուրօրինակ կենտրոնն ու կրողը, դրական-հասարակական կյանքի առանձնահատուկ արտահայտությունը: Պետք է նկատել, սակայն, որ այդ դրական բանավեճերը ոչ միշտ էին կրում օբյեկտիվ դիտական բնույթ, ոչ միշտ էին ընդդիմախոսները, դրողները, հերքելով դասախոսի կարծիքը, փոխարինում այն նոր տեսակետով: Երբեմն էլ քննադատությունը առհասարակ չէր ընդունվում, և դրական վեճը դուրս էր գալիս ընկերության դահլիճների սրահներից, ծավալվում մամուլում, դառնում մի շարք հոդվածների ստեղծման առիթ, որոնք այսօր հարստացնում են տվյալ գրողի քննադատական, հրապարակախոսական ժառանգությունը, որոշ չափով մեծացնում են XX դարասկզբի դրական մթնոլորտի, դրական առանձին կյանքի մասին ունեցած մեր պատկերացումները: Այս առումով նշանակալից է Մ. Մաանենճյանի դասախոսությունը Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի մասին (1914 թ., ապրիլի 10): Հենց սկզբից ասենք, որ զեկուցումը բավականին թույլ էր՝ կառուցված դիտականորեն միանգամայն անթույլատրելի համեմատություններով

ու զուգահեռներով: Նրա հայտարարությամբ «Պատվի համարը» գտնվում է Սունդուկյանի «Պեպոյի» խիստ ազդեցության տակ: Քննադատը մեղադրում է Շիրվանզադեին թատերական էֆեկտներ առաջացնելու ձգտման մեջ, դրամայի կոնֆլիկտը համարում է չինծու. Բագրատի և Օթարյանի կերպարները՝ խիստ անհաջող: Երկի թերությունները նշելիս Մատենճյանը ասում է, որ Շիրվանզադեն տուրք է տալիս ռոմանտիզմի սկզբունքներին՝ հերոսներին խստորեն համակրելի ու հակակրելի խմբերի բաժանելով, և իր ամբողջության մեջ պիեսը անվանում է թույլ դրամա: Նա, անշուշտ, իրավացի չէր: Թեմայի ընդհանրությունը, տիպերի և սյուժետային որոշ նմանություններ դեռևս բավարար հիմք չէին սխալ եզրակացություններ համար, որոնք կատարում է գրականագետը: Շիրվանզադեն իր այս ստեղծագործության մեջ ևս մնում էր ինքնուրույն և հավատարիմ կյանքի տրամաբանությանն ու ռեալիզմի սկզբունքներին: Ի դեպ, հենց երեկույթի ընթացքում, դասախոսության շուրջը ծավալված գրական զրույցի մասնակիցները չբաժանեցին Մատենճյանի կարծիքը «Պատվի համարը» իր ամբողջության մեջ թույլ դրամա համարելու մասին և մեկ առ մեկ քննադատեցին բանախոսի մի շարք տեսակետները: Ն. Աղբալյանի կարծիքով, օրինակ, Մատենճյանը սխալվում է՝ Շիրվանզադեի պիեսի թերությունների պատճառը տեսնելով արդյունաբերական կյանքի անորոշության մեջ. «Եթե կյանքը անորոշ է, հեղինակը այդ կյանքն էլ դուրս կբերի անորոշ, այնպես որ կարևորը ոչ թե բովանդակությունն է, այլ արվեստը», — ասում է Աղբալյանը՝ կարևորելով ոչ թե նյութը, այլ նրա մշակման եղանակը: (Մ, 1914, 91): Արշակ Ղազարյանը առարկում է Մատենճյանի բոլոր դրույթներին ու տեսակետներին: Ա. Խոնդկարյանը քննադատում է դասախոսին մեթոդաբանական հարցադրումների տեսանկյունից: Նրա կարծիքով սխալ մեթոդով է առաջնորդվել բանախոսը՝ երկի մեջ փնտրելով միմիայն կասկածելի արժեք ունեցող և փոփոխական բնույթ կրող ինչ-որ օրենքների հաջող կամ անհաջող գործադրությունը և անտեսել է դեղարվեստական գործի հասարակական նշանակությունը: Միայն Արշակ Ջամալյանն էր, որ ինչ-ինչ հարցերում համաձայնեց Մատենճյանի հետ և միացավ այն կարծիքին,

որ դրամայի մեջ ամեն մի դործողություն պետք է պատճառաբանված լինի, և որ պիեսը, իրոք, հերոսների հոդեբանական պատճառաբանվածության առումով ունի որոշ թերություններ: Քննադատը կասկածի տակ առավ Մարգարիտի տիպի հավաստիությունը և այդ միջավայրում նրա հանդես գալու հնարավորությունը: Ընկերության ամբիոնից դրական բանավեճը դուրս եկավ և տեղափոխվեց մամուլի էջեր: «Մշակում» քննադատական խոսքով հանդես եկավ Ս. Ր. ստորագրությամբ մեկը (Մ, 1914, 76): Սակայն ամենից մեծ զայրույթը արտահայտեց ինքը՝ հեղինակը: Նա դրեց «Ահա ովքեր են հայ քննադատները» հոդվածը, ուր դասախոսության ողջ բովանդակությունը վերագրեց իր և Մատենճյանի միջև եղած անձնական հարաբերություններին (Մ, 1914, 79): Ի պատասխան այս հոդվածի՝ Մատենճյանը նամակ է դրում «Մշակի» խմբագրությանը (1914 թ. ապրիլի 19), որով աչխատում է հերքել իր սուբյեկտիվության մասին դրված Շիրվանզադեի մեղադրանքները: Սակայն թերթի միևնույն համարում լույս է տեսնում նաև դարձյալ «Մշակի» խմբագրությանն ուղղված ապրիլի 18-ի Շիրվանզադեի պատասխանը, ուր հեղինակը դրում էր. «Ինձ քննադատել են, քննադատում են և դեռ շատ պիտի քննադատեն, և ես երբեք ոչ մի քննադատի հետ, եթե նա անձնական թշնամությամբ չէ ղեկավարվել, բանակռիվ չեմ մղել» (Մ, 1914, 82): Փակագծերում ասենք նաև, որ ժամանակին Շիրվանզադեն բանավեճի մեջ էր մտել Գր. Արծրունու հետ «Իշխանուհին» պիեսի համար, հոդված էր գրել նրա դեմ, իսկ հետո իսկապես անհաջող պիեսը ոչնչացրել: Ի պաշտպանություն Մատենճյանի հանդես է գալիս «Հորիզոնը». «Հայ քննադատները եթե համարձակվում են դուրս գալ սովորական դովեստի սահմաններից և մի քանի բացասական կարծիքներ արտահայտել այս կամ այն երկի մասին, պետք է համոզված լինեն, որ շարժվելու է հեղինակի մաղձը: Իսկ եթե այդ քննադատը հին անուն չէ, այլ երիտասարդներից, այն ժամանակ էլ պրծավ... երբ հեղինակը դիտողություններ է անում ոչ թե իր քննադատի ասածների մասին, այլ նրա անձնավորության մասին, այդ ուղղակի անտանելի է» (Հ, 1914, 80): Եթե մի պահ վերանանք հոդվածի ստեղծման առիթից, վիճող կողմերի՝ մեր քննա-

դատության և գրականության պատմության մեջ ունեցած դերից, անունից ու հեղինակությունից, ապա, ինչ խոսք, վերոհիշյալ հոդվածի հեղինակը միանգամայն իրավացի է և ճևակերպում է բոլոր ժամանակների համար այնքան բնորոշ գրող-քննադատ հակադրության և անհաշտ ներհակության մասին հայտնի ճշմարտությունը, իհարկե, մի փոքր ավելի խիստ ներկայացնելով գույները: Դժվար է ասել՝ արդյոք Շիրվանզադեն իրավացի էր՝ Մատենճյանին մեղադրելով սուբյեկտիվիզմի և անձնական թշնամության մեջ, սակայն, անշուշտ, դասախոսությունը թույլ էր՝ կառուցված սխալ դատողությունների և դրույթների վրա, և վկայությունն էր քննադատի աշխարհայացքի սահմանափակության: Վեճը, սակայն, վերը շարադրվածով չավարտվեց (Մ, 1914, 91):

Նկատենք նաև, որ ոչ միայն Մատենճյանը, այլև ժամանակի շատ քննադատներ ավելի շատ սխալվում էին, երբ խոսքը վերաբերում էր ժամանակակից գրողներին ու գրականության հարցերին: Վ. Ահարոնյանը ընկերության երեկույթներից մեկում (1913 թ. նոյեմբերի 28) սկզբունքորեն սխալ դիտողություններ արեց Վ. Տերյանի պոեզիայի մասին և, ճիշտ չընկալելով նրա քնարերգության առանձնահատկությունները, անհիմն մեղադրանքներ ներկայացրեց բանաստեղծին, սակայն այս անգամ վեճը գրական կյանքում սուր ընթացք չստացավ և մեծ աղմուկ չբարձրացավ: Ահարոնյանը Տերյանին համարեց ժամանակակից երիտասարդ գրողներից ամենահետաքրքիր բանաստեղծը, մոդեռնիստ գրող, որը ժխտում է կյանքը: Քնարերգուի երկերը դասախոսը բաժանում է երեք թեմատիկ խմբերի ու մոտիվների՝ իրիկնաժամ, գիշեր և առավոտ. «Իրիկնաժամի հրապույրներով հմայված բանաստեղծը անցել է գիշերի տառապանքներով իր ոգու ազատագրման առավոտը թևակոխելու համար» (Ընդգծումը հեղինակինն է. Ս. Հ., Հ, 1913, 270): Բայց քննադատը որևէ լուրջ գեղարվեստական հիմք չի տեսնում Տերյանի շարքերի բաժանման մեջ: Նա հիմնականում մնում է վերացական դատողությունների սահմաններում: Թեև զեկուցման մեջ գրականագետը նկատում է, որ Տերյանը փախչում է լույսից և փնտրում է մթնշաղ ու գիշեր, բայց չի կարողանում բացատրել, թե ինչու է բանաստեղծը փարվում գիշերին ու ցնորքին, ինչու է

մխիթարությունն փնտրում սիրո և բանաստեղծական հեքիաթային իրականության մեջ: Իսկ նրա փորձում է գտնել այդ ինչուն, ապա սխալվում է և այն էլ՝ կոպիտ: «Տերյանը իրականությունից փախչելու համար, — գրում է նա, — փորձում է մուտացում գտնել նաև սեռային էքստազի մեջ, որը երկար չի գրավում նրան, չի հագեցնում ցնորքների ծարավի նրա հոգին» (Հ, 1913, 270): Ուրիշ շատ անհարկի դիտողություններ արեց Ահարոնյանը, բայց դրանցից առավել անհեթեթը այն միտքն էր, թե ինչպես Տերյանը, այնպես էլ ժամանակակից բոլոր գրողները խզել են իրենց կապը հայ գրականության բոլոր ավանդների հետ, և որ Տերյանի ստեղծագործության ու գրական զարգացման արմատները պետք է փնտրել միայն ու միայն օտար միջավայրի և օտար գրականությունների մեջ: Նա հայտարարեց. «Բացի հայերեն լեզվից, որով գրում է Տերյանը, ուրիշ ոչնչով չի մատնվում նրա հայ լինելը» (Հ, 1913, 270):

Բանաստեղծի քնարերգությունը զերծ համարելով հայ իրականությանը բնորոշ, հարազատ առանձնահատկություններից՝ Ահարոնյանը ճիշտ չի կարողանում բացատրել նաև Տերյանի կարոտը հայրենիքի նկատմամբ և բացահայտել նրա հայրենասիրական ինքնատիպ պոեզիայի բովանդակությունը՝ չնայած զեկուցման մեջ արված շատ դիվեստներին՝ «գեղարվեստական նուրբ ճաշակ», «ձևերի մեջ վարպետ է և իբրև այդպիսին նա չունի իրեն հավասարը մեր քնարերգության մեջ» (Հ, 1913, 270) և այլն, և այլն: Ահարոնյանի ելույթը մնում էր ցածր մակարդակի վրա, դիտականորեն սխալ էր ու անհամոզիչ և շատ հեռու էր Տերյանի պոեզիայի ճիշտ և խորազնին վերլուծությունը լինելուց: Բայց քանի որ դասախոսությունը կարդացվում էր մի ընկերության մեջ, որին նախագահում էր Թումանյանը, և որի անդամներն էին ժամանակի գրեթե բոլոր տաղանդավոր հայ գրողներն ու քննադատները, ապա նման բնույթի ելույթները չէին կարող ընդունվել իբրև ճշմարտություն քննվող նյութի մասին, չքննադատվել, մանավանդ, որ խոսքը վերաբերում էր ժամանակակից գրողին ու գրականությանը: Նույն երեկոյի ընթացքում նախ Թումանյանն է հերքում Տերյանի «անհարազատության» մասին դասախոսի տեսակետը՝ ասելով. «...թախիծն ու երազը խորթ չեն հայի հոգուն,

և մենք չատ երազկոտ ժողովուրդ ենք: ... Տերյանի լավ երգերն առեք և բանաստեղծական գոհարներ կտեսնեք» (7, 734-735): Թումանյանի պես մեծ հեղինակության, հռչակավոր գրողի և քննադատի այս խոսքերը, անշուշտ, քաջալերող ու խրախուսիչ պետք է լինեին երիտասարդ Տերյանի համար: Դեմիրճյանը ևս պնդում է, որ Տերյանը գերազանցապես հայրենի բանաստեղծ է: Աղբալյանը չի համաձայնում Տերյանի պոեզիայում Ահարոնյանի կատարած բաժանումների հետ, իսկ Հ. Սոլովյանը, թեև իրավացի էր՝ պնդելով, որ բանաստեղծի երգերը համապատասխան են ժամանակի տրամադրություններին, բայց խորապես սխալվում էր, կարծելով, որ Տերյանը միայն տխրության և «վայնասունի» երգիչ է, և նա «մեր առաջ բաց չի անում հորիզոններ» (Հ, 1913, 270):

Հետագա տարիներին ևս Հայ գրողների կովկասյան ընկերությունը բազմիցս անդրադարձավ Տերյանի պոեզիային: Վերջինս ստացավ բազմաթիվ միմյանցից տարբեր բնորոշումներ: Ն. Աղբալյանը «Հայ գրականության ապագան» դասախոսության մեջ (1920, հունիսի 25) Տերյանին անվանում է հիասթափի պատանի, որը դառնում է սիրասթափ երիտասարդ, «Տերյանը ընկած ու հեզ հոգի է, – ասում է քննադատը, – նա ներկայացնում է մարդկային հոգիների որոշ տեսակ, որով նա ոչ թե անարժեք է, այլ այլարժեք»[5]:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը, լինելով հայ ընդհանուր գրական կյանքի արտահայտիչը, անշուշտ, չէր կարող չանդրադառնալ ժամանակակից գրեթե բոլոր նշանավոր գրողներին, այդ թվում նաև Թիֆլիսից մեծ հեռավորության վրա գտնվող Արևմտյան Հայաստանում ստեղծագործող բանաստեղծներին ու արձակագիրներին: Նկատի ունենալով Գ. Իփեկյանի «Թյուրքահայ գրականությունը» թեմայով բանախոսությունը, (1913, նոյեմբերի 7) որին ներկա էր նաև Սիամանթոն, Թումանյանը ասում է. «Առաջին անգամն է, որ տաճկահայ գրականության մասին դասախոսություն է լինում մեզանում: Այժմ մեր առջև կբացվի ազգային հարստության մի նոր գանձարան, մեր դիմաց կհառնեն մեզ ծանոթ, բայց ավելի շատ՝ անծանոթ տաղանդավոր գրողների դեմքեր, և մենք ավելի հարուստ, ավելի ուժեղ ու ավելի հպարտ կզգանք մեզ» (7,108)[6]:

*Արևմտահայ գրականությանը նվիրված շարքի առաջին դասախոսություններից էր Գր. Զոհրապի մասին Մ. Մատենճյանի զեկուցումը (1913 թ. նոյեմբերի 21): Նա, պարզորոշ նկատելով, որ գրողի նովելների մեծ մասի նյութը սերն է, մակերեսորեն է մեկնաբանում Զոհրապի սիրո փիլիսոփայությունը, չի խորանում արձակագրի անկրկնելի հմայք ունեցող ստեղծագործության շատ գաղտնիքների մեջ, որոնք առայսօր կարոտ են գիտական լուրջ քննության...*

*«Նրա ցուցադրած սերը, – ասում է Մատենճյանը, – հեշտամոլ է, զգայական... հաճախ միայն մարմնական վայելքի անցողական զվարճությունն է հերոսներին առաջնորդում» (Հ, 1913, 265): Հեղինակին առաջադրած իր պահանջներում քննադատը անիրավացի էր: Անտեսելով կամ լավ չպատկերացնելով նորավեպի ժանրային յուրահատկությունները՝ Մատենճյանը առաջարկում է Զոհրապի ընտրած թեման գեղարվեստորեն ներկայացնել բազմապլան ու բազմակողմանի: Մի բան, որ հնարավոր չէ նորավեպի սահմաններում: Ջեռնելով «մանր պատահարների» նկարագրության հետևում, Զոհրապի երկերի ենթատեքստում թաքնված փիլիսոփայական շերտերը՝ Մատենճյանը հանդում է տխուր եզրակացության.*

*«Զոհրապի պատմվածքների մեծ մասը բովանդակությամբ աղքատ է, մի տեսակ խաղալիքի է նման» (Հ, 1913, 265):*

*Քանի որ ազգային դրականության զարգացման և ըստ ազգային դրողներ ու արվեստագետներ ունենալու պահանջը հայ մշակույթի պատմության քննվող հատվածում դրված էր շատ սուր ձևով, այդ իսկ պատճառով նույն շրջանի քննադատների զգալի մասը ժամանակակից և նույնիսկ մոտիկ անցյալի հայ դրեթե բոլոր գրողներից պահանջում էին լինել մաքուր ազգային, և դա հաճախ էին դարձնում չափանիշ գրական ստեղծագործությունների հասարակական ու գեղարվեստական արժանիքները գնահատելիս: Ընդ որում, քննադատների մեծ մասը դիտականորեն ոչ բավարար, թերի, երբեմն էլ սխալ պատկերացում ուներ այդ հարցի մասին: Ընկերության երեկույթներում ազգային չլինելու «մեղադրանք» ներկայացվեց Ռ. Պատկանյանին, Վ. Տերյանին, Գր. Զոհրապին և ուրիշների: Երբեմն երևույթը ընդհանրացնելու և*

նրա մեջ համամարդկայինը արտահայտելու համար գրողները օգտագործում են դեղագիտական զանազան հնարանքներ, անուն չեն տալիս հերոսներին, չեն նշում, թե որտե՞ղ և ե՞րբ է կատարվել գործողությունը, սակայն դա ամենևին չի բացառում տվյալ գրողի ազգային լինելը: Այսօր ոչ ոք չի կարող ժխտել Թումանյանի ազգային մեծ բանաստեղծ լինելը, սակայն վերոհիշյալ գեղագիտական հնարանքներին կարելի է հանդիպել նաև նրա ստեղծագործություններում: Մատենճյանը, քննելով Զոհրապի նորավեպերը, ասում է. «Հաճախ է պատահում, որ դուք չգիտեք մինչև անգամ, թե ո՞ր քաղաքում է կատարվում գործողությունը, չգիտեք նույնիսկ, թե հերոսները ի՞նչ ազգից են... Այդ տեսակետից հիանալի օրինակների տեղ կարող են ծառայել «Երջանիկ մահը», «Կարծեմ թե» նորավեպերը »(Հ, 1913, 265):

Իհարկե, դասախոսը սխալվում է, քանի որ հենց իր հիշատակած նորավեպերը Զոհրապի լավագույն ստեղծագործություններից են, ունեն նուրբ հոգեբանական խորքեր, արտահայտում են զոհրապյան փիլիսոփայության հետաքրքիր նրբերանգներ: Գրողը կարող է խորապես ազգային մնալ օտար միջավայր ու քնավորություններ ներկայացնելիս, քանի որ այդ ամենը նա տեսնում է և գնահատում ազգային հայացքով: Մինչդեռ Մատենճյանին դուր չէր գալիս նաև օտարազգի հերոսների առկայությունը Զոհրապի նորավեպերում.

«Համենայն դեպս,— ասում է նա, — նկարագրված օտարների կյանքն ու դիմագծերը մեզ համար անըմբռնելի են մնում, շատ դժգույն են» (Հ, 1913, 265): Չնայած նշված «թերություններին» Մատենճյանը Զոհրապին համարում է ժամանակի առաջնակարգ և «ամենաընտիր» հեղինակներից մեկը՝ նախ և առաջ նկատի ունենալով նրա ոճը: Քննադատի մոտեցման սկզբունքը տվյալ դեպքում կարելի է ձևակերպել այսպես՝ այն, ինչ թերություն է (իր կարծիքով), ազգայինի բացակայության հետևանք է, այն, ինչ արժանիք է, ազգայինի արտահայտություն է: Զոհրապի հարցում ևս դրսևորվում է Մատենճյանի աշխարհայացքային սահմանափակությունը, թեև նրա սխալները պայմանավորված էին նաև ժամանակի քննադատական մտքի որոշ սահմանափակությամբ:

Զոհրապի մասին նրա դասախոսությունից հետո նույնպես ծավալվեց դրական հետաքրքիր բանավեճ: Եվ եթե գեկուցման մեջ չպարզաբանվեցին Զոհրապի արձակի շատ յուրահատկություններ, ապա դրական զրույցում շատ հետաքրքիր դիտողություններ արվեցին նրա արվեստի մասին: Ն. Աղբալյանը իրավացիորեն նկատեց, որ Զոհրապը «չնչինի վարպետ է»: Յուրաքանչյուր չնչինություն նրա մոտ դառնում է դրամայի նյութ, և դրանով է, որ նա առանձնահատուկ տեղ է բաց անում մեր դրականության մեջ» (Հ, 1913, 265): Ի դեպ, այդ օրվա հերթակալը՝ ինքը՝ Աղբալյանն էր: Թեև հերթակալների՝ վարչությանը նկրկայացրած գեկուցումները ավելի մանրամասն չէին, քան մամուլում տպագրված հաղորդումները, սակայն դրանցում երբեմն կան այնպիսի տեղեկություններ դասախոսության բովանդակության և այլ հարցերի շուրջ, որոնք չեն արտահայտվել մամուլի էջերում կամ որևէ այլ տեղ: Այսպես, օրինակ, Աղբալյանի՝ երեկոյի մասին դրսևորը հաշվետվությունից պարզվում է, որ դասախոսը մատնանշել է այն աղբյուրները, որոնց ենթարկվել է ոչ միայն Զոհրապը, այլև նույն շրջանի արևմտահայ մյուս դրողները» (ՀԳԿՀ գ, 6):

Ընկերությունը կազմակերպում էր դասախոսություններ ոչ միայն առանձին արևմտահայ դրողների, այլև այդ շրջանի արևմտահայ ամբողջ դրականության, վերջինիս բնորոշ գծերի, օրինաչափությունների և առանձնահատկությունների, արևմտահայ դրական կյանքում առաջացած չարժումների և այլ հարցերի մասին:

Հայ դրողների կովկասյան ընկերության երեկույթներում նույն «Թյուրքահայ դրականությունը» վերնագրով գեկուցումներ կարդացին Գ. Իփեկյանը և Հ. Սուրխաթյանը: Վերջինս իր դասախոսության (1916 թ. նոյեմբերի 18) նյութ դարձրեց դրական դպրոցների և ուղղությունների հարցը՝ կանգ առնելով մասնավորապես արևմտահայ իրականության մեջ նրանց տարածվածության խնդրի վրա: Այս դասախոսությունը պատերազմի շրջանում կայացած հատուկենտ դասախոսություններից մեկն էր, որ վերաբերում էր դրական հարցերին:

XX դարասկզբի հայ դրականության և դրաքննադատության պատմությամբ զբաղվող ժամանակակից պրականագետները նկատել են, որ այդ շրջանը աչքի էր ընկնում դրական-գեղար-

վիճակական հոսանքների և ուղղությունների առատությամբ: «Հայ նոր գրականության պատմության նախընթաց ոչ մի փուլում չէր եղել գեղարվեստական հոսանքների այնպիսի խայտաբղետ ու բարդ մի պատկեր, ինչպիսին տեսնում ենք XX դարի առաջին երկու տասնամյակներում:

Այդ բարդությունը պայմանավորված էր ոչ միայն գեղարվեստական միտումների բազմազանությամբ, այլև նրանով, որ դասակզբին շատ ավելի անորոշ են դառնում գրական հոսանքների սահմանները ու տարբերիչ գծերը»[7], – գրում է ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը: Հեթանոսական շարժումը, որը մեր գրականության պատմության մեջ սկսվեց Համաշխարհային պատերազմի նախորդ տարիներին, նեոռոմանտիզմի դրսևորումներից մեկն էր: Սուրխաթյանը հայ հեթանոսականներ համարեց «Ամենքից մեծ չափով Դանիել Վարուժան, ապա Սիամանթո, Սիրունի, Ահարոնյան, Զարյան, երիտասարդ բանաստեղծները և այդ բանաստեղծների հովանավորը և քննադատը Հակոբ Օշականն» (Մ, 1916, 262): Դասախոսը հեթանոս երգիչներից ամենատաղանդավորն ու ամենից բեղմնավորը հայտարարում է Դ. Վարուժանին և իր ելույթի մեծ մասը նվիրում է նրա երկերի վերլուծությանը: Նրա կարծիքով Վարուժանի այդ շարքի երգերը հարեմական բնույթ ունեն, սեռական ու տրփական են իրենց ողջ էությամբ և գեղարվեստական որևէ արժեք չունեն, քանի որ նրանցում. «իրական սերը փոխարինվել է հեշտանքով, բնական սերը՝ սեռամոլությամբ և մեղկությամբ, իսկ բանաստեղծը նույնիսկ կարծում է, որ սեռի խելագար թափը ընդունակ է պատմական ակտեր կատարելու» (Հ, 1916, 264): Ոչ միայն Վարուժանի, այլև Պոլսում հրատարակվող հայ հեթանոսների յուրօրինակ հանդեսի՝ «Մեհյանի» մյուս բանաստեղծների մասին խոսելիս՝ Սուրխաթյանը հանգեց սխալ, բայց այն ժամանակ տարածված և տիրապետող կարծիքի, որի համաձայն՝ հեթանոս գրողները բոլորն էլ անհատապաշտներ են, անձնական, մարմնական հաճույքը բարձր են դասում ամեն մի հասարակական, հանրային խնդրից, հեռու են ամբոխից ու կոլեկտիվից և իրենց ռոմանտիկ խառնվածքով «մասնակից չեն մեր ցեղի ռեալ կյանքին և իրականությանը» (Մ, 1916, 262):

*Հիշենք, թեկուզ, թե ինչպիսի բացասական կարծիք հայտնեց Շիրվանզադեն իր «Ահա մի ուրիշը» հոդվածում՝ Դ. Վարուժանի «Ով Լալագե» բանաստեղծությունը անվանելով զայրելի, կեղտոտ ոտանավոր, հեղինակին հռչակեց չակերտավոր բանաստեղծ, դեհիվիկ, կոպիտ, ամոթից ու ամենատարրական ճաշակից զուրկ[8]: Վ. Տերյանը Թումանյանի մի «Փարվանան» չէր վոխի հանկարծակի հեթանոսացած բոլոր բանաստեղծների հետ:*

*XX դարասկզբի հայ քննադատներն ու շատ նշանավոր գրողներ չկարողացան տեսնել հեթանոսական չարժման մեջ գրականն ու առաջադիմականը, այն, որ հեթանոս երգիչները, նորովի իմաստավորելով հեթանոսական անցյալը, նրանում փնտրում էին ազգային վերածնության ու վերելության ուղիներ, լուսավոր ապագայի հեռանկարներ, առաջ էին քաշում ազգի մեծ կենսունակության, հոգևոր ու ֆիզիկական ներդաշնակ միասնության, հզորության և ուժի վառաբանման միջոցով ներկայի խեղճությանը հակադրվելու, անհատի և ժողովրդի ազատության, հերոսական ոգու հաստատման և այլ գաղափարներ: Մ. Մատենճյանը, Վ. Ահարոնյանը, Դ. Դեմիրճյանը, Գ. Լևոնյանը, Ա. Մռավյանը, Ա. Ղազանճյանը, Հ. Սոլովյանը և Վ. Տերյանը սխալվում էին՝ ամբողջովին մերժելով գրական այդ չարժումը, որն իր առաջադրած գեղագիտական սկզբունքներով, գաղափարական-գեղարվեստական յուրօրինակ հարցադրումներով կարևոր և արտակարգ հետաքրքիր տեղ է գրավում հայ նոր գրականության պատմության մեջ: Նրանք պարզապես ելնում էին այդ հարցերի նկատմամբ ունեցած իրենց աշխարհընկալումից և չէին փորձում թափանցել երևույթի խորքը: Դրա համար էլ հեթանոս գրողների ստեղծագործությունների վերլուծությունը կատարում էին սխալ չափանիշներով: Չպետք է մոռանալ, սակայն, որ դարասկզբի քննադատների համար դժվար էր ճիշտ կողմնորոշվել գրական ուղղություններն ու նորագույն հոսանքների առաստության և բազմազանության պայմաններում: Բայց կարևորն այն է, որ ընկերության ամբիոնը ուշադրություն էր դարձնում գրական ուղղությունների ու չարժումների հարցին, և ժամանակակից գրական կյանքի տեսականորեն կարևոր խնդիրը դառնում էր ընդհանուր հետաքրքրու-*

թյան և խոսք ու գրույցի առարկա: Ասենք նաև, որ արևելահայ իրականության մեջ նույնպես կային քննադատներ, որոնք ընդունում էին հեթանոսական շարժումը ու հետաքրքիր գնահատականներ էին տալիս հատկապես Վարուժանի պոեզիային: Իբրև օրինակ բերենք Սուրխաթյանի դասախոսությունից երկու տարի անց տեղի ունեցած ընկերության երեկույթներից մեկում (1919 թ. փետրվարի 25) Վարուժանի քնարերգության մասին գրական առավիսը: Դասախոսում էր Վ. Ահարոնյանը: Նրան հաջողվեց ճիշտ նկատել բանաստեղծի պոեզիայի մի քանի էական, բնորոշ կողմերն ու հատկությունները, տալ կյանքի ու անցյալի նկատմամբ Վարուժանյան հայացքի բացատրությունը. «Անցյալը, — ասում է նա, — Վարուժանի համար միշտ ուժի մարմնացումն է, այն ուժի, որ պիտի փրկե հայ ժողովուրդը... Ուժը այն կենտրոնական գաղափարն է, որից Դ. Վարուժանի հոգում ծնվում են բոլոր մյուս գաղափարները՝ գեղեցիկի, կյանքի, ստեղծագործող աշխատանքի գաղափարը («Հարճ»)»[9]: Ջեկուցողը հակադրվում է նաև բոլոր այն քննադատներին, որոնք ժխտում են հեթանոսական ուղղությունը և Վարուժանի այդ շարքի երկերը: «Կնոջ պաշտամունքը, — ասում է նա, — Վարուժանի մեջ բխում է այն համայնապարփակ սիրուց, որ ունի Վարուժանը տիեզերական բեղմնավորվող ուժերի հանդեպ»: Նույն օրը Վ. Խորենին հայտարարում է. «Հեթանոսական հումանիստական մոտիվները այն առողջ տրամադրություններն են, որոնք պիտի մարմնանան մեր գրականության մեջ և որոնց սքանչելի փորձն արդեն ունինք Շանթի «Հին աստվածներով»[10], իսկ Ս. Գորոդեցկին, որը Թիֆլիսում գտնվելիս սիրով էր մասնակցում ընկերության երեկույթներին, հավաստիացնում է, որ Վարուժանի ստեղծագործությունները «իրենց կատարելագործությամբ» չեն զիջում Վեռլենի, Ուայլդի և Մետեռլինկի գործերին: Նա կարդաց մի քանի թարգմանություններ Վարուժանից և ընդգծեց սիմվոլիզմի տրամադրությունների արտահայտությունը բանաստեղծի ստեղծագործություններում:

XX դարասկզբի մեր գրականագիտության մեջ մշտական գործածության առարկա էին ռուսահայ և թյուրքահայ կամ տաճկահայ գրականություն տերմինները: Մեղադրել այդ բանի հա-

մաբ ժամանակի քննադատներին չենք կարող, քանի որ դեռ երկար սլիտի օգտագործվելին դրանք արևելահայ և արևմտահայ դրականության անվան տակ: Միայն վերջերս քննադատների և դրականության պատմաբանների շնորհիվ աշխարհագրական մեծ հեռավորության վրա գտնվող հայության երկու մեծ հատվածների գրողների երկերը քննվում են «Հայ դրականություն» ընդհանուր խորագրի տակ: Իհարկե, չի կարելի անտեսել նաև որոշ տարբերություններ, որոնք առկա են Եվրոպայում և Ռուսաստանում ստեղծագործած հայ գրողների երկերի միջև: Սակայն երբեմն, ընկերության երեկույթներում տարբեր գրողների ու քննադատների կողմից բերվում էին տարբերություններ, ընդգծվում էին յուրահատկություններ, որոնք չէին համապատասխանում իրականությանը: Ընդ որում, հայ դրականության զարգացումը կապվում էր միայն արևելահայ իրականության հետ: Այդ մտքերը արտահայտվում էին հատկապես Սուրխաթյանի՝ ընկերության ամբիոնից ընթերցված տարբեր դասախոսություններում և նրանց շուրջ ծավալված գրական բանավեճերում, քանի որ ըստ նրա՝ արևմտահայ գրողների գործերը լի են արհեստական ու խորթ տարրերով, հեռու են բուն ժողովրդի շահերից ու ոգուց: Իսկ Բաքվում, Երևանում, մանավանդ Թիֆլիսում ավելի մեծ հետաքրքրություն արևմտահայ գրողների նկատմամբ առաջացավ 1915 թ. կոտորածից հետո: Պատահական չէր, որ Առաջին համաշխարհային պատերազմի, հայկական եղեռնի պատճառով ընկերության դադարեցված պարբերական երեկույթները վերսկսվեցին Զոհրապին, Ռուբեն Զարդարյանին, Վարուժանին ու Սիամանթոյին նվիրված Զ. Եսայանի և Մ. Մատենճյանի դասախոսություններով (1916 թ. հոկտեմբերի 7): 1916 թ. Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության հոկտեմբերի որոշման մեջ նշվում է, որ հրատարակվելիք դասախոսությունների մեջ «առանձին տեղ կբռնեն տաճկահայ գրականությունը, հայոց հին բանաստեղծությունը և հայոց պատմության փիլիսոփայությունը» (Հ, 1916, 231): Ընկերությունը որոշել էր իր գրական երեկոներից մեկն էլ նվիրել «ռուսահայ և տաճկահայ սկսնակ գրողներին», ինչպես նաև Հակոբ Պարոնյանին և «աքսորված գրողներին» (Հ, 1916, 231): Որոշ չա-

*փով արևմտահայ գրականության հարցերն էին շոշափվում «Հայ ժողովրդի դրությունը Թուրքիայում» (1908-1915) թեմայով դասախոսության մեջ (1916 թ. նոյեմբերի 11), քանի որ նրանում բազմակողմանի էր ներկայացվում արևմտահայ ողջ կյանքը:*

*Այսպես, XX դարի 10-ական թվականների գրեթե բոլոր քիչ թե շատ նշանավոր գրողները, ժամանակի բազմաթիվ գրական երևույթներ ու շարժումներ գրական ասուլիսների նյութ են դառնում հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթներում, գրասեր լայն հասարակության ներկայությամբ: Հայ ողջ գրական կենդանի պրոցեսը ժամանակակից գրականության զարգացման ու հեռանկարների, գրական կյանքի առօրյա խնդիրները իրենց յուրօրինակ արտացոլումն էին գտնում ընկերության գրական հինգշաբթիներում, ընդհանուր ժողովներում և վարչության նիստերում:*

## Գրական քննադատության, գրականության տեսության և գեղարվեստի մի քանի հարցերի մասին

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը XX դարի առաջին տասնամյակում մեծ չափով նպաստեց նաև հայ քննադատական ու տեսական մտքի զարգացմանը: Թեև ընկերությունը հատուկ դասախոսություններ չի նվիրել տեսության, քննադատության և գեղարվեստի հարցերին, սակայն դրանք մեծ չափով արծարծվել են ընկերության գրեթե բոլոր երեկույթներում՝ կապված այս կամ այն գրողի կոնկրետ ստեղծագործության քննարկման հետ: Նշված խնդիրները ավելի շատ շոշափվում էին ոչ թե դասախոսի ուղղակի խոսքում, այլ նրա զեկուցումը քննարկելիս, արծարծված հարցերի շուրջ ծագած գրական բանավեճի, գրույցի ընթացքում: Բոլոր դասախոսություններին պարտադիր պետք է հաջորդեին գրական վեճերը: Թումանյանն անձամբ շատ մեծ նշանակություն էր տալիս*

դրական ղրույցներին. «Շատ մարդիկ, – ասում էր նա, – ղրույցի պլինը չեն իմանում, ախր սա էլ մի ուրիշ տեսակ ստեղծագործություն է» (ԹԺՀ, 264): Իրենց՝ ընկերության չուրջը համախմբված քննադատների վկայությամբ, դրական այդ ղրույցների և «վիճաբանությունների ժամանակ ճարպկանում էր մեր միտքը, փաստեր հավաքելու և այդ փաստերի պարզաբանությամբ հակառակորդին տապալելու համար: Դրա հետ միաժամանակ զարգանում է մեր մեջ ընկերական կյանք, համբերություն՝ ուրիշի կարծիքը լսելու... մշակվում, հստակվում է մեր աշխարհայացքը: Գրական ընկերության և նրա երեկույթների դերը մեծ է նաև նրանով, որ հիմք է դրվում լուրջ և արդարացի քննադատության» (Հ, 1914, 119):

Իրոք, Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը արտացոլում է հայ քննադատական մտքի զարգացման որոշակի մի փուլ՝ իր բնորոշ գծերով և առանձնահատկություններով: Հայ նոր գրականության և քննադատության պատմագիրները նկատել են, որ նախորդ փուլերում քննադատությունը հաճախ էր միաձուլվում լրագրության ու հրապարակախոսության, հետևաբար և ժանրային որոշակիության չէր առանձնանում: Սակայն, ինչպես գրում է ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը. «Նոր դարի սկզբին հրապարակ իջավ մասնագետ քննադատների մի բավական ստվար խումբ: Գրական քննադատությունը առանձնացավ հրապարակախոսությունից, դգալի չափով ճշտվեցին նրա առարկայի նպատակների և մեթոդների ինքնատիպության ըմբռնումները»[11]: Ահա քննադատության՝ հրապարակախոսությունից սահմանազատվելու, նրա առարկայի նպատակների ու մեթոդների ինքնատիպ սահմանման գործում իր զգալի նշանակությունը ունեցավ Հայ գրողների ընկերությունը, որն իր մեջ ընդգրկել էր քննադատների այդ «բավական ստվար խումբը»:

Գրական-գեղարվեստական կյանքի աշխույժ մթնոլորտում ձևավորվում էին գնահատման նոր սկզբունքներ և չափանիշներ, գեղագիտական նոր ըմբռնումներ և տեսություններ: Յուրաքանչյուր դասախոսությանը անմիջաբար հաջորդող գրական բանավեճը ենթադրում էր մտքերի փոխանակություն քննադատելու մեթոդի՝ իբրև գիտահետազոտական եղանակի, գրականության

քննադատության դերի, քննադատի կոչման հարցերի շուրջ: Այս խնդիրները շոշափող գրական մի վեճ ծագեց 1914 թ. մարտի 14-ին Սայաթ-Նովայի մասին Ն. Աղբալյանի դասախոսությունը քննարկելիս: Լեոն հայտարարեց, որ «ինքը չի կարող գոհանալ գործադրվող մեթոդով, որն անկատար է ստեղծագործող միտքը լրիվ կերպով երևան բերելու» (Հ, 1913, 62): Թումանյանը առարկում է Լեոյին, ասելով, որ քննադատական մեթոդին երկրորդական տեղ պետք է տալ. «... Այս կամ այն մեթոդով, – ասում է նա, – չի կարելի գտնել բանաստեղծին կամ բանաստեղծությունը նրա գրվածքների մեջ, ինչպես չի կարելի անդամահատության այսինչ կամ այնինչ եղանակով անդամահատելով գտնել գեղեցկուհու հրապուրանքը: Մեթոդներով ամեն բան էլ կգտնեք, բայց բանաստեղծությունը կամ բանաստեղծին կարելի է գտնել զգացումով, ըմբռնումով, հոտառությամբ: Ապա երբ արդեն գտնված է բանաստեղծը, նոր միայն գործադրել մեթոդները՝ նրան վերլուծելու» (7, 528): Թումանյանը չի ժխտում մեթոդի դերը առհասարակ, բայց գրական երկը քննելիս առաջնությունը տալիս է գիտական զգացողությանը, ճաշակին և նուրբ հոտառությանը: Ճիշտ չընկալելով ընկերության նախագահի ելույթի բովանդակությունը՝ Տ. Հովհաննիսյանը առարկում է նրան, պնդելով, որ քննադատելիս մեթոդի դերը շատ է էական, կարևոր, որ քննադատությունը մի գեղարվեստական ինքնուրույնություն է, և ինչ դեր որ կատարում է տաղաչափությունը բանաստեղծական արվեստի մեջ, նույնը կատարում է մեթոդը՝ քննադատության մեջ: Սակայն շատերը, հետևելով Թումանյանի խորհրդին, առաջարկում էին որոնել այնպիսի ուղիներ, որոնք կհանդեցնեին գրական ստեղծագործության մեջ էականը՝ ոգին հայտնաբերող մեթոդի ստեղծմանը: Ա. Հարությունյանի կարծիքով «Բանաստեղծին քննադատելու համար առաջին հերթին ոչ թե պիտի նրա տառերն ու ստորակետները քննել, այլ հետամուտ լինել նրա ոգուն» (Հ, 1913, 55): Ոմանք էլ պարզապես հայտարարում էին, որ «Վերջ ի վերջո գրական քննադատությունը հիմնվում է անձնական տպավորության վրա» (Հ. 1913, 265), այսինքն՝ դնում էին գրականագիտական ճաշակի և զգացողության առաջնայնության հարցը:

Ընկերության անդամներից ոմանք, լինելով կուլտուր-պատմական դպրոցի ներկայացուցիչներ, մեծ նշանակություն էին տալիս քննադատի կողմից երկի հասարակական բովանդակության հայտնաբերմանն ու արժեքավորմանը: Շատերն էլ քննադատի համար կարևոր էին համարում գրական երկի ստեղծման ժամանակաշրջանի, հասարակության իրական կյանքի խորացնին իմացությունը: Պ. Մակինցյանի, Լեոյի, Ն. Աղբալյանի և ուրիշների ելույթներում հաճախ էր ընդգծվում գրողի ապրած ու պատկերած ժամանակի, հասարակության պատմության, կյանքի և ողջ իրականության մասին քննադատի խոր իմացության, լայն ճանաչողության ու հարուստ դիտելիքների դերը:

Բացի կյանքի, ժամանակի և հասարակության մասին պիտական խոր իմացությամբ զինված լինելուց՝ քննադատի համար կարևոր էր համարվում գեղարվեստական երկի մեջ նախ և առաջ դրականը, արժեքավորը գնահատելու, բացահայտելու և վեր հանելու կարևորությունը, գրական ստեղծագործությունը գաղափարական նշանակության տեսանկյունից վերլուծելու ունակությունը:

Սակայն գրականության հասարակական և դաստիարակչական նշանակության դերը ամենևին էլ չէր չափազանցվում կամ միակողմանի դիտվում՝ իբրև երկի միակ արժանիք: Լեոն, օրինակ, ասում էր, որ մեծ անարդարություն կլիներ Րաֆֆու երկերի արժանիքը միայն նրանց հասարակական նշանակության մեջ որոնել. «Այդ արժանիքները մենք պետք է որոնենք և նրանց դուտ գրական, զուտ գեղարվեստական նշանակության մեջ» (Հ, 1913, 95): Ավելին, շատերը առավելությունը տալիս էին գեղարվեստական ձևին: Աղբալյանը վստահեցնում էր, որ գլխավորը, էականը արվեստն է, ձևը, և դնում էր «ինչի ու ինչպեսի» գրականագիտության մշտահոլով հարցերից մեկը՝ ասելով. «Էականը արվեստն է, նրանով է զանազանվում բանաստեղծը ոչ բանաստեղծից» (Հ, 1913, 111):

Ընկերության երեկույթներում քննադատին ներկայացվեցին բազմաթիվ պահանջներ: Մինաս Բերբերյանը առաջարկում էր գրողի աշխարհայացքային յուրահատկությունների բացահայտման միջոցով հասնել նրա ստեղծագործության բովանդակության հայտնաբերմանը: Իսկ ըստ Պ. Մակինցյանի՝ արվեստագետի գործի էու-

թյունը բացահայտելու համար անհրաժեշտ էր պարզել նրա առընչությունը հայ հասարակական մտքի ու գրականության զարգացման հետ, դիտել նրան գրականության պատմության ընդհանուր շրջանում:

Բնական է, որ ընկերության մեջ քննադատության մեթոդի մասին քննարկումները այսքան մեծ տեղ էին գրավում: Յուրաքանչյուր դասախոսություն վերլուծելիս բոլորն էլ աշխատում էին պեկուցումներում տեղ գտած թերությունները ու պա-կասավոր կողմերը բացատրել քննադատական սխալ մեթոդի կիրառմամբ: Այդ պատճառով էլ շատ դասախոսներ որևէ գրողի մասին իրենց ելույթը սկսում էին նրանով, որ մեկնաբանում էին քննադատության գոյություն ունեցող, իրենց հայտնի մեթոդները, առավելությունը տալիս էին որևէ մեկին և առաջնորդվում դրանով: Փաստորեն այս կերպ ընկերության ասուլիսներում շոշափվում էին քննադատության մեթոդի պատմության հարցերը: Այսպես, Ռ. Աբրահամյանը իր «Պոեզիան և լեզուն որպես ստեղծագործություն» պեկուցման մեջ (1917 թ. փետրվարի 10), խոսելով մեթոդի՝ գիտության համար ունեցած կարևորագույն նշանակության մասին, ասում էր. «Մեթոդները երկու տեսակ են լինում, սուբյեկտիվ և օբյեկտիվ, որոնք և գործադրվում են քննադատության պատմության մեջ» (Հ, 1917, N 33): Սուբյեկտիվ էր համարում գիտական պահանջներին բավարարություն չտվող «գեղագիտական-բարոյական և հրապարակախոսական մեթոդները», իսկ օբյեկտիվ էր հռչակում բանասիրական, պատմական, պատմա-քաղաքական, հոգեբանական, Տենի համեմատական և այլ մեթոդներ: Նրա կարծիքով վերջիններս, օժտված լինելով գիտական անհերքելի արժանիքներով, մեծ մասամբ օգտագործվում են գրականության պատմության մեջ, իսկ քննադատության մեջ հիմնականում կիրառվում են սուբյեկտիվ մեթոդները: Հենց սրանով էլ նա փորձում էր հիմնավորել քննադատության դերի մասին ունեցած իր սխալ հայացքը, ըստ որի «քննադատությունը ներկայացնում է սովորաբար չհիմնավորված կարծիքների մի շարք, տալիս է անբավարար և մեծ մասամբ բացասական հետևանքներ» (Հ, 1917, 33):

*Ա. Հարությունյանը նույնպես իր դասախոսությունը («Ավետիք Իսահակյանի մասին») սկսելուց առաջ քննորոշում և դնահատում է վերլուծական, նկարագրական և «դնահատական» մեթոդները: «Վերլուծական երկու հակոտնյա մեթոդները, — ասում է նա, — որոնցից մեկը բանաստեղծի ամբողջ ստեղծագործությունը բացատրում է նրա հոգեկան հատկություններով (ինդիվիդուալիստական մեթոդ), իսկ մյուսը՝ միջավայրի պայմաններով (սոցիալական մեթոդ) հատկապես միակողմանի ու անընդունելի են» (Հ, 1913, 48): Շարունակելով իր միտքը՝ Ա. Հարությունյանը առավելությունը տալիս է քննադատության համադրական մեթոդին, որը դեղարվեստական երկը վերլուծելիս հաշվի է առնում թե՛ գրողի անհատականությունը և թե՛ հասարակական պայմաններն ու միջավայրը, իսկ նկարագրական համարվող «ժամանակագրական սիստեմատիկական» մեթոդները հայտարարում է պակասավոր, որովհետև «Առաջինը մեզ տալիս է բանաստեղծի ստեղծագործության իրոնիկան՝ առանց նրանց ամբողջ պատկերը տալու, իսկ երկրորդը տալիս է պատկերը, առանց նրանց զարգացումը մեզ պարզելու» (Հ, 1913, 48):*

*Քննադատության մեթոդի և դերի մասին ասուլիսների հաճախականությունը պայմանավորված է նաև նրանով, որ գրողների ընկերությունը կենդանի դրական պրոցեսի մի օղակ է, իսկ դրական քննադատությունը այդ պրոցեսի անբաժան, բաղկացուցիչ մի մասը: Քննադատին ներկայացվող տարբեր պահանջների, դրական կյանքին վերաբերող զանազան հարցերի չուրջ եղած տարաձայնությունների պատճառը նաև այն է, որ քննադատը միշտ դրական ընթացքի մեջ է, այդ պրոցեսի դործող անձն է, հետևաբար, ավելի քան դրականության պատմաբանը՝ կարող է սխալվել: Ժամանակի և տարածության հեռավորությունից ավելի հեշտ է ճիշտ կողմնորոշվել: Գրաքննադատը դործ ունի կենդանի դրական պրոցեսի և երևույթների հետ, դրականության զարգացման դեռևս չավարտված փուլի հետ, այդ պատճառով էլ նա ղիջում է այսպես կոչված ռետրոսպեկտիվ (հետհայեցական) դրականագիտությանը, որը հենվում է դրականության պատմության փորձի, դիտականորեն ճշդրիտ եղրակացությունների վրա: Բայց դրակա-*

նուիրյան պատմաբանը, որքան էլ նրա ուսումնասիրությունները ուղղված լինեն արդիական նշանակություն ունեցող հարցերի լուծմանը, չի կարող գրական կենդանի պրոցեսի վրա ազդել այնպես, ինչպես քննադատը: Ըստ ժամանակակից անվանի գրականագետ Ա. Բուչմինի. «Գրաքննադատությունը գրականագիտության չարժուն ջոկատն է, նրա օպերատիվ շտաբը: Նա գտնվում է գաղափարական պայքարի ավանգարդում: Նա կատարում է կարևոր դեր գրական գիտելիքների պրոպագանդման գործում: Նա հաստեցադրվում է ամենալայն լսարանին, հանդիսանում է կապը ընթերցող զանգվածի և արվեստագետի միջև»[12]:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը տասնամյա գոյության ընթացքում իր շուրջը համախմբեց ժամանակակից քննադատական մտքի բազմաթիվ ներկայացուցիչների, իսկ դա նշանակում էր ուշադրություն ժամանակակից գրական հարցերի, երևույթների, գրողների ու հատկապես սկսնակների նկատմամբ[13]:

Թումանյանը ցավով էր հիշում, որ. «Մենք էլ ենք եղել սկսնակներ, բայց մեր գրական կյանքի արշալույսին էս տեսակ հասարակություն, էս տեսակ դահլիճ, էս տեսակ ընդհանրական ուշադրություն չենք տեսել» (7, 301): Բայց և ուրախանում էր, որ այլևս այդպես չէ, սկսնակ գրողները արդեն հնարավորություն ունեն ուղղություն ստանալու, լսելու բազմաթիվ կարծիքներ ու տպավորություններ իրենց ստեղծագործական առաջին քայլերի մասին: Ընկերության երեկույթներից մեկում՝ 1916 թ. դեկտեմբերի 30-ին, Թումանյանը, դիմելով սկսնակ գրողներին, ասում է. «Նոր են և քննադատները, որ խոսում են ձեզ հետ:

Նորություն է մեր գրականության մեջ նրանց հարգալից վերաբերմունքն ու կիրառած քննադատական մեթոդը: Հարկավ, նրանք կարող են սխալվել իրենց գնահատությունների մեջ, բայց նոր ու չիտակ է նրանց ճանապարհը: ... Համոզվա՛ծ եղեք, որ քննադատը ո՛չ բանաստեղծ կարող է ստեղծել, ո՛չ բանաստեղծ կարող է սպանել: Նա միայն մեկնաբանում, պարզում ու բացատրում է: Եվ վերջիվերջո մի քննադատ կա, որ վերջնականապես որոշում է ապրող ու մեռնող գործերը, դա ժամանակն է» (7, 302): Ոչ միայն Թումանյանը, այլև ընկերության մյուս անդամները,

*գրողներն ու գրականագետները տարբեր առիթներով, տարբեր երեկոների ընթացքում հանպատրաստից ճեպակերպում էին իրենց կարծիքը քննադատության դերի և այլ հարցերի շուրջ: Այսպես, Լեոյին առարկելիս մի առիթով Դ. Դեմիրճյանը ասում է. «Քննադատությունը երբեք գրականություն չի սպանում» (Հ, 1913, 293):*

*Սկանակ բանաստեղծների մասին էր Սուրխաթյանի «Ռուսահայոց նորագույն բանաստեղծությունը» թեմայով դասախոսությունը (1916 թ. դեկտեմբերի 30): Զեկուցողի խոսքը վերաբերում էր երիտասարդ բանաստեղծներ Շ. Կուրղինյանի, Հ. Հակոբյանի, Վ. Տերյանի, Ա. Տիգրանյանի, Լեյլիի, Գ. Ղազարյանի, Պահարեի, Գ. Շահինյանի և ժամանակի նորագույն մյուս գրողների պոեզիային: Նրանց մեջ իբրև «որոշ և աչքի ընկնող դեմք» Սուրխաթյանը առանձնացնում է Վ. Տերյանին, քանի որ «Սկանակների մեծ մասը գնում է նրա ետևից: Թե ուր կանգ կառնեն, այդ կասի մեզ ապագան» (Հ, 1917, 5):*

*Երիտասարդ բանաստեղծների երկերը քննելիս զեկուցողը նչեց մի շարք թերություններ և որոշ դիտողություններով ու խոր-հուրդներով փորձեց նրանց օգտակար լինել. «Որպես սկսնակներ նրգելու չնորհքը նրանց անուրանալի է, բայց տակավին թույլ ու վարանոտ: Զգացմունքի խորություն ու մտքի թռիչք չկա: Հրապարակախոսական տարրը գերակշռում է» — ասաց նա՝ հատկապես նկատի ունենալով Կուրղինյանի և Հակոբյանի պոեզիան: Ահա այս դասախոսության առիթով է, որ Թումանյան-քննադատը արեց գրական ազդեցությունների մասին իր դիպվուկ, ասույթային արժեք ունեցող ճեպակերպումը: Դիմելով երիտասարդ գրողներին՝ նա ասում է. «Ազդեցությունը էն սանդուղքն է, որով սկսնակը բարձրանում է դեպի ինքնուրույնություն» (7, 302): 1902 թ. հոկտեմբերի 27-ին Լեոյին ուղղած նամակում Թումանյանը, խոսելով գրական ազդեցությունների մասին, վստահեցնում է, որ այդ ազդեցությունը չի առնչվում գրողների ստեղծագործությունների կամ նրանց տողերի միջև եղած նմանությունների հետ: Այն կրում է ցանկացած բանաստեղծ իր հոգու, իր երևակայության, իր «բարոյական ամբողջության» վրա (7, 345): Ընկերության վերը նչված գրական ասուլիսում Թումանյանի խոսքը՝ ուղղված*

սկսնակ բանաստեղծներին, լայն արձագանք գտավ: Երիտասարդ դրողներից ոմանք մասամբ լուրջ, մասամբ կատակով փորձում են հավատացնել, որ Թումանյանի խոսքերը ասվել են չափածո էքսպրոմտի ձևով: Թեև հայտնի է, որ Թումանյանը էքսպրոմտի մեծ վարպետ է, բայց նրա խոսքը չափածոյի են վերածել իրենք՝ սկսնակ բանաստեղծները: Բանաստեղծի դատեր՝ Նվարդ Թումանյանի արխիվում պահպանվել են Թումանյանի ելույթի պարոդիան հանդիսացող բանաստեղծության երկու տարբերակները, որոնցից մեկի հեղինակը Միսակ Ասիլյանն է, իսկ երկրորդինը՝ անհայտ է: Վերջինս ավելի ամբողջական տեսք ունի և ժամանակին տեղ է գտել լրագրերում: Բերենք այն հատվածաբար.

### «Հրատապ սփոփանք» սկսնակ բանաստեղծների

*խոսքեր՝ Հ. Թումանյանի*
*հանգեր՝ սկսնակի*

*Քննադատն ասաց. — մեկդ խրոնիկյոր,*
*Մեկդ քաղքենի ճգտումի երգիչ,*
*Մեկդ՝ Տերյանի մոնթմն է գլխիկոր,*
*Կամ Յարճանյանին նման է չատ քիչ:*

*Է, ասաց. — ի՞նչ աննենք, տղերք,*
*Ինչո՞ւ եք տրտմել — սրտապինդ եղեք.*
*Ես շատ եմ խնդրում, որ չըղաղարեք,*
*Թղթին չափսոսեք, — գրեք, միշտ գրեք,*
*Ամեն քսանյոթ ոտանավորից —*
*Մեկը լավ դուրս գա՝ մեծ բան է նորից:*
*Հետո կորոշվեն փոքրեր ու մեծեր —*
*Ժամանակն է լոկ քննադատը ձեր (Հ, 1917, 3):*

*Սկսնակ բանաստեղծներին խորհուրդներ տալիս՝ Թումանյանը բարձր էր գնահատում քննադատության դերը գրականու-*

թյան զարգացման գործում: Սակայն դա ամենևին չէր խանգարում, որ նա դժգոհեր ժամանակի քննադատներից.

«Մեր քննադատները ամեն բանից խոսում են, բայց բանաստեղծությունից՝ երբեք»[14]: Թումանյանը քննադատից պահանջում էր նախ և առաջ անաչառություն, թափանցող հայացք, դիտելիքներ և բարեխղճություն՝ կյանքն ու գրականությունը ուսումնասիրելու համար:

Ինչ վերաբերում է ազդեցությունների հարցին, ապա այն մեծ չափով արծարծվեց ոչ միայն Սուրխաթյանի դասախոսության մեջ և առիթով, այլև ընկերության բազմաթիվ այլ երեկույթներում: Ազդեցությունների հարցը կապվում է նաև գրական ավանդների խնդրի հետ: Տարբեր գրողների մասին ասուլիսներում անհնար էր, որ խոսք չբացվեր, թե ումի՞ց է նա ազդվել և կամ այլազգի գրականության ո՞ր ավանդների չարունակողն է: Հատկապես գրականության պատմաբան Լեոն տարբեր երեկույթներում աշխատում էր ընդգծել, թե որ գրողը գրականության որ ավանդների չարունակողն է: Հարցը արծարծվում էր ոչ միայն կոնկրետ օրինակների ձևով, այլ նաև տեսականորեն: Հաճախ կարելի էր հանդիպել այնպիսի ելույթների, որոնցում բարձրացվում էին հետևյալ խնդիրները. ի՞նչ բան է ազդեցությունը, ի՞նչ չափով է այն նպաստում գրողի ստեղծագործական զարգացմանը, անխուսափելի՞ է, թե՞ ոչ, ի՞նչ չափով է այն վնասում գրողի ինքնուրույնությանը, ինչո՞ւմն է դրսևորվում նրա չահեկանությունը և այլն: Մինաս Բերբերյանը գրական երեկոներից մեկում ասում է.

«... Ազդեցության խնդիրը մեծ նշանակություն ունի մեր գրականության համար, որը, սակայն, դժբախտաբար, չի ուսումնասիրված: Ազդեցության չափը որոնելով այսինչ կամ այնինչ գրողի վրա, դրանով մենք նվաստացրած չենք լինի նրան» (Հ, 1914, 119):

Գրական մեթոդներից, ուղղություններից ընկերության կազմակերպած երեկույթներում և գրական զրույցներում չոչափվեցին ռոմանտիզմին, ռեալիզմին, անկումային ուղղություններին, մոդեռնիզմին, ֆուտուրիզմին, սիմվոլիզմին և ժամանակակից գրական այլ հոսանքներին վերաբերող հարցեր: Առավելությունը մեծ մասամբ տրվում էր ռեալիզմին, իսկ հաճախ որոշ քննադատներ սխալ-

մամբ մեկ մեթոդի, մասնավորապես, ռեալիզմի սկզբունքներից ելնելով էին քննում մյուս ուղղություններն ու հոսանքները: Հատկապես կապված միջավայրի ճշմարտացի արտացոլման հետ՝ նույնացվում էին ռեալիզմն ու ռեալականությունը: Շատերը առաջ էին քաշում գրողի և միջավայրի կապի, արվեստագետի համար անհրաժեշտ կյանքի և հասարակության խորը ճանաչողության հարցը՝ ընդգծելով միջավայրի անմիջական ազդեցությունը գրողի թե՛ անձի, անհատականության և թե՛ ստեղծագործությունների վրա: Հերոսի և միջավայրի առնչության խնդիրը հավասարաչափ արծարծվում էր տարբեր մեթոդներով ստեղծագործող հեղինակների կապակցությամբ: Գրական ուղղություններին տրված թերի գնահատականների պատճառը հավանաբար պետք է որոնել XX դարի առաջին տասնամյակներում ռեալիզմի տիրապետող մեթոդ լինելու և նրա որոշ առավելությունների դիտակցման մեջ: Այս հարցերի շուրջ ընկերության երեկույթներում ելույթ են ունեցել Դ. Դեմիրճյանը, Ն. Աղբալյանը, Մ. Մատենճյանը, Հ. Սոլովյանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ: Մատենճյանը, քննելով միջավայրի և գրողի ու նրա ստեղծագործության առնչության խնդիրը, հայտնված էր համարում միայն Զոհրապի այն նորավեպերը, որոնցում կյանքը արտացոլվել է ճշմարտացի: Իսկ միջավայրի նկարագրությունների բացակայությունը նա համարում էր ռոմանտիզմի տարրերի ներթափանցում ռեալիզմի մեջ: «Իսկապես, — ասում էր քննադատը, — միջավայրի, ինչպես և ազգությանց այդ անորոշությունը մի ռոմանտիկ տարր է մտցնում նրա իրական ճգտում ունեցող նորավեպի մեջ» (Հ, 1913, 265):

Առհասարակ Մատենճյանին բնորոշ էր ցանկացած գրողի ստեղծագործությունները վերլուծելիս չափանիշ ընտրել հեղինակի հավատարմությունը իր իսկ օգտագործած գրական մեթոդի սկզբունքներին: Նրա կարծիքով արվեստում իրականությունից, կյանքից, ռեալիզմից կատարված յուրաքանչյուր չեղում էական թերություն է դեղարվեստական ստեղծագործության համար: Ամփոփելով իր խոսքը Զոհրապի ռեալիզմի մասին՝ Մատենճյանը եզրակացնում է. «...ուրեմն՝ չափազանցված զգայականություն սիրո մեջ, միջավայրի և անձնավորությանց անորոշություն, անտե-

*ղի քնարականություն, անտեղի ճարտասանություն — ահա այն թերությունները, որոնք վնասում են Զոհրապի պատմվածքների մեծ մասին՝ հեռացնելով նրան ռեալիզմից» (Հ, 1913, 265):*

*Գրական ասուլիսներում ընդհանուր տեսական ակնարկներ էին արվում ռեալիզմի, հատկապես հայ ռեալիզմի պատմության: Զոհրապի ստեղծագործությունների առիթով քննության առարկա դարձավ 80-ականների չարժումը, ռեալիզմի ծագման պատճառների, պատմական պայմանների ու հանգամանքների խնդիրը: Ճիշտ է, տասական թվականներին հայ քննադատական միտքը դեռ հեռու էր ռեալիզմին ամբողջական դնահատական տալուց, սակայն քիչ չէին նաև հայ և առհասարակ ռեալիզմի առանձնահատկությունները բնորոշող ճիշտ կռահումներն ու դիտողությունները: Այս կարծիքները չի կարելի անտեսել իբրև հայ քննադատական մտքի զարգացման որոշակի մի փուլ:*

*Ռոմանտիզմի և ռեալիզմի հետաքրքիր դասակարգում կատարեց Նիկոլ Աղբալյանը Գ. Սունդուկյանի հիշատակին նվիրված երեկոյում (1913 թ. ապրիլի 21): Ըստ նրա՝ դրողի արվեստի էությունը պարզելու համար անհրաժեշտ է դտնել հեղինակի՝ աշխարհին նայելու ինքնուրույն տեսակը: Գրողների՝ դեպի իրենց հայրենի միջավայրն ունեցած հարաբերության աստիճանը ընդունելով իբրև չափանիշ՝ Աղբալյանը հայ դրողներին բաժանում է երկու մասի. առաջին խմբում են դասվում այն գրողները, որոնք ծնունդով, ազգությամբ հայ են, բայց գրում են օտար լեզվով, կամ լեզվով հայ են, բայց օտար են ոգով: «Երկրորդ կարդին, — ասում է դասախոսը, — պատկանում են նրանք, որ լեզվով հայ են և օտարությունը ծառայեցնում են լոկ որպես անունդ, չեն սարկանում նրանց» (Հ, 1913, 87):*

*Աղբալյանը «հորիզոնական» անվանեց այն գրողներին, որոնք օտար մշակույթների չափանիշներով ժխտում են ազգայինը, հայրենին, և «ուղղահայաց» անվանեց այն հեղինակներին, որոնք, վեր բարձրանալով հարազատ միջավայրից, տեսնում են միջավայրի թերությունները: Հենց այս հիմք ընդունելով՝ քննադատը մեր գրողներին բաժանեց ռեալիստների և ռոմանտիկների: «Այստեղից, — եղրակացնում է նա, — գրական երկու ուղղություն: Մեկը*

մերկացնող, որ ժխտում է մայրենի իրականությունը՝ օտար կյանքի տեսակետից, իսկ մյուսը, որ պնդում է իր ազգային միջավայրի վրա, ժխտում է նրա թերությունները ազգային տեսակետից: Սրանից էլ առաջանում է երկու հոգեբանություն. մեկը՝ իրականությունը բացառում է, օրինակ՝ Րաֆֆին, և մյուսը, որ իրականության մեջ գտնում է լավ կողմեր: Այս վերջին տեսակին է պատկանում Գ. Սունդուկյանը:

Առաջինի գրականությունը միտումնավոր է, իդեալական է, իսկ երկրորդինը՝ գեղարվեստական է, ռեալիստական» (Հ, 1913, 87):

Անշուշտ, ռոմանտիզմի և ռեալիզմի որոշ հատկանիշներ (ռոմանտիկների կողմից իրականության ակտիվ ժխտում ցանկալի իդեալի տեսանկյունից, ռեալիստի՝ դրականը կյանքում տեսնելն ու դրվատելը) նկատվում են Աղբալյանի այս դասակարգման հիմքում, սակայն վերջինս թերի է ու պակասավոր, հատկապես, եթե հարցին նայելու լինենք գրականության տեսության այսօրվա նվաճումների բարձունքից: Որևէ մեթոդով ստեղծագործելու մյուս կարևոր պայմանը համարվում էր գրողի անհատականությունը: Դեմիրճյանը Մատենճյանի դասախոսություններից մեկը քննարկելիս ասում է. «Զոհրապի ռեալիզմի գլխավոր պատճառը նրա անհատականությունն է» (Հ, 1913, 265): Թեև կտրուկ է այս հայտարարությունը, բայց առարկության ենթակա չէ այն, որ մեթոդի ընտրությունը անմիջաբար կապված է գրողի աշխարհայացքի, տաղանդի առանձնահատկությունների հետ: Սակայն նույնքան հայտնի և դասագրքային ճշմարտություն է և այն, որ միևնույն գեղարվեստական մեթոդին կարող են հետևել տարբեր անհատականություն ու աշխարհայացք ունեցող գրողներ: Անվերապահորեն իրավացի էր Թումանյանը՝ գրողի անհատականությունը կապելով նախ և առաջ արվեստի երկերի հարատևող նշանակության հետ: Նա, բանաստեղծի և բանաստեղծության մեջ փնտրելով ինքնուրույնությունն ու յուրահատուկը, ասում է. «Եթե բանաստեղծն ունի ուժեղ անհատականություն, նա էլ գույն է տալիս ժամանակին: Քչերն են հավերժական»[15]: Նրա համոզմամբ, միայն ուժեղ անհատականությամբ օժտված արվեստագետները կարող են ստեղծագործել հավերժի համար: Թումանյանը վստա-

*հեղնում էր, որ հանճարները հենց իրենց խոշոր անհատականության շնորհիվ են ապրում բոլոր ժամանակներում:*

*Մ. Մաուենճյանը մի առանձին դասախոսություն կարդայ «Պառնասական ուղղությունը ֆրանսիական դրականության մեջ» թեմայով (1916, Հոկտեմբերի 28): Նա փորձեց տալ դրական այդ դպրոցի պատմությունը, ներկայացնել Ֆրանսիայում նրա առաջացմանը նպաստող քաղաքական հանգամանքները, ուղղության ծագումն ու զոյությունը կապեց Լըկոնտ դը Լիլի ու Թեոֆիլ Գոտիեի ստեղծագործության հետ՝ նրանց հռչակելով այդ նոր դպրոցի ղեկավարներ: Ձեկուցողը ճիշտ է նկատում պառնասականության բնորոշ գծերից մեկը, այն, որ քաղաքական դեպքերից հեռու է այդ պոեզիան, իսկ «Դրա փոխարեն պոզիտիվ փիլիսոփայությունը ազդել է նրանց վրա, քանի որ այդ վարդապետությունը նույնպես պահանջում էր, որ դիտողությունը միայն այն իրերի և երևույթների հետ կապ ունենա, որոնք կարող են մեր անմիջական քննությանը ենթարկվել, իսկ զգացմունքների, անհատական ենթադրությունների վրա հիմնված դատողությունները պետք է անարժեք համարել: Պառնասյան բանաստեղծությունը մի բացառիկ և անբացատրելի երևույթ չէ, այլ նա ժամանակի ընդհանուր ձգտումներին համապատասխանող բանաստեղծություն է» , — ասում է Մաուենճյանը (Հ, 1916, 245):*

*Անշուշտ, իր ժամանակի համար այստեղ կան որոշ հետաքրքրքիր դիտողություններ, սակայն կատեգորիկ ու սխալ է դասախոսի այն հայտարարությունը, թե ուղղության էությունն այն է, որ պառնասականների բանաստեղծությանը կարող են նյութ ծառայել միմիայն առարկայական թեմաները, իսկ անձնական հույզերն ու զգացմունքները՝ երբեք, որ պառնասյան ուղղությունը յուրօրինակ հակադրություն է ռոմանտիկ բանաստեղծության, որն, իբր, սպառել էր անհատական հույզեր արտահայտող բոլոր թեմաները: Մաուենճյանը նաև այս երևույթով էր բացատրում պառնասյան բանաստեղծների երկերում տեղ գտած Հնդկաստանի, Հունաստանի, արևադարձային երկրների բնանկարների, հավատալիքների, արձանների նկարագրությունները և «անձնական» բնույթ ունեցող պատկերները: Նկատի ունենալով Սյուլլի Պրյու-*

դոմի պոեզիան՝ քննադատը չէր բացառում, որ պառնասականները կարող են բարոյաբանական և փիլիսոփայական խնդիրներ արծարծել՝ «սրտի հույզերը գունավորելով», թեև «առարկայական նյութեր են սիրում նրանք»: Բոլոր պառնասականներին անվանելով հռետեսներ՝ Մատենճյանը առանձնացնում է միայն Սյուլլի Պրյուդոմին՝ իբրև մտքի ու սրտի աշխարհից քաղած նյութերը փիլիսոփայորեն մշակող բանաստեղծի, մի սկեպտիկի, որի տողերում, սակայն, բաբախում է զթառատ մի սիրտ, որը և նրա տրտունջները դարձնում է առանց բողոքի, առանց վայնասունի և նրա քնարին հաղորդում է ազնիվ տխրություն: Պառնասականներին համարելով «արվեստը արվեստի համար» տեսության կողմնակիցներ՝ դասախոսը քննության ենթարկեց նաև նրանց երկերի լեզվաոճական առանձնահատկությունները՝ ընդգծելով հատկապես հեթանոսություններից դույներ, գծեր, ոճեր առնելու նրանց նախասիրությունը և այլն: Մատենճյանի արտահայտած որոշ մտքերի հետ չհամաձայնվեցին Ա. Վշտունին, Ստ. Լիսիցյանը, Վ. Մենակը (Ահարոնյան) և ուրիշներ: Վշտունին, հակադրվելով նրան, հայտարարեց, որ պառնասականությունը անհատականություն չի ժխտում, իսկ Բոդլերը բոլորովին էլ այդ ուղղության հետևորդ չի եղել: Լիսիցյանի կարծիքով, այդ ուղղությունը չի կարելի պոզիտիվ մտածողության հետ կապել, որ ավելի շուտ պառնասականների գեղարվեստական ըմբռնումները ազդեցին ժամանակի փիլիսոփայական մտածողության վրա: Վ. Ահարոնյանը, օրինակներ բերելով Հայնեի, Բայրոնի, Շիլլերի պոեզիայից, պնդեց, որ միայն անձնական հույզերը կարող են ճշմարիտ և կատարյալ բանաստեղծության նյութ ծառայել: Իսկ Ռ. Աբրահամյանը ու Հ. Սոլովյանը տարբեր հայացքներ դրսևորեցին գրական այդ ուղղության առաջացման պատմական հանգամանքների հարցի շուրջ: Առաջինի կարծիքով, այն որոշ «չկոլայի ու սոցիալական պահանջների» արդյունք էր, իսկ երկրորդի համար պառնասականությունը, չլինելով ժամանակի ծնունդ, դրված էր կեղծ հիմքերի վրա և դրա համար էլ երկար կյանք չունեցավ:

Ռոմանտիզմի հարցերը մեծ չափով շոշափվեցին Ա. Զոպանյանին նվիրված Գասպար Իփեկյանի դասախոսության մեջ (1914,

փետրվարի 6)։ Ընկերությունը քննեց նաև ֆուտուրիզմի մասին դասախոսություն կարդալու համար Վասիլի Կամենսկուն հրավիրելու հարցը։ Սակայն այդ դասախոսությունը չկայացավ։

Այսպես, դրական մեթոդի, հոսանքների և ուղղությունների, շարժումների և դպրոցների մասին հայ դրականագիտության պրպտումները արդեն սկսվել էին և դրա վառ արտահայտությունը նաև այդ շրջանի մեր քննադատների ասուլիսներն էին հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթներում։

Դասախոսություններում չէր անտեսվում նաև դրականության տեսության կարևոր բնագավառներից մեկը՝ ժանրը։ Այս հարցը արծարծվում էր հատկապես պատմական կամ ժամանակակից թեմայով դրված դրամայի մասին դրական զրույցներում։ 1916 թ. դեկտեմբերի 23-ին Շանթի «Կայսրը» վերլուծվում է ժանրային առանձնահատկությունների տեսանկյունից, և պատմական դրամա ստեղծող հեղինակներին դասախոսը՝ Արշակ Ջամալյանը, առաջադրում է հետևյալ պահանջները.

ա / դրամայի միջավայրը պետք է համապատասխան լինի պատմական միջավայրին,

բ / դրամայի մեջ հիշատակված պատմական փաստերը ճիշտ պետք է լինեն, թեև, իհարկե, դրամատուրգը ազատ է այնպիսի գործողություններ դնել բեմի վրա, որոնց մասին պատմության մեջ հիշատակություն չկա և

գ / պատմական անձնավորությունների բնութագրությունը չպետք է հակասի պատմության տվյալներին» (Հ, 1916, 292)։

Իր եզրակացության մեջ Ջամալյանը նշում է, որ անկախ գեղարվեստական բարձր արժանիքներից՝ Շանթի «Կայսրը» իրրև պատմական դրամա, մեծ թերություններ ունի։

Մանուկ Աբեղյանը «Միջնադարյան հայոց առակները» թեմայով դասախոսությունը կարդալիս (1917, հունվարի 27) տալիս է առակի ժանրային բնորոշումը, անդրադառնում է առակի զարգացման և պատմության հարցերին։ Հայ դրականության պատմության մեջ առանձնացնելով մեկ ժանրի զարգացման շրջափուլերը՝ Աբեղյանը պնդում է, որ առակը պատմական կարևոր դեր է

ունեցել, քանի որ նրա միջոցով է գրականությունը աշխարհիկացել, հետզհետե մոտեցել ժողովրդին:

Ընկերության երեկույթներից մեկում հատուկ դասախոսություն է կարդացվում նաև քնարերգության մասին: Ռուբեն Աբրահամյանը «Պոեզիան և լեզուն որպես ստեղծագործություն» դասախոսության մեջ (1917 թ. փետրվարի 10) փորձում է բնութագրել քնարերգության ժանրային առանձնահատկությունները: Մասնակիորեն ներկայացնելով Շիլլերի, Սպենսերի, Վեսելովսկու տեսությունները գեղարվեստի և պոեզիայի մասին՝ նա առավելությունը տալիս էր վերջինին, որի տեսության համաձայն պոեզիան առաջացել է գեղարվեստական սինկրետիզմից, միացյալ գեղարվեստից, որի մեջ մտնում էին ռիթմական պարի, երաժշտական և խոսքի տարբեր տեսակներ: Ռ. Աբրահամյանը քննադատում է Վեսելովսկուն այն բանի համար, որ նա պոեզիայի անհրաժեշտ միակ պայմանը համարում է ռիթմը, չափը և իբրև չափազուրկ, բայց պոեզիայի մեծարժեք տեսակներ, նշում է առակը, առածն ու հեքիաթը: Իհարկե, դասախոսը լավ չի պատկերացնում քնարերգության և արձակի ժանրային սահմանները, հետևաբար ճիշտ չի մեկնաբանում Ա. Վեսելովսկու կարծիքը: Խոսելով զգայական պատկերի և «արտաքին ձևի» զուգորդման, փոխանունության և փոխաբերության, բառի գեղարվեստական նշանակության մասին՝ Ռ. Աբրահամյանը գրական բոլոր ժանրերին բնորոշ հատկանիշները վերագրում է բանաստեղծությանը, նույնացնում է պոեզիա և գրականություն, գեղարվեստ հասկացությունները: Ջտարբերակելով քնարականությունը քնարերգությունից՝ նա Շեքսպիրի «Օթելլոն» հայտարարում է բանաստեղծական երկ, իսկ նրա «դրամատիկական կոմպոզիցիան»՝ լոկ արտաքին ձև: Գեղարվեստական լեզվի մասին դատողություններ անելիս Ռ. Աբրահամյանը մեծ չափով օգտվում էր հայտնի լեզվաբաններ Հումբոլտի, Շտայնթալի, Լացարոսի և մանավանդ Պոտեբնյայի աշխատություններից (Հ, 1917, 33): Առաջին անգամ ընկերության երեկույթներում հետաքրքիր փորձ էր արվում գրական երկի վերլուծությունը կատարել լեզվաբանության վերջին նվաճումների անմիջական օգտագործմամբ:

*Գրական ասուլիսներում առանձին դիտողություններ էին արվում նաև գրողների կողմից ժանրերի օգտագործման մասին: Մ. Մատենճյանը Սունդուկյանի «Պեպոյի» առիթով փորձեց վեր հանել կատակերգության ժանրային առանձնահատկությունները: Քաջ ծանոթ լինելով այդ ժանրի պատմությանը, տարբեր դարաշրջաններում նրան վերագրվող յուրահատկություններին՝ քննադատը ասում է. «Պեպոն» ժամանակակից իմաստով կոմեդիա չէ, չնայած քնորոշված է «կոմեդիա» բառով: Նա կոմեդիա չէ նույնպես Արիստոֆանի կոմեդիաների իմաստով, երբ թատերական կամ ոչ թատերական գրվածքը սկսվում է տխուր և վերջանում ուրախ (Դանթեի «Աստվածային կատակերգությունը»): «Պեպոն» կոմեդիա է մոլիերյան կոմեդիայի իմաստով, երբ հանդես են բերվում երկու հակադիր ուժեր՝ որոշ խոչընդոտներ հաղթահարելու համար, երբ մանավանդ ծաղրվում են կյանքի որոշ կողմերը: «Պեպոյի» մեջ ևս... կան տխուր, ինչպես և ուրախ էջեր, ընդհանուր առմամբ նա տխուր է, այնպես որ այդ պիեսը եթե գրված լիներ մեր ժամանակներում, դուցե անվանվեր դրամա» (Հ, 1914, 8):*

*Հայ գրողների կովկասյան ընկերության ասուլիսներում դրականության տեսության, գեղագիտության հարցերի քննարկման առիթով հետաքրքրական է Դեմիրճյանի «Գրական արվեստ» խորագիրը կրող դասախոսությունը (1917, փետրվարի 24), նա առանձնացնում է հակադրությունը, պատկերը և պատրանքը ու վստահեցնում, որ հենց դրանց մեջ պետք է որոնել գեղարվեստական երկից պահանջվող չունչը, կենդանությունը, կյանքը: Հակադրության մասին արված նրա դատողությունները այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը և որոշ չափով բավարարում են ժամանակակից գրականագիտության պահանջներին: Բնությունն ու մարդկային կյանքը լի են հակադրություններով: Վերջինս իր ինքնատիպ դրսևորումն ունի նաև արվեստում: Եվ բոլոր դեպքերում, ինչպես Դեմիրճյանն է ասում. «Հակադրությունը շեշտում, զգալի է դարձնում դրությունը և հաճույք է պատճառում մեզ» (Հ, 1917, 51): Վերջինս, իհարկե, պարտադիր պայման չէ, սակայն հակադրության առաջին հատկանիշի ձևակերպման մեջ Դեմիրճյանը միանգամայն իրավացի էր: Շարունակելով իր խոսքը՝ նա*

ասում է. «Գեղարվեստական երկի մեջ հակադրությունը ուժեղացնում է երկու դրությունները: Արծաթափայլ լուսինը գեղեցիկ է հակադրվում սև նոճիների արանքում: Թումանյանի «Լոռեցի Սաքոյի» սկզբում անշարժ, մռայլ քարափներին գեղեցիկ է հակադրվում խելագար շարժումների մեջ փրփրած Դևբեդ գետը: Երաժըշտության մեջ ներդաշնակությունն ու աններդաշնակությունը հակադրելով իրար՝ կյանք են մտցնում եղանակի մեջ: ... Հակադրությունը այլազանություն, թարմություն, աչխույժ է մտցնում գեղարվեստական երկի մեջ» (Հ, 1917, 51): Դ. Դեմիրճյանի խոսքը վերաբերում է ոչ թե բառի, այլ պատկերի, կերպարի և գործողության հակադրությանը: Նա առհասարակ մեծ նշանակություն էր տալիս գեղարվեստական պատկերին, համոզված, որ այն մեծ դեր ունի և առաջին հերթին նրա միջոցով է գեղարվեստական երկը կենդանանում, չունչ առնում, և եթե գիտության մեջ պատկերը աղքատության նշան է իբրև արտահայտության ձև, իսկ անալիզը՝ հարստության, ապա գեղարվեստական երկում վերլուծությունը դատողությունը աղքատության նշան են, իսկ պատկերը՝ հարստության: «Անալիզով մենք հասկանում ենք, – ասում է նա, – իսկ պատկերով զգում ենք: Գեղարվեստը չատ գործ չունի մեր մտքի հետ, նրա գործը մեր հոգու, զգացմունքների հետ է» (Հ, 1917, 51): Ի սկզբանե, դեռևս Արիստոտելի ժամանակներից, անտիկ շրջանից արվեստաբանությանն ու գրականությանը հետաքրքրել են գրողի և գիտնականի համեմատությունը: Բելինսկու խոսքերով, օրինակ, նրանցից մեկը՝ գիտնականը, ապացուցում է, մյուսը՝ արվեստագետը, ցուցադրում է, երկուսն էլ համոզում են, միայն թե մեկը տրամաբանության օգնությամբ ու միջոցներով, մյուսը՝ պատկերներով, բայց մեկին լսում և հասկանում են քչերը, մյուսին՝ բոլորը: Թե՛ Դեմիրճյանը և թե՛ Բելինսկին գիտական և պատկերավոր մտածողության տարբերությունը դնում են գրողի և գիտնականի համեմատության հիմքում: Ընկերության երեկույթներից մեկում նույն հարցին անդրադարձել էր նաև Ն. Աղբալյանը (1913, դեկտեմբերի 19): Ըստ նրա՝ հարցի արծարծումը կարևորվում է և պայմանավորվում արվեստի էությունն ու նպատակը պարզելու անհրաժեշտությամբ: Ի տարբերություն գրակա-

նուէյան՝ գիտուէյան մեջ կարող է մնծ գիտնական համարվել և միջատաբանը, որի ուսումնասիրուէյան շրջանակները ավելի նեղ են և կենդանաբանը, որն իր հետազոտուէյուններում կարող է հասնել ընդհանուր օրենքների բացահայտման: Մեկին անվանելով գյուտարար, մյուսին՝ գյուտի ընդհանրացնող, Աղբալյանը կարծում է, որ այդպիսիք կան նաև գեղարվեստում, միայն թե նրանց միջև տեսնում է ավելի էական տարբերուէյուններ: Գյուտարարներին անվանում է իսկական արվեստագետներ, իսկ նրանց ստեղծագործ աշխատանքից օգտվողներին՝ արվեստի լրագրողներ, Ժյուլ Վեռնին արվեստագետ չի համարում միայն այն բանի համար, որ «նա չէ ուսումնասիրում, վեր-լուծում մարդկային հոգին» (Հ, 1913, 282):

Ըստ Աղբալյանի, արվեստագետ կարող են համարվել միայն նրանք, ովքեր հետազոտում են մարդկային հոգին և որևէ ձևով, հատկապես գեղարվեստական պատկերով արտահայտում են մարդկային ներաշխարհի իրենց ընկալումը, հոգեկան ամենատարբեր շերտերի բոլոր նրբերանգները: Ժյուլ Վեռնի ստեղծագործուէյանը տված Աղբալյանի գնահատականը վիճելի է, իսկ գիտնականի ու գեղարվեստագետի տարբերակման հիմքում դրած մարդկային հոգու արտացոլման հատկանիշը՝ թերի: Բայց, անշուշտ, իրավացի էին բոլոր այն քննադատները, ովքեր այդ տարբերակման հիմքում դնում էին գեղարվեստական պատկերը՝ իբրև գրականուէյանը բնորոշ հատկանիշ՝ չանտեսելով զանազան այլ առանձնահատկուէյուններ ևս:

Գեղարվեստական պատկերի մասին կարծիքների փոխանակումը պատահական չէր ընկերուէյան երեկույթներում: Դրանցից մեկում Հովհաննես Քաջազնունին գեղարվեստական պատկերը բնուէթագրում է իբրև արվեստի մասին պատկերացում, իբրև ստեղծագործական ընկալման և յուրացման «անսպառ աղբյուր»: Քաջազնունին գեղարվեստական պատկերի չնորհիվ ստեղծված կամ ծագած տրամաբանուէյունը անվանում է «էսթետիկ հուզմունք, որը լինում է ներգործական և կրավորական» (Մ, 1917, 11): Հենց այդ գեղագիտական հուզմունքն էլ բանախոսը համարում է գեղարվեստի հիմնական պահանջը: Իր բանախոսուէյան վերջում

*Քաջազնունին չեչտում է, որ թեև գեղարվեստական պատկերի ու առհասարակ գեղարվեստի մեջ որևէ գրականություն նյութական իմաստով չկա, այնուամենայնիվ, հենց դրանք են հանդիսանում մարդկային առաջադիմության այն գլխավոր գործոնը, որով ազգերը օղակվում են իրար: Ըստ Քաջազնունու՝ գեղարվեստի «էական դերը» հենց նրա համամարդկային լինելու մեջ է, երբ գեղարվեստական պատկերը միևնույն ուժով «էսթետիկ հուզմունք» է առաջացնում ցանկացած ազգի ներկայացուցչի մեջ:*

*Գրականագիտության մեջ գեղարվեստական պատկերի բազմաթիվ իրարամերժ կամ իրար լրացնող սահմանումներ ու բնութագրումներ կան: Հեգելի կարծիքով, գեղարվեստական ստեղծագործությունը պետք է արտահայտի ոչ թե համընդհանուրի բովանդակությունը իբրև այդպիսին, այլ պարտավոր է կոնկրետացնել ու անհատականացնել համընդհանուրը՝ տալով նրան եզակի բնութագիր[16]: Հենց այդ եզակի դրսևորումը գրական երկում գեղարվեստական կոնկրետ պատկերն է: Ըստ պատկերային մտածողության հայտնի ուսումնասիրողներից մեկի՝ Մ.Բ. Խրապչենկոյի՝ պատկերը բաղադրող հիմնական տարրերն են՝ իրականության, աշխարհի մասին ունեցած մարդու պատկերացման ընդհանրացումը, զգացմունքային վերաբերմունքի արտահայտումը, իդեալի, կատարյալի, կյանքի գեղեցկության գեղագիտական վերստեղծման մարմնավորումը և նրա գեղագիտական ազդեցությունն ու ներգործությունը ընթերցողի, հանդիսատեսի, ունկնդրի ընկալման վրա: Խրապչենկոն գեղարվեստական պատկերը բնորոշում է նաև իբրև մարդու հոգևոր «ես»-ի ընդհանուր նշանակություն ունեցող հատկանիշների համադրություն, աշխարհում գոյություն ունեցող կարևորի ու էականի մասին մարդկային պատկերացման ընդհանրացում, գեղեցկության, կատարելության իդեալի մարմնավորում և այլն[17]:*

*Պատկերի կառուցվածքում խիստ միասնության մեջ են գտնվում աշխարհի համադրական յուրացումը, գրողի զգացմունքային վերաբերմունքը ստեղծագործելու առարկայի նկատմամբ: Սակայն ժամանակակից գրականագետը խոստովանում է, որ իր սահմանումը չի կարող պատկերի բնութագրում հանդիսանալ,*

*քանի որ մի կարճ ձևակերպման մեջ անհնար է սպառել այնպիսի բարդ երևույթի էությունը, ինչպիսին գեղարվեստական պատկերն է: Հետևաբար, Քաջաղնունու, Դեմիրճյանի բնութագրումները նույնպես հեռու են պատկերի էությունը բնորոշող վերջնական սահմանումներ լինելուց և մնում են ընդհանուր դիտողությունների սահմաններում, մանավանդ որ նրանց նպատակներից էլ դուրս էր տալ պատկերի ամբողջական բնութագիրը: Նույնը պետք է ասել նաև ընկերության դրական ասուլիսներում արտահայտված տեսական հարցերին վերաբերող մյուս կարծիքների մասին: Սակայն այսօր դրանք մեծ հետաքրքրություն են ներկայացնում և ունեն որոշակի նշանակություն տեսական տարբեր պլրոբլեմների հետագա ուսումնասիրության և բացահայտման գործում: Այս առումով նշանակալից է նաև Դեմիրճյանի կողմից պատկերի մեջ երկու հիմնական տեսակների առանձնացումը: Ըստ Ա. Դրյոմովի՝ պատկերը սկզբունքորեն գիտակցության և կյանքի վերափոխման ինքնուրույն ամբողջական ձևն է[18]: Իրականում գեղարվեստական պատկերի բովանդակությունը ոչ թե կյանքն է իր օբյեկտիվ ռեալականությամբ, այլ դրողի անհատականության, աշխարհայացքի մեջ բեկված կյանքը, այսինքն՝ իրականության ինքնատիպ և յուրօրինակ ընկալումը: Նաև սրանով կարելի է պայմանավորել պատկերի տարբեր տեսակների գոյությունը, որոնցից Դեմիրճյանը մատնանշում է նկարչականն ու երաժշտականը: Իր միտքը պարզաբանելու համար օրինակներ բերելով հայ դրականությունից՝ նա Դուրյանի «Տրտունջքի», «Այժմեն թող չանթ մը ըլլամ դալկահար» տողը համարում է նկարչական պատկեր, քանի որ այն չանթի գույնը վերստեղծում է մեր երևակայության մեջ, իսկ Ավ. Իսահակյանի «Շընկչնկալով հովն է փչում» տողը՝ երաժշտական, քանի որ այն ստիպում է լսողությանը հիշողությամբ երևակայել մի ձորի պատկեր: Ըստ Դեմիրճյանի՝ նկարչական պատկերը գործ ունի գույնի ու ձևի հետ, հետևաբար, ավելի հեշտ կարելի է երևակայել ու պատկերացնել, քան երաժշտականը, որի դեպքում երևակայությունը կարիք ունի մեծ ճիդերի: Այստեղից դասախոսը բխեցնում է գեղարվեստական երևակայության դերի անհրաժեշտությունը գրական երկի ստեղծման և ընկալման գործում:*

Այս երևույթին նա տալիս է «պատրանք», «ինքնախաբեություն» անունը, առանց որի գեղարվեստական ստեղծագործությունը իր հակադրություններով ու պատկերներով դեռևս չի կարող «բոլորովին հասնել կենդանի դառնալու կատարելության» (Հ, 1917, 51), և ստեղծագործական թերությունները կլինեն անխուսափելի: Դեմիրճյանը չի մոռանում նաև զուգահեռաբար ընդգծել գեղարվեստական երևակայության դերը ստեղծագործողի համար: Ստեղծագործելը դիտելով հոգեֆիզիկական երևույթ՝ նրանում տեսնում է և՛ ծրագրված նպատակ, և՛ գիտակցականություն, և՛ «ինքնաբերականություն», և՛ տարերայնություն: Գրող-քննադատը նկարագրում է այն հոգեկան և ֆիզիկական երևույթները, որոնց ենթարկվում է յուրաքանչյուր արվեստագետ մտահղացման չրջանում:

«Աբովյանը, — ասում է նա, — իր «Վերքը» ստեղծելուց առաջ դեռ լավ չէր գիտակցում, թե ինչ պետք է գրե: Նա ուզում էր «գլուխը մահու տալ»: Նա ընկնում էր սար ու ձոր: Վերջապես, նա գտավ իր վեպի նյութն ու ձևը, սկսեց գրել, գիշերները զառանցում էր, հիվանդագին դրության մեջ էր, մինչև գրեց և հոգով, մարմնով թեթևացավ: Միքելանջելոն գիշերը իր զգեստները շատ անգամ չէր հանում, որ երբ հանկարծ զարթներ «ստեղծելու կրքից» զգեստը հագնելու տանջանքը չունենար և վրա վազեր իր արձանին և սկսեր քանդակել» (Հ, 1917, 51): Այս հարցերի կապակցությամբ Դ. Դեմիրճյանը շեշտում է արվեստում չափի զգացման պահպանման անհրաժեշտությունը: Նա իրավացիորեն գտնում է, որ չափի խախտումը գրողի կողմից հակագեղարվեստական է, ու եթե հակադրություններն ու պատրանքները շատ ուժեղ լինեն, ապա մարդկային զգացումները կարող են ընդարմանալ: Սակայն չափի սահմանները որոշելը շատ դժվար է, քանի որ այն վերջին հաշվով պայմանական երևույթ է. «Խիստ ուժեղ հակադրությունը հակագեղարվեստական է, բայց մի հակադրություն մի երկի մեջ կարող է ուժեղ լինել, մյուսում՝ թուլ...

Հակադրություններն ու պատրանքները պետք է միջակ լինեն» (Հ, 1917, 51):

Գրական հինգշաբթիներում գեղարվեստի մասին դասախոսություններ կարդացին նաև Հ. Սուրխաթյանը (1916, մայիսի

12) և Հ. Քաջազնունին (1917 թ. հունվարի 13): Վերջինիս մենք արդեն անդրադարձանք, սակայն մյայն գեղարվեստական պատկերին տված նրա բնութագրման առումով: Քաջազնունու դասախոսության մեջ կային գեղարվեստի տարբեր խնդիրներին վերաբերող այլ հետաքրքիր բնորոշումներ ու դիտողություններ: Իր զեկուցման մեջ նա թվարկեց իրեն հայտնի գեղարվեստի բոլոր դվխավոր հատկությունները, մատնանշեց գեղագիտական զգացմունք առաջացնելու երևույթը, անդրադարձավ արվեստի ծագման հարցերին և այլն: Գեղարվեստի առաջացման կողմնակի չարժառիթներից համարեց սերը, սեռական կյանքը և որ ամենակարևորն է՝ «էսթետիկ հուզմունքը», այսինքն՝ մարդուն բնությունից տրված գեղագիտական պահանջը. «Վայրենի ցեղերից սկսած, — ասում է նա, — գեղարվեստի պահանջը եղել է և ինչպես արտահայտվում է նրանց գեղեցկանալու, դուր գալու մեջ, որ նույնպես հետևանք է սիրո և սեռի, չնայած որ ժամանակի ընթացքում ձևերը փոխվում, զարդանում են, բայց էությունը մնում է անփոփոխ» (Մ., 1917, 11):

Խոսելով արվեստի ուտիլիտարիզմի մասին՝ Քաջազնունին կարծում է, որ գեղարվեստի մեջ ոչ մի օգտակարություն և շահկանություն չկա: Ճիշտ է, քննադատը սխալվում էր այս հարցում, սակայն իրավացի էր գեղարվեստի դերը գնահատելիս: Նա արվեստը հռչակում է իբրև մարդկության առաջադիմության մեծ գործոն, որը ազգերին օղակում է իրար, ունի ճանաչողական արժեք և այլն:

Արվեստի՝ հասարակական կյանքում ունեցած դերի հարցի շուրջ ընկերության մեջ համախմբված քննադատներից գրեթե բոլորը ունեին մեկ ընդհանուր կարծիք՝ արվեստի օգտակարությունը կյանքին ու մարդուն ծառայելու մեջ է: Նրանք հաճախ էին քննարկման առարկա դարձնում նաև «արվեստը արվեստի համար» տեսությունը: Առհասարակ արվեստի մասին տարբեր տեսությունների հարցը Լեոն պայմանավորում էր սերունդների և ժամանակների փոփոխությամբ: Նա նկատում է, որ հասարակական ռեակցիայի պայմաններում գրականությունը ընդունում է «արվեստը արվեստի համար» նշանաբանը, իսկ հասարակական

հեղաբեկումների և պայքարի շրջանում՝ «արվեստը կյանքի համար», որ յուրաքանչյուր սերունդ ունի գեղարվեստին վերաբերող իր դավանանքը: Ալ. Ծատուրյանին նվիրված դասախոսության մեջ Պ. Մակինցյանը առարկում է Լեոյին՝ պնդելով, որ մաքուր և միտումնավոր արվեստ գոյություն չունի: Ըստ Մակինցյանի՝ Լեոյի սահմանման մեջ ընդգծվում էր, որ միտումնավոր արվեստը հասարակական երևույթներ է մարմնավորում, իսկ մաքուրը՝ անձնական, որ միտումնավոր արվեստագետը դիտակցված դիտավորություն է ունենում ընթերցողի մեջ մի հայտնի միտք ու զգացմունք առաջացնել ու դրանով հասնել մի հայտնի նպատակի: Իսկ քննադատի կարծիքով այդպիսի ձևակերպումը ջնջում էր տարբերությունը լրագրողի, հրապարակախոսի և արվեստագետի միջև. «Սակայն դիցուք բանաստեղծի նյութը ոչ հասարակական և ոչ անձնական բնույթ ունի. դիցուք նա սոսկ պեյզաժիստ է, միտումնավո՞ր կլինի նրա արվեստը, թե՞ մաքուր, – հարցնում է նա, – ավելի ևս ակնբախ կդառնա այդ բաժանումի արհեստականությունը, եթե փորձենք մտցնել երաժշտության մեջ» (Հ, 1914, N 13):

Իր պատասխան խոսքում Լեոն արդարացիորեն բողոքում է, որ Մակինցյանը իղուր է մեղադրում իրեն «մաքուր արվեստի» և «միտումնավոր արվեստի» դասակարգման հեղինակը լինելու մեջ, իրականում այդ բաժանումը և նրա մասին եղած վեճերը եղել են շատ հնում, գալիս են Արիստոտելի և Պլատոնի ժամանակներից:

Գրողների ընկերության ասուլիսները վկայում են, որ XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում, ինչպես Եվրոպայում, Ռուսաստանում, այնպես էլ մեզանում մեծ տարածում էր գտել «մաքուր արվեստի» կամ «արվեստը արվեստի համար» տեսությունը, որն ուներ ինչպես կողմնակիցներ ու պաշտպաններ, այնպես էլ՝ հակառակորդներ:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը գրական մի ամբողջ երեկույթ նվիրեց գեղարվեստական ստեղծագործության մեջ միտումի արտահայտման հարցին: «Տենդենցիան գրականության մեջ» թեմայով զեկուցեց Լեոն (1913, դեկտեմբերի 19): Նա, ինչպես և ժամանակի այլ քննադատներ հաճախ էին չփոթում միտումը ստեղծագործության գաղափարայնության հետ: Գրական երեկոյի ընթաց-

քում տարբեր գրողներ ու գրականագետներ միաժամանակ տվեցին միտումի զանազան սահմանումներ: Դ. Դեմիրճյանի ընորոշմամբ միտումը գեղարվեստական երկի մեջ կյանքի աղավաղումն է հօգուտ որևէ գաղափարի: Այն հեղինակի կանխորոշումն է՝ ուղղել ընթերցողի կամքը մի նպատակի: Միտումը ընդունելով իբրև բացասական գործոն՝ Դեմիրճյանը կտրուկ կերպով մերժում է այն: Տիգրան Հովհաննիսյանը նույնպես վնասակար է համարում միտումը գեղարվեստում՝ համոզված լինելով, որ գրողը այն «զոռով» մտցնում է ստեղծագործության մեջ, որպեսզի պաշտպանի այն գաղափարը, որին նա հասել է «դատողությամբ»: Արշակ Ղազարյանի ձևակերպումով «միտումը արվեստագետի սուբյեկտիվ ապրումների գռեհիկ ձևն է» (Հ, 1913, N 282): Նրանք բոլորն էլ յուրովի իրավացի էին, քանի որ ժխտում էին երկի՝ գեղարվեստական բովանդակությունից չբխող, կյանքի ճշմարտությունը աղավաղող միտումը, հեղինակի կողմից կանխամտածված դրույթը գեղարվեստական երկի մեջ արհեստականորեն ներմուծած, մերկապարանոց քարոզի ձևով դրսևորված գաղափարը: Սակայն ընկերության անդամներից քիչ չէին նաև այնպիսիները, որոնք միտումը ընկալում էին դրական իմաստով և ակամայից ընդունում էին գրականության գաղափարաբանությունը՝ իբրև գրական երկի գնահատման չափանիշ: Հ. Սոլովյանը, օրինակ, վստահեցնում էր, որ միտումը գրական երկի անկապտելի հատկանիշն է, առանց որի գեղարվեստական արտացոլումը անհնար է: Նրա կարծիքով, յուրաքանչյուր արվեստագետ իր առջև դնում է հասարակական որոշակի նպատակներ, և ձգտում է ամեն կերպ հասնել դրանց իրագործմանը, հետևաբար, միտումը ուռկա է արվեստի բոլոր ստեղծագործություններում:

Նկատի ունենալով գեղարվեստում միտումի դրսևորման ձևերը՝ որոշ քննադատներ գրողներին երբեմն բաժանում էին երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Ըստ Ա. Ղազարյանի՝ Տոլստոյը սուբյեկտիվ է, Շեքսպիրը՝ օբյեկտիվ: Այս հասկացությունների տակ գրականագետը հասկանում էր միտումնավոր և անմիտում գրողներ, այն էլ՝ միտումի թերի ու սխալ ընկալմամբ, և դրանով իսկ նեղացնում ու նսեմացնում էր գրական երկում գրողի օբյեկտիվության և սուբյեկտիվության դրսևորման սահմանները: Չնա-

յած երկու կարգի գրողներն էլ համարվում էին ընդունելի, եթե, իհարկե, նրանց ստեղծած գրական երկերը կառուցված էին գեղեցիկի օրենքներով: Մ. Մաոեենգյանը, սուբյեկտիվության մեջ մեղադրում էր Գրիգոր Զոհրապին, կարծում է, որ նա հաճախ ճարտասանություն է անում և քնարական զեղումներով լցնում պատմվածքի սուղ էջերը: «Զոհրապի «Եսը», – ասում է նա, – չափազանց հաճախ է հանդես գալիս, ստեպ-ստեպ են պատահում այսպիսի ձևեր, – ես տեսա, ես լսեցի, երբ ես անցնում էի, երբ ես աշակերտ էի, երբ ես պաշտպանում էի նրա դատը, այսինքն՝ առաջին դեմքով է պատմում, իր ներկայությունը չատ անգամ է զգալ տալիս: Հատկապես պատմելու այդ ձևը կարելի է երբեմն գործածել, որովհետև մի ձև էլ դա է, հենց նույնիսկ այլազանության համար, կամ երբ ցանկանում ենք իրականությունն հաղորդել ականատես վկայի նման, սակայն դրա փոխարեն «եսի» հաճախակի միջամտությունը նախ վնասում է անանձնականությանը և ապա ստեղծագործական աղքատության նշան է այդ ձևին հաճախակի դիմելը» (Հ, 1913, 265):

Իհարկե, սխալ կլինի այսօրվա գրականագիտական նվաճումների տեսանկյունից քննել Մաոեենգյանի կարծիքը և մեղադրել նրան, որ լավ չի պատկերացնում պատմողի, հերոսի, հեղինակի խոսքի առանձնահատկությունները Զոհրապի նորավեպերում: Մաոեենգյանը ճիշտ է նկատում գրողի արձակի յուրահատկություններից մեկը՝ «եսի» հաճախակի միջամտությունը, այսինքն՝ պատմողի խոսքի տիրապետությունը Զոհրապի արվեստում, սակայն սխալ է գնահատում երևույթը՝ դնելով, որ այն ստեղծագործական աղքատության նշան է: Պատմողը նույնպես, ինչպես հերոսը, հնարովի կերպար է և ստեղծվում է հեղինակի գեղարվեստական մտահղացումը իրականացնելու նպատակով, հետևաբար, այն նույնպես գեղարվեստական խոսք է և չի կարող լինել սովորական խոսքի վերստեղծումը: Մաոեենգյանի եզրակացությունը հավանաբար բխում էր այն բանից, որ Զոհրապի նորավեպերում պատմողի կերպարը գրեթե չի անհատականացվում, քանի որ նա մեծ մասամբ ոչ թե դեպքերի անմիջական մասնակիցն է, այլ՝ ականատեսը: Սակայն հենց պատմողի խոսքում Զոհրապը փորձում է

անհատականացնել հերոսին, նրան, ում մասին պատմում է: Սակայն «Ճեյրան», «Կարծեմ թե», «Վերադարձ», «Արմենիա», «Ռեհան» նորավեպերում պատմողի խոսքը ձեռք է բերում հերոսի խոսքի առանձնահատկություններ, քանի որ գրողը կարողանում է պատմողի խոսքում արտահայտել ուրիշների՝ «ոչ ես» վերաբերմունքը պատմող-հերոսի նկատմամբ: Պատմողի խոսքի դլխավոր յուրահատկությունն այն է, որ նա մի տեսակ կապող օղակ է հեղինակի և հերոսների խոսքի միջև: Պատմողի խոսքում մի կողմից՝ շատ բան կա հեղինակային խոսքից և վերաբերմունքից, մյուս կողմից՝ նրանում զգալիորեն արտահայտվում է ուրիշի՝ հերոսի խոսքը, որը կամ մեջ է բերվում պատմողի խոսքում, կամ ձուլվում է նրան: Հետևաբար, պատմողի խոսքը առնվազն երկձայնային պետք է լինի: Ինչպես նկատում է դրականագետ Մ.Մ. Բախտինը. «Պատմողի խոսքը երբեք չի կարող մաքուր օբյեկտիվ լինել»[19], այսինքն՝ նույնանալ հերոսի խոսքին: Մատենճյանի համար անտեսանելի է մնում նաև այն, որ Զոհրապի արվեստում նույնպես պատմողի խոսքն իր մեջ ձուլում է բոլոր հերոսների և հեղինակի խոսքի տարրերը՝ դառնալով նաև նրանց լեզվական յուրահատկությունների կրողը: Ըստ Մ. Մատենճյանի՝ «ես» (հեղինակի կամ պատմողի) հաճախակի միջամտությունը վնասում է գեղարվեստական պատկերի անանձնականությանը՝ այսինքն՝ օբյեկտիվությանը: Տարբեր գրողների երկերում հերոս-նների խոսքի օբյեկտիվության աստիճանը տարբեր է: Մատենճյանը իրավացի էր՝ ժամանակին նկատելով, որ Զոհրապի արձակում օբյեկտիվությունը թույլ է, որը, սակայն, առանձնահատուկ բնույթ է կրում և ոչ թե գրողի ստեղծագործության դլխավոր թերություններից է, ինչպես կարծում էր քննադատը: Թեև գրողի նորավեպերում պատմողի խոսքն է տիրապետողը, բայց այն իր գաղափարական ուղղվածությամբ դրեթե միշտ համընկնում է հեղինակի խոսքին: Զոհրապը պատմողի խոսքը հաճախ է օգտագործում իր վերաբերմունքը, գեղարվեստական ընդհանրացումն ուղղակի արտահայտելու համար, ձգտում է պատմողի խոսքը այնպես կառուցել, որ ընթերցողը համակրի ու վստահի նրան: Այսուհանդերձ, Զոհրապի ստեղծագործության լեզուն խոսքային ամբողջություն

է, ինքնատիպ գեղարվեստական ամբողջություն, որի մեջ ճուլված խոսքային տարբեր շերտերը՝ հեղինակի՝ պատմողի և հերոսի խոսքը սերտորեն միահյուսված են, փոխադարձաբար պայմանավորում և լրացնում են միմյանց: Հետևաբար, ո՛չ գրողի սուբյեկտիվությունը, ո՛չ էլ պատմողի գեղագիտական հնարանքին դիմել, չեն կարող ստեղծագործական աղքատության նշան լինել:

Այդպես, ընկերության երեկույթներում բազմիցս գրական բանավեճեր են ծագել քննադատության մեթոդի, քննադատի կոչման, գրական ուղղությունների ու ժանրերի, ազդեցությունների, գեղարվեստական երկի պատմականության, նյութի և գեղարվեստական ձևի, գրականության և հասարակական կյանքի, արվեստի ծագման, նրա և հասարակական գիտակցության մյուս ձևերի միջև եղած տարբերությունների, գրականության առանձնահատկությունների, ազգային գրականության, ժողովրդայնության և տեսական-գեղագիտական այլ բնույթի հարցերի՝ պատկերի, կերպարի, գեղարվեստական երևակայության դերի, գեղարվեստական խոսքի տարբեր շերտերի, բազմազանության և տեսական զանազան այլ պրոբլեմների շուրջ: Գրական այդ զրույցներում ձևակերպվում էին տեսության ու գեղագիտության խնդիրների տարբեր մեկնություններ ու սահմանումներ, որոնք թեև շատ հեռու էին վերոհիշյալ հարցերի մասին սպառիչ պատասխաններ լինելուց, սակայն կարևոր են դարասկզբի հայ գրական կյանքի քննադատական և տեսական մտքի պատմության մի որոշակի փուլի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար:

## Հայ գրական ընդհանուր-համազգային լեզվի մշակման հարցի շուրջ

Նոր գրականության կազմավորման շրջանում հայոց լեզվի զարգացման հեռանկարների հարցը ձեռք բերեց հսկայական նշանակություն: Տեղի ունեցավ գրապայքար, որն ավարտվեց աշխարհաբարի հաղթանակով: Այնուհետև գրական լեզվի մշակման խնդի-

*րը չարունակեց մնալ մեր մշակույթի բոլոր առաջադեմ գործիչների, գրողների ու գեղարվեստագետների մտահոգության առարկան:*

*Անցյալ դարի վերջերից մինչև մեր դարի տասական թվականները, գրական ամենաիմքորրիկ խմբավորումներն անդամ, գրեթե առանց բացառության իրենց առաջնային նպատակներից էին համարում գրական լեզվի մշակման ուղիների հարցը:*

*Հայ գրական լեզվի զարգացման պատմության մեջ կարևոր ու նշանակալից փուլ էր XX դարի սկիզբը և հատկապես 10-ական թվականները: Հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերը, քաղաքական ցնցումները, ազգի ֆիզիկական դոյության՝ վերըստին վտանգի տակ դրվելը, մշակույթի ու գաղափարախոսության զարգացումը ավելի ակնհայտ էին դարձնում ընդհանուր մայրենի լեզվի ստեղծման ու մշակման, հարստացման ու կատարելագործման, նրա սահմանները վճռականապես որոշելու անհրաժեշտությունը: Եվ այս փուլի շրջադարձային լինելը պայմանավորված էր հենց նրանով, որ կարևոր, նաև ծայրահեղ հրատապ էր դարձել համընդհանուր գրական լեզվի ստեղծումը: Նպատակը և նրա իրագործման պարտադրությունը պարզ էր բոլորի համար, սակայն ժամանակի գրական և գիտական շրջաններում ընդհանուր լեզվի մշակման ուղիների, հարստացման աղբյուրների հարցում կարծիքները հաճախ էին բաժանվում: Այս իմաստով ևս ուսանելի է Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը, նրա գործունեության ուսումնասիրությունը, նրա ջանքերը հայ ազգային համընդհանուր գրական լեզվի ստեղծման ուղղությամբ:*

*Ինչպես նշվեց արդեն, հայ գրական լեզվի զարգացումը այդ շրջանի կարևորագույն մշակութային խնդիրներից մեկն էր, հետևաբար և ազգային, հասարակական որոշ հաստատությունների, առանձին անհատների, բանաստեղծների ու լեզվաբանների ջանքերով կատարվում էր հայկական աշխատանք լեզվի տարրերը հավաքելու ուղղությամբ. «Էս հանգամանքներում մի ազգային ընդհանուր գրական լեզվի խնդիրը առաջնակարգ խնդիր է», — ասում է Թումանյանը (7, 333):*

*Նա՝ իբրև գրական ընկերության նախագահ, հայտարարում էր, որ իրենց կարևոր նպատակներից մեկը հայոց բարբառները*

ուսումնասիրելու, բառամթերքն ու ոճը ամբարելու, ազգային կենդանի լեզվի, ինչպես և գրական լեզվի բառարաններ կազմելու խնդիրն է (ՈՒՀ, 2, 389): Թումանյանի խորին համոզմամբ, լեզվի զարգացումը հայ ժողովրդի պատմության և գրականության համար առկա պայմաններում արտակարգ մեծ կարևորություն էր ներկայացնում: Դժվար է նրա՝ հայ գրականությանը վերաբերող հոդվածներում և տարբեր բնույթ ունեցող ելույթներում գտնել այնպիսին, որի մեջ նա չանդրադառնա լեզվի հարցին: Հիշենք դրանցից մի քանիսը. «Կյանք և գրականություն», «Հասկերի» հնգամյակի առթիվ», «Հայոց գրական լեզվի խնդիրը», «Հայկազյան ընկերությունը», «Հայերեն գավառական բառարան», «Հայ գրականության վիճակը», «Անպետքն ու պետքականը», «Հայ գրական լեզվի հարցի շուրջ» և այլն: Այդ հոդվածներում հեղինակը հաճախ էր բարձրացնում գրականության համար լեզվի նշանակության հարցը, որն, ինչ խոսք, իրո՛ք որ ահռելի է: «Ժողովուրդները, – ասում է Թումանյանը, – ունենում են հազար ու մի դարդ ու ցավ, այրող-մաշող խնդիրներ, սակայն կան այնպիսիները, որոնք համաժողովրդական են: Եվ այդ ցավոտ խնդիրներից առաջինը լեզվի հարցն է» (6, 531): Դեռ 1913 թ. Թումանյանը Ս. Ամատունուն խոստանում էր գրական երեկույթ հատկացնել գրական լեզվի հարցերին (10, 169): Համազգային գրական լեզվի մշակման հարցերի մասին նախագահի խոստացած առաջին դասախոսությունը տեղի ունեցավ 1914 թ. ապրիլի 24-ին: Զեկուցում էր Դ. Դեմիրճյանը. «Ձկա գրական ընդհանուր լեզու, – դժգոհում է նա և համոզված հայտարարում, որ յուրաքանչյուր գրող իր լեզվով է գրում, իսկ գրական լեզուն օրեցօր լցվում է օտարաբանություններով:

Պետք է վերջապես, – եզրակացնում է դասախոսը, – մշակվի մի գրական լեզու, որ լինի ընդհանուր և ամենքին հասկանալի» (Մ, 1914, 88): Դեմիրճյանը զնում էր նաև գրական լեզվի հարստացման աղբյուրների հարցը, որը հետագայում բազմիցս արծարծվում է ընկերության երեկույթներում: Պատմական փոքրիկ ակնարկ ձգելով անցյալի վրա՝ զեկուցողը քննության է առնում նաև տարբեր գրողների երկերի լեզուն և նրանց առաջնոր-

*դած սկզբունքները: Դասախոսությունից հետո տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Թումանյանը, Ն. Աղբալյանը, Գ. Լևոնյանը, Վ. Ահարոնյանը, Մ. Մաւենճյանը, Գ. Իփեկյանը և ուրիշներ: Գրեթե բոլորը, բացառությամբ Աղբալյանից, արտահայտեցին նույն կարծիքը, ըստ որի՝ դրական լեզվի դռները պետք է լայն բացվեն ժողովրդական բարբառների առջև: Իսկ Աղբալյանը կարծում էր, որ դրաբարը ավելի հարազատ է նոր դրական լեզվին, քան աշխարհաբարը: Վերջում Թումանյանը, դրսևորելով լեզվական հարցերը լուսաբանելու իր հմտությունը, եզրակացնում է, որ լեզուն իր զարգացման ճանապարհին պետք է օգտվի հնարավոր բոլոր աղբյուրներից, իսկ մնացածը «չնորհքի ու ճաշակի գործ է» (7, 544):*

*Այս հարցի շուրջ ընկերության երեկույթներում ելույթ են ունեցել նաև Ռ. Աբրահամյանը, Ստ. Լիսիցյանը, Վ. Տերյանը, Ս. Տեր-Ավետիքյանը, Ա. Ծերեվաճյանը, Ա. Մռավյանը, Վ. Վալադյանը, Հ. Ճուղուրյանը, Գ. Լևոնյանը, Ա. Երզնկյանը, Ե. Վշտունին, Մ. Մաւենճյանը, Հ. Հովհաննիսյանը և ուրիշներ:*

*Լեզվի մասին առավել մեծ ու հետաքրքիր զեկուցում կարդաց անձամբ Թումանյանը (1916 թ. նոյեմբերի 25): Դեմիրճյանի դասախոսությունից անցել էր ընդամենը երկու տարի, բայց դրական լեզվի մշակման, մաքրության և հարստացման հարցը դեռևս օրակարգի խնդիր էր: Ընկերության նախագահը վերստին անդրադարձավ այդ հարցերին՝ իբրև ժամանակի ազգային-մշակութային կարևոր պրոբլեմներից մեկին: Թումանյանը արտակարգ մեծ նշանակություն էր տալիս լեզվի խնդրին: Նա լեզուն դիտում էր իբրև ամեն մի ժողովրդի ազգային դոյության ու էության ամենակարևոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգևոր կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը: Ի վերջո, լեզու ասելով, Թումանյանը առաջին հերթին ազգ էր հասկանում: Նա, լինելով իր ժամանակի լեզվի «ժողովրդական ուղղության» ներկայացուցիչն ու ակտիվ մասնակիցը, հենց այդ տեսանկյունով էլ խոսեց դրական լեզվի աղբյուրների, բարբառների և դրական լեզվի հարաբերության, արևմտահայ ու արևելահայ դրական լեզուների ներթա-*

փանգման, փոխառությունների և այլ հարցերի մասին: Թումանյանին անհանգստացնում էր գրական և ժողովրդախոսակցական լեզվի մեծացող խզումը, անջրպետի առաջացումը, գրական լեզվի սկզբնաղբյուրից հեռանալու պատճառով մի «նոր գրաբար դառնալու» վտանգի գոյացումը: Նա վաղուց արդեն ձևակերպել և ընկերության առաջին երեկույթներում բանավոր շարադրել էր իր հայացքը տարաչխարհիկ և բնաչխարհիկ գրողների մասին: Նույն երևույթը նա տարածում է և գրական լեզվի վրա, նրանում առանձնացնելով գաղութային և բնաչխարհիկ լեզուներ և գրողներ: «Եվ ինչպես գրական լեզուն, — ասում է Թումանյանը, — ու ամբողջ գրականությունն են տարուբերվել էդ երկվության մեջ, մայրենականի, հարազատի ու արհեստականի, չինծու լեզվի մեջ, էնպես էլ առանձին-առանձին գրողները» (7, 293): Թումանյանը նկատի ուներ Պատկանյանին և Սունդուկյանին: Նշելով, որ Պատկանյանի ու Սունդուկյանի լեզուն միշտ տարուբերվել է մայրենի, հարազատ և արհեստական ու չինծու լեզուների մեջ, կարծում է, որ նրանց՝ գրական լեզվով գրված երկերը երբեք չեն հասնելու մայրենի բարբառով գրված երկերին: Գաղութները, հիմնականում լինելով ավելի ապահով պայմաններում, իրենց ձեռքում են պահել դպրոցի, մամուլի, լեզվի ու գրականության, ամբողջ մշակույթի զարգացման գործը: Գրականության ու մամուլի միջոցով է տարածվել նոր գրական լեզուն: Սակայն երբեմն հրատարակիչները, հեռու գտնվելով մայր երկրից ու բնաչխարհից, ջեր-մոցային հայերենը գերադասում էին ժողովրդախոսակցական կեն-դանի լեզվից ու բարբառներից. «Ուրիշ խոսքով, — ասում է Թումանյանը, — շատ ազնիվ ու վսեմ նպատակով հայերեն չիմացող մարդիկ սկսել են հայերեն սովորեցնել հայ ժողովրդին, այսինքն՝ նրա լեզուն փչացնել» (7, 291): Նկատի ունենալով Գ. Արծրունու և Ա. Արասխանյանի գործունեությունը այդ ուղղությամբ՝ Թումանյանը ավելացնում է. «Ժողովրդական առածը էստեղ է ասել, — ճամփեն ո՛ւր, լեզուն ո՛ւր, գրականությունն ո՛ւր... Գրականությունը գաղութների ձեռքին, լեզուն մայր երկրում» (7, 292): Գրաբարի և աշխարհաբարի պայքարի հարցը լուծելով հօգուտ վերջինիս՝ ժամանակը առաջադրել էր թեև ոչ այնքան նոր, բայց ա-

վելի հստակ ու հրատապ լուծում պահանջող խնդիրը՝ արևմտահայ և արևելահայ լեզուների փոխներթափանցման ու մեկ ընդհանուր լեզվի մեջ ձուլելու խնդիրը, որը և դարձել էր ինչպես Դեմիրճյանի, այնպես էլ Թումանյանի դասախոսության հիմնահարցերից մեկը: Թումանյանը, ընդունելով միաձուլման անհրաժեշտությունը, առավելությունը տալիս էր բնաշխարհիկ արևելահայ լեզվին՝ Աբովյանի, Պռոշյանի, Ազայանի լեզվին՝ չանտեսելով, իհարկե, արևմտահայ լեզուն, հատկապես Խրիմյանի և Սրվանձտյանի լեզուն: Նշված գրողների լեզուն Թումանյանը համեմատում է կենդանի ծաղիկների փնջերի հետ, որոնք, ինչպես էլ կազմված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ: Դաղութների ու այլ գրողների ու հրապարակախոսների լեզուն համեմատում է հայրենի պարտեզի պարիսպներից դուրս դույնզդույն թզթերից և արհեստական ծաղիկներից կազմված փնջերի հետ: Սակայն Թումանյանը դաղութային, արևելյան ու արևմտյան գրական լեզուների մեջ տեսնում էր նաև դրականն ու հարազատը, այն, ինչ անհրաժեշտ էր նոր, համընդհանուր ազգային գրական լեզու ունենալու համար, որը նրա կարծիքով գալիս էր «ճոխացած ու ծովացած Արևելքի ու Արևմուտքի ամենաթանկ հոգևոր գանձերով» (7, 294):

Թումանյանը դասախոսության մեջ զգալի տեղ տվեց նաև փոխառությունների հարցին, որը նույնպես կարևոր գործոն է գրական ընդհանուր լեզվի հարստացման ու դեղեցկացման գործում: Յուրաքանչյուր լեզվի համար փոխառությունները անխուսափելի են ու անհրաժեշտ: Նրա զեկուցումը հագեցած էր լեզվական կոնկրետ օրինակներով, իր միտքը հաստատող տարբեր ապացույցներով: Նա կարդաց տարբեր նմուշներ բարբառներից, հայ գրողների ստեղծագործություններից, ատուգաբանեց որոշ փոխառյալ բառեր: Գրական լեզվի հարստացման աղբյուրները նշելիս, Թումանյանը չէր անտեսում նաև դրարարը:

Նոր լեզվի զարգացման ուղիների որոնումը անխուսափելիորեն կապվում էր նրա ապագայի և հեռանկարների խնդրին, որը բազմիցս արծարծվեց ընկերության ամբիոնից: Բանաստեղծը այս հարցում ևս դրսևորում էր իր անսահման մեծ լավատեսությունը:

Նա վստահեցնում էր ամենքին, որ «Հայոց գրական լեզվի խնդիրը, գանազան շրջաններ անցնելուց հետո, վերջնականապես պիտի վճռվի ժողովրդական լեզվի կատարյալ հաղթանակով, ժողովրդական լեզվի հաղթանակը պիտի պսակվի ազգային ուժեղ գրականությամբ, իսկ ազգային ուժեղ գրականություն՝ կնշանակի ինքնուրույն ու հզոր ժողովուրդ» (7, 296):

Թումանյանի լավատեսությունը բխում էր հենց այս համոզմունքից, նոր լեզվի ձևավորման գործում ժողովրդական լեզվի կատարյալ հաղթանակի հավատից: Նա իրավացիորեն լեզվի հարցը կապում էր գրականության, ամբողջ մշակույթի և ժողովրդի հոգևոր հետագա զարգացման հետ: Այս երեքի զարգացումը Թումանյանը միշտ էլ դիտել է անքակտելի միասնության մեջ՝ մեկը պայմանավորելով մյուսով:

Ընկերության արխիվում պահպանված որոշ նյութերից պարզվում է, որ վարչությունը որոշել էր կազմակերպել դասախոսություններ՝ նվիրված հայ բարբառներին: 1916 թ. դեկտեմբերի 18-ի վարչության նիստում Թումանյանը զեկուցում է Արամ Խաչատրյանի դիմումի մասին, որով նա թույլտվություն էր խնդրում դասախոսելու Ղարաբաղի բարբառի մասին: Ջմերժելով նրան՝ վարչությունը որոշում է նախօրոք ծանոթանալ տեքստին (ՀԳԿՀ, ֆ, 45/16): Թեև մամուլում նման բնույթի դասախոսությունների մասին ուղղակի վկայություններ չեն պահպանվել, սակայն որոշումը ինքնին արժանի է ուշադրության, որովհետև լրացուցիչ վկայություն է Թումանյանի՝ հայոց բարբառների հանդեպ ունեցած հոգածության:

Հայ գրողների կովկասյան ընկերության կազմակերպած բոլոր երեկոներն ու դասախոսությունները որոշակի նշանակություն ունեցան նաև հայ գրական լեզվի զարգացման գործում: Գրական ասուլիսներում ընթերցվող զեկուցումները, 1000-ի հասնող ունկընդիրների առջև տեղի ունեցող զրույցներն ու բանավեճերը, Մ. Աբեղյանի, Լեոյի, Ն. Աղբալյանի, Շիրվանզադեի, Թումանյանի, Դեմիրճյանի ու ժամանակի բազմաթիվ այլ գրողների, գրականագետների և լեզվաբանների բանավոր խոսքը, գրական լեզվի մշակման հարցում արտահայտած նրանց հայացքները չէին կարող ի-

*բենց նշանակությունը չունենալ լեզվի զարգացման, մշակման գործում: Եվ այս իմաստով նույնպես ընկերության գործունեությունը «մի գեղեցիկ ազդակ» էր (Հ, 1916, 276):*

*Ընկերության երեկույթներում լեզվի հետ կապված խնդիրներ արծարծվում էին ոչ միայն հատուկ լեզվին նվիրված, այլև այլ թեմայով երեկոներում (Հ, 1917, 5):*

*Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը և հատկապես նրա նախագահի ելույթներն ու հոդվածները մեկ անգամ ևս գալիս են ապացուցելու XX դարի առաջին տասնամյակներում լեզվի մշակման հարցի չուրջ եղած երկու ճյուղավորումների՝ լրագրային հրապարակախոսական ու ժողովրդական ուղղությունների գոյությունը, ինչպես նաև բանավեճերի ու տարաձայնությունների առկայությունը գրական լեզվի զարգացման հեռանկարների հարցի շուրջ:*

*Թումանյանը, լինելով ժողովրդական ուղղության չատագովներից և ղեկավարներից մեկը, գրողների ընկերության միջոցով կարողացավ նաև համընդհանուր հետաքրքրություն առաջացնել հայոց լեզվի պատմության այդ չրջադարձային փուլում ամենամեծ չափերով բարբառների օգտագործման ճանապարհով գրական հայերենը նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու և լեզվական այլ խնդիրների նկատմամբ:*

## Գրականության պաշտպանություն

*Գրողների համար գրական ֆոնդի անհրաժեշտության և կենսական կարևորության մասին արդեն խոսվել է: Հիշենք միայն, որ գրական ֆոնդի հիմնումը Հայ գրողների կովկասյան ընկերության առաջնային նպատակներից և ստեղծման գլխավոր պատճառներից մեկն էր: Գրողների ընկերությունը իր հիմնադրման օրից կարիք ուներ օգտագործելու նույնաբնույթ միավորումների փորձը, քանի որ իրրև գրողների պաշտոնական հաստատություն՝ այն առաջինն էր մեր իրականության մեջ: 1912 թ. նոյեմբերի 18-ին*

Հայ գրողների նորաստեղծ ընկերությունը Մոսկվայի գրական-գեղարվեստական խմբակի և Պետերբուրգի «Կարիքավոր գրականագետներին ու գիտնականներին նպաստող» ընկերությունների վարչություններին ուղարկում է պաշտոնական նամակներ, որոնցում խնդրում է ուղարկել իրենց գործունեությունը արտացոլող զանազան նյութեր (արձանագրություններ, հրատարակություններ, կանոնագրություն, հաշվետվություն և այլն): Պատասխանը, նյութերը և ողջույնի հեռագիրը ստացվում են 1912 թ. նոյեմբերի 30-ին՝ Պետերբուրգի գրական ֆոնդի նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Նաբոկովի և քարտուղար Վ. Կրասնեֆիլդի ստորագրությամբ (ՀԳԿԸ ֆ, 91, 109/7)[20]:

Կազմելով գրական ֆոնդ՝ հայ և ռուս գրողները նպատակ ունեին ոչ միայն նյութապես օգնել կարիքավոր գրողներին ու գրականագետներին, այլ առաջին հերթին հասնել ժողովրդի կողմից գիտնականներին ու գեղարվեստաղետներին նեցուկ լինելու հասարակական պարտքի գիտակցությանը: Նախահեղափոխական շրջանում գրական ֆոնդը յուրօրինակ ձևով կատարում էր նաև գրողների արհմիության դերը: Օգտվելով ռուսական գրական ֆոնդի կանոնագրությունից՝ հայ գրողները այն հարմարեցնում էին մեր իրականությանը՝ նկատի ունենալով միմիայն իրենց գրչի ու գիտական աշխատանքի եկամուտով ապրող զուտ պրոֆեսիոնալ գրողների գրեթե բացակայությունը, որը հայ գրական կյանքի յուրահատկություններից էր:

Գրական ֆոնդի մեջ կարող էին ստեղծվել ֆոնդեր տարբեր գրողների անունով: Հայ գրողների ընկերության մեջ հատուկ գումարներ հավաքվեցին Ա. Արասխանյանի, Սայաթ-Նովայի և Մ. Մաահենճյանի անունով: Նպաստ ստանալու համար վարչությանը անձամբ պետք է դիմեր կա՛մ կարիքավոր գրողը, կա՛մ ընկերության ու վարչության որևէ անդամ: Ծայրահեղ կարիքի, անհետաձգելի դեպքերում վարչության նախագահն իրավունք ուներ երկու վարչության անդամի խորհրդակցությամբ օժանդակություն տալ մինչև 25 ռուբլի և հետո միայն զեկուցել վարչության նիստին «ի հաստատություն» (ՀԳԿԸ Ֆ, 170): Հայ գրողների ընկերությունը իր եռանդուն գործունեության շնորհիվ մեծ ոգևորու-

թյուն և աշխուժություն առաջացրեց հայ ողջ հասարակության, նրա բոլոր խավերի մեջ: Ժողովրդի դրվատական, խրախուսիչ վերաբերմունքը ընկերության նկատմամբ արտահայտվեց նաև նվիրատվություններով, որոնք մեծ չափով հարստացրին դրական ֆոնդը: Բացի Սամսոն Հարությունյանից և Համբարձում Մելիքյանից, որոնց մասին արդեն հիշատակվել է աշխատանքի երկրորդ գլխում, նվիրատուների թվում էր ինքը՝ նախագահը՝ Թումանյանը, Կոստանդին Ալիխանյանը, Տիգրան Հովհաննիսյանը, Գարեգին Ենգիբարյանը, Հ. Բերբերյանը և ուրիշներ[21]: Վերջինս, օրինակ, ընկերությանը կտակել էր 5000 ռուբլի՝ պայմանով, որ նրա տոկոսներով տարեկան մի անգամ մրցանակ տրվեր լավագույն քննադատական գրվածքի համար: Նվիրատվություններ լինում էին նաև տարբեր հասարակական կազմակերպություններից, ինչպես օրինակ, Բաքվի «Զուգուլբայի ջրմուղ», «Ջոկ կանանց» միությունների, «Գողթան» ապահովության կոմիտեից, Գորիսի գրասերների խմբակից, Կարսի գիմնազիայից, «Նոր հոսանք», «Պատանի» ամսագրերից, «Իդմիրլյան» ընկերությունից և այլն[22]:

Գրողների միության արխիվում միայն 1912-1914 թթ. նվիրատուներին չնորհակալություն հայտնող 27 գրություն է պահպանվել (ՀԳԿԸ Ֆ, 97), և քանի-քանի չնորհակալական խոսքով նվիրատուների ցուցակներ են տպագրվել լրագրերում: Նվիրատվությունների առատությունը պայմանավորված էր ընկերության աճող հեղինակությամբ և նրա երեկույթների նկատմամբ եղած համաժողովրդական հետաքրքրությամբ: Պարտադիր և հնարավոր էլ չէր, որ բոլորը մեծ դումարներ տային, սակայն որևէ բան նվիրելու ցանկությունը կար բազմաթիվ դրասերների մեջ: Հօգուտ դրական ֆոնդի գումարները հավաքվում էին նաև «Հորիզոն», «Մշակ», «Կովկասի լրաբեր», հետագայում նաև «Слово» թերթերի և մամուլի այլ օրգանների խմբագրությունների միջոցով: 1913 թ. դրական ֆոնդը ունեցել է 1200 ռ., 1917 թ. մարտին այդ գումարը կազմել է 3545 ռ.:

Այդ տարիներին վարչությունը հնարավորություն է ունեցել նպաստներ տալու 1650 ռուբլի, յուրաքանչյուրին 100-ից մինչև 500 ռուբլու սահմաններում: Ընկերության գործունեության

տարիներին գրական ֆոնդից նպաստ և փոխառություն ստացել են Վահան Տեր-յանը, Շիրվանզադեն, Վրթանես Փափազյանը, Դեբենիկ Դեմիրճյանը, Զապել Եսայանը, Լեոն, Սիամանթոն, Հովհաննես Հովհաննիսյանը, Աթաբեկ Խնկոյանը, Ազատ Վշտունին, Թորոս Թորամանյանը, Րաֆֆու քույրը՝ Ջավահիրը, Դանիել Վարուժանի ընտանիքը և այլն[23]:

Բոլոր խնդրատուները դիմում էին անձամբ Թումանյանին: Շատ չատերը, իրավացիորեն, նրան էին վերագրում գրական ֆոնդի գոյությունը, հաշվի էին առնում նրա հեղինակությունն ու մարդկային բարձր նկարագիրը: Խոսելով հայ գրողի նյութական դժվարությունների մասին՝ Վրթանես Փափազյանը հաճախ խնդրում էր Թումանյանին կարդալուց հետո անմիջապես պատռել նամակները, որպեսզի որևէ այլ մարդ կամ հետագա սերունդները չիմանան այդ մասին (ԹՄ, 1177): «Անպաշտպան եմ բոլորովին, – գրում է նա ընկերության նախագահին, – դիմում եմ քեզ և աղաչում, որ մի պաշտոն, մի բան գտնես ինձ... Հիրավի, մի՞թե հայ գրողների ընկերությունը ոչինչ չի կարող անել ինձ համար» (ԹՄ 1175):

1913 թ. Սիամանթոն Թիֆլիսում էր և մեծ ցանկություն ուներ մոտիկից տեսնելու Էջմիածինը, Արարատը և Անին: Սակայն ճանապարհածախսը չէր բավականացնում: Ընկերությունը ընդառաջ է գնում, և արդեն 1914 թ. մարտի 20-ին Ժնևից Սիամանթոն շնորհակալությամբ գրում է Թումանյանին. «...Կտանեմ լավագույն հիշատակներ» (ԹՄ, 440, 2 ց):

Դիմելով նյութական օգնություն ստանալու խնդրանքով՝ Վահան Տեր-յանը արդարանում է. «... Արտակարգ պայմաններն ստիպեցին ինձ դիմելու այդպիսի արտակարգ միջոցի» (ԹՄ, 1091)[24]:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը ձեռնարկեց նաև կոնկրետ միջոցներ կոտորածից հրաշքով փրկված արևմտահայ գրողների և մտավորականների վիճակը բարելավելու համար: 1916 թ. սեպտեմբերին արևմտահայ գաղթականության լիազոր Թամամշյանի տնօրինությանը հանձնված 300 000 ռ. գումարից իշխանությունները 10 000 ռուբլին հանձնեցին գրողների ընկերությանը՝

«պատերազմից վնասված թյուրքահայ» մտավորականներին օգնելու համար (Հ, 1916, 222, 195, 219): Այդ փոխառությունը ուներ նպաստի ձև, տրվելու էր 6 %-ով և 8 տարի ժամանակով, որից հետո պիտի վերադարձվեր կառավարությանը: Վարչությունը վճռեց մամուլի միջոցով հրավեր կարդալ արևմտահայ մտավորականներին, որպեսզի իրենք ընտրեն իրենցից դրողների ու դործիչների: Արևմտահայ մտավորականները մասնաժողովներ ստեղծեցին Թիֆլիսում, Երևանում և այլ վայրերում, ընտրեցին լիազորներ, որոնք ցուցակներ կազմեցին ներկայացնելու ընկերության վարչությանը: 1917 թ. մարտի 5-ին ընկերության ընդհանուր ժողովում դրված էր արևմտահայ դրողներին ու գրական դործիչներին նպաստ տալու խնդիրը: Այս կապակցությամբ Թումանյանը դրեց «Էսօրվան ժողովի առիթով» հոդվածը, որը սկսվում է այսպես. «Թերևս չեմ սխալվիլ, եթե ասեմ՝ տաճկահայկական հարցը դրեթե ամբողջովին կլանել էր մեր մտավորական երիտասարդության ուժն ու եռանդը» (ՈՒՀ 2, 388):

Նյութական օժանդակության խնդրանքով հեղեղի նման թափվող նամակները ուղղվում էին Թումանյանին ոչ այնքան այն պատճառով, որ նա ընկերության նախագահն էր: Այդ նամակների հեղինակներից չատերը ավելի Թումանյանի անձի ու հեղինակության հետ էին իրենց հույսերը կապում, քան ընկերության: Թումանյանը հայ դրողներից թերևս ամենաժողովրդական դործիչն է եղել մեր մշակույթի պատմության մեջ: Նրան դիմել են բոլորը՝ առանց դասակարգային ու տարիքային խտրության, բանվորն ու դյուղացին, ուսուցիչն ու բժիշկը, զինվորն ու գեներալը, հյուպատոսն ու քաղաքական-հասարակական դործիչը, դրողն ու քննադատը: Նրանք բոլորը պատմում էին իրենց ցավերը, առօրյա մտահոդություննները, հոդսերը, ամենանվիրական զաղտնիքներն էին վստահում բանաստեղծին՝ նրա մեջ զգալով ողջ ժողովրդի համար բաբախող, կարեկից սիրտ[25]: Իր դործով, մարդու ճակատագրի նկատմամբ ունեցած անկեղծ մտահոդությամբ ու անմնացորդ նվիրումով Թումանյանը դարձել էր բոլորի սիրելին: Նրան հավատում էին, յուրաքանչյուր հայ դրող ու դրականության մշակ իր կյանքի ծանր օրերին առաջինը դիմում էր Թումանյանին, նրանից

*սպասում փրկություն ու ելք անելանելի թվացող բոլոր վիճակներից. Պատահական չէ, որ Թումանյանը անսահման մեծ կարևորություն էր տալիս գրական ֆոնդին և նրա միջոցով գրականության պաշտպանության հարցին. «Փոքր ենք, քիչ ենք, – ասում էր նա, – գրողներ չենք կարողանում պահել: Իսկ գրողներ կան ու փչանում են, մեղք են, ափսոս են: Մեզանում մի նավթի հոր փորելու վրա հարյուր հազարներ են ծախսում... մարդկանց հոգին ինչով է պակաս էն գետնից... և պոեզիան նավթից ինչով է պակաս. թող մի քիչ էլ դրա վրա ծախսենք» (10, 203): Նա վստահ էր ու համոզված, որ «...գրողներին պետք է պաշտպանել ուժեղ կերպով: Եվ կպաշտպանենք» (10, 194):*

*Իհարկե, ազգային մեծ գործիչը շատ դժվար գործ էր ձեռնարկել: Մեզանում դրա իրականացումը, այն էլ տասական թվականների անբարենպաստ պայմաններում, շատ դժվար էր: Բայց նա պայքարում էր առանց հուսահատվելու: Բազմաթիվ են Թումանյանի ելույթներն ու հոդվածները գրողի նյութական դրության բարելավման և վերջինիս բարոյական ու մշակութային արժեքի, գրական ֆոնդի կենսական անհրաժեշտության մասին: Դրանցից կարելի է հիշատակել «Ազգային վերածնության կոչը», «Համազգային ֆոնդը և «Մշակի» Շ-երը», «Հրեշավոր երևույթ», «Ազգային պաշտպանության խնդիրը և Ղազարոս Աղայանը», «Գործի ենք անցնում», «Օգնություն հայոց գրականությանը», «Գրականությանը ազգային պաշտպանություն պետք է լինի» և այլն: Թվարկվածներից ամենանշանակալիցը՝ հայ մտավոր չրջաններում առաջացրած աչխուժության առումով, վերջին հոդվածն է: Թումանյանը ձգտում էր, որ այդ ցավալի հարցը մտահոգեր ողջ հասարակությանը, դառնար համաժողովրդական խնդիր, քանի որ տպիներ չարունակ գրողի վիճակը եղել էր անապահով, անհաստատ և շատ դժվար լուծելի խնդիր. «իսկ էնտեղ, որտեղ առանց գրքի ու առանց դիտության կարող են ապրել» էնտեղ գրողն ու դիտնականը չեն կարող ապրել, ավելորդ մարդիկ են» (7, 235), – ասում է Թումանյանը և հասարակության ուշադրությունը հրավիրելով այդ երևույթի վրա՝ հայ և համաչխարհային գրականությունից բերած օրինակներով ցույց է տալիս, թե որքան էլ գրողը*

*տաղանդավոր լինի, եթե նյութական հնարավորություն ու գրական միջավայր չունենա ապրելու և ղարգանալու, ապա անկարող է իր տաղանդը և նույնիսկ հանճարը ծառայեցնելու ժողովրդին: Թումանյանը հիշատակում է Շեքսպիրի, Կոլումբոսի, Դարվինի, Հյուգոյի, Գյոթեի, Ֆիլդուսու, Ռուսթավելու, Կոռնելի, Ռասինի, Մոլիերի, Բյուռնսի, Բևրանժեի, Իբսենի և այլոց մեկենասներին, ժողովուրդներին կամ պետություններին՝ Սոուտհամտոնին, Իզաբելլային, Ֆրանսիական ակադեմիային, Թամար Թագուհուն և այլն, և այլն: Ազգային-պետական օժանդակության անհրաժեշտությունը մեծանում է այն երկրներում, ուր ժողովուրդը թեկուզ և զարգացած, բայց փոքր է իր քանակով, Նորվեգիայում կամ Դանիայում որքան էլ գրողը տաղանդավոր լինի ու հրատարակվի, միևնույն է, գրականությունը չի կարող նրան ապրուստ տալ, քանի որ ընթերցողը քիչ է: Եվ առանց օժանդակ, ազգային կամ պետական օգնության փոքր ազգի գրողը չի կարող զորանալ, դառնալ համաեվրոպական կամ համաշխարհային գրող: Վահան Թոթովենցի վկայությամբ՝ Թումանյանը հաճախ էր իր բանավոր խոսքում կրկնում՝ բանը եվրոպացի գրող լինելը չէ, բանը հայ գրող լինելն է: Ազգային պետության բացակայությունը Թումանյանի կարծիքով ամենևին էլ չի խանգարում ժողովրդին նեցուկ դառնալու իր գրողին ու գրականությանը: Նրա հավաստիացմամբ, արդեն գոյություն ունեցող հայ հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև անհատ-մեկենասները բավարար են հայ գրողին նյութապես ապահովելու գործը իրականացնելու համար: Եվ դլխավոր դժվարությունը ոչ թե միջոցների անբավարարությունը կամ բացակայությունն էր, այլ համազգային դիտակցության բարձրացմանը հասնելը. «Թե ո՛րտեղից կամ ինչպե՛ս, էդ ամենից հեշտն է: Ամենից դժվարը հասկանալն ու կամավորելը, ցանկանալն է» (7, 241): Հայ գրողների կովկասյան ընկերությունը, Թումանյանի համոզմամբ, կարող էր և պարտավոր էր լինել հայոց գեղարվեստի, գրականության և գիտության մարդկանց ապահովության գործի կենտրոնը: Նա առաջարկում էր ստեղծել մի հատուկ գրական-գիտական կաճառ, որը կընտրվեր ընկերության ընդհանուր ժողովում, և որին կմիանային միջոցներ տրամա-*

դրող հասարակական այլ մարմիններ ու հայ կրթական-մշակութային այլ հիմնարկությունների ներկայացուցիչներ: Ահա այդ կաճառին էլ պետք է վերապահվեր իրավունքը որոշելու. «ում օժանդակել, ինչ ձևով, ինչքանով, ինչ ժամանակով ու ինչ նպատակով» (7, 242): Գրական-գիտական կաճառ ասելով՝ Թումանյանը նկատի ուներ նույն գրական ֆոնդը՝ ավելի մեծ ու ընդլայնված թե՛ կազմով, թե՛ իրավունքներով, թե՛ միջոցներով: Նա պնդում էր, որ չի կարելի գրականության մասին խոսել միայն հանդիսավոր օրերին, հոբելյանների ժամանակ, իսկ հանդեսից հետո, ուրիշների առջև պարծենալուց հետո նորից մոռացության տալ: Ընդորում, Թումանյանը գրեթե միշտ՝ քննվող հարցին անդրադառնալիս, անպատճառ շեշտում էր, որ գրողին ու գրականությանը պաշտպանել չի նշանակում խղճալ նրան ու ողորմություն տալ: Նա ամեն կերպ ձգտում էր հասարակության աչքում չատ բարձր պահել գրողի հեղինակությունն ու արժանապատվությունը: Գրողին գնելը հասարակության սրբազան պարտքն է, և գրականության պաշտպանությունը համազոր է ժողովրդի կողմից իր ազգային չահերի դիտակցմանն ու պաշտպանությանը: Ինչպես Թումանյանի յուրաքանչյուր ելույթից հետո, այս անգամ էլ հայ մտավոր շրջաններում, ինչպես ասացինք, մեծ աշխուժություն առաջացավ: Վերստին ցավոտ հարցը սկսեց հուզել ու մտահոգել չատերին: Թումանյանի հոդվածի անմիջական արձագանքներն էին Հ. Տեր-Միրաքյանի, Միտսարի, Լ. Գրիգորյանի, Ջավախեցու նույն «Ազգային պաշտպանություն» վերնագրով, Դ. Դեմիրճյանի «Գրականության պաշտպանություն», Միսակի «Ե՞րբ կարող է ազգը պաշտպան կանգնել իր գրականությանը», Լեոյի «Պառավական բամբասանք», Գր. Մելոյանի «Ինչպես պաշտպանել գրականությունը», Արամայիսի «Գրականության ազգային պաշտպանություն» և այլ հոդվածներ[26]: Թումանյանի ելույթը առիթ դարձավ, որ քննարկվեն և վերլուծվեն բազմաթիվ հասարակական միավորումների գործունեության արդյունքները: Վերը նշված հեղինակներից չատերը անդրադարձան լեզվի, նրա մաքրության, օտարամոլության դեմ պայքարի հարցերին, որոնք Թումանյանի հոդվածի դրույթների հետ ոչ մի ուղղակի առնչություն չունեին:

Սակայն գտնվեցին նաև գրականագետներ ու գրողներ, որոնք ճիշտ ընկալեցին ու հասկացան նրան: Թումանյանի առաջադրած արմատական ու սկզբունքային հարցերից չէր չեղվում Դերենիկ Դեմիրճյանը: Նա առանց երկմտելու իր ձայնը միացնում է ընկերության նախագահի կոչին. «...մենք միանում ենք Հ. Թումանյանի նշանաբանին... Այո՛, պաշտպանությունն է ամեն նյութական և ԲԱՐՈՅԱԿԱՆ»[27] (Ընդգծումը հեղինակինն է): Հասարակության բարոյական օժանդակություն ասելով՝ նա հասկանում էր նաև գրողին կեղծ ու միտումնավոր, սխալ քննադատությունից զերծ պահելը: Թումանյանը ստանում է նաև բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները, արտահայտելով իրենց հիացմունքն ու զոհունակությունը, միաժամանակ նոր առաջարկներ էին անում (ԹՁ, 179, 438, 790): Ստեղծված ընդհանուր հուզումնները ստիպում են Թումանյանին որոշակի քայլեր ձեռնարկել գործը իրական հիմքերի վրա դնելու նպատակով: Հարցի կարևորությունը, պարտադրում էր նրան փնտրել համախոհներ ու գործակիցներ հասարակական հաստատությունների մեջ, և նա ձգտում է խնդիրն արծարծել հայաշատ բոլոր վայրերում, բուն հայրենիքում և գաղութներում: Տիգրան Հովհաննիսյանին՝ Բաքվի Գրասերների միության նախագահին, առաջարկում է մեծ թափով սկսել գրականության ազգային պաշտպանության գործը: Պատասխանը ստացվում է 1916 թ. օգոստոսի 22-ին: Տիգրան Հովհաննիսյանը գրում է իր կատարած գործնական քայլերի մասին. «Ինչ որ դու գրում ես, աշխատեցի իրագործել այստեղ, չէ՞ որ Հայ գրողների ընկերության այդ նպատակը և գոյության իմաստը հենց ազգային գրականության պաշտպանությունն է միանդամայն այն ձևով, որ դու ես քարոզում» (ԹՁ, 790):

Թվում էր, թե գործը շատ լավ հիմքերի վրա էր դրված , և ընկերությունը որոշակի հաջողություններ կարող էր հասնել այդ ասպարեզում , սակայն պատերազմը և հայ ժողովրդին հասած պատուհասը թույլ չտվեցին իրականացնելու այն լայն ծրագիրը, որն իր առջև դրել էր Գրական ֆոնդը: Թումանյանը աշխատում էր անել հնարավորն ու անհնարինը գրողների վիճակը թեթևացնելու համար, բայց արդյունքը գոհացուցիչ չէր և չէր կարող

լինել: Գրական ֆոնդից տրվող փոխառությունները մեծ մասամբ չէին հատուցվում: Այսպես, 1918 թ. տրվել է 1110 ռուբլի փոխառություն, որը ստացողներից և ոչ մեկը չէր վերադարձրել, չնայած բոլոր պայմանագրերով ժամկետներն անցել էին վաղուց, իսկ տրամադրելի գումար մնացել էր ընդամենը 400 ռուբլի: Ընկերության անդամների մեծ մասը չէր կարողանում նույնիսկ տարեկան հինգ ռուբլի անդամավճարը տալ, և գրական ֆոնդը գնալով դատարկվում էր: Հուլիսի 28-ին վարչության նիստում «Խորհրդածության առարկա եղավ ներկա թանկությունը և դրանից առաջացած հայ գրողների տնտեսական ծանր դրությունը» և որոշվեց «Հայ գրողների, գեղարվեստագետների, դերասանների ու գրական ամեն տեսակ գործիչների համար բանալ կոոպերատիվ խանութ» (ՀԳԿԸ Ֆ, 47/3): Շիրվանզադեն վարչության այդ վճիռը համարեց «համակրելի և կենսական որոշում» (Մ, 1918, 153):

Թեև Թումանյանը գրողների ընկերության գործունեության առաջին իսկ օրերից վճռել էր դիմումներ չանել, սակայն պատերազմի ստեղծած արտակարգ դժվարությունները ստիպեցին նրան խախտել այդ որոշումը: Կյանքը ստիպեց, որ նա դիմի, որովհետև իրեն էին դիմում բոլորը՝ անվերջ ու անդադար: Բայց Թումանյանը, հավատարիմ իր սկզբունքներին ու խոստմանը, դիմում էր ոչ թե անհատ անձանց, այլ կառավարություններին, հասարակական խոշոր ու միջին միավորումներին: 1919 թ. մայիսին նա դիմում է Ամերիկյան միսսիային, «որ գրողների ընկերության անդամներին հաց տան» (ՀԳԿԸ Ֆ, 48): Մի ամիս անց, հունիսի 15-ին օգնություն է խնդրում Հայաստանի Հանրապետության վարչապետ Ա. Խատիսյանից[28]: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը՝ չնայած իր ունեցած չափազանց սուղ միջոցներին, կարողացավ հատկացնել 100 000 ռ.՝ դրամի բաշխումը թողնելով վարչության հայեցողությանը: Վերջինս կատարում է դրամի բաշխումը 8 գրողների միջև, այդ թվում նաև Նիկոլ Աղբալյանի ու Հովհաննես Թումանյանի: Նրանք երկուսն էլ հրաժարվում են հասանելիք 10 000 գումարից: Վարչությանը ուղղած իր նամակում Թումանյանը բացատրում է. «Իմ դրությունը միանգամայն տարբերվում է իմ ընկեր գրողների դրությունից էն հանգամանքով, որ ես Գրողների ընկերու-

*թյան նախագահ եմ, ինձ են դիմում ամենքը, և ես պարտավոր եմ հոգալու նախ և առաջ ուրիշների կարիքները» (10, 330): Ասենք նաև, որ Թումանյանը ոչ միայն երբևէ չի օգտվել դրական ֆոնդի գումարներից՝ վերը բերված միևնույն պատճառաբանությամբ, այլև իր անձնական սուղ միջոցներից և այլ հասարակական ընկերությունների գումարներից տրամադրել է դրական ֆոնդին և առհասարակ ընկերության գործերին: Բանաստեղծի կրտսեր դուստր Թամար Թումանյանի՝ պրոֆ Թանդարանին տրամադրած «նոր նյութերում» պահպանվել է Թումանյանի մի հետաքրքիր խոստովանությունը թղթի մի պատառիկի վրա. «Պետք է ավելացնեմ, որ վերջին տարիներս ևս իմ անձնական միջոցներից եմ արել ընկերության ծախքերը... ի բացատյալ անցյալ տարվա վերջերքը, երբ ես իբրև նախագահ և Հայարտան ու դրոշների ընկերության, Հայարտան միջոցներից բաժին էին հանում դրոշների ընկերության»[29]:*

*Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը նպաստ տրամադրելու մասին Հայ դրոշների ընկերության դիմումը քննում և որոշում է 50 000 ռուբլի միանվագ նպաստ հատկացնել Հայ դրոշների և Դրամատիկական ընկերություններին: Սակայն այդ գումարները գտնվում էին Հայաստանի չհրկիզվող պահարաններում և հայկական ազգամիջյան կոնֆլիկտի հետևանքով դրավվել էին վրաց մենշևիկյան կառավարության կողմից: Չնայած դրոշների ընկերության բազում դիմումներին՝ նրա անդամների վիճակը ամենաչնչին չափով անգամ չէր բարելավվում: Այդ պատճառով էլ Թումանյանը չարունակում էր առանց հուսահատվելու դիմել ու դիմել: 1920 թ. ապրիլի 2-ին նա Հայ դրոշների ընկերության անունից դիմում է Հայաստանի Հանրապետության Հանրային կրթության ու արվեստի նախարարներին[30], Խորհրդային Հայաստանի ՀԽՍՀ Լուսժողկոմատին (ՀԳԿՀ Ֆ, 23): Ու եթե Հայաստանի առաջին հանրապետության ազգային կառավարությունը անմիջապես արձագանքից դրոշների խնդրանքին ու գումարներ հատկացրից, ապա Հայաստանի խորհրդային իշխանությունները այս անգամ մերժում են՝ գտնելով անմիջապես պատճառաբանելով, որ խորհրդային կոչված լուսժողկոմատը «Նպաստներ չի բաշխում աշխատավորներին, այլ վար-*

ձատրում է նրանց աշխատանքը» և օժանդակել Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս գտնվող մշակութային հաստատությունների չի կարող (ՀԳԿԼ Ց, 48): Ցավալի է, որ այս գրությունը ի պաշտոնե պարտավոր էր և ստորագրել է մեկ այլ խոշոր ու ազգային գրող՝ Եղիշե Չարենցը, որի հայ գրողների ընտանիքին բարոյապես ու նյութապես սատար լինելու բարի կամքին ոչ ոք չի կասկածում:

Թումանյանը ոչ միայն ի պաշտոնե, այլև առհասարակ, որպես մարդ ու քաղաքացի անում էր ամեն ինչ գրողներին նյութապես ապահովելու համար, իրեն արված նվիրատվությունները և իր անձնական տնօրինությանը թողնված գումարները գրեթե միշտ տրամադրում էր Հայ գրողների կովկասյան ընկերությանը: 1919 թ. մայիսի 16-ին նա զեկուցում է վարչությանը, որ իր 50-ամյակի կապակցությամբ Թիֆլիսի ակումբներից մեկից նվեր ստացած 1 000 ռուբլին ինքը նվիրում է Գրողների ընկերությանը: Նույն կերպ նա վարվում է գողթնեցիների տրամադրած 1 000 ռուբլու (ՀԳԿԼ Ց, 48) և Թիֆլիսի Հայկական ակումբի ավագների խորհրդի նվիրած 1 500 ռուբլու հետ: Այս գումարներից վերջինը Թումանյանին հատկացվել էր նրա գործերի անվճար տպագրության համար, բայց ընկերության նախագահը, չնորհակալություն հայտնելով Խորհրդին՝ ասում է. «...միաժամանակ ներողամտությունն եմ խնդրում, որ փոխում եմ իմ տրամադրության տակ դրած գումարի նպատակը, և համոզված եմ, որ Խորհուրդն ինքն էլ գոհ պիտի լինի» (7, 388): Հայ ժողովրդի համար այդ ծանր օրերին Թումանյանը իր անձնական օրինակով կոչ էր անում օգնության գալ մշակույթի գործիչներին, գրողներին, և հավատում էր, որ իր խոսքը անհետևանք չի մնա. «Եվ կոչ անելու պարտականությունը, – ասում էր նա, – ամենից շատ ինձ վրա է ծանրանում, իբրև Գրողների ընկերության նախագահի, որին և քաջահայտ են բոլոր գրողների ցավերն ու նեղությունները» (7, 388): Գրականությունը պաշտպանելու համար Թումանյանը անվերջ ու անդադար անում էր նորանոր քայլեր ու առաջարկներ: «Գործի ենք անցնում» հոդվածում նա խորհուրդ է տալիս բոլոր գրասիրաց ընկերություններին տարեկան գոնե մի անգամ կազմակերպել արտակարգ մեծ գրական երեկույթ հանուն Հայ գրականության

պաշտպանության և դրա չնորհիվ, նրա կարծիքով, դրականությունը կպաշտպանվի չատ պատվավոր ու գեղեցիկ ձևով:

Չնայած Թումանյանի հերոսական ջանքերին՝ հայ գրողների նյութական ապահովության և դրականության պաշտպանության խնդիրը տասական թվականների ծայրահեղ անբարենպաստ պայմաններում չէր կարող լուծվել: Սակայն ինչպես յուրաքանչյուր պայքար, ուղղված ազգային մշակույթի զարգացմանը, այնպես էլ դրականության մշակների դերի ու հեղինակության աճի, նրանց կյանքի նյութական բարեկեցության, առօրյա հոգսերից փոքրինչ ձերբազատվելու, այդ ամենի չնորհիվ իրենց կոչմանը, միայն դրականությանը անմնացորդ ծառայելու համար պայքարը չէր կարող լուզուր լինել:

Առաջին համաշխարհային պատերազմի, հայոց Մեծ եղեռնի ծանր ու դժվարին օրերին հայ գրողներից չատերը ապավինեցին Հայ գրողների կովկասյան ընկերությանը:

* * *

Բոլոր ժամանակներում յուրաքանչյուր դրողի, դիտնականի, արվեստագետի համար էական նշանակություն է ունեցել իրենց հեղինակային իրավունքների պաշտպանության խնդիրը: Հետագայում օրենքի ուժ ստացավ այն, ինչի համար XX դարի տասական թվականներին պայքարում էր դրողների ընկերությունը: Այսօր բոլոր քաղաքակիրթ երկրներում առանց հեղինակի համաձայնության ոչ ոք իրավունք չունի լույս ընծայելու նրա երկը: Այդ իրավունքի խախտումը հեղինակին հնարավորություն է տալիս պահանջելու հոնորարի վճարում կամ նրա պատճառած վնասների հատուցում: Գրական երկը հրատարակելիս կամ այլ կերպ օգտագործելիս առանց հեղինակի համաձայնության արգելվում է փոփոխություն մտցնել գրական երկի, վերնագրի և հեղինակի անվան մեջ: Արգելվում է նույնիսկ առանց հեղինակի համաձայնության պատկերազարդելը, առաջաբան, վերջաբան գրելը կամ մեկնաբանելը և ծանոթագրություններ տալը:

Թումանյանը հեղինակային իրավունքի հարցերը համարում էր գրական կյանքի այն կարևոր կողմերից մեկը, որի միջոցով դրսևորվում է գրականության պաշտպանության բարոյական նշանակությունը: Եվ Թումանյանի ու նրա նախագահած ընկերության դերը հեղինակի իրավունքի համար պայքարում նույնպես նշանակալից է: XX դարասկզբին և նրանից առաջ հեղինակային իրավունքի անձեռնմխելիության ոտնահարումը դարձել էր սովորական երևույթ և հաճախ բնականոն ձևով առաջ էր բերում գրողների, արվեստագետների ու գիտնականների արդարացի զայրույթը: Հարցի չուտափույթ լուծումը դարձել էր առաջնահերթ խնդիր: Անատոլ Ֆրանսի «Օրակարգի խնդիրներից մեկը» հոդվածում ասված էր. «Հեղինակի սեփականության պաշտպանությունը օրակարգ է մտել. խնդիրը ավելի սուր կերպով առաջին անգամ հանվեցրեց պ. Հովհաննես Թումանյանը» (Հ, 1913, N 284):

Բազմիցս իր հեղինակային իրավունքները պաշտպանելիս Թումանյանը երևույթը ընդհանրացնում էր և հարցը քննում հրապարակայնորեն, անվերջ ու անվերջ ընդգծում նրա բարոյական նշանակությունը: Հրատարակիչները առանց բացառության ու խտրության ոտնահարում էին բոլոր գրողների իրավունքները և մնում անպատիժ: Եվ ազգային մեծ բանաստեղծը, չկարողանալով ապավինել իր ժամանակի օրենքներին, ելնելով նախ և առաջ գրականության շահերից, փորձում էր միայնակ դուրս գալ այդ «հարստահարիչների» ու «թալանչիների» դեմ՝ խստորեն որակելով նրանց արարքները: «Հայ հեղինակի իրավունքը» հոդվածում նա գրում է. «Ասացեք, խնդրեմ, էլ թալանն ու ավազակությունը ինչպե՞ս է լինում: ...Գրողին թալանում են և՛ նյութականապես, և՛ բարոյապես, նրա երկերը հափշտակելով, միաժամանակ փոխում, այլանդակում են գրվածքը, մի գրողի անուն դնում են ուրիշի գրվածքի վրա և կամ ուղղակի ջնջում են հեղինակի անունը» (7, 115): Միայն հեղինակի պայքարը իր իրավունքների համար չէր կարող մեծ արդյունքներ տալ: Հատկապես դասագրքերում հայ գրողների երկերի աղավաղումների դեմ պայքարը երբեմն շատ սուր բնույթ էր ստանում: Այսպես, օրինակ, 1914 թ. հունիսին մի քանի գրողներ դատարան են դիմում պաշտպանելու իրենց հեղինակային

իրավունքները («այն հաստատությունների դեմ, որ կատարում են դատապիրք և ժողովածու կազմողները» (Հ, 1914, N 129):

Հեղինակային իրավունքի հարցերը Թումանյանը վերստին բարձրացրեց ընկերության գործունեության առաջին իսկ տարիներին: 1913 թ. նոյեմբերի 7-ին «Հորիզոնում» տպագրվում է Թումանյանի նամակը «Հեղինակի իրավունքը» վերնագրով և հետևյալ բովանդակությամբ. «Մեր գրողներից ոմանք դիմում են ինձ և խնդրում են պաշտպանել իրենց գրական սեփականության իրավունքն ու շահերը... Խնդիրը լուրջ է և հասունացած, ժամանակն է, որ վճռվի մի ձևով: Եվ ես կարևոր խնդրի տերն ու պաշտպանը բնականաբար պետք է լինի Հայ գրողների ընկերությունը» (7, 105): «Բաղաքացի» սատրապրությամբ «Հեղինակի իրավունքը» հոդվածի հեղինակը պաշտպանում է Թումանյանի առաջարկը և հայտարարում, որ գործի ղեկավարը, իրոք որ պիտի գրողների ընկերությունը հանդիսանա» (Հ, 1913, N 252): Դ. Դեմիրճյանը Թումանյանի հարուցած խնդիրը համարեց արտակարգ կարևոր, հատկապես ապագայի համար: Նա մեկ առ մեկ կանգ առավ հեղինակային իրավունքի անձեռնմխելիության տարբեր կարգի խախտումների վրա» (Հ, 1913, N 257):

Եվ ահա Հայ գրողների կովկասյան ընկերության մեջ հարցը դրվում է ընդհանուր քննարկման: Նախագահը 1913 թ. նոյեմբերի 14-ի ընդհանուր ժողովում հանձնարարում է վարչությանը խորհրդակցել իրավաբանների հետ և հաջորդ ընդհանուր ժողովին մանրամասն զեկուցում ներկայացնել այդ մասին: Իսկ վարչությունը իր հերթին անձամբ Թումանյանին է հանձնարարում զբաղվել իրավաբաններից կազմվելիք մասնաժողովի ստեղծման աշխատանքով (Հ, 1913, 288): Մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 21-ին, վարչության նիստում ընտրվում է հատուկ մասնաժողով, որի կազմում էին Հովհ. Թումանյանը, իրավաբաններ Մ. Բերբերյանը, Գ. Խատիսյանը, Ա. Պոպովյանը: Հանձնաժողովը, «աչքի առաջ ունենալով կոնվենցիայի խնդիրը» (ՀԳԿՀ Ֆ, 42/4, 50), իր առաջին խորհրդակցությունից հետո որոշում է դիմել Պետերբուրգ և խնդրել տեղեկություններ, մասնագիտական դրականություն՝ հեղինակների պաշտպանության օրենքների վերաբերյալ (Հ, 1913, 278): Շատ շու-

տով նրանք խնդիրը հիմնավորապես ուսումնասիրելու, համապատասխան օրենքներ ստանալու համար դիմում են Պետերբուրգ: 1913 թ. դեկտեմբերին արդեն այդ օրենքներն ու պատասխանը ստացվել էր, և հանձնաժողովը «գործի էր անցել» (Հ, 1913, 288): Նույն օրերին Թումանյանը, վերստին արծարծելով այդ հարցը, հրապարակայնորեն կոչ է անում. «Այո՛, արդեն դրված է հայ հեղինակի իրավունքի խնդիրը: Պետք է պաշտպանել նրա գաղափարն ու իրավունքը թե՛ պետական, թե՛ բարոյական օրենքներով: Հեղինակի գաղափարը ամենաարդար գաղափարից մինն է և նրա իրավունքը ամենանվիրական իրավունքներից մինը ամեն մի լուսավոր ու քաղաքակիրթ ժողովրդի մեջ:

Եվ քաղաքական սահման չպիտի դնենք մեր գրականության մեջ, և՛ Տաճկաստան, և՛ Պարսկաստան, և՛ Եգիպտոս, և՛ Ամերիկա, և՛ ամենուրեք — հայոց գրականությունը պետք է նկատել մի գրականություն, և ամեն տեղ, ուր հայ կա, պետք է պաշտպանված լինի հայոց գրականությունն ու հայ հեղինակի իրավունքը» (7,115):

Գրողների ընկերությունը գործեց իր նախագահի խոստման համաձայն, գոյության ամբողջ ընթացքում հենց այդպես էլ վարվեց. լսեց ու պաշտպանեց բոլոր հայ գրողների բողոքներն ու պահանջները, անկախ նրանց ապրելատեղից: Մեր նպատակը չէ խոսել բոլոր այն դիմումների մասին, որոնք արել են հայ գրողները ընկերության վարչությանը իրենց հեղինակային իրավունքի անձեռնմխելիությունը պաշտպանելու համար: Դրանք մեծ թիվ են կազմում: Ասենք միայն, որ ընկերությունը իր հնարավորության սահմաններում աշխատել է ընդառաջել և սատար կանգնել հայ գրողին: Տարբեր առիթներով ընկերությունը զբաղվեց հատկապես Լեոյի հեղինակային իրավունքի հարցերով: Գրական հինգշաբթիներից մեկում կարդացած նրա դասախոսությունը «Նոր փաստաթղթեր Խ. Աբովյանի կյանքից» (1913 թ. դեկտեմբերի 5) աղավաղված ներկայացրեց «Կովկասի Լրաբերը»[31], որի պատճառով եղան բազմաթիվ անհարկի հարձակումներ, Լեոյի բանասիրական աշխատանքները թերագնահատողներ: Ընկերության վարչությունը և նրա նախագահը կարողացան հրապարակայնորեն վերականգնել ճշմարտությունը:

*1915 թ. Լեոն Հանուն իր հեղինակային իրավունքների պաշտպանության վեճի մեջ մտավ դերասան Արմեն Արմենյանի հետ, որի դերասանական խումբը Բաքվում և Թիֆլիսում բեմադրում էր «Մելիքի աղջիկը» (օր. Եղոյանի փոխադրությամբ): Նա վրդովված դիմեց ընկերության վարչությանը. «Երբևէ, – գրում է նա, – հայ հեղինակի իրավազրկությունը այսքան հռչակավոր չափերի չի հասել: Ինձ իբրև հեղինակի միայն նյութական զրկողություն չեն պատճառում: Ավելի սարսափելի են իմ բարոյական տանջանքները: Ինձ պաշտպանելով՝ հասարակությունը պաշտպանած կլինի իր մայրենի դրականության մշակներին: Հարստահարված, կողոպտված հեղինակներով դրականություն երևակայել անմտություն կլինի» (Հ, 1915, 56):*

*«Մելիքի աղջկա» չուրջը ծագած վեճը, ինչպես վկայում են լրագրերը, վերստին հրապարակ հանեց հայ հեղինակի «իրավատիրության խնդիրն իր երկերի նկատմամբ»[32]: Սակայն 1915 թ. ապրիլն էր, և վարչությունը երկար ժամանակ այդ հարցով զբաղվել չկարողացավ[33]:*

*1916 թ. ամռանը՝ հունիս-հուլիս ամիսներին, Լեոյի և վարչության անդամ-քարտուղար Դյուտ Աղանյանի միջև ծագած տարաձայնությունների առիթով ընկերությունը վերստին անդրադարձավ հեղինակային իրավունքի հարցերին[34]:*


*Կարելի է, իհարկե, չարունակել գրողի հեղինակային իրավունքի համար մղված պայքարի պատմությունը, բերել բազմաթիվ այլ օրինակներ, բայց բավարարվենք այսքանով:*

*Չնայած Հայ գրողների կովկասյան ընկերության ձեռնարկած բոլոր ջանքերին՝ նրան չհաջողվեց, ինչպես հարկն է, պաշտպանել դրականությունը, գրողի հեղինակային իրավունքի անձեռնմխելիությունը, նրանց նյութական ապահովությունը և այլն: Ասենք նաև, որ դա մի ընկերության հնարավորության սահմաններից դուրս էր: Խնդրի վճռական լուծումը առանց պետական լուրջ օժանդակության անհնար էր: Սակայն պայքարը՝ ուղղված ազդի մշակութային զարգացմանը, արվեստագետների ու գրողների նյութական ապահովությանը, նրանց հեղինակային իրավունքների պաշտպանությանը, ինչպես և յուրաքանչյուր պայքար Հանուն*

հասարակության ընդհանուր առաջադիմության, չէր կարող զուր անցնել: Հայ գրողների կովկասյան ընկերությունը կարողացավ որոշ չափով բարձրացնել հայ գրողի հեղինակությունը, թեկուզ ենչին չափով նրա կյանքի դժվարին պայմաններում նեցուկ դառնալ նրան:

Այսօր էլ գրականության պաշտպանության, հեղինակային իրավունքի և գրական ֆոնդի հարցերը արդիական նշանակություն ունեցող առաջնային կարևորության խնդիրներ են, որոնց լուծմանը նախանձախնդիր են նաև գրողների ընկերությունները, միությունները:

Գլուխ ՀԻՆԳԵՐՈՐԴ



# Հայ գրողների կովկասյան ընկերության նշանակությունը հայ գրական կյանքում

# Գրողների միավորման համազգային արձագանքները

*Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնադրման առաջին իսկ օրերից, Թումանյանի՝ ընկերությանը անդամագրվելու կոչի հրապարակումից անմիջապես հետո մեծ խանդավառություն առաջացավ հայ ողջ իրականության մեջ: Այդ ոգևորությունը չարունակվեց ընկերության գործունեության ամբողջ ընթացքում մինչև նրա գոյության դադարեցումը: Գրողների ընկերության երեկույթներից մեկում նախագահը հայտարարում է. «Երկու տարեկան է սա՝ Հայոց գրողների ընկերությունը: Դեռևս նորածին է, բայց էն նորածիններից է, որոնց մասին առասպելն ասում է՝ թե ով տարով է մեծանում, սրանք օրով են մեծանում, և կարճ ժամանակում արդեն հեռու է տարածվում ձեռները ու սխրալի գործեր են կատարում» (7, 142):*

*Իրոք, Թիֆլիսից շատ հեռու տարածվեց Հայ գրողների ընկերության արձագանքները և նրա «սխրալի գործը» եղավ այն, որ հաննելով աշխարհի հայաշատ գրեթե բոլոր վայրերը՝ ձեռք բերեց համազգային բնույթ: Երևույթը բացատրում է ինքը՝ Թումանյանը. «Ինչուի պատասխանը պարզ է. որովհետև ի սկզբանն մեծությունը իրենց էությունն է, ոգևորությունը իրենց չունչն է, և չնորհքն ու կարողությունը իրենց հատկությունը:*

*Էդ տեսակ նորածինները իրենց մեջ կրում են իրենց ծնող ժողովրդի ոգին ու ձգտումը, և ահա դրա մեջն է նրանց ինչպես ուժի, էնպես էլ սիրված լինելու գաղտնիքը» (7,143): Հիրավի, գրողների միավորումը հենց սկզբից իրեն ուժեղ ու համարձակ էր զգում, որովհետև ձգտում էր լուծել համաժողովրդական կարևորության մշակութային խնդիրներ, ելնում էր ժամանակի ու դարի առաջադրած պահանջներից, արտահայտում էր ազգային արվեստն ու*

գրականությունը ժողովրդական լայն խավերի սեփականությունը դարձնելու, հոգևոր Հայաստանը ամրապնդելու, հայությանը ավելի ուժեղացնելու և հզորացնելու համազգային նվիրական գանկությունը: Ահա թե ինչու Հայ գրողների կովկասյան ընկերությունը առաջին իսկ քայլերից գտավ մեծ համարում, վայելեց համժողովրդական սեր ու հարգանք, վստահություն ու հավատ, ձեռք բերեց անառարկելի հեղինակություն: Ինչպես ասում է ինքը՝ գործի նախաձեռնողը, ղեկավարն ու ոգին՝ Թումանյանը. «Գլխավորը էն համատարած սերն ու հարազատի տաք զգացմունքն է, որով այժմ շրջապատված է Հայոց գրողների ընկերությունը» (7, 143): Գրողների ընկերությունը սկզբից ևեթ ստիպեց Թիֆլիսի հայ մտավորականությանը խորհել արվեստի այլ ճյուղերի զարգացմանը նախանձախնդիր հասարակական նոր միավորումների ստեղծման մասին, հասարակական կյանքում նկատելի դարձրեց «մի լայն, պայծառ կուլտուրական շարժում, որի նմանը չենք տեսել, զգում ենք մի համատարած, ջերմ, հարազատ շունչ, որ վաղուց է, չենք զգացել» (7, 143):

Գրողների ընկերության հիմնադրումից ընդամենը երկու ամիս անց՝ 1912 թ. դեկտեմբերի 30-ին, ստեղծվեց Հայոց երաժշտական ընկերությունը, որը, լինելով հայ ընդհանուր մշակութային շարժման արտահայտություն, չէր կարող նաև միաժամանակ հայ գրողների ընկերության առաջացրած ընդհանուր ոգևորության արդյունքը չլինել: Նույնի ազդեցությանը և Թումանյանի ջանքերին պետք է վերագրել նաև Հայոց պատմական և հնագիտական ընկերության բացումը 1914 թ. մարտին:

Բայց Հայ գրողների ընկերությունը մինչև ընդհանուր ազգային- մշակութային շարժմանը նպաստելը դարձավ նախ համահայկական գրական շարժման կենտրոն, որը՝ իբրև «մայր ընկերություն», ղեկավարում էր Աստրախանում, Գորիսում, Գորիում, Աշտարակում, Երևանում, Բաքվում և այլուր ստեղծված գրասերների ու գրական խմբակներն ու ընկերությունները: Ինչպես վկայում է Ե. Ֆրանդյանը. «Գրական ուշագրավ շարժմանը տոն և կենդանություն տվողը Հայ գրողների ընկերությունն է, երբ շատ կարճ ժամանակամիջոցում այնքան հռչակ ստացավ» (2, 1915, 276):

*Դեռ 1912 թ. նոյեմբերի 12-ին Բաքվի մարդասիրական ընկերության չենքում հայ դրողների ժողովը ողջունեց Թիֆլիսի դրողների ընկերությանը՝ համոզված, որ այն կդառնա «մի դպրոց», որը «կբարձրացնի հայ դրողի արժևքը» (Հ, 1912, 256): Բաքվի հայ դրողներն ու քննադատները դործում էին Միջազդային դրական-դեղարվեստական ակումբին կից: Ձայների մեծամասնությամբ հիշյալ ժողովը որոշում է Բաքվում հիմնել Հայ դրողների կովկասյան ընկերության մասնաճյուղ: «... Դա արդեն կախված է Թիֆլիսի ջանքերից, — դրում է Դ. Անանունը, — իրավունքի մասին է խոսքս» (ԹՅ, 242):*

*Բաքվում առաջացած դրական աշխուժության մասին վկայում է նաև Յոլակ Խանդադյանը: Նա դրում է. «Վերջերս այստեղ մեծ հետաքրքրություն է առաջ եկել դեպի Հայկական կյանքն ու դրականությունը: Անսխալ կարելի է պնդել, որ այստեղի մթնոլորտը շարժման մեջ է. կուլտուրական վերածնության շրջանի նախօրյակին ենք... Եթե հարկավոր է, մենք կարող ենք նույնիսկ այդ ֆերմայի (Հայ դրողների կովկասյան ընկերության — Ս.Հ.) տակ դուս դալ, — այդ կարող ենք անել և առանց պաշտոնական թույլտվության ունենալու» (ԹՅ, լր.ց 49):*

*Կովկասյան ընկերության վարչության 1913 թ. հունվարի 13-ի նիստում առաջարկություն է արվում վոլոխության ենթարկել կանոնադրությունը և աշխատել իրավունք ստանալ՝ գավառներում ճյուղեր բացելու: Թումանյանը զդալով, որ կառավարությունը, հարցը ձդձդելով, կարող է դրականորեն չլուծել, առաջարկում է Բաքվի, հետագայում նաև Երևանի դրասերներին կապ պահպանել Թիֆլիսի ընկերության հետ. «Կարծում եմ լավ կլիներ, — դրում է նա, — եթե հավաքվենք և կազմենք մի դրական շրջան, սկսենք դործել... մինչև կկարողանայինք իրավունք առնել բաժանմունք ունենալու» (10, 171): Այս մասին Թումանյանը դրում է Յ. Խանդադյանին, Հակոբ Մանանդյանին, բանավոր զրուցում է այդ հարցով իր հետ խորհրդակցելու եկած Ռ. Օհանջանյանի հետ: Դ. Անանունը և Բաքվի դրական ընկերության մյուս նախաձեռնողները՝ Հ. Հովհաննիսյանը, Տ. Հովհաննիսյանը, Ե. Թաղիանոսյանը և ուրիշներ, Թումանյանի խորհուրդը համարում են անպայ-*

ման, նպատակահարմար և իրագործելի: Բաքվի գրասերներին հաջողվում է ընկերություն ստեղծել միայն 1915 թ. մայիսի 28-ին (Մ, 1915, 118): Իր գոյության ողջ ընթացքում Բաքվի Հայ գրասերների միությունը մշտական սերտ կապերի մեջ եղավ Հայ գրողների կովկասյան ընկերության հետ: Առհասարակ, Հայության տարբեր հատվածներում առաջացած գրական միավորումները միմյանց հետ կապը պահպանում էին Կովկասյան ընկերության միջոցով: Գնալով ավելին զգալի էին դառնում հայ գրական կյանքի զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Հաճախ տարբեր քաղաքներում, տարբեր գրողների ու քննադատների կողմից միաժամանակ ընթերցվում էին միևնույն թեմայով դասախոսություններ: Գրական նախասիրությունների և հետաքրքրությունների ընդհանրությունը պայմանավորվում էր ինչպես գրականության զարգացման տվյալ փուլի առանձնահատկություններով, այնպես էլ որոշ չափով Թիֆլիսի հայ գրողների ընկերությամբ և նրա առաջացրած արձագանքներով: Թումանյանը ձգտում էր իրենց յուրաքանչյուր կարևոր նախաձեռնությանը մասնակից դարձնել հայաշատ կենտրոնների գրական խմբավորումներին: Հայ գրողների կովկասյան ընկերության չնորհիվ հայ գրականության նկատմամբ հսկայական հետաքրքրություն առաջացավ նաև բուն Հայրենիքում, և Երևանի գրասերների մեջ նույնպես ցանկություն առաջացավ հիմնել ինքնուրույն գրական ընկերություն կամ դառնալ Թիֆլիսի մայր ընկերության մի ճյուղը: Մարգար Ավետիսյանի՝ Թումանյանին ուղղած նամակից տեղեկանում ենք, որ 1914 թ. փետրվարի 2-ին Երևանում տեղի է ունեցել խորհրդակցություն տեղում գրական ընկերություն հիմնելու վերաբերյալ: Նա գրում է. «Այստեղ մի քանի գրողների և շատ գրականների մեջ վերջապես փափագ է զարթնել՝ ստեղծելու մի գրական մթնոլորտ, սերտ շփումն հաստատելու հայ գրական կենտրոնի հետ՝ նրանից թարմություն ու ոգևորություն ստանալու համար» (ԹԹ, 2618): Միության նպատակը պետք է լիներ հետաքրքրություն ու սեր արթնացնել հայ գրականության նկատմամբ, դասախոսություններ կազմակերպել և այլն: «Այդ նպատակին հասնելու համար ամենահարմար միջոցը համարվեց

տեղում հիմնել Հայ գրողների ընկերության ճյուղ» (նույն տեղում): Իհարկե, նրանք կարող էին հիմնել և անկախ գրասիրաց միությունն, բայց նպատակահարմար էին դանում հիմնել ճյուղ, քանի որ փափագում էին վայելել «Գրական ընկերության» գրեղ հովանավորությունը, որպեսզի ունենան հեղինակավոր դիրք ու հարատև կյանք: Թումանյանը՝ գրողներին տարաշխարհիկ ու բնաշխարհիկ խմբերի բաժանող քննադատը, Երևանում առաջացած գրական շարժմանը ավելի մեծ կարևորություն էր տալիս, քան հայրենիքի սահմաններից դուրս ապրող հայ գրականությունը, թեև XX դարասկզբին նույնպես հայ գրականությունը շարունակում էր զարգանալ հիմնականում գաղթօջախներում: Մարգար Ավետիսյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է. «Ինձ պետք է ասեմ, որ ես ուրիշ կարծիքի եմ Երևանի մասին... ***Մեծ, շատ մեծ կարևորություն ունի մեր բնիկ երկրի քաղաքներում ամեն էդ տեսակ կուլտուրական ձեռնարկությունը.*** (ընդգծումը մերն է — Ս.Հ.):

Ցնծալին պետք է ողջունենք էստեղից ձեր գրասիրաց ընկերության բացումը» (10, 198):

Երևանից բանաստեղծի դաները՝ Նվարդ Թումանյանին ուղղված Մակինցյանի նամակում ասվում է. «Մենք մի փոքրիկ ընկերություն ենք կազմել այստեղ հայոց գրականությունը սիրողների: Առայժմ ուրիշ մի ընկերության դրոշակի տակ ենք գործում, բայց հենց որ Թիֆլիս կամ Բաքու ընկերության ճյուղը բաց անելու իրավունք ձեռք բերենք, մենք կդառնանք ճյուղ»[1]:

1916 թ. նոյեմբերի 3-ին և 9-ին Երևանում էս ստեղծվեց Գրասերների միություն կամ ընկերություն, որը սերտ կապերի մեջ մտավ Թիֆլիսի Հայ գրողների կոլկատյան ընկերության հետ: Հայկական դպրոցների ուսուցիչների նախաձեռնությամբ հայ գրասիրաց ընկերություն ստեղծվեց նաև Աշտարակում: Եվ առաջինը, ում դիմեց նորաստեղծ միությունը, դարձյալ Թումանյանն էր (ԹՁ, 522): Ալեքսանդրապոլում գործող «Ավագյալի զավակունք» ընկերությունը նույնպես բացառություն չէր կազմում: Նրա համար էս կենտրոնը՝ մայր ընկերությունը, Թումանյանի նախագահած գրողների միությունն էր:

«Մայր ընկերության» ազդեցությամբ Աստրախանում, Դորիսում և Գորիում նույնպես առաջացան գրական փոքրիկ խմբակցություններ (ԹԹ, 2447):

Գրական այսպիսի մեծ, համազգային աշխուժության առաջացումը պետք է վերագրել նաև Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթների գրական-գեղարվեստական և գիտական բարձր մակարդակին: Ընկերության հինգչաբթիները գրավում էին բազմաթիվ ունկնդիրներ, որոնց մեջ քիչ չէին ոչ թիֆլիսաբնակ հայերը: Դեռ 1913 թ. գարնանը՝ ընկերության գործունեության հենց առաջին տարում, երեկույթներին այնքան բազմություն էր հավաքվում, որ դահլիճ մտնելու համար տոմս ձեռք բերելը համարվում էր գերխնդիր, որովհետև ինչպես վկայում են ժամանակի լրագրերը. «Բազմությունը եկել էր ոչ թե հանդիսատես լինելու, այլ ապրելու և հրճվելու... Շատ չատերը ստիպված էին հետևանալ՝ տոմսակ չգտնելով, իսկ մուտք ունեցողները լցրել էին ընդարձակ դահլիճի բոլոր անկյունները, նախասենյակներն ու կից սենյակները: Եվ այդքան բազմություն հայոց երեկույթներին... իսկապես չտեսնված երևույթ էր» (Հ, 1913, N 75):

1917 թ. ապրիլի 27-ի ընդհանուր ժողովում Թումանյանը ասում է. «Երաժշտական դպրոցի դահլիճը չի կարողանում բոլորին տեղավորել:... Հատկապես ընկերության դասախոսությունը լսելու համար Կարսից եկել էին մի քանի մարդ» (ՀԳԿԼ Ֆ, 46/7): Մեկ այլ գրական երեկոյում Թումանյանը հայտարարում է. «...Գլխավորը մեզանում չտեսնված էն փաստն է, որ նրա պարբերական գրական երեկույթներին միշտ դահլիճը բերնեբերան լցրել է հասարակությունը, և հաճախ ընկերության վարչությունը ստիպված է եղել ժողովրդի հորդ հոսանքի առջև դադարեցնել տոմսակների վաճառուքը» (7, 143): Երբեմն մամուլի հաղորդումներում նշվում էր. «Հասարակության չատության պատճառով ուշագնացության դեպքեր տեղի ունեցան» (Հ, 1917, 48):

Հայ գրողների կովկասյան ընկերությունը իսկապես կարողացավ հասնել իր գլխավոր ու առաջնային նպատակներից մեկին՝ հասարակության մեջ գրականության նկատմամբ համընդհանուր, արտասովոր հետաքրքրություն առաջացնելուն: Բերենք մեկ-

երկու օրինակ, և պարզ կդառնա ընկերության դերը XX դարի տասական թվականների դրական շարժման ալրոցեսում, և պատահական չի թվա, որ դրողների մեկ միավորում կարող է առաջացնել այդպիսի մեծ մշակութային շարժում ամբողջ հայ իրականության մեջ:

Հայ դրողների կովկասյան ընկերության երեկույթներից մեկում կայացավ Շանթի «Հին աստվածների» դրական դատը (1913, փետրվարի 3, Հ, 1913, 23): Մինչ այդ՝ հունվարի 31-ին, Ն. Աղբալյանը զեկուցել էր «Շանթի երգերը» թեմայով, ուր բանախոսը քննության էր առել 1891-1893 թթ. Շանթի գրած մոտ 39 բանաստեղծություն:

Դատից անմիջապես հետո եղան դժգոհություններ և թերթերին, խմբագրություններին ուղղված բազմաթիվ բողոք-նամակներ, որոնցում նկատի ունենալով մեղադրողների՝ Ա. Հարությունյանի և Մ. Մաամեճյանի եզրյթներն ու պաշտպանների Ստ. Լիսիցյանի և Գ. Իսիկյանի թույլ պատասխանները՝ ոմանք կարծում էին, որ «դատը դարձավ վրդովվեցուցիչ ու անպատվաբեր թե՛ իրեն՝ Գրական ընկերության և թե՛ մանավանդ Շանթի համար» (Հ, 1913, 23): 1913 թ. հունվարին արդեն բեմադրվել էր «Հին աստվածները» և ստացել դրամատիկական ընկերության մրցանակը, գրավել հակայական թվով հանդիսատեսների ուշադրությունը, արժանացել շատ քննադատների գովասանքին: Ահա թե ինչու ընկերության կազմակերպած գրական դատը զայրույթի մեծ ալիք առաջացրեց: Ի պատասխան այդ զայրույթի և դժգոհության՝ Թումանյանը գրում է. «Անտեղի ու անպետք միջոց» հոդվածը. «Հավատացնում եմ ինը հարգելի դրասերներին, – ասում է նա, – որ իմ տեսակետն էլ բոլորովին տարբեր է եղածներից: Ես ո՛չ արվեստի ու իր օրենքների, ո՛չ անցյալ դրական երկերի օրինակով եմ մոտենում դրական գործին, ո՛չ էլ նրա հասարակական ու դաստիարակական արժեքների տեսակետից, այլ ամենից առաջ ուզում եմ ճշտել, դանել, թե արդյոք նրա մեջ կա՞ ստեղծագործողի կենդանի շունչը, էն, որ ամենայն իրավամբ կոչվում է Աստվածային, որովհետև նա է միայն, որ դրական արտադրությանը տալիս է մեծության ու անմահության հատկությունը:

*Մնացածը՝ և՛ արվեստ, և՛ փիլիսոփայություն, և՛ հասարակական գաղափար, և՛ բարոյագիտություն՝ բոլորը գալիս են նրանից հետո:*

*Եթե էն չկա՝ պրծանք: Էլ ո՛չ մի արվեստ, ո՛չ մի հասարակական միտք, ո՛չ մի մեծ գաղափար օգնել չեն կարող:*

*Ահա դատավորների ու նրանց դեմ բողոքողների վերաբերմունքից տարբեր մի վերաբերմունք, և սակայն, ոչ թե դատի համար չեմ դատապարտում Հայ գրողների ընկերությունը, այլև նրա վարչության նախագահն եմ, որքան էլ տարբեր կարծիքներ հայտնվեն նրա հարկի տակ» (Հ, 1913, 30) (7, 26):*

*Այդ հոդվածում Թումանյանը մեզ ներկայանում է որպես գրաքննադատության տեսաբան, ազատ, բայց գիտական քննադատության կողմնակից, քննադատի դժվարին գործի լավագույն արժեքավորողներից մեկը: Ըստ Թումանյանի՝ քննադատը ժամանակի գործն է կատարում, փորձում է այսօր հասկանալ և ցույց տալ, թե ինչ կմնա գեղարվեստական երկից տասը, քսան, հիսուն, հարյուր կամ հազար տարի հետո (7, 26):*

*Գրական շրջաններում առաջացած մեծ աչխուժությունը գրողների ընկերությանը ստիպեց նոր երեկույթ կազմակերպել՝ նվիրված Շանթի «Հին աստվածներին», այս անգամ «Դատից հետո» անվան տակ: Երեկույթի ընթացքում ներկաներից ելույթ ունեցան 16-ը, այդ թվում՝ Դ. Դեմիրճյանը, Ն.Աղբալյանը, Ստ. Լիսիցյանը, Լեոն, Տ. Հովհաննիսյանը: Համազասպ Համբարձումյանը և Մ. Մաոենճյանը վերստին պիեսը հռչակեցին գեղարվեստորեն անարժեք և թերություններով լի: Հանդիսականներից մեկը դահլիճից պահանջում է դատի ենթարկել ընկերության վարչությանը, որ նա, գրական դատ կազմակերպելով Շանթի պիեսի վրա, նրան ակամա նվաստացրել է, «մարգարիտը ցեխի մեջ է գցել»: Թումանյանը այդ ունկնդիրներին պատասխանում է հետևյալ խոս-քերով. «Գրական ընկերության նպատակներից մեկն էլ այն է, որ նա խիստ, բայց անաչառ քննադատության պետք է ենթարկի հայ գրական աչխարհում հանդես եկող գրողներին և նրանց եր-կերը. թող ղրանք պաչտպանվեն, եթե արժանիք ունեն իրանց մեջ» (Հ, 1913, N 32):*

Երեկույթից անմիջապես հետո մամուլում հրատարակվեցին բազմաթիվ հոդվածներ, ֆելիետոններ Շանթի «Հին աստվածների» և դրական գաղափարի մասին: Նշենք դրանցից մի քանիսը. Ա. Ամանասյան «Թե ինչ նատեց Շանթը ինձ վրա», «Մի չանթիստի հիշատակարանից» ֆելիետոնը» (Հ, 1913, 33), Հ. Սուրխաթյանի «Դրական դաս» (Մ, 1913, 27, 28), Ստ. Մալխասյանի «Դարձյալ Հին աստվածների մասին» (Մ, 1913, 29), Ծերա Վարդանյանի «Կրկին դրամայի շուրջ», «Հին աստվածներ» (Հ, 1913, 39), բազմաթիվ առաջնորդողներ ու հաղորդումներ՝ «Գրական հետաքրքրությունը» (Հ, 1913, 35), Հ. Տեր- Մկրտչյանի, Արևն Տերտերյանի «Շանթի «Հ Ա» դրաման» (Հ, 1913, N 47), «Գրական դասը» (Հ, 1913, 38), «Դասից հետո» (Հ, 1913, 32), Թումանյանի «Անտեղի ու անպետք միջոց» (Հ, 1913, 30), Սալ-Մանի «Բայ նամակ Լ. Շանթին» (Հ, 1913, 38) և այլն: Շանթի դրամայի նկատմամբ Հայ դրողների կովկասյան ընկերության առաջացրած համընդհանուր հետաքրքրությունը հասավ Բաքու, մինչև Պոլիս, ինչպես գրում է Ն. Ծերանցյանը. «Ամբողջ մի չանթյան շրջան ստեղծվեց Թիֆլիսում, ինչպես և Կովկասի այլ քաղաքներում» (Հ, 1913, 276): Բաքվում փետրվարի 24-ին և 28-ին տեղի ունեցան դասախոսություններ: Զեկուցում էին Կովկասյան ընկերության անդամները: Իհարկե, այս համատարած հետաքրքրությունը նաև Շանթի երկի բովանդակության ու արվեստի արդյունքն էր, բայց մեծ էր նաև Թիֆլիսի Հայ դրողների ընկերության դերը ընթերցող լայն զանգվածների մեջ Շանթի դրաման լուսաբանելու գործում: Շանթի «Հին աստվածները» նոր երևույթ էր մեր դրամատուրգիայի պատմության մեջ: Նրանում արտահայտվել էին ժամանակի հասարակական որոշ տրամադրություններ: Հեղինակը հեռանում էր իրականությունից, դիմում պատմությանը՝ ժամանակակից և միաժամանակ համամարդկային հույզեր, զգացմունքներ ու տրամադրություններ երևան բերելու նպատակով: Սևանի մեհենատանում ծվարած աբեղայի ողբերգության պատկերումը մարդու, անհատի իրավունքների պաշտպանություն է, որի խոսքը, անշուշտ, պետք է տեսնել հայ ժողովրդի ողբերգության այլաբանական պատկերման մեջ: Այս իմաստով Շանթի դրաման նորություն էր: Նա

չէր առաջնորդվել Սունդուկյանի և Շիրվանզադեի դրամատուրգիական, քննադատական ռեալիզմի սկզբունքներով: Ժամանակի ոչ բոլոր քննադատները կարողացան ճշտությամբ ընկալել հեղինակի արվեստի գեղեցկությունն ու բովանդակությունը, որը և դարձավ ընկերության ամբիոնից լսված բացասական կարծիքների պատճառ: Սակայն, պետք է նկատել, որ քիչ չէին նաև այդ ասուլիսներում արված հետաքրքիր դիտողությունները և պիեսի իրական արժանիները բացահայտող գնահատականները: Ստ. Լիսիցյանը նկատեց, որ Շանթի պիեսը չոշափում է մարդկային հոգու հավիտենականության, մշտնջենական ապրումների և որոնումների, հավերժականի խնդիրը և վեր է անցողական ու ժամանակավոր հիմքերից ու տիեզերականի մասին է: Գ. Իփեկյանը երկի արժեքը տեսնում էր պիեսում մարդկային ապրումների իրական և բնական լինելու մեջ, նա ընդգծեց դրամայի ավելորդաբանություններից զերծ լինելը և անհատի փիլիսոփայական խորհրդածությունները չոշափելի, կենդանի պատկերների միջոցով արտահայտելու հեղինակի տաղանդը: Տիգրան Հովհաննիսյանը մերժեց սիմվոլիզմն ու սուբյեկտիվիզմը դեղարվեստական երկի համար թերություն համարելը, քանի որ «Գրական երկի արժանիքը կախված չէ այն բանից, թե նա ինչ չկոլայի է պատկանում» (Հ, 1913, 60): Իսկ Արշակ Ղազարյանը առարկեց բոլոր նրանց, ովքեր կրկին մոտենում էին հին դրամայի չափանիշներով, առանց տեսնելու այն նորը, որ բերում է իր հետ Շանթի պիեսը: Առանց այուժետային ցնցող դեպքերի հեղինակը վերլուծում է մարդու ներքին հոգեկան դրաման: Խոսելով պիեսի անուրանալի արժանիքների մասին՝ Աղբալյանը անդրադառնում է դրամատիկական տեխնիկայի հարցերին՝ արժեքավորելով այն, որ հերոսները ներկայացվում են ոչ թե մենախոսությունների ձևով, այլ իրական կենդանի պատկերների միջոցով: Դրամայում ապրումների այդպիսի արտահայտության ձևը Աղբալյանը համարում է Շանթի նորաբարություններից մեկը այդ ժանրի ասպարեզում: Այդպիսի կարծիքների շարքը կարելի է շարունակել, քանի որ բազմաթիվ դրականագետներ են ելույթ ունեցել, սակայն բավարարվենք այսքանով: Կարևորը այն արձագանքն էր, որ ունեցավ ընկերության կազմա-

կերպած «դատը», թեև հենց ընկերության ամբիոնից լսվեցին ձայներ, որոնք պահանջում էին վերացնել այդպիսի դատերը և երբեք «մեղադրականով» չմոտենալ գրական ստեղծագործությանը:

Պոլսում Էսայան Սանուց միությունը 1913 թ. մարտի սկզբին կազմակերպեց «գրական համախմբություն», որի նյութը դարձյալ Շանթի «Հին աստվածներն» էր: Ունկնդիրների թիվը հասնում էր 800-ի: Այդ օրը Գ. Խաժակը ընդգծեց և հույս հայտնեց, որ «Գրական այս հետաքրքրության ալիքը, որ Կովկասեն կուգա, հետզհետե կը տարածվի» (Հ, 1913, 61): Ատենակալների ու դատավորների վոխարեն այստեղ կազմվել էր ժյուրի, որի անդամներն էին Կոմիտասը, Ռուբեն Զարդարյանը, Դ. Վարուժանը, Սիամանթոն և ուրիշներ: Երեկոյի ավարտից հետո ցանկություն հայտնվեց, որ այդ ոգևորությունը տարածվի և «այս հավաքույթներես չարքեն ետք ծնունդ առնի Թրքահայ Գրական Միությունը» (Հ, 1913, 61): Եվ իրոք, Հայ գրողների կովկասյան ընկերության առաջացրած ոգևորության շնորհիվ Պոլսում դրվում է Գրական սուլիսների հիմքը: Ն. Աղբալյանը արձանագրում է. «Մեր ընթերցողներին հայտնի է, որ Շանթի «Հին աստվածների» խանդավառ ընդունելությունը Թիֆլիսում առիթ դարձավ, որ Պոլսում ևս ուշադրություն դարձնեն նրա վրա և այստեղ կազմակերպված գրական հանդեսների նման, որի նախաձեռնողը եղավ Հայ գրողների ընկերությունը, Պոլսում ևս կազմակերպվեն գրական ասուլիսներ» (Հ, 1913, 97): Այս մասին դրում է նաև «Հորիզոնի» 1913 թ. մարտի 28-ի առաջնորդողը. «Եվ չպետք է զարմանալ, որ հագիվ խանճարուրիից դուրս եկած նա (ընկերությունը – Ս.Հ.) մի չարժում մտցրեց ոչ միայն մեր հարևան Բաքվում, այլև շատ ավելի հեռու վայրերում, սահմանի այն կողմը՝ Պոլսում» (Հ, 1913, 69):

Այսպես, Թումանյանի նախաձեռնած ընկերությունը իր ստեղծումով և գործունեությամբ հսկայական աշխուժություն առաջացրեց ողջ հայ իրականության մեջ: Պատճառներից մեկը հավանաբար այն էր, որ ընկերությունը ոչ մի ջանք չխնայեց գրականությունը ժողովրդականացնելու ուղղությամբ: Գրական բազմամարդ երեկույթներում, գրողների ու քննադատների համատեղ ջանքերով լուսաբանվում էին գրական տարբեր խնդիրներ, գեղար-

վեստական ստեղծագործություններ, որպեսզի գրականությունը դառնա ժողովրդի, ընդհանուրի սեփականություն: Թերևս չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ միայն Թումանյանի պես եռանդուն գրական-հասարակական գործիչը, հարազատ ժողովրդի մեծ նվիրյալը կարող էր իրարից հազարավոր կիլոմետրերով հեռու գտնվող հայության տարբեր հատվածներում առաջ բերել գրական միևնույն մթնոլորտը, երկփեղկված ժողովրդի բեկորները միացնել մշակութային հզոր կապով: Մեծ նշանակություն տալով միասնական ազգային գրականությունը ընդհանուր ուժերով զարգացնելու գործին՝ Թումանյանը գրում է. «Ամեն քաղաքից էլ, որ ձեն ձենի տանք, դուրս կգա մի մեծ ձեն՝ հայ ժողովրդի ձենը: Սրանից լավ էլ ի՞նչ կարող ենք անել» (10, 199): Եվ Թումանյանին իր սեփական ջանքերի շնորհիվ հաջողվեց լսել հարազատ ժողովրդի նվիրական ձայնը, հանուն որի նա չխնայեց ոչինչ, ընդհուպ իր կյանքը, իր այնքան թանկ ժամանակը, որի ընթացքում արվեստի որքան գլուխգործոցներ կարող էին ստեղծվել:

Թումանյանը արտակարգ ոգևորված էր ընկերության աշխատանքներով: Հարազատներին նամակներ գրելիս երբեք չէր մոռանում նրանց տեղյակ պահել գրողների ընկերության գործերից: Որդուն՝ Արտավազդին, գրում է. «Մեր գրական երեկույթներն էլ շատ լավ են գնում: Դահլիճը մեծացրել ենք, ավելի լավ ու մեծ բեմ ենք շինել, և ժողովուրդը միշտ էնպես է լիքը, որ նստելու տեղ չի լինում» (10, 196): Մարգար Ավետիսյանին ուղղած Թումանյանի նամակում կարդում ենք. «Չես կարող երևակայել, թե ժողովուրդ, ինտելիգենցիա և երիտասարդություն, աշակերտություն ինչ հոսանք է առել դեպի ընկերությունը» (10, 199): Ահա ինչով էր ուրախանում Թումանյանը: Բանաստեղծի դուստրը՝ Նվարդը, պատմում է, թե ինչպես էր Վահան Տերյանը ափսոսում «...Հայրիկի կորցրած ժամանակը: Նրան դուր չէր գալիս, որ Հայրիկն էր երեկույթ կազմակերպում, բացման խոսք ասում... մանավանդ, երբ երեկույթի ժամանակ տեղից վեր էր կենում և ուշացած պատվավոր հյուրերին աթոռ առաջարկում... Տերյանը բարկանում էր. «Իվան Ծադեիչը ամեն օր չպետք է քաղաքում երևա, ամեն երեկույթի գնա, հասարակության մեջ լինի, խոսի, ամեն բան անի, ամենքի համար վաղվզի»[2]:

*Սակայն, որքան էլ Լեոն դիմեր Ալ. Մյասնիկյանին, որ Հանուն գրականության արգելեն Թումանյանին նախագահություն անել գանազան հիմնարկներում, որքան էլ ինքը՝ Թումանյանը, հաճախ մենակությունը աստվածային զգացում համարեր, որքան էլ Տերյանը զայրանար, միևնույն է, Թումանյանի պատասխանը մեկը պիտի լիներ. «Դատարկ բաներ ես ասում, վահ՛ն, էսպես է լինելու մեր կյանքը»[3]:*

*Ամենահայ, ամենաժողովրդական գրողը երբեք չէր կարող կտրվել հասարակությունից, քանի որ նա իր կյանքով ու գործունեությամբ հարազատ ժողովրդի ապրումների անդրադարձումն էր:*

## Մշակութային կյանքի ուղիներում կամ հոբելյանների մասին

*Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը անհնար է ներկայացնել Թիֆլիսի ողջ գրական-հասարակական մթնոլորտից, հայ մշակութային գրեթե բոլոր ընկերությունների կապից դուրս: Ընկերության արխիվում պահպանվել են բազմաթիվ գրություններ, որոնք վկայում են գրողների ընկերության և հայ դրամատիկական, ուսուցչական, հայուհյաց, Կովկասի հայոց հրատարակչական (նաև բաքվի ճյուղի), ազգագրական, դյուղատնտեսական, հայերի մեջ օգտակար գիտելիքներ տարածող, հայուհյաց որբանոցամ, նվեր մանուկներին, հայոց կանանց, Մեղրու, հայուհյաց բարեգործական, Կովկասի հայոց բարեգործական, հայոց տնայնագործական ընկերությունների, ինչպես նաև «Մշակ», «Տարազ», «Кавказское слово», «Հովիտ», «Խաթաբալա», «Հուշարար», «Պատանի», «Արոր», «Նոր դպրոց», «Նոր հոսանք», «Հորիզոն», «Բաքվի ձայն», «Կովկասի լրաբեր», «Բաքու» և այլ լրագրերի ու հանդեսների խմբագրությունների միջև եղած առնչությունների մասին (ՀԳԿԸ Ֆ, 97):*

*Հայ գրողների ընկերությունը մշակութային մեծ ու վիթը հանդիսությունների, հայկական հասարակական միությունների բացման ու նրանց կազմակերպած միջոցառումների ամենաակտիվ*

մասնակիցն էր: 1914 թ. հոկտեմբերի 31-ին Գրողների ընկերության վարչությունը, չնորհավորելով Հայոց պատմական ու հնագիտական ընկերության բացումը, իր գրասենյակը, այն գտնվում էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության միջնահարկում դնում է նորաստեղծ միության տրամադրության տակ, (ՀԳԿՀ Ֆ, 76): Հայ գրողների միավորումը սերտ կապերի մեջ էր նաև Կովկասի հայոց երաժշտական ընկերության հետ, որի պատվավոր անդամն էր Թումանյանը Ալ. Սպենդիարյանի հետ միասին: Քանի որ ընկերության բոլոր երեկույթները ունեին հանդիսավոր երաժշտական մաս, վարչությունը փորձում էր գործակցել Երաժշտական ընկերության հետ՝ վերջինից խնդրելով դրական երեկոները ապահովել երգիչներով ու երաժիշտներով» (ՀԳԿՀ Ֆ, 73):

Հասարակական միավորումների հետ Հայ գրողների կովկասյան ընկերության անմիջական կապի արտահայտություններից էր նաև այն, որ զանազան կազմակերպությունների հրավերով ընկերության անդամներից շատերը դասախոսություններ էին կարդում տարբեր հաստատություններում գրականության և այլ հարցերի շուրջ[4]: Այդ դեկուցումները տեղի են ունեցել մեծ մասամբ գրական-գեղարվեստական ալմանախի խմբագրության, հասարակական ակումբի, աշակերտական միության, «Պատանի» հանդեսի, Բաքվի հայ գրասերների ընկերության և այլ միավորումների, ինչպես նաև գրասերների որևէ խմբի նախաձեռնությամբ ու հրավերով:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը մասնակցում էր նաև հասարակական-մշակութային այլ ընկերությունների ստեղծմանը, այդ նպատակով հրավիրվող զանազան խորհրդակցություններին ու ժողովներին: Հիշենք թեկուզ Հայարտան հիմնադրման նախապատրաստական շրջանը[5]: 1919 թ. դեկտեմբերին Թումանյանի նախաձեռնությամբ կազմվեց Կովկասյան ազգերի կուլտուրական միությունը, որի մի առանձին ճյուղը՝ հայ-վրացական միությունը, ստեղծվել էր դեռևս նույն թվի հոկտեմբերին[6]: Կարելի է բերել բազմաթիվ փաստեր Թիֆլիսի Հայ գրողների ընկերության և հասարակական այլ միությունների առնչությունների պատմությունից, սակայն դա մեր նպատակներից դուրս է:

* * *

*Հայ դրողների ընկերությունը կազմակերպում էր Հոբելյաններ, մասնակցում էր ինչպես համազգային նշանակություն ունեցող, այնպես էլ այլ ազգերի ու համաշխարհային դրականության համար մշակութային արժեք ներկայացնող Հոբելյանների: Գիտնականների, արվեստագետների և մշակույթի բոլոր նշանավոր գործիչների Հոբելյանների դերը մեծ է յուրաքանչյուր հասարակության մշակութային կյանքում: Այդ դերը հասարակայնորեն գիտակցվել է բոլոր ժամանակներում, քանի որ դրանց կարիքը զգացել է նախ և առաջ ինքը՝ հասարակությունը: Գ.Ղ. ստորագրությամբ հոդվածում կարդում ենք. «Կուլտուրական ազգերի մեջ գործչին ցույց տված հարգանքի չափը համապատասխան է լինում նրա մատուցած ծառայությանը» (Հ, 1914, 83):*

*Իրոք, Հոբելյանները մեծ դեր ու նշանակություն ունեն հասարակության կյանքում: Դրանք մի տեսակ հաշվետվություններ են Հոբելյարի անցած ուղու, նրա գործունեության, միաժամանակ վկայություններ են հասարակական հարգանքի, պարտքի հատուցման կարողությամբ օժտված այն միջավայրի, որում ապրել ու գործել է Հոբելյարը: Մշակութային արժեք ներկայացնող Հոբելյանի կատարումը, իրոք որ, չատ ավելի անհրաժեշտ է հասարակությանը, ժողովրդին, քան իրեն՝ Հոբելյարին:*

*Թումանյանը չատ բարձր էր դնահատում ժողովուրդների խանդավառությունը՝ կապված Հոբելյանների հետ: Դա համարում էր սեփականը, ազգայինը, հարազատ մշակույթը սիրելու, ճանաչելու վառ արտահայտություն: Ընկերության Հոբելյանական երեկույթները կազմակերպելիս նա դրսևորում էր մեծագույն զգուշություն և խիստ ընտրողականություն, քանի որ, ինչպես ինքն է ասել մի առիթով. «Ազգովին Հոբելյան ես հասկանում եմ, երբ տոնում են մեկի Հոբելյանը, որին պսակելիս ամբողջ ազգը կարող է ասել, թե քեզ պսակելով միևնույն է՝ թե ինձ եմ պսակում: Որ դուրս է եկել ու վեր է բարձրացել իր ժողովրդի մակերեվույթից էնքան, որ գլուխը երևում է ամեն երկրից և հարգանք ու հիացում է ազդել ամեն տեղ» (6, 512): Ահա թե ինչու Թուման-*

յանը աշխատում է, որ Կովկասյան ընկերությունը հոբելյաններ կազմակերպելիս և մասնակցելիս առաջնորդվի այն սկզբունքով, որ հաստ ու բարակ չի կարող նույն դիմին ունենալ: Մեծարել որևէ գործչի, նրա համոզմամբ, նշանակում է՝ հիշելով նրան՝ նրանով բարձրանալ ու մեծարվել: Իր հոբելյանը նշելը Թումանյանը համարում էր «ղալմաղալ», մինչդեռ ընկերության գործունեության տարիներին նա կազմակերպեց հայ հին ու նոր գրականության, մեր բազմադարյան մշակույթի տարբեր գործիչների հոբելյանները, ինչպես դասախոսությունների ու երեկույթների, այնպես էլ նրանց հիշատակը հավերժացնող սգահանդեսների և այլ միջոցառումների ձևով: Թվարկենք դրանցից մի քանիսը ժամանակագրական կարգով:

1. Հովհաննես Հովհաննիսյանի հոբելյանին նվիրված երեկույթ. Վ. Վալադյանի դասախոսությունը «Հովհաննես Հովհաննիսյանը և իր բանաստեղծությունները» թեմայով (1913, փետրվարի 14):

2. Երեկույթ Գ. Սունդուկյանի հիշատակին՝ նվիրված նրա մահվան տարելիցին. Ստ. Լիսիցյանի, Արշ. Հարությունյանի, Մ. Մատենյանի, Ն. Աղբալյանի, Հովհ. Տեր-Գրիգորյանի ելույթներն ու զեկուցումները (1913 թ. ապրիլի 21):

3. Րաֆֆու մահվան 25-ամյակը. Լեոյի դասախոսությունը նրա մասին (1913 թ. ապրիլի 18). երեկույթ Րաֆֆու հիշատակին. Թումանյանի, Շիրվանզադեի, Լեոյի, Աղբալյանի ելույթները (1913 թ. ապրիլի 25):

4. Հովհաննես Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանը. Երեկույթ, Ա. Հարությունյանի զեկուցումը (1913 թ. մայիսի 2):

5. Րաֆֆու մահվան 25-ամյակը. հոգեհանգիստ նրա հիշատակին (1913 թ. մայիսի 5):

6. Ծերենցի մահվան 25-ամյակը. Երեկույթ նրա հիշատակին (1913 թ. մայիսի 24) Թումանյանի, Լեոյի, Աղբալյանի, Դեմիրճյանի ելույթները: Հոգեհանգիստ Ծերենցի գերեզմանի մոտ (1913 թ., մայիսի 26):

*7. Գրիբոյեդովի մահվան 85-րդ տարելիցը, դրական երեկույթ. Մինաս Բերբերյանի դասախոսությունը «Նեկքից պատուհասի» մասին:*

*8. Սայաթ-Նովայի մահարձանի բացումը (1914 թ., մայիսի 15):*

*9. Միքայել Նալբանդյանի մահվան 50-րդ տարելիցը երեկույթ նրա հիշատակին (1916 թ., մարտի 31) Թումանյանի, Մ. Բերբերյանի, Ս. Թորոսյանի, Մ. Աբեղյանի զեկուցումները:*

*10. Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակը. երեկույթ նրանց հիշատակին (1916 թ., ապրիլի 28), Թումանյանի, Շիրվանզադեի, Աղբալյանի, Գ. Իսեկյանի ելույթները:*

*11. Երեկույթ Ալ. Ծատուրյանի հիշատակին (1917 թ. ապրիլի 1):*

*12. Հոգեհանգիստ Ալ. Ծատուրյանի մահվան տարելիցին (1918 թ., ապրիլի 1):*

*13. Հովհաննես Թումանյանի ծննդյան 50-ամյակը. երեկույթ նրա պատվին (1919 թ. մարտի 15):*

*14. Մ. Մաշենցյանի հիշատակի հարգումը (1920 թ. մարտի 27):*

*15. Սգահանդես՝ նվիրված ընկերության անդամներ Մ. Բերբերյանի, Գ. Աղանյանի, Մ. Մաշենցյանի, Վրթ. Փափազյանի, Վ. Տերյանի հիշատակին (1920 թ. հունիս):*

*Մեր նպատակը չէ այս բոլոր հոբելյաններին ու հանդիսություններին առանձին-առանձին անդրադառնալ: Հիշենք միայն, որ դրանց նշանակությունը շատ մեծ է ժամանակի գրական կյանքի ուսումնասիրության գործում: Դրանք նաև յուրօրինակ վկայություններ են այն բանի, թե որքան մեծ կարևորություն էր տալիս Թումանյանը գրական կենդանի պրոցեսում գրողի և նրա ստեղծագործության մնայուն արժեքի չեշտմանը, ինչպես էր ձգտում հասարակությանը, ժողովրդին ավելի ու ավելի մոտեցնել գրողին ու գրականությանը: Այս հոբելյանների ու հանդիսությունների շնորհիվ պահպանվեցին հայ գրողների ու արվեստագետների տված Թումանյանական մի շարք դիպուկ գնահատականներ: Ծե-*

*բենցի մահվան 25-ամյակը հիշատակության արժանի էր, քանի որ նա մեզանում պատմավիպասանության հիմնադիրն էր և, ըստ Թումանյանի, խորհրդանշում էր հայ ժողովրդի ազատասիրության ոգին: Րաֆֆու մահվան 25-ամյակը չնշել չէր կարելի, որովհետև ժամանակակիցների վկայությամբ նրա հիշատակի նկատմամբ եղած համաժողովրդական խոր ակնածանքով էր սկսվում հարգանքը հայ գրողի հանդեպ: Ինչպես նկատեցինք, վերը բերված ցանկում գրողների ընկերության ուշադրության կենտրոնում ոչ միայն գրողներն ու գրական խնդիրներն էին, այլև հասարակական ողջ կյանքը: Ուշագրավ է, որ նույնիսկ սովորական բանվորի՝ Խաչատուր Տեր-Հովհաննիսյանի գրաշարական գործունեության 25-ամյակը հատուկ հոգածության խնդիր է դառնում գրողների համար: Այն նշվում է 1919 թ. հունիսի 14-ին: Թումանյանը, լինելով այդ հոբելյանական հանճնաժողովի նախագահը և դրսևորելով առանձնակի շահագրգռվածություն, հատուկ կոչ էր հրատարակել՝ հասարակության ուշադրությունը հրավիրելով 25 տարի անընդմեջ գրաշարությամբ զբաղվող և միշտ չարքաշ ու անապահով կյանք տեսած մարդու ճակատագրի վրա. «Գրաշար՝ կնշանակի ինքնակամ կերպով տաժանակիր աշխատանքի մատնված մարդ, – գրում է Թումանյանը այդ կոչում, – որը վաղաժամ պետք է իր թոքերը տա արճիճի փոշուն, թոքախտից հյուծված քարշ տա իր ուժասպառ երիտասարդությունը կամ անժամանակ գերեզման իջնելով՝ անտեր թողնի իր ընտանիքը...»[7]: Բայց միշտ լավատես Թումանյանը հուսով է, որ «Աշխատավորի դատի շուրջը տեղի ունեցած մեծ ալեկոծություններից ու մեծ կռիվներից հետո պետք է, որ փոփոխվեն այդ անարդար վերաբերմունքն ու այդ անտանելի դրությունը...»[8]: Հոբելյանը նշվել է չքեղորեն: Հոբելյարը դահլիճ է մտել Թումանյանի առաջնորդությամբ: Հանդեսը բաց է արել Թումանյանը՝ այդ օրվա երեկույթը անվանելով «աշխատանքի տոն»[9]:*

*Թիֆլիսում և նրա սահմաններից դուրս 1919 թ. փետրվարից սկսած մոտ երկու-երեք ամիս չարունակ տոնվում էր Թումանյանի 50-ամյակը: Այս անգամ նախաձեռնողն ու կազմակերպիչը Թումանյանը չէր: Ավելին, նա կտրուկ ձևով մերժել էր իր հոբելյանը պաշտոնապես տոնելու առաջարկը և խնդրել էր աղմուկ*

*չբարձրացնել, «զալմաղալ չանել»: Պատճառներից մեկը, հավանաբար, բանաստեղծի անձնական ողբերգությունն էր՝ որդու՝ Ա-ր-տավազդի կորուստը, որին գազանաբար սպանել էին քրդերը Վանի վերջին գաղթին՝ 1918 թվականին:*

*Թումանյանի մասին կենսագրական ակնարկում Դերենիկ Դեմիրճյանը կատակով նկատում է. «Թեթևամտություն է կարծել, թե Թումանյանը ազգային բանաստեղծ է և զբաղվում է բանաստեղծությամբ, քանի որ. «Գիտական ուսումնասիրողը, – դրում է նա, – կանգնած է մի զարհուրելի դժվար հանելուկի առաջ և հաղիվ թե կարողանա մի որոշ պատասխան գտնել, թե ինչով է զբաղված Հովհաննես Թումանյանը: Երբ իրան դիմում եղավ և իր կամքը հարցվեցավ, թե կարելի՞ է իր ծննդյան 50-ամյակը ու գործունեության 30-ամյակը տոնել՝ թույլ տվեց ծննդյան 50-ամյակը տոնել, բայց արգելեց գործունեության 30-ամյակը տոնել, ինչո՞ւ, որովհետև ինքն էլ է հասկանում, որ այսօր իր ծննդյան 50-ամյակն է, բայց երբ հարց հարուցվի, թե գործունեության 30-ամյակն է, իսկույն մի ուրիշ հարց առաջ կգա, ի՞նչ գործի 30-ամյակը, արդյոք ինչո՞վ է զբաղվում Հովհաննես Թումանյանը, որ ըստ այնմ ամյակներով չափենք... Ես գոնե ոչինչ չեմ կարող ասել...*

*Միաժամանակ նա աշխատանքի բյուրոյի կառավարիչ է, որին դիմում են բոլոր գործազուրկները և գործաթողները: Միաժամանակ նա հյուրանոցատեր է և իր հյուրանոցն է քաշում աշխարհի ամեն ծայրից հյուրեր»[10]:*

*Եվ իրոք, քանի որ Թումանյանը միաժամանակ ազգային մեծ գործիչ էր, միաժամանակ ազգային զրող, միաժամանակ գեներալ ու զինվոր, մանուկների ու մեծահասակների, նկարչի ու դերասանի, դյուղացու և ուսուցչի համար հավասարապես սիրելի՝ նրա հոբելյանը նշվեց տարերայնորեն: Տոնեց ինքը՝ ժողովուրդը, ինքնաբուխ կերպով, կարծես զգալով, որ դա իր այնքան սիրելի բանաստեղծի առաջին ու վերջին հոբելյանն էր կենդանության օրոք: Թիֆլիսի գրեթե յուրաքանչյուր հաստատություն, ընկերություն, հիմնարկ ու դպրոց, լրագրի կամ հանդեսի խմբագրություն նշեց բանաստեղծի հոբելյանը որևէ հանդիսավոր միջոցառմամբ: Հիշատակության արժանի են մասնավորապես փետրվարի 23-ի, 25-ի,*

մարտի 4-ի, 7-ի, 9-ի, 17-ի, 23-ի, 24-ի, 27-ի, ապրիլի 3-ի, 6-ի, 13-ի, 26-ի գրական-երաժշտական երեկույթները ու ցերեկույթները՝ նվիրված Թումանյանին թե՛ Թիֆլիսում և թե՛ նրա սահմաններից դուրս՝ Երևանում, Բաքվում, Դիլիջանում, Նոր Բայազետում և այլուր[11]:

Այդ երեկույթներին մասնակցում էին ոչ միայն հայ հասարակությունը, այլև այլազգի քաղաքական գործիչներ, դիվանագետներ, հյուպատոսներ, գրողներ ու մշակույթի գործիչներ, որոնք գալիս էին՝ իրենց հետ բերելով ջերմ շնորհավորանքներ, բանաստեղծություններ՝ ձոնված Թումանյանին: Միայն հայ ուսանողական կուլտուրական միության կազմակերպած երեկոյի ընթացքում հնչեցին Ս. Գորոդեցկու «Հայաստանի հրեշտակ», վրաց բանաստեղծ Մճեդլիշվիլու ստեղծագործությունները՝ նվիրված Թումանյանին: Այդ օրը դահլիճը դիմավորեց Թումանյանին «Մեր հայրենիքի» հնչյունների տակ, հոտնկայս, իսկ վերջում «Հանդիսականները հովհաննես Թումանյանին բարձրացրին թևերի վրա»[12]:

Նույնիսկ այլ գրողներին ու մշակույթի գործիչներին նվիրված երեկույթներին ու հանդիսություններին Թումանյանի ներկա գտնվելը առիթ էր դառնում, որ հանդիսականները այն վերածեին բանաստեղծին նվիրված տոնախմբության: Երբ փետրվարի 25-ին Դանիել Վարուժանին նվիրված գրական երեկոյի երկրորդ մասում դահլիճում հայտնվում է Թումանյանը, ականատեսների վկայությամբ. «Անձրևի նման բանաստեղծի վրա տեղացին թարմ մանուշակների անթիվ փնջեր, և դահլիճը դղրդաց բուռն ծափահարություններով ու օվացիաներով»: (Մ, 1919, 51):

Իսկ երիտասարդ Ստեփան Զորյանը «Գրական-գեղարվեստական ալմանախի» խմբագրության և «Պատանի» հրատարակչության անունից իր ողջույնի խոսքն է հղում բանաստեղծին: Նույնը տեղի է ունենում Գրիշաշվիլուն նվիրված (մարտի 24) և այլ երեկոների ժամանակ[13]:

«Հառաջը», «Աշխատավորը», «Ժողովրդի ձայնը», «Մշակը», «Кавказское слово» և ժամանակի այլ հայտնի լրագրեր հոբելյանական համարներ են հրատարակում կամ ամբողջությամբ կամ որոշ էջերով՝ նվիրված Թումանյանի կյանքին ու ստեղծագործությանը: «Մշակում» փետրվարի 20-ին լույս են տեսնում Դ. Ան-

անունի, Հ. Սուրխաթյանի, Պահարեի, Ալ. Պոպովյանի, Գ. Լևոնյանի, Ստ. Զորյանի, Սմբատ Տեր-Ավետիսյանի հոդվածները:

«Кавказское слово» -ն իր էջերում տեղ է տալիս Ս. Գորոդեցկու հոդվածին: Հայտնի է, որ Թումանյանը հավանել է «Աշխատավորի» առաջնորդողը, Վահան Խորենու «Գյուղական աշխարհի երգիչը», Վաղարշակ Նորենցի «Նոր սերնդի բարեկամը» և Ս. Գորոդեցկու հոդվածները: «Ժողովրդի երգչի տոնը» առաջնորդողում գրական նոր սերունդը կոչվում է «Թումանյանի սերունդ», չեշտվում է Թումանյանի տաղանդի ազգային կողմը, այն, որ նա կարողացել է հանճարեղ վարպետությամբ ժողովրդին վերադարձնել իր ապրումներն ու խոհերը, իր հույսերը, հենց դրա համար էլ նա այդ ժողովրդի «ոգու աքանչելի մատյանն է» և «հայ ժողովուրդն ինքն է իր բանաստեղծական բնատուր և աստվածային ձիրքով... և վեմ, անկեղծ ու անկաշառ մարդկայնությամբ»[14], որ միայն Թումանյաններ ծնելով է ժողովուրդը կուլտուրական դոյության արժեք ու իրավունք ստանում, որ միայն Թումանյան ունենալը ժողովրդի կենսունակության արտահայտությունն է: Թումանյանի և հայ ժողովրդի նույնության միտքն է շեշտվում մի շարք այլ ելույթներում: Բ. Թուխյանը մարտի 23-ի իր ելույթը Թումանյանի մասին ավարտում է այսպես. «Եթե դուք ուզում եք ճանաչել հայ ժողովրդին, ճանաչեցեք Հովհաննես Թումանյանին»[15]:

Այդ օրերին շատ էր դրվում ու խոսվում Թումանյանի անձի ու դործչի վայելած ժողովրդականության մասին: Մամուլի տարբեր օրգանների էջերում հայտնվում էին Բրյուսովի խոսքերը, այն, որ Թումանյանը հայ դրական կյանքի կենտրոնն է, և Թիֆլիսում չկար մի մարդ, որ չճիներ նրան՝ իբրև մարդու և աքանչելի դրողի[16]: Թումանյանի վայելած ժողովրդականության յուրօրինակ հավաստումն է նաև Սալ-Մանի (Աշոտ Ալթունասյան) «Օհաննես Թումանյան» հոդվածը: Ըստ հեղինակի՝ հայերի համար երեք շատ սիրելի «ամենաժողովրդական» անհատներ կան՝ «Քաջ Անդրանիկ, Պողոս Նուբար փաշա և Օհաննես Թումանյան», և վերջինս կարող է առաջին երկուսի հետ մրցել ու հաղթել, ժողովրդի աչքում երևալ ավելի հարուստ և բարեգործ, քան Նուբար փաշան, ավելի քաջ,

քան Անդրանիկը, ավելի ճարտար, քան Խատիսովը: «Եվ ես կերդվեմ, – կես կատակ, կես լուրջ ասում է Սալ-Մանը, – որ Հայաստանի բոլոր վարժապետները, դրոշ-մրոշները, մինիստրները, լիդերները, օրիորդներն ու տիկինները, վարժուհիներն ու անվարժները իրենց ձայնն ու մատը կտան Հօգուտ մեր Օհաննեսի» (Մ, 1919, 40): Հրաշք է համարում այնպիսի գրողի գոյությունը, որին սիրում են ոչ միայն անխտիր բոլորը, այլև բոլոր գրողները: Մամուլի էջերում հայտնվում էին Թումանյանին հասցեագրված բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական շնորհավորանքներ, հեռագրեր ու նամակներ, հրավերներ տարբեր քաղաքներից: Հիշատակության արժանի են հատկապես Վրաստանի կառավարության նախագահ Ժորդանիայի, արտաքին և ներքին գործերի նախարարներ եվ. Գեգեչկորիի և Ն. Ռամիշվիլու շնորհավորական հեռագրերը, Հայաստանի կառավարության պաշտոնական ողջույնը, ուր Թումանյանը հռչակվում է հայ գրականության զարդ, որի աղոթքի քաղցր հնչյունների կարիքն ունի իր ժողովուրդը[17]: Ամենաբարի մաղթանքները ստացավ «մուսաներից գերված, աստվածներից սերված» (Վշտունի) բանաստեղծը (ԹՖ, 2092), մեծ վարպետը, հայրենիքի և ժողովրդի տաննջանքների երգիչը, հայրենիքի հերոսամարտի ոգևորողը, խաղաղության և սիրո քարոզիչը[18]:

Ախալքալաքի հայրենակցական միության վարչությունը շնորհավորում էր Թումանյանի «50-ամյա ճանապարհորդությունը արևի շուրջը», որից ստացած լույսը Թումանյանը առատորեն տարածում է աշխարհի մթության մեջ և սասանեցնում խավարի թագավորությունը (ԹՖ, 1286): «Թող վառ մնա դեռ երկար ժամանակ Ձեր մտքի և սրտի հնոցը, նրա կարիքը շատ մեծ է, մանավանդ ներկա համազգային սև ու դաժան օրերին» (ԹՖ, 1303), – ասվում էր հայ ուսուցիչների հեռագրում: Նույնաբնույթ շնորհավորագրեր Թումանյանը ստացավ Ն.Դ. Սոկոլովից, Սանդրո Կանչելիից, Դմիտրի Գորղնեյից, Յուրի Դեգվիչից, Տիցիան Տաբիձեից, «Цех поэтов», «Кольчуга» ընկերություններից (ԹՖ, 752, 984, 328, 1291, 2511): Ի պատիվ Թումանյանի՝ մարտի 7-ին բեմադրվում է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան[19], Նոր Բայազետում որոշվում է Թումանյանի անունով փողոց կոչել[20]: Նման բազմա-

*թիվ այլ վկայակոչումներ կարելի է բերել, բայց բավարարվենք այսքանով: Ասենք միայն, որ Թումանյանը իր անձի նկատմամբ ցուցաբերած սիրո և մեծարանքի ցույցերը համարում էր դրական հանդեպ ժողովրդի ջերմ վերաբերմունքի, հոգատարության դրսևորում և ամեն անգամ ի պատասխան, չնորհակալական խոսքում հայտնում էր իր սրտի ցավը՝ իր սերնդի յուրաքանչյուր գրողի չգրված երկերի ցուցակի համար, քանի որ պատճառը բոլորի համար էլ մեկն է եղել՝ դաժան ժամանակը, անտանելի պայմանները: «Հայ ժողովրդի արյունոտ կյանքի վերջալույսին և նոր կյանքի արշալույսին, — ասում է բանաստեղծը, — ես էս ոգևորությունը էնպես եմ հասկանում, որ մեր ժողովուրդը սկսում է սիրել իրենը, հարազատը: Մեր էն լավ խոսքերը անգրել մնացին, չասվեցին: Յենդուբան և արյունը թույլ չէին տալիս» (7, 385): Թումանյանը հույս է հայտնում, որ դեռ կասվի չասված խոսքը, և եկող սերունդը ավելի լավ կապրի, իսկ ինքը դեռ կերդվի իր կարապի երգը հայ ժողովրդի վերածնության մասին, ժողովուրդ, որը անպայման պիտի ապրի, քանի որ դեղցիկը սիրելու ընդունակությունը երբեք չի կորցնում: Իսկ երբ երեխաներին էր ուղղված լինում այդ խոսքը, նա մաղթում էր ունենալ այնպիսի երջանիկ բանաստեղծներ, որոնց ժամանակը թույլ տար երգել մանկական հոգուն համապատասխան զվարթ ու պայծառ երգեր:*

*Մենք ավելի հանգամանորեն անդրադարձանք Թումանյանի հոբելյանին, որպեսզի ավելի հստակվի Թումանյանի վայելած մեծ հեղինակության և ժողովրդականության դերը՝ կապված ընկերության գործունեության հետ:*

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը իր տասնամյա գոյության ընթացքում մասնակցեց այլ հիմնարկությունների և միավորումների կազմակերպած հոբելյաններին ու հանդիսություններին, տարբեր բնույթի երեկույթների ու միջոցառումների: Իր հերթին հայ գրողների ընկերությունը, ստանալով հրավերներ Թիֆլիսի վրացի, ռուս, լեհ և այլ ազգերի գրական ընկերություններից, դանդաղ կազմակերպություններից ու հաստատություններից, մասնակցում էր նրանց նախաձեռնությամբ կայացած գրա-*

կան երեկույթներին, հանդիսություններին, հոբելյաններին և այլ բնույթի մշակութային միջոցառումներին: Առաջնորդող սկզբունքը մեկն էր՝ չնորհավորել այլազգի գործչի հոբելյանը նշանակում է չնորհավորել այդ ժողովրդի մշակույթը ու սիրել այն: Իր նամակներից մեկում Թումանյանը գրում է. «Ժողովուրդների մեծությունը հայտնվում է իրենց հոգևոր կուլտուրայի մեջ: Եվ ամեն մի ժողովրդի մեծության առաջին նշանը իր գրականությունն է» (10, 345): Հետևաբար, ճանաչել և հարգել այլ ժողովրդի գրականությունը նշանակում էր այլազգի հոգևոր մշակույթի միջոցով բացահայտել տվյալ ժողովրդի ոգու մեծությունը: Ահա թե ինչու Թումանյանի ղեկավարած ընկերությունը նաև առանց հրավերների ամենաակտիվ մասնակցությունն էր ունենում տարբեր ազգերի գրականությունների նշանավոր հոբելյաններին ու մշակութային բնույթի այլ իրադարձություններին, տոներին: Հաճախակի էին հատկապես Հայ գրողների կովկասյան ընկերության անդամների ու վրացի գրողների հանդիպումները:

Նշենք մի քանիսը այն հոբելյաններից, հանդեսներից ու միջոցառումներից, որոնց մասնակցել է Հայ գրողների կովկասյան ընկերությունը (ժամանակագրական կարգով).

1. Արամյան դպրոցի 60-ամյա հոբելյանը (1913 թ. հունվարի 13): Հրավիրել էր Թավրիզի հոբելյանական հանձնախումբը:

2. Հովհաննես Հովհաննիսյանի գործունեության 30-ամյակը Բաքվում (1913 թ. ապրիլի 27):

3. Թիֆլիսի հայ պատանի գրասերների միության կազմակերպած երեկույթը (1913 թ. մարտի 13):

4. Գրերի գյուտի և տպագրության հոբելյանի տոնակատարության նպատակով առաջնորդարանում թեմական հանձնաժողով ընտրող նիստը (1913 թ. մարտի 22):

5. Նկարիչ Հարություն Շամչինյանի հոբելյանական հանդեսը (1913 թ. ապրիլի 28), հրավիրող գրությունը ստացվել է 1913 թ. մարտի 26-ին:

6. Իլյա Ճավճավաձեի մահարձանի բացումը (1913 թ. մայիսի 6):

*7. Դերասան Գևորգ Տեր-Դավթյանի բեմական գործունեության 40-ամյա հոբելյանը (1919 թ. մայիսի 7):*

*8. Մոսկվայի «Русские ведомости» լրագրի խմբագիր Սոբոլևսկու հիշատակի հարգումը: Ուղարկվել է ցավակցական հեռագիր՝ 1913 թ. մայիսի 16-ի որոշմամբ):*

*9. Գրական ֆոնդի համար հանդանակություն կազմակերպելու նպատակով Թիֆլիսի առաջնորդարանում հրավիրված խորհրդակցություն (1913 թ. մայիսի 17). իբրև ընկերության ներկայացուցիչ մասնակցել է Թումանյանը:*

*10. Վլադիմիր Կորոլենկոյի 60-ամյակը, որը լրացել է 1913 թ. հուլիսի 15-ին (Ուղարկվել է շնորհավորական հեռագիր 1913 թ. հուլիսի 21-ին):*

*11. Շուշու և Ղարաբաղի թեմական դպրոցի 75-ամյակը (1913 թ. օգոստոսի 3): Ներկայացուցիչը եղել է Լևոն:*

*12. Գրերի գյուտի 1500-ամյակին և տպագրության 400-ամյակին նվիրված հոբելյանական հանդես (1913 թ. հոկտեմբերի 13):*

*13. «Русские ведомости» լրագրի 50-ամյա հոբելյանը (Ուղարկվել է հեռագիր 1913 թ. հոկտեմբեր):*

*14. Լինչի հիշատակի հարգումը (նրա մահվան կապակցությամբ ընկերության ցավակցական հեռագիրը Լոնդոն՝ 1913 թ. նոյեմբերի 21):*

*15. Պրեսանսեի հիշատակի հարգումը (նրա մահվան կապակցությամբ ցավակցական հեռագիրը Փարիզ (1914 թ. հունվարի 22):*

*16. Դրիբոյեդովի մահվան 85-րդ տարելիցը. հոգեհանդիստ Ս. Դավիթ եկեղեցու բակում նրա հիշատակին (1914 թ. հունվարի 30):*

*17. Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Իսահակ Հարությունյանի մանկավարժական գործունեության 25-ամյա հոբելյանը (1914 թ. ապրիլի 20), ներկայացուցիչը եղել է Նիկոլ Աղբալյանը:*

*18. Դերասան Մատթեոս Աղայանի բեմական գործունեության 35-ամյակը (1914 թ. ապրիլի 22):*

*19. Ակակի Ծերեթելու հոգեհանդիստը Քաշվեթի եկեղեցում և նրա թաղումը (1915 թ. փետրվարի 6, 8): Ներկայացուցիչները եղել են Թումանյանը և ընկերության փոխնախագահ Մինաս Բերբերյանը:*

20. Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալևսկու հիշատակի հարգումը (նրա մահվան կապակցությամբ ընկերության ցավակցական հեռագիրը Մոսկվա՝ «Вестник Европы» լրագրին և «Общество любителей российской словесности» ընկերությանը (1916 թ. մարտի 28):

21. Պետերբուրգի համագումարը (1916 թ. ապրիլի 25):

22. Թիֆլիսի առաջնորդարանում Ուսուցչական միության վարչության հետ միացյալ ժողովը (1916 թ. ապրիլի 25):

23. Սաթենիկ Օհանջանյանի անվան գրադարան-ընթերցարանի բացումը (1916 թ. նոյեմբերի 13): Ընթերցվել է Թումանյանի գրավոր խոսքը ընկերության անունից:

24. Յերեկույթ՝ Հ. Սենկևիչի հիշատակին (1916 թ. դեկտեմբերի 22), ընկերության ցավակցական հեռագիրը Սենկևիչի մահվան առթիվ:

25. Արվեստագետների միության բանկետը (1917 թ. փետրվարի 12): Ներկայացուցիչը եղել է Թումանյանը:

26. Մկրտիչ Պեշիկթաշլյանի ծննդյան 90-ամյակը և մահվան 50-րդ տարելիցը հոգեհանգիստ նրա հիշատակին (1917 թ. նոյեմբերի 26): Ներկայացուցիչը և ընկերության անունից ելույթ ունեցողը Թումանյանն էր: Նա հայտնում է իր նախաձեռնած «Հայ կաթոլիկաց միությունը Ռուսաստանում» ընկերությունը կազմակերպելու մասին:

27. Դերասան Հովհաննես Աբելյանի հոբելյանը (1919 թ. մարտի 9): Ներկայացուցիչը եղել է Թումանյանը:

28. Վրաց բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլու կազմակերպած գրական երեկոն (1919 թ. մարտի 24): Ներկայացուցիչը եղել է Թումանյանը:

29. Անդրկովկասյան կոնֆերանս (ընկերության ողջույնի հեռագիրը. 1919 թ. ապրիլի 25): Հեռագիրը՝ Թումանյանի ստորագրությամբ:

30. Բանվոր Խաչատուր Տեր-Հովհաննիսյանի գրաշարական գործունեության 25-ամյակը (1919 թ. մայիսի 17): Ներկայացուցիչը եղել է Դ. Դեմիրճյանը:

31. Վրացի գրող Վ. Բարնովի գրական գործունեության 30-ամյակը (1919 թ. նոյեմբերի 8):

*32. Վրացի դրողների «Химерион» ակումբի բացումը (1919 թ. դեկտեմբերի 28) ներկայացուցիչը եղել է Թումանյանը:*

*33. Վրաց վիպասան Կղդիաշվիլու դրական գործունեության 25-ամյա հոբելյանը՝ Վրաց դրողների միության նախաձեռնությամբ (1920 թ. փետրվարի 15):*

*34. Ղևոնդ Ալիշանի ծննդյան 100-ամյակը (1920 թ. հուլիսի 31): Հ. Օհանջանյանի նախաձեռնությամբ հոբելյանական հանձնաժողով կազմելու համար նիստ մշակութային-հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներից (1920 թ. փետրվարի 22): Այդ հոբելյանի համար նախապատրաստական մեկ այլ ժողով՝ Լեոյի մասնակցությամբ (1920 թ. մարտի 6):*

*35. Վրաց դրականության, ազգային բանաստեղծության տոնը (1920 թ. մայիսի 9):*

*36. Աթաբեկ Խնկոյանի դրական գործունեության 25-ամյա հոբելյանը (1920 թ. մայիսի 23):*

*37. Սգահանդես՝ նվիրված դերասաններ Մնակյանի, Սևումյանի, դերասանուհի Հրաչյայի և դրող Վրթանես Փափազյանի հիշատակին. այդ առթիվ հայոց դրամատիկական ընկերության վարչության նիստը (1920 թ. հունիսի 8):*

*38. Հակոբ Ադաբաբի դրական-մանկավարժական գործունեության 25-ամյա հոբելյանը. ուսուցչական միության հրավերը (1921 թ. հունվարի 13):*

*39. Դերասան Մատթեոս Ադայանի բեմական գործունեության 40-ամյակը (1921 թ. փետրվարի 10)[21]:*

*Վերը բերված ցանկը արդեն բավարար վկայությունն է այն բանի, որ հայ դրողների կովկասյան ընկերությունը Թիֆլիսի ողջ մշակութային կյանքի ամենաակտիվ մասնակիցն էր:*

*Դրողների ընկերությունը հաճախ անմիջական մասնակիցն էր այն նախապատրաստական աշխատանքների, որոնք տարվում էին մշակույթի տարբեր բնագավառների գործիչների, դրականության և արվեստի մշակների՝ դրողների, դերասանների, նկարիչների, նույնիսկ բանվորների հոբելյանները կազմակերպելու համար: Այս հանգամանքը ևս Հայ դրողների կովկասյան ընկերության ու Թիֆլիսի մյուս*

*հասարակական միավորումների ու հաստատությունների համագործակցության վկայությունն է:*

*Հասարակական տարբեր հաստատությունների նախաձեռնությամբ տեղի ունեցող միջոցառումներին ընկերությունը մեծ մասամբ իբրև ներկայացուցիչ ընտրում էր իր նախագահին: Վարչության անդամների՝ միաձայն Թումանյանին լիազորելու որոշումները պայմանավորված էին թե՛ նրանց անկեղծ ցանկությամբ՝ ընկերությունը ներկայացնել իրենցից ամենահեղինակավոր ու ամենաժողովրդական անձնավորության միջոցով, թե՛ այն հանգամանքով, որ հոբելյանական դրեթե բոլոր հրավերները գալիս էին անձամբ նախագահի անունով, և հրավիրողները նույնպես ցանկանում էին հենց Թումանյանին տեսնել իրենց հավաքույթներում: Հիշենք թեկուզ լեհական կազմակերպության հատուկ հրավերը Թումանյանին, որով խնդրում էին նրան ներկա լինել Հենրիկ Սենկևիչի հիշատակին նվիրված ցերեկույթին (ՀԳԿԸ Ֆ, 141): Եվ Թումանյանը, իբրև պաշտոնական ներկայացուցիչը իր ղեկավարած գրողների ընկերության, ներկայանում է ինչպես լեհ գրողին նվիրված ցերեկույթին, այնպես էլ՝ Գրիշաշվիլու կազմակերպած երեկոյին, վրաց գրողների «Химерион» ակումբի բացմանը, Մերեթելու հոգեհանգստին, Վրաստանում գրականության, լուսավորության տարածման հարցերի քննարկման և գործունեության ծրագրերի վերանայման աշխատանքներին նվիրված վրաց գրողների համագումարին (1921 թ. մայիսի 18), Վ. Կոտետաշվիլու հրավերով՝ Մ. Պեչիկիթաշվիլյանի, Հովհաննես Աբելյանի հոբելյաններին և այլն, և այլն:*

*Իհարկե, նշված հոբելյաններից ոչ բոլորին էր ընկերությունը մասնակցում՝ ներկայացուցիչներ ուղարկելով: Հաճախ բավարարվում էր միայն հեռագրեր և ողջույնի ուղերձներ հղելով, հատկապես, եթե հոբելյանական միջոցառումները տեղի էին ունենում Թիֆլիսից դուրս:*

*Հայ գրողների կովկասյան ընկերության նախաձեռնությամբ կամ նրա մասնակցությամբ տեղի ունեցան բազմաթիվ այլ բնույթի մշակութային հանդեսներ, երեկոներ և միջոցառումներ: Սակայն այդ բոլորի մասին խոսելու կարիք չկա և հնարավոր էլ չէ մի աշխատանքի սահմաններում:*

*Հիրավի, հսկայական էր դրանց նշանակությունը Թիֆլիսի և առհասարակ հայ մշակութային կյանքում: Այդ ամենի շնորհիվ դրողների ընկերությունը ավելի էր մերձենում ժողովրդական լայն զանգվածներին, ավելի էր մեծացնում դրողի և դրականության հեղինակությունը, ընթերցողի և դրողի անմիջական կապը:*

*Մասնակցելով հոբելյանների և անձամբ կազմակերպելով դրանք՝ Թումանյանը միաժամանակ ձգտում էր, որ գրականությունն ու արվեստը չդառնան միայն տոն օրերի բուրվառ, որ միայն հոբելյանի առիթով չհիշվեն ու մեծարվեն արվեստագետն ու դրողը, իսկ հետո մոռացվեն, որ հասարակության հոգածությունը դրողի ու արվեստի ամեն մի մշակի հանդեպ մշտատև լինի:*

*Հայ դրողների կովկասյան ընկերությանը մտահոգում էր յուրաքանչյուր հասարակական ցավոտ խնդիր, և նա ձգտում էր ամեն կերպ օգտակար լինել ժողովրդի ընդհանուր բարօրությանը, անելով այն ամենը, ինչ իր հնարավորությունների սահմաններում էր: Ոչ մի չանք չխնայելով ազգային ընդհանուր առաջադիմության, գրականության ու արվեստի պրոպագանդման գործում՝ Հայ գրողների կովկասյան ընկերությունը դարձավ տասական թվականների հայ հասարակական կյանքի ամենաակտիվ մասնակիցներից և ողջ մշակույթի կարևոր օջախներից մեկը:*

## Հայ գրական կապերի պատմությունից

*Հովհաննես Թումանյանի գիտակցական ողջ կյանքը եղել է անմնացորդ նվիրում ազգերի բարեկամության գաղափարին, տարբեր ժողովուրդների արվեստների ու գրականության մերձեցման գործին: Այդ պատճառով էլ նրա ղեկավարած ընկերության դերը չէր կարող միայն ազգային շրջանակներով սահմանափակվել: Հայ գրողների ընկերությունը իր որոշակի նշանակությունն ունեցավ Անդրկովկասի ողջ գրական-հասարակական կյանքում: Նրա գործունեությունը ուղղված էր նաև գրականության միջոցով ազգերի բարեկամության ամրապնդմանը, նրանց մշակութային փոխհարըս-*

տացմանը: Ընկերության ղեկավարներին առաջնորդող սկզբունքներից մեկն էլ այն էր, որ գրականությունը գրեթե այն միակ ասպարեզն է, ուր յուրաքանչյուր ազգ ներկայանում է իր ուրույն հոգեբանությամբ, ազգային առանձնահատկություններով:

Գրականության միջոցով տարբեր ազգերի միջև միշտ անխախտ հոգևոր կապ ստեղծելու նպատակով ընկերությունը կազմակերպում էր երեկույթներ, որոնցում հայ և այլազգի գրողները, քննադատները զեկուցում էին տարբեր ազգերի գրականությանն ու կյանքին վերաբերող հարցերի մասին, Մ. Յուլուկիձեն, Ի. Նակաչիձեն դասախոսություններ էին կարդում վրաց, էյնալի բեկ Սուլթանովը, Ա. Գուլոյանը՝ պարսից, Վ. Վալադյանը՝ ռուս, Վ. Բրյուսովը՝ հայ, Մ. Մաետենճյանը՝ ֆրանսիական և այլ ժողովուրդների գրականության մասին:

Թումանյանը, ներկայացնելով Մ. Յուլուկիձեին, ընկերության հերթական հինգշաբթիներից մեկում ասում է. «Ազգերին լավ ճանաչելու և նրանց մեջ փոխադարձ սեր ու հարգանք արծարծելու ավելի ազնիվ հող ու ավելի մեծ կապ չի կարող լինել, քան գրականությունն է» (7, 542):

Յուլուկիձեի դասախոսությունը ընկերության միայն առաջին նախաձեռնությունն էր՝ Թիֆլիսի հայ, ռուս և այլազգի գրական հասարակությանը ծանոթացնելու վրաց գրականության անցյալին ու ներկային, խոսք ու զրույց բացելու նրա ապագայի մասին: Հենց Յուլուկիձեի զեկուցման օրը (1914 թ. մարտի 6) Թումանյանը խոստացավ, որ «առաջիկայում գրողների ընկերությունը դարձյալ երեկոներ կհատկացնի վրաց գրականությանը: Եվ հետզհետե ավելի ու ավելի իրար ճանաչելով՝ ավելի ու ավելի էլ իրար կսիրենք» (7, 542): Նա մնաց իր խոստմանը հավատարիմ: Վրաց գրականությանն էր նվիրված նաև ընկերության հերթական երեկույթներից մեկը (1916 թ. դեկտեմբերի 16), որում զեկուցումով հանդես եկավ վրաց իշխան, գրական-հասարակական գործիչ, խմբագիր Իլյա Նակաչիձեն: Ընկերության անունից իբրև հիշատակ նրան հանձնվեց բրյուսովյան «Поэзия Армении» ժողովածուն, ուր, ինչպես նկատեց Թումանյանը, «ամփոփված են մեր ժողովրդի հոգին և մեր ամենաթանկ զգացմունքները» (7, 299):

Հայ գրողների ընկերության երեկույթներում Շոթա Ռուսթավելու «Ընձենավորի» մասին դասախոսություն կարդալու ցանկություն էր հայտնել Ս. Կակաբիձեն:

Իհարկե, հայ գրողների ընկերության բուն նպատակը նախ ազգային արվեստի և գրականության ավանդների, պատմության միջոցով հայ գրականության զարգացմանը նպաստելն էր: Բայց հենց հանուն ազգայինի անհրաժեշտ էր հոգատար վերաբերմունք դրսևորել այլ ազգերի մշակույթների ուսումնասիրության ու լուսաբանման նկատմամբ: Վրաց գրականության մասին հայ գրողների կազմակերպած դասախոսությունները առիթ դարձան, որ Նակաշիձեի զեկուցման օրը (1916 թ. դեկտեմբերի 16) վրաց գրողներից չատերը որոշեին տարբեր առիթներով պարբերաբար ելույթ ունենալ Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթներում և իրենց հերթին խնդրեցին Հայ գրողների ընկերության վարչությանը տրամադրել դրաքննադատներ ու գրողներ «վրաց հասարակության առջև հայ գրականության մասին դասախոսություններ կարդալու»[22]:

Պատմական Հայաստանի վաղեմի հարևաններից է նաև Պարսկաստանը, որի գրականությունը հայ ազգային արվեստի հետ մշտական փոխազդեցության մեջ է գտնվել: Եվ հայ գրական հասարակայնության հետաքրքրությունը պարսից և առհասարակ արևելքի մշակույթի նկատմամբ նոր չէր: Հայ գրողների ընկերության հերթական հինգշաբթիներից մեկը (1914 թ. մայիսի 25) նվիրված էր պարսից գրականությանը: Ունկնդիր հասարակության մեջ ներկա էին Թիֆլիսում պարսից դեսպանի փոխանորդ, հյուպատոս Սայադուլ Մյուլքը, փոխհյուպատոս Միրզա Թաղի խանը, հյուպատոսարանի մյուս անդամները և պարսիկ այլ հյուրեր: Գրական-երաժշտական երեկոյին մասնակցում էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ, հայեր, վրացիներ, պարսիկներ՝ Միրզա Հյուսեին խան Քեմալին, Մաշադի Մահմադ Ջարգալին, Գևորգը, Սևին, Օգանեզաշվիլին և ուրիշներ: Հյուպատոսը, տեղեկանալով հայ գրողների ընկերության ցանկությանը՝ դասախոսությունների շարք կազմակերպել նվիրված պարսից գրականությանը, ուրախությամբ համաձայնել էր աջակցել ընկերությանը՝ վերջինիս առաջարկելով

պարսիկ դասախոսներ, ասմունքողներ ու երգիչներ: Էյնալի բեկ Սուլթանովի դասախոսությունից մի քանի օր անց ընկերության նույն ամբիոնից Ֆիրդուսու և նրա «Շահ-Նամեի», Հաֆիզի, Նիզամու, Սաադիի, Օմար Խայամի, Ջամիի և պարսից գրականության տարբեր փուլերի մասին նոր դասախոսություն կարդաց Աբրահամ Գուլոյանը: Նա Ֆիրդուսուն ներկայացրեց իբրև 10-րդ դարում Պարսկաստանի քաղաքական անկախության ժամանակաշրջանի մշակութային վերածնության ծնունդ ու արտահայտիչ, որը բանաստեղծորեն նկարագրեց Պարսկաստանի պատմությունը սկզբից մինչև իր օրերը՝ երազելով հայրենիքի փառավոր անցյալը: «Շահ-Նամեն» դիտելով իբրև ազգային ինքնագիտակցության հուշարձան՝ Գուլոյանը համեմատության եզրեր գտավ պարսկական Ռուստամի, հունական Հերակլեսի և հայկական Սասունցի Դավթի միջև: Այս ամենի շուրջ ծավալված գրական բանավեճին մասնակցեցին Վ. Ահարոնյանը, Տ. Գալաջյանը, Ս. Թառայանը և շատ այլ գրողներ ու գրականագետներ, ինչը վկայում է հայ գրական շրջաններում պարսից գրականության քաջատեղյակության և նրա նկատմամբ աճող հետաքրքրության մասին:

1910-ական թվականներին Թիֆլիսում մեծ հետաքրքրություն էր առաջացել Դոստոևսկու արվեստի նկատմամբ: Նրա մասին մոսկվացի Լ. Կոզլովսկու դասախոսությունները մեծ հաջողություն ունեցան Թիֆլիսում: Հայ գրողների կովկասյան ընկերությունը ևս անմասն չմնաց ռուս մեծ գրողի ստեղծագործության լուսաբանման գործում: Դոստոևսկու մասին դասախոսությունը կարդաց Վ. Վալադյանը (1914 թ. մայիսի 1): Նա շատ ավելի ուշադրության արժանացրեց գրողի անձի ու ստեղծագործության հետ կապված բարոյաբանական խնդիրները: Նրա կարծիքով Դոստոևսկու բարոյականի ընկալման հիմքը էթիկական դուալիզմն է, էգոիզմի՝ եսասիրության և ալտրուիզմի՝ այլասիրության համաձուլումն ու ներդաշնակ միասնությունը: Հերոսների կերպարները վերլուծելիս Վալադյանը շեշտեց գրողի անհատականության, նրա հոգեկան աշխարհում տեղի ունեցող իրարամերժ սկզբունքների դուալիստական համահնչունության և ստեղծած գրական կերպարների միջև եղած ընդհանրությունը:

«Իր հերոսների ետևում, – ասում է Վալադյանը, – կանգնած է Դոստոևսկին – առանձին-առանձին և ոչ մեկը, միասին վերցրած՝ երկուսն էլ: Լինել Կիրիլով՝ Դոստոևսկու ուժերից վեր է, լինել Զոսիմա՝ նա չի կարող» (Հ, 1914, 94): Հենց այս երկվությամբ էլ քննադատը բացատրեց Դոստոևսկու երկերում առկա ողբերգական վիճակները, դրամատիզմը և հերոսների տանջանքն ու տառապանքը: Դասախոսությունից հետո գրական բանավեճի մասնակիցներ Ն. Աղբալյանի և Ա. Ղազարյանի ելույթներում ընդգծվում էր Դոստոևսկու վեպերում արտահայտված կատարելության, մարդու մեջ աստված և աստծո մեջ մարդ տեսնելու ըմբռնումը: Աստված ոչ թե սոսկ դավանաբանական էակ էր, այլ ամենայն կատարյալի, ուրս գրողի իդեալի արտահայտությունը: Այս երևույթը՝ նկատված XX դարի առաջին տասնամյակում, հետագայում ևս ուշադրության արժանացավ հայ գրականագիտության կողմից: 60-ական թվականներին հետաքրքիր զուգահեռներ անցկացվեցին Նարեկացու և Դոստոևսկու ստեղծագործությունների միջև: Հիշատակության արժանի են հատկապես գրականագետ Լևոն Մկրտչյանի «Նարեկացին և Դոստոևսկին» հոդվածը և Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հրատարակության (1977 թ.) համար գրված առաջաբանը[23]:

1914 թ. հունվարի 30-ի երեկույթի թեման թեև աշուղական արվեստն էր, որի շուրջը պետք է դասախոսեր Գարեգին Լևոնյանը, սակայն Գրիբոյեդովի մահվան 85-ամյակի առիթով երեկոյի մեծ մասը նվիրվեց ուրս գրողի կենսագրության ու ստեղծագործության զանազան հարցերի մեկնությանը:

«Հայերն ու քրդերը և նրանց հարաբերությունները» թեմայով իր դասախոսության (1913 թ. փետրվարի 10) մեջ Լևոն Հանդամանորեն ներկայացնում է քրդերի անցյալը՝ սկսելով նրանց ծագումից: Զեկուցումից հետո ծայր առած սուր վիճաբանության ընթացքում բերվում են բազմաթիվ հետաքրքիր փաստեր և նորություններ քրդերի մասին եղած դիտական ուսումնասիրություններից: Եզրափակման խոսքում ընկերության նախագահը ասում է. «Երբ ես գալիս էի այստեղ... կարծում էի, որ քուրդերի մասին շատ քիչ տեղեկություն կստանամ... բայց այժմ տեսա, որ բավա-

կանին չատ բան լուսաբանվեց» (Մ, 1913, 35):

Մենք նչեցինք միայն մի քանի դասախոսություններ, որոնցում հայ և այլազգի գրողներն ու քննադատները զեկուցում էին տարբեր ազգերի գրականության ու կյանքին վերաբերող հարցերի մասին, ընկերության ամբիոնը ծառայեցնում օտար և հատկապես դրացի ազգերի մշակույթը պրոպագանդելու և դրանով իսկ ժողովուրդների մերձեցմանը նպաստելու համար: Սակայն Հայ գրողների կովկասյան ընկերությունը չատ ավելի կազմակերպում էր հայ գրողներին ու գրականության հարցերին նվիրված երեկոներ, որոնք նույնպես յուրօրինակ ձևով նպաստում էին նույն գաղափարի իրականացմանը, ազգերի մշակութային մերձեցման ամրապնդմանը:

Հայ գրականությանը վերաբերող գրեթե ոչ մի միջոցառում չէր անցնում առանց այլազգի մտավորականների ակտիվ մասնակցության: Հետևաբար, նման երեկույթներն ու հանդիսությունները ազգերի միջև բարեկամական հարաբերությունների ամրացմանը նպաստում էին ոչ պակաս, քան վերոհիշյալները: Այս առումով հիշատակության արժանի է Բրյուսովի նշանավոր դասախոսությունը Թիֆլիսում, որի դերը հսկայական է մեր ազգային բազմազարյան մշակույթը հայ, ռուս և այլազգի հասարակությանը ներկայացնելու չնորհակալ գործում:

Մոսկվայում «Ազատ էսթետիկայի ընկերության» կազմակերպած երեկույթի ընթացքում Բրյուսովի հայ քնարերգությանը նվիրված դասախոսությունից (1915 թ. հոկտեմբերի 15) հետո Բաքվի հայ գրասերների ընկերությունը (նախագահ Տիգրան Հովհաննիսյան, քարտուղար Յոլակ Խանզադյան) նոյեմբերի 21-ի վարչության նիստի որոշմամբ Բրյուսովին հրավիրում է Բաքու: Բրյուսովը, դեկտեմբերի 26-ին հեռագրով տալով իր համաձայնությունը, ուղարկում է դասախոսության ծրագիրը, իսկ 1916 թ. հունվարի 7-ին արդեն Բաքվում էր[24]: 1916 թ. հունվարի 3-ին, երբ Բրյուսովը դեռ Մոսկվայից չէր մեկնել, Թումանյանը հայ գրողների կովկասյան ընկերության վարչությանը հայտնում է, որ Բրյուսովը հրավիրված է Բաքու՝ հայ գրականության մասին դասախոսություն կարդալու և առաջարկում է նույն նպատակով հրավիրել նրան նաև Թիֆլիս (ՀԳԿԼ Ֆ, 45/1, 232): Եվ վարչության

*բոլոր անդամները միաձայն որոշում են, որ «Բրյուսովին Թիֆլիս հրավիրելը կարևոր է չատ տեսակետներով մեր ժողովրդի ու գրականության համար» (ՀԳԿԼ Ֆ, 45/1):*

*Նույն նիստի արձանագրության մեջ նշվում էր, որ դասախոսությունից հետո, ի պատիվ ռուս բանաստեղծի, կկազմակերպվի «ճաշ՝ նվագածությամբ»: Դեմիրճյանին հանձնարարվում է կազմակերպել երաժշտական մասը: Բրյուսովը Բաքվից Թիֆլիս է ժամանում 1916 թ. հունվարի 12-ին: Կայարանում նրան դիմավորողների մեջ էր ընկերության վարչությունը ամբողջ կազմով և նախագահով: Նույն օրվա Թիֆլիսյան իր առաջին երեկոն Բրյուսովը անց է կացնում Թումանյանի տանը (Վոզնեսենսկայա 18) հայ և վրացի գրողների ու մտավորականների շրջանում: Իսկ հաջորդ օրը՝ հունվարի 13-ին, տեղի է ունենում հայոց բանաստեղծության մասին Բրյուսովի դասախոսությունը: Այդ օրերին դեռ թարմ էր միլիոնավոր հայերի արյունոտ կոտորածի կսկիծը: Եղեռնի ահազարհուր տեսարաններից ու ֆիզիկական բնաջնջման սարսափից ուշքի չեկած հայ ժողովուրդը լսում էր իր հոգևոր մշակույթի արտակարգ բարձր գնահատականը այլազգի դրականության նշանավոր գործչի շուրթերից: Եվ Բրյուսովի սիրով ու տառապանքով լի խոսքը հնչում էր իբրև հայ ժողովրդի հոգևոր և ֆիզիկական գոյության իրավունքի հավաստիք: Նաև սրանով էր պայմանավորվում այն մեծ ոգևորությունը, որով ընդունվեց ռուս բանաստեղծի խոսքը: Իր ողջույնի խոսքում հիշեցնելով, որ Բրյուսովը հայոց բանաստեղծությունը համարում է հայ ազգի աղնվականության վկայական, Թումանյանը ասում է, թե այդ բարձր վկայականը «էն վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, էդ էն վկայականներից է, որոնց վրա բնությունն ու աստված են դրել իրենց կնիքը, և դրա համար էլ, ինչքան դժվար է դրա ունենալը, էնքան էլ դժվար է կարդալը: Սա էն գիրն է, որի մասին Սայաթ-Նովեն ասում է.*

***– Ամէն մարթ չի կանա կարթա, իմ գիրն՝ ուրիշ գըրէն է...»*** *(7, 220):*

*Նա Բրյուսովին ներկայացնում է իբրև այն հազվադյուտ անձնավորություններից մեկը, որը կարողացավ կարդալ այդ կախար-*

դական դիրը աշխարհի առջև: Բրյուսովի բովանդակալից խոսքում հայ բազմադարյան բանաստեղծությունը համարվում էր արևելքի և արևմուտքի արվեստների ներդաշնակ համադրություն, որը, սակայն, ուրույն է և ինքնատիպ, քանի որ մեղմում է իր մեջ և հավասարակշռում արևմուտքի ներդաշնակությունը, տեխնիկայի սառնությունը և արևելքի ծավալուն չափազանցումները ու շլացնող գունագեղությունը:

Ըստ Բրյուսովի՝ 10-րդ դարի հայ պոեզիան «հասել է մի բարձրության, որին չի կարողացել հասնել ո՛չ օտար քնարերգությունը և ո՛չ էլ նույն շրջանի եվրոպական բանաստեղծությունը... Ոչ մի ազգ Նարեկացու պես հոգևոր բանաստեղծ չի ունեցել, և միջնադարում հայոց միջնադարյան տաղերգուների նման տաղանդավոր ու զգայուն քնարերգուներ չեն ունեցել եվրոպացիները» (Հ, 1916, 20, 11): Բրյուսովը չեշտեց նաև հայ քնարերգության զարմանալի կենսունակությունը, որը, չնայած պատմական անբարենպաստ հանգամանքներին, միշտ էլ կարողացել է երգել կյանքը, սերը, բնությունը, հույսը: Դասախոսը հայ բանաստեղծության ուսումնասիրությունը օտարազգի գրական մշակների կողմից համարում էր պարտադիր, անխուսափելի անհրաժեշտություն և ժամանակի պահանջ:

Դասախոսությունից հետո տեղի է ունենում խնջույք Բրյուսովի պատվին. մասնակցում էին մոտ 200 հոգի, այդ թվում՝ ռուս-ներ, վրացիներ և այլազգի գրականագետներ, գրողներ, հրապարակախոսներ և այլ ազգային հասարակական գործիչներ: Խնջույքը, որի թամադան էր Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսյանը, վերածվում է ժողովուրդների բարեկամության ցույցի: Ելույթ են ունենում Թումանյանը, Դեմիրճյանը, իշխան Գր. Դիանամիձեն, Ի. Նակաշիձեն, Գր. Ռոբակիձեն, Կանչելին և ուրիշներ: «Այդ երեկո զգացվում էր, — գրում էին լրագրերը, — թե գրականությունը ինչ կախարդական ուժ ունի՝ լուծելու ազգերի հակամարտությունը: Այդ տեսակետից հենց մենակ նայելիս մարդ տեսնում է, թե ինչքան կարևոր է, որ մենք և վրացիք սկսենք իրար գրականություն ուսումնասիրել» (Հ, 1916,23): Փաստորեն Բրյուսովի դասախոսությունը վրացիներին և Թիֆլիսում բնակվող մյուս ազգություններին ևս մղում էր փոխադարձաբար միմյանց մշակույթ-

ների ուսումնասիրության ու ճանաչման նպատակին: Նույն հունվարի 13-ին Բրյուսովին հայտնում են, որ նա հրավերներ է ստացել Հայաստանի և Վրաստանի տարբեր քաղաքներից՝ իր դասախոսությունը կրկնելու: Հավանաբար, Բրյուսովը խոստացել էր չմերժել, քանի որ թերթերում հայտարարություն եղավ այն մասին, որ Երևանի, Գանձակի, Քութաիսիի, Ալեքսանդրապոլի և ուրիշ քաղաքների ընկերությունների և հասարակություններ խնդրանոք Վ. Բրյուսովը կկարդա իր դասախոսությունը վերոհիշյալ քաղաքներում: Այդ հրավերների մեծ մասը ստանում էր անձամբ Թումանյանը: Ալեքսանդրապոլի «Ալագյազի դավակունք» ընկերությունը, Բաթումի հայ դպրոցների հոգաբարձությունը և մտավորականությունը հեռագրերով խնդրում էին բանաստեղծին ընկերակցել Բրյուսովին: Սակայն վերը նշված քաղաքներից միայն Երևանում Բրյուսովը կրկնեց իր դասախոսությունը: Հատուկ այդ նպատակով Բրյուսովին ուղեկցելու համար Երևանից եկել էր Պողոս Մակինցյանը, և նա Թիֆլիսից Երևան մեկնեց հունվարի 14-ին, եղավ Էջմիածնում և հունվարի 18-ին քաղաքային ակումբում իր դասախոսությունը կարդալուց հետո վերադարձավ Թիֆլիս:

Հայ գրողների կովկասյան ընկերության նախաձեռնությամբ Բրյուսովի հաջորդ դասախոսությունը Թիֆլիսում «Հայ պատմական չրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» վերնագրով (1916 թ. հունվարի 22) չունեցավ առաջինի հաջողությունը[25]: «Արև» լրագրի թղթակիցը հունվարի 30-ի հաղորդման մեջ գրում է, որ այդ դասախոսության մեջ «անհրաժեշտ չատ երևույթներ չհիչվեցին ու հատուկ ուշադրության արժանացան այնպիսի հանգամանքներ, որոնք չատ երկրորդական նշանակություն ունեին: Չխոսվեց Ուրարտական բարձր կուլտուրայի մասին... Չհիշատակվեցին և է՛ժ դարերի մտավոր գործերը, ճարտարապետական կոթողները, երևան չեկավ Անին, որ ինքնին կուլտուրական սկզբունքների մի գեղանի սինթեզ է»[26]:

Ինչպես իրավացիորեն նկատում է գրականագետ Անուշավան Ջաքարյանը, Բրյուսովի դասախոսության անհաջողության պատճառներից մեկն էլ թեման էր, որի լուսաբանման համար պահանջվեցին ականավոր հայագետների տարիների քննական աչխատանք, գրական լուրջ պրպտումներ:

Բազմիցս գրվել և խոսվել է Բրյուսովի այդ դասախոսությունների նշանակության մասին: «Արև» լրագրի Թիֆլիսի թղթակիցը հաղորդում է Բաքու, որ բոլորը հիացած են, և արդեն մի շաբաթ է, ինչ Բրյուսովի անունը լսվում է ամենուրեք, միջնադարյան քնարերգությունը ընթերցվում է դպրոցներում, հրատարակչություններում, այգիներում և տներում»[27]: Այդ մասին գրում է նաև «Кавказское слово» -ն [28]: Բրյուսովի դասախոսության նշանակության մասին էր նաև Գր. Զալխուշյանի «Մեր իրականությունը» հոդվածը (Հ, 1916, 28), Մ. Մաւենճյանի «Վ.Բրյուսովի դասախոսությունը» (Հ, 1916, 11), Միքայել Վարդանյանի «Ամոթալի երևույթ» (Հ, 1916, 11), Հ. Թումանյանի «Բացատրություն» (6, 232), անստորագիր «Վ.Բրյուսովի Բաքվի դասախոսությունը» (Հ, 1916, 9), Բրյուսովի «Երևանի դասախոսությունը» (Հ, 1916, 13), Լեոյի «Հայոց գրականության հարցերը» (Հ, 1918, 25) և այլ հոդվածներ: «Մի հանդիսական» ստորագրությամբ լրագրողի հունվարի 13-ի երեկոյից ստացած տպավորությունը սկսում է տպագրվել «Հորիզոնում» հունվարի 22-ից մինչև 31-ը ներառյալ: Ոչ միայն Թիֆլիսի, այլ գրեթե ողջ հայ մամուլը խոսում էր այդ դասախոսության մասին, քանի որ այն ոչ միայն ընկերության հերթական երեկույթներից մեկն էր, այլև նշանավոր երևույթ իր գրական-քաղաքական ու հասարակական նշանակությամբ: Ականատեսների վկայությամբ՝ «Այն երեկո անկարելի էր չզգալ, տեսնելով հայ հոծ բազմությունը, այն հասարակական մեծ նշանակությունը, որ ուներ Բրյուսովի դասախոսությունը» (Հ, 1916, 41), կամ «Մենք զգում էինք այդ երեկո Ռուսիայի սիրտը, որ որոնում էր և գտել էր մեր սիրտը» (Հ, 1916, 26): Բրյուսովը իր ընկերներով «բաց արավ մեր և ռուս հասարակությունների Դարդանելը» (Հ, 1916, 15):

Այդ օրերին սկսում են հայերեն թարգմանվել ու հրատարակվել Բրյուսովի բանաստեղծությունները, ինչպես, օրինակ «На медленном огне горишь ты и сгораешь», «Душа моя», «Поблек предзакатный румянец» սկսվածքով բանաստեղծությունները Գ. Քալաշյանի թարգմանությամբ, «Քարտաշը» Սիմ. Բաբայանի, «Քուրմը» («Բրոնզե արձան») Թումանյանի, «Առավոտյան աստղը» Ոնուփրիոս Անուփյանի թարգմանություններով և այլն:

*Տպագրվում և արտատպվում են Բրյուսովի հայ դրականությունից կատարած թարգմանությունները (Հ, 1916, 5, 11, 13, 15, 18, 23), ինչպես օրինակ, Դոդոխյանի հայտնի «Միծեռնակը» և այլն: Բանաստեղծություններ են գրվում և նվիրվում Բրյուսովին: Թումանյանի՝ Բրյուսովին ձոնված բանաստեղծության մեջ «Ձյունի աշխարհից» եկած գրողը հանդես է գալիս իբրև երջանիկ կյանքի լավագույն ապագայի նորանոր հույսեր ու իղձեր արթնացնող բանաստեղծ, որն իր հետ բերում է բարություն ու սեր.*

*Եվ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝*
*Թե ով ավելի ուժգին կըսիրի,*
*Եվ թող մի մրցում լինի միշտ անվերջ՝*
*Բարու, դեղեցկի ու վեհ գործերի:*

*Պետք է ասել, որ Թումանյանի անսահման ուրախությունն ու ոգևորությունը Բրյուսովի այցով բխում էր թե՛ նրա անձնական համակրանքից դեպի Բրյուսով բանաստեղծը և թե՛ առհասարակ նրա անվերապահ սիրուց դեպի ռուսաց պոեզիան:*

*Թիֆլիսում Բրյուսովին մոտահոդեց հայ լուրջ դրական ամսագրի բացակայությունը: Եվ նա դիմեց Հայ դրողների ընկերության նախագահին, որ լայն ծրագրով մի ամսագիր հիմնի և ապահովի նրա հրատարակությունը: Հավանություն տալով Բրյուսովի առաջարկին՝ Թումանյանը այդ նպատակի համար հրավիրում է խորհրդակցական ժողովներ: Սակայն Թիֆլիսում այդպիսի ամսագիր հիմնել Թումանյանին չի հաջողվում: Ի դեպ, Թումանյանը Բրյուսովի, Յու. Ա. Վեսելովսկու, Ա.Կ. Ջիվելեգովի, Վ.Ֆ. Տոտոմյանցի, Կ.Ն. Շախովսկու, Ա.Պ. Ավսարկիսովի հետ միասին նույն 1916 թվին աշխատակցում էր Մոսկվայում Թ. Ամիրյանի հրատարակած «Армянский вестник» շաբաթաթերթին, որը նվիրված էր հայ դրական կյանքին:*

*Բրյուսովը Թիֆլիսից մեկնեց Մոսկվա հունվարի 24-ին՝ հրաժեշտի պահին Թումանյանին հանձնելով «К армянам» բանաստեղծությունը՝ գրված նախորդ օրը:*

*Առանձին ուսումնասիրության նյութ է Բրյուսովյան «Поэзия Армении» ժողովածուի ստեղծման պատմությունն ու*

հրատարակության արձագանքները: Այն լույս տեսավ 1916 թ. օգոստոսին Մոսկվայում: Հայ գրողների կովկասյան ընկերությունը որոշեց այդ առթիվ կազմակերպել քնարերգության երեկո ռուսաց լեզվով (1917 թ. մարտի 3): Այդ երեկոն՝ «Հայոց բանաստեղծության գիշեր» խորագրով, տեղի ունեցավ մեծ հանդիսավորությամբ: Երաժշտական մասին Ա. Տիգրանյանի երգչախմբի, Հազիրիի խմբի, Մուշեղ Աղայանի և ուրիշների հետ մասնակցում էր նույնիսկ Նիկ. Աղբալյանը՝ Սայաթ-Նովայի երգերի կատարմամբ: Երեկոն զրավել էր բազմաթիվ ունկնդիրներ:

Հաստարակության շատ լինելու պատճառով այդ օրն էին տեղի ունեցել ուշագնացության դեպքերը, որոնց մասին արդեն հիշատակել ենք (7, 1917, 48)::

1917 թ. հունվարին Բրյուսովը դարձյալ Բաքվի հայ գրասիրաց ընկերության հրավերով եկել էր Բաքու՝ տարբեր թեմաներով դասախոսություններ կարդալու: Նույն ամսին Թումանյանը հայ գրողների ընկերության անունից հրավիրում է Բրյուսովին Թիֆլիս՝ երեք դասախոսություն կարդալու բելգիական նշանավոր բանաստեղծ Վերհառնի, Պուշկինի, արևելքի փիլիսոփաների («ուսուցիչների») մասին: Սակայն չուտով լրագրերից պարզվում է, որ Բաքվում «հիվանդացել է Վալերի Բրյուսովը» (Հ, 1917, 19): Ռուս բանաստեղծը, տեսնելով, որ առողջական վիճակը չարունակում է մնալ նույնը, փետրվարի 1-ին նամակով Թումանյանին գրում է. «Ձգիտեմ՝ ինչպես արդարանամ այդքան հոգս պատճառելու համար»: Գրում է նաև, որ շատ է ցավում խնդիրքը մերժելու համար. «Ներողամիտ եղեք և հավատացեք, որ ինձ համար ամենից տխուրն այն էր, որ կորցրեցի իմ երազը իրականություն դարձնելուց և Ձեզ տեսնելուց» (ՀԳԿԼ Ֆ, 581): Նույն ջերմ տպավորություններով էր Թումանյանից հեռացել նաև Բրյուսովի կինը՝ Իոաննա Բրյուսովան. «Թիֆլիսի հանդիպումների մասին եղած իմ բոլոր հիշողություններից Հովհաննես Թումանյանին վերաբերող հուշերս ամենապայծառն են: Բոլոր դեմքերը մթագնել են անմոռաց բանաստեղծի անջնջելի կերպարի առաջ» – գրում է նա (ԹԺՀ, 694):

Փետրվարի 1-ից 16-ը ընկած ժամանակահատվածում Բրյուսովը, հավանաբար, ևս մի նամակ է գրել Թումանյանին, քանի որ 1917 թ. փետրվարի 16-ի վարչության նիստի արձանագրության

մեջ որոշակի նշվում է. «Բրյուսովը հարցրել է նախագահից, թե ե՞րբ է վարչությունը հարմար համարում նրա գալը:

Խնդրել, որ դա Զատիկից հետո» (ՀԳԿՀ Ֆ, 46/3):

Փետրվարի 22-ին ընկերությունը հայտարարում է, որ «Հայ դրողների ընկերության հրավերով առաջիկա շաբաթներից մեկում Վալերի Բրյուսովը Թիֆլիսում կարդալու է դասախոսություն» (Հ, 1917, 38), բայց ապրիլի 10-ին Թումանյանին ուղղված նամակում Բրյուսովը վերստին ներողություն է խնդրում Թիֆլիս գալ չկարողանալու համար (Թ Ֆ, 582): Մինչդեռ ապրիլի առաջին տասնօրյակում ընկերությունը դեռևս սպասում էր ինչպես Բրյուսովին, այնպես էլ Իվ. Վասելովսկուն: Թեև Բրյուսովը, 1917 թ. անկախ իր մեծ ցանկությունից, այդպես էլ չկարողացավ գալ Թիֆլիս, բայց Հայ դրողների ընկերության արխիվում մինչև օրս պահպանվում են նրա վերոհիշյալ երեք դասախոսությունների դրույթները (ՀԳԿՀ Ֆ, 181):

Այսպես, Բրյուսովի նշանավոր այցելությունը Թիֆլիս և նրա հայտնի դասախոսությունները տեղի են ունեցել Հայ դրողների կովկասյան ընկերության ու նրա նախագահի՝ Թումանյանի անմիջական նախաձեռնությամբ ու ջանքերով: Իսկ «բրյուսովյան օրերը» Թիֆլիսում Հայ դրողների ընկերության և XX դարի տասական թվականների հայ ազգային մշակույթի պատմության առավել հետաքրքրական ու նշանակալից էջերից են:

Հայ դրողների կովկասյան ընկերության արխիվում, ժամանակի մամուլում պահպանվել են բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են Հայ դրողների կովկասյան ընկերության և ռուս ու համաշխարհային դրական պրոցեսի հետ ունեցած առնչությունների, հայ դրողների՝ ընդհանուր դրական կյանքին ունեցած մասնակցության մասին: Միայն նախորդ դեկտեմբերին բերված հոբելյանների ցանկը դրա վառ վկայությունն է:

1913 թ. հուլիսի 15-ին լրացավ ռուս դրող Վլադիմիր Կորոլենկոյի ծննդյան 60-ամյակը, որին իր մասնակցությունը բերեց նաև Թիֆլիսի դրական հասարակայնությունը: Հիշենք թեկուզ նույն թվի դեկտեմբերի 8-ի Երմոլաևի դասախոսությունը (Հ, 1913, 277): Թումանյանը անձամբ ծանոթ էր Կորոլենկոյին, որին առա-

ջին անգամ հանդիպել էր Պետերբուրգում իր դատավարությունից հետո, և նա հայ գրողների ընկերության անունից չնորհավորական հեռագիր է ուղարկում «Русское богатство» - ի խմբագրության միջոցով այն գրողին, որը ռուս մտավորականության համար ոչ միայն արվեստագետ էր, այլև խիստ, բայց զգայուն հասարակական խղճի արտահայտություն[29]: Հուլիսի 21-ին տեղ հասած հեռագիրը ուներ հետևյալ բովանդակությունը «Вы сегодня являетесь истинным представителем периода родной литературы, носителем лучших идеалов русского гражданина и всегда сохраняли непорочным прекрасный сосуд, в который провидение вложило свой божественный дар»[30]:

Հայ գրողների ընկերությունը փոխադարձ կապ էր ստեղծել Ռուսաստանում հրատարակվող մամուլի բազմաթիվ օրգանների, լրագրերի ու ամսագրերի («Армянский вестник», «Вестник Европы», «Русские ведомости», «Русское богатство» և այլն) խմբագրությունների հետ:

Անգլիացի խոշոր գիտնական, անգլիական խորհրդարանի անդամ, հայագետ Լինչը, 1893-94 թվականներին ճանապարհորդելով Հայաստանում, իր տպավորությունները արտահայտեց «Հայաստան ուղևորական ակնարկներ և ուսումնասիրություններ» («Armenia, Tpavels and Studies») գրքով, որը այլ հայագետների՝ պրոֆ. Վամբերի, Ուիլիամ Ռեմզի, Կոնիբերի խոստովանությամբ, «հավերժական հիշատակաց արժանի կանգուն կոթող է Հայաստանի մասին ցարդ գրված բոլոր գործերի» (Հ, 1913, 263): Լինչի մահը արձագանքվեց հայության ամենատարբեր հատվածներում (1913 թ. նոյեմբեր): Հայ գրողների կովկասյան ընկերությունը Լոնդոն՝ Լինչի քրոջը ուղարկեց ցավակցական հեռագիր, որով վստահեցրեց, որ Լինչի անունը և «հոյակապ գործը ընդմիշտ պիտի հարգված մնան հայ ազգից»[31]:

Անգլիայում մեծ համարում ուներ նաև Ֆրանսիայի հեղինակավոր անձնավորություններից մեկը՝ Ալֆրեդ Դրեյֆուսի հայտնի պաշտպան, «Յումանիտեի» մշտական աշխատակից Ֆրանսիս դը Պրեսանսեն, որը տասը տարի չարունակ եղել էր «Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպան լիգայի» նախագահը: Լի-

նելով ժամանակի հայասերներից և «Հայ դատի» համարձակ պաշտպաններից մեկը՝ Պրեսանսեն Պևեռ Քիաոյի հետ միասին «Pro Armenia» թերթի խմբագիրն էր: Փարիզից Գ. Լյութեսի՝ Պրեսանսեի թաղման մասին 1914 թ. հունվարի 23-ի հաղորդման մեջ ասվում էր. «1905 թ. Սասունի ջարդերի առթիվ Ֆրանսիայի պառլամենտի ամբիոնից Եվրոպային զգուշացնում էր, որպեսզի նրանք 95-96-ի սխալների մեջ չընկնեն և մարտիրոսացած մի ժողովրդի չմոռնեն անպաշտպան կարմիր սուլթանի քմահաճույքներին» (Հ, 1914, 18): Թումանյանը՝ իբրև գրողների ընկերության նախագահ, հայ ժողովըրդին ազգային-քաղաքական միավոր ներկայացնող անձնավորություն, ընկերության վարչության հունվարի 16-ի որոշման համաձայն Փարիզ է ուղարկում հետևյալ հեռագիրը՝ «Հայ գրողների կովկասյան ընկերությունը իր խորին ցավն է հայտնում մեծ մարդասերի և հայասերի մահվան առթիվ» (ՀԳԿՀ Ֆ, 43/3, 87):

1916 թ. գարնանը Անգլիայում և Իսպանիայում մեծ չուքով նշվում էր Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակը: Անշուշտ, հայ գրական հասարակայնությունը ևս, որ միշտ աչքի էր ընկել Սերվանտեսի և հատկապես Շեքսպիրի արվեստի նկատմամբ ունեցած հետաքրքրությամբ, չէր կարող անտարբեր մնալ այդ նշանակալից իրադարձությանը:

Ապրիլի 22-ին Թիֆլիսի գրական-դեղարվեստական սալոնի ելեկտրթը նվիրված էր Շեքսպիրին: Նույն թեմայով էր կազմակերպվել նաև Գորիի հայ գրասերների խմբակի հերթական երեկոն: Մամուլի տարբեր օրգաններ, լրագրեր բազմաթիվ առաջնորդողներ էին նվիրում հանճարեղ անգլիացու երկերին: Այս շրջանում Շեքսպիրի և Սերվանտեսի մասին գրականագիտական լուրջ հոդվածներ և ուսումնասիրություններ են գրում Թումանյանը, Հեռո, Սուրխաթյանը, Ն. Աղբալյանը և ուրիշներ:

Շեքսպիրին ու Սերվանտեսին էր նվիրված հայ գրողների կովկասյան ընկերության 1916 թ. ապրիլի 28-ի երեկույթը, որը բացեց գրողների ընկերության նախագահը, հայ նշանավոր չեքսպիրագետն ու «Վերնատան Շեքսպիր» հռչակված Հովհաննես Թումանյանը: «Երկու հսկայական արեգա՛կ... — ասաց նա,— Սակայն գերազանց է բրիտանական հանճարի փայլը... Եվ ամեն գրող, ինչ աշխարհքում էլ ասպարեզ իջնի, տեսնում է իր ուղին արդեն լու-

*սավորված նրա չողերով, և, գրեթե անխտիր, շատ քիչ բացառությամբ, ամենքն էլ խոնարհվել են նրա հանճարի առջև ... չկա այլ երկիր և ժողովուրդ, որ այնքան շատ ողբերգական ու հուզիչ նյութեր մատակարարած լինի բանաստեղծությանը, որքան Հայաստանը» (ՀԳԿԸ Ֆ, 63/3, 4, 339):*

*Հովհաննես Մասեհյանը հայության անունից շնորհակալություն է հայտնում լորդ Բրայսին՝ հայ ժողովրդի նկարագրին տված բարձր գնահատականի և նրան Եվրոպային հայտնի դարձնելու համար, սրտառուչ է դիտում այն հանգամանքը, որ հայերը տոնում են Շեքսպիրի մահվան 300-ամյակը համաշխարհային պատերազմի թոհուբոհի մեջ, երբ հայ ազգի գոյությունն է սպառնալիքի տակ: Մասեհյանը խոսում է նաև հայ գրականության երկրորդ վերածննդի, ժամանակակից հայերենի գրական մշակման, Սկոտից և Շեքսպիրից կատարած իր թարգմանությունների մասին և այլն:*

*Ընկերության հղած շնորհավորական հեռագիրը Լոնդոն է հասնում 1916 թ. մայիսի 17-ին: Անգլո-հայկական կոմիտեի նախագահ Անյուրին Վիլյամսը՝ պատասխանը ուղարկում է հայ գրողների կովկասյան ընկերության նախագահին՝ Թումանյանին: Վիլյամսի նամակից պարզվում է, որ նա ընկերության ողջույն-հեռագրի մասին արդեն հաղորդել է սըր Ջորջ Ալեքսանդերին և վստահ է, որ «Նա և իր կոմիտեն մեծապես կգնահատեն մեր ազգային բանաստեղծի մասին հայ ժողովրդի հիացման այս արտահայտությունն ու նրա համակրանքը մեր ազգային կյանքի բոլոր երևույթներին» (Հ, 1916, 125): Բրայսի այս կարծիքը հենվում էր Ջորջ Ալեքսանդերից ստացած հետևյալ բովանդակությամբ հեռագրի վրա. «Ես շատ շնորհակալ եմ հայ գրողների ընկերության անունից Ձեր նամակ-հեռագրի համար և չափազանց երախտապարտ կլինեմ, եթե Դուք բարի լինեք հաղորդել մեր կոմիտեի վարչության բարձր գնահատականը նրանց սրտագին ողջույններին, որին մենք պատասխանում ենք փոխադարձաբար» (ՀԳԿԸ Ֆ, 63):*

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը Սերվանտեսի մահվան 300-ամյակի կապակցությամբ իսպանական հյուպատոսի միջոցով հեռագրեց նաև Իսպանիա՝ Մադրիդ (Հ, 1916, 94):*

*Ընկերությունը հայ գրողների նյութականի ու բարոյական վի-*

ճակի մասին մտահոգվելիս չէր մոռանում նաև այլազգի դրչի մշակներին: 1921 թ. մայիսի 19-ին վարչության նիստի արձանագրության մեջ որոշակի ասվում է. «Հովհաննես Թումանյանը պարզեց, որ թե ռուս, նույնպես հայ և վրացի դրողների մեջ կան լուրջ դժգոհություններ բնակարանային հարցի վերաբերմամբ... Անհրաժեշտ նկատվեց ռուս և վրացի դրողների միությունների հետ գործնական քայլերի դիմել ըստ կարելվույն դրողների համար նպաստավոր լուծում տալու խնդրին: Օտարազգի միությունների հետ բանակցություններ վարելու համար ընտրվեց Հովհաննես Թումանյանը»[32]:

Կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ հայ դրողների ընկերության և այլ ազգերի դրական միավորումների, դրողների ու դրական հասարակական գործիչների փոխադարձ կապերի պատմությունից, բայց բավարարվենք այսքանով: Հայ դրողների կովասյան ընկերությունը հայ և այլազգի դրականությանը նվիրված իր երեկույթներով սկիզբ դրեց ինչպես համաչխարհային դրականության պրոպագանդմանը մեզանում, այնպես էլ մեր դրականության տարածմանը թե՛ հայ, թե՛ այլ ժողովուրդների դրական-մտավորական շրջաններում: Պահպանվել են բազմաթիվ փաստեր հայ գրականության մասին ասուլիսներին ռուսների, վրացիների, պարսիկների, անգլիացիների, ֆրանսիացիների և այլ ազգերի ներկայացուցիչների մասնակցության մասին: Այսպես, օրինակ, Շեքսպիրին նվիրված երեկոյին անգլիացիներից բացի կային նաև ամերիկացիներ, ռուսներ, վրացիներ և ֆրանսիացիներ՝ Ստեպլտոնները ամուսինները, Կերը, Սմիթը, փարիզյան «Le Sournd»-ի թղթակիցներ Անրի Բարբյուսը և Սիմեն: Անրի Բարբյուսը, օրինակ, մեկ անգամ չէ, որ այցելում էր ընկերության հինգշաբթիներին: Առաջին անգամ, երբ ֆրանսիացի հայտնի դրողն ու լրագրողը եկել էր մասնակցելու Միքայել Նալբանդյանին նվիրված երեկոյին (1916 թ. մարտի 31), Թումանյանը, ինչպես նշվում է ժամանակի մամուլում, «մի քանի խոսքով ներկայացրեց նրան... Բարբին, խորապես հուզված, ողջունում էր և հանկարծ ամբողջ բազմությունը ոտքի ելավ ու միաբերան աղաղակեց. «Կեցցե Ֆրանսիան», («Vive La France») (Հ, 1916, 74): Երեկույթից հետո ի պատիվ նրա տեղի է ունենում խնջույք, որտեղ «խոսեց և ինքը՝ ֆրանսիացի գրողը՝ վեր հանելով

*իր հայրենիքի վաղեմի համակրությունը դեպի բոլոր ճնշվածների դատը» (Հ, 1916, 74):*

*Հայ գրողների կովկասյան ընկերության կազմակերպած գրական ասուլիսները հսկայական ազդեցություն էին ունենում և մեծ հետաքրքրություն, աշխուժություն ու ոգևորություն էին առաջացնում Թիֆլիսի ողջ հասարակայնության մեջ՝ անկախ ազգային պատկանելությունից: Դրանք կարևոր դեր խաղացին տարբեր ազգերի կուլտուրական կապերի ամրապնդման և մերձեցման գործում: Ամենաակտիվ ձևով մասնակցելով այլ ազգերի գրական-մշակութային կյանքին՝ հայ գրողների ընկերությունը հետամուտ էր տարբեր ժողովուրդների ու նրանց գրականությունների միջև անխախտ հոգևոր-մշակութային կապերի ստեղծման նպատակին:*

*1910-ական թվականների դժվարագույն պայմաններում, քաղաքական խառն ու չափազանց բարդ հանգամանքներում Հայ գրողների կովկասյան ընկերությունը Թումանյանի գլխավորությամբ արեց հնարավոր ամեն ինչ այդ նպատակի իրագործման համար, նպաստեց հայ ժողովրդի գրական-կուլտուրական մակարդակի բարձրացմանը, համազգային մեծ արժագանքներ գտավ, մի ամբողջ գրական շարժում առաջ բերեց աշխարհի հայաշատ բոլոր կենտրոններում:*

*Հայ գրողների կովկասյան ընկերությունը, փոխադարձ կապի մեջ մտնելով Անդրկովկասի, Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Լեհաստանի և այլ երկրների գրողների, հասարակական-քաղաքական առաջադեմ գործիչների, գրական և հասարակական այլ բնույթի տարբեր միավորումների, մամուլի օրգանների խմբագրությունների և այլնի հետ, կարողացավ մեծ չափով բարձրացնել ազգերի կյանքում գրականության և մշակույթի նշանակությունն ու դերը:*

# Վերջաբան

*Ազգերի կյանքում, մանավանդ նրանց հոգևոր վերածննդի օրերում հասարակական հիմնարկութիւնները մեծ ու կարևոր դեր են կատարում: Դարասկզբին հայ իրականութեան մեջ մի շարք ազգային մշակութային հասարակական միավորումների, հաստատութիւնների ու միութիւնների երևան գալը պայմանավորված էր հայ ազգային զարթոնքի առկայութեամբ: Այդ կազմակերպութիւններ մեջ իր հաստատուն տեղն ունի Թիֆլիսի հայ գրողների կովկասյան ընկերութիւնը, որն իր գործունեութիւնը ծավալեց մեր դարի երկրորդ տասնամյակում (1912 թ. հոկտեմբերի 3-ից մինչև 1923 թ. ապրիլի 16-ը): Գրողների ու գրականագետների, գրասերների այդ խմբավորումը իր ստեղծումով և գոյութեամբ հետևանք էր այն բանի, որ XX դարի 10-ական թվականների հասարակական իրադրութիւնը պահանջում էր գրականութեան ավելի վճռական ներթափանցում հայկական ազգային կյանքի տարբեր ոլորտները:*

*Հայ գրողների կովկասյան ընկերութիւնը իր ծրագրերով ու նպատակներով չարունակութիւնն էր հայկական առաջին գրական միավորումների, որոնցից և ոչ մեկը պաշտոնական, պետականորեն հաստատված, հատուկ կանոնադրութեամբ, ուժեղ և ազդեցիկ կազմակերպութիւն չդարձավ: Գրական նախորդ շրջանի այդ փոքրիկ խմբավորումները իրենց համեստ ծառայութիւնն են մատուցել գրական կյանքի ընթացիկ չահերին:*

*Ընկերութեան պատմութիւնը հետաքրքրական փաստերով լրացնում է հայ ժողովրդի, հասարակական մտքի ու ազգային ողջ մշակույթի տվյալ շրջանի պատմութիւնը: Թեև գրողները և գրականագետները միավորվեցին նախ և առաջ գրականութեան չահերին ծառայելու համար, սակայն ժամանակի պահանջով հար-*

կազրված եղան ընդլայնել իրենց գործունեության ոլորտները՝ ձգտելով կատարել ժողովրդի կենսական պահանջները, ամենաակտիվ ձևով մասնակցել կյանքի ու մահու նրա պայքարին, դիմագրավել նրա ֆիզիկական բնաջնջման վտանգին, ազգի հոգևոր վերածնությանը նպաստելով՝ բարձրացնել ժողովրդին հոգեպես, ներշնչել հավատ իր ապագայի նկատմամբ: Գրողների ընկերությունը կազմակերպեց դասախոսություններ սոցիալական հեղափոխությունների, դյուղացիների արտագաղթի, ազգաբնակչության կազմի, կանանց իրավահավասարության մասին, հրավիրեց խորհրդակցություններ, հանրահավաքներ հասարակական-քաղաքական հարցերի շուրջ և այլն, և այլն:

Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը ևս վկայությունն է գրողի և կյանքի, գրականության և ժողովուրդների պատմության անքակտելի միասնության:

Սակայն ընկերության գլխավոր նպատակն էր սատար կանգնել գրողին ու գրականությանը, նպաստել ինքնուրույն ազգային գրականության զարգացմանը՝ վերջինս դիտելով իբրև ազգի ճակատագրի ու պահպանման գործում առաջնակարգ նշանակություն ունեցող գործոն: Հայ ազգային մեծագույն գրողի ու գրական-հասարակական գործչի նախագահած ընկերության պատմությունը վառ օրինակ է այն բանի, թե ինչպես կարելի է գրականության պատմությունը ծառայեցնել ազգային ինքնաճանաչման և ինքնագիտակցության բարձրացմանը, գրականության և գրականագիտության հեղինակության աճին, ընթերցող հասարակության և գրողի ու գրականության միջև անմիջական, անխզելի կապի առաջացման նպատակին: Գրողների կազմակերպած երեկույթներում հսկայական չափով տեղ գտան անցյալի ողջ գրականության բազում չուսումնասիրված հեղինակներ ու հարցեր, քանի որ հատկապես նրա նախագահը մեծ նշանակություն էր տալիս հայ միջնադարյան գրականության ուսումնասիրությանը՝ ասելով, որ յուրաքանչյուր ժողովրդի համար անցյալի մշակույթն ու ազգային կյանքը ճանաչելը պատմության քառուղիներով չիտակ ու անսայթաք գնալու միջոց է, լույս տվող լապտեր: Ահա թե ինչու ընկերության գործունեությամբ, նրա առաջին իսկ քայլե-

*րով սկսվեց վերադնահատության մի ընդարձակ շրջան, որը չա-*
*րունակվեց հետագայում և հասավ մինչև մեր օրերը: Նոր լույսի*
*տակ քննվեցին գրական բոլոր նախորդների՝ հայ հին ու նոր գրա-*
*կանության դասական դարձած արժեքները, և գրական ավանդների*
*վերհանման միջոցով ընկերությունը խոշոր դեր խաղաց մեր*
*անցյալի ողջ գրականության լուսաբանման գործում: Գրական*
*աստվածները օգնում էին սկսնակ դեղարվեստագետներին, գրող-*
*ների նոր սերնդի ստեղծագործական զարգացմանն ու աշխար-*
*հայացքի, տաղանդի ձևավորմանը՝ զինելով նրանց հայ հին ու*
*նոր գրականության պատմությամբ, ազգային ավանդներով: Նոր*
*և նորագույն սերունդը եռանդով կարդում ու մեկնում էր անցյալ*
*ու ժամանակակից հեղինակների գործերը, փորձում էր գնահա-*
*տել նրանց պատմական և գրական արժեքը, կապել իրենց*
*ստեղծագործությունը պատմական հոլովույթի ընթացքին, բնո-*
*րոշել մեր գրականությունը, նրա զարգացման տարբեր շրջանները:*

*«Այսպիսով, — կարդում ենք «Հորիզոնի» առաջնորդողնե-*
*րից մեկում, — գրական քննադատությունը դառնում է հասարա-*
*կության մեջ նկատվող տարբեր հոսանքների բերան և փոխա-*
*դարձաբար դիմումներ է տալիս հասարակության մտքին՝ նայե-*
*լու իր չուրջը, իր անհատական ու հասարակական կյանքին, իր*
*գրականությանը և ճշտելու իր դիրքը անցյալի հանդեպ և նոր*
*կյանքի հարուցած երևույթների ու խնդիրների դիմաց» (Հ, 1913,*
*35): Մի տարի անց նույն լրագիրը գրում է. «Գրական ընկերու-*
*թյանը վիճակված է առաջնակարգ ֆակտոր հանդիսանալու մեր*
*կուլտուրական վերածնության գործում» (Հ, 1914, 3):*

*Գրականության հրաշալի լուսաբանման չնորհիվ քիչ չեն*
*ընկերությանը տված այնպիսի դնահատականները, որոնցից մե-*
*կին հանդիպում ենք Թումանյանին ուղղված անթիվ-անհամար նա-*
*մակներից մեկում. **«Հայ գրողների ընկերությունը հայ գրա-***
***կանության հասունության վկայականը պետք է նկատել»***
*(ԹՖ, 923) (Ընդգծումը մերն է — Ս.Հ.): 42-րդ երեկույթում Դ.*
*Դեմիրճյանը ընկերության նշանակությունը տեսնում է ինքնու-*
*րույն մշակույթի դիտակցության արթնացման, ազգային ինքնա-*
*ճանաչման նպատակին հասնելու մեջ:*

Ժամանակի գրական կյանքը, դարասկզբի գրեթե բոլոր նշանավոր գրողները, գրական հոսանքներն ու շարժումները ընկերության ասուլիսների մշտահոլով թեմաներից էին:

Գրական կյանքի աշխույժ մթնոլորտում, գրողների ընկերության երեկույթներում ձևավորվում էին գրական քննադատության նոր սկզբունքներ, չափանիշներ, գեղագիտական նոր ըմբռնումներ ու տեսություններ: Գրական մեթոդների ու հոսանքների, գրական շարժումների մասին զրույցներում փորձեր արվեցին գիտականորեն բնորոշելու ռեալիզմն ու ռոմանտիզմը, սիմվոլիզմն ու պառնասականությունը, հեթանոսական շարժումը և այլն: Գեղագիտության, հրապարակախոսության ու գրականության տեսության զանազան հարցեր (գեղեցիկի, կոմիկականի, մոմուլում ծավալվող բանավեճերի, ժանրերի, մեթոդների, գեղարվեստական պատկերի, կերպարի, արվեստի միտումնավորության և այլն) նույնպես շոշափվեցին գրական հինգշաբթիներում: Արծարծվող տեսական հիմնահարցերից և ոչ մեկը, հատկապես եթե քննելու լինենք ժամանակակից գրականագիտության նվաճումների տեսանկյունից, սպառիչ պատասխաններ չէին ստանում: Ավելին, քիչ չէին նաև թեր ու միանգամայն մերժելի, սխալ, մակերեսային, հակապատմական, ֆորմալիստական և գռեհիկ-սոցիոլոգիական բնույթ ունեցող մեկնություները, բայց դրանց ուսումնասիրությունը կարևոր է իբրև գրականության ու տեսական-քննադատական մտքի որոշակի մի փուլ, քանի որ հայ գրականագետների ու քննադատների նշված կարծիքներն ու հայացքները հետաքրքրական են դարասկզբի ազգային գրական կյանքի շրջանակներում:

Վերջին տասնամյակում հայ գրականագիտության կարևոր խնդիրներից է մեր դարասկզբի քննադատական մտքի պատմության ստեղծումը, և այս իմաստով, ինչպես նշվում է ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանի 1978 թ. հոդվածներից մեկում. «...պետք է ուղղակի ասել, որ հատուկ կարևորություն և դժվարություն է ներկայացնելու 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների գրական քննադատության պատմությունը»[1]: Այդ դժվարությունը բացատրվում է նրանով, որ այդ շրջանում ավելի, քան հայ գրականության նախընթաց որևէ փուլում, քննադատությունը դառնում

է գեղարվեստական պրոցեսի ակտիվ և ներգործուն տարրերից մեկը, ու նրանում որոշակիորեն դրսևորվում են դրականագիտական տարբեր դպրոցներ, հոսանքներ (կուլտուր-պատմական, հոգեբանական, սոցիոլոգիական), սկզբունքներ: Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը հենց այս երևույթի հաստատումն ու վառ վկայությունն է: Գրողների ընկերության ակտիվ անդամներից Լեոն, Ն. Ադբալյանը, Մ. Բերբերյանը, Սիմեոն Հակոբյանը կուլտուր-պատմական դպրոցի ներկայացուցիչներ էին: Հաբությունն Սուբխաթյանը և Հովակիմ Սոլովյանը ներկայացնում էին սոցիոլոգիական դպրոցը: «Գեղարվեստական-հոգեբանական սկզբունքներն էր պաշտպանում «Արվեստը արվեստի համար» տեսությանը հարող Յոլակ Խանդպյանը: Քննադատական տարբեր հոսանքների ու սկզբունքների հետաքրքիր բևեռում էր նկատվում Պողոս Մակինցյանի և այլոց բանավոր ելույթներում[2]:

Հայ գրողների կովկասյան ընկերության աղմկոտ ասուլիսներում, դրական բանավեճերում նկատվում էր ընդհանուր անբավականության զգացում XX դարասկզբի, այսինքն՝ հենց իրենց՝ ժամանակի դրականագետների, հայ քննադատական մտքի ձեռք բերած նվաճումների նկատմամբ, խիստ քննադատական, ժխտողական վերաբերմունք, «դատ» յուրաքանչյուր սխալի հանդեպ: Ընկերության ամբիոնում ծավալվեց հենց այն հին վեճը, թե ինչ է նշանակում քննադատ, քննադատելու մեթոդ և ի՞նչ է դրականագիտությունը: Քննադատին ներկայացվեցին գեղարվեստական երկի հասարակական բովանդակության, ստեղծագործության ոգու հայտնաբերման ու արժևորման, նրա հասարակական-դաստիարակչական դերը ընդգծելու, գեղարվեստական արժանիքները բացահայտելու, ժամանակի, կյանքի խորազնին իմացության, հարուստ գիտելիքներով և կյանքի ճանաչողությամբ զինված լինելու, ստեղծագործության մեջ նախ և առաջ դրականը տեսնելու և գնահատելու, գեղարվեստական բովանդակությունը մեկնելու, անաչառության, թափանցող հայացք ունենալու պահանջ և այլն, և այլն: Գրական հինգշաբթիներում ընթերցվող դասախոսություններում ու զեկույցներում հաճախ քննվող մեթոդոլոգիական այդ հարցադրումները երբեք չեն կորցնում իրենց նշա-

նակութիւնը, իսկ ժամանակ առ ժամանակ ձեռք են բերում հատուկ կարևորութիւն: XX դարասկզբին արծարծվող այդ խնդիրների քննութիւնը բնորոշ է մասնավորապես այսօրվա գրականագիտութեանը: Կարելի է վկայակոչել Էդ. Զրբաչյանի խոսքերը. «Գրաքննադատութեան տեսութեան և մեթոդաբանութեան հարցերը մեր օրերում ավելի ու ավելի մեծ ուշադրութիւն են գրավում...

Միանգամայն բնական է, որ մեր օրերում մեծապես աճել է հետաքրքրութիւնը նաև անցյալի գրական քննադատութեան պատմութեան նկատմամբ, ընդ որում, որոշակի է առանձին քննադատների ժառանգութեան կամ այդ ժառանգութեան կոնկրետ խնդիրների ուսումնասիրութիւնից գրական քննադատութեան պատմութեան, իբրև օրինաչափ պրոցեսի բացահայտման անցնելու միտումը»[3]:

Հայ գրողների կովկասյան ընկերութեան պատմութիւնը դարասկզբի հայ քննադատական մտքի պատմութեան անհրաժեշտ, բաղկացուցիչ մասն է:

XX դարի 10-ական թվականներին իր գործունեութիւնը ծավալած հայ գրողների ընկերութեան պատմութեան ուսումնասիրութիւնը ունի արդիական նշանակութիւն և շատ բաներով ուսանելի է այսօրվա գրական-հասարակական կյանքի համար: Թումանյանի կազմակերպած գրական ասուլիսներում ընթերցվող դասախոսութիւնները գրեթե առանց բացառութեան ուղեկցվում էին բանավեճերով: Վերջինս հասունացել էր երկար տասնամյակների ընթացքում, գրական-գեղարվեստական կյանքի, տեսական ու քննադատական մտքի խմորումներով, ժամանակի ալեկոծումներով: Յուրաքանչյուր գիտական բանավեճ, որը մղվում է արվեստի և առաջադեմ գաղափարախոսութեան բնագավառում, ընդունակ է բարձրանալու հասարակական կարծիքի աստիճանին և ձևակերպելու կարևոր մտքեր ու եզրակացութիւններ: Դարի առաջին քառորդը արթնացրել էր իր բանավեճը, որը փորձում էր խորքային քննութեան ենթարկել ապրող գրականութիւնն ու զարգացող հասարակական կյանքը, հայ մշակույթը: Ժամանակի թելադրանքով Թումանյանը, իր ղեկավարած ընկերութեան ասուլիսներում հակայական դեր հատկացնելով կարծիքների բախմանն

ու մտքերի փոխանակությանը, միանգամայն վստահ էր, որ դրականության ու արվեստի հարցերի չուրջ տեղի ունեցող յուրաքանչյուր բանավիճ միմիայն օգտակար է, չահեկան, եթե, իհարկե, նրա մասնակիցները առաջնորդվում են գեղարվեստականության և գիտական չափանիշներով:

Ծավալելով իր դրական-հասարակական գործունեությունը՝ Թումանյանը հետամուտ էր ժողովրդի ամենալայն խավերի մեջ դրական ճաշակի դաստիարակմանը, լուրջ ընթերցող հասարակության ստեղծմանը, որն ուղիղ համեմատական կլիներ գրականության ու գրողի դերի բարձրացմանն ու հեղինակության աճին: Նրան դուր չէր գալիս, որ ոմանք հաճախում էին ընկերության երեկույթներին ժամանցի համար: Այդպիսիներին նա անվանում էր Թամաշչիներ, խալխ և ոչ ժողովուրդ: Նա ամեն ինչ անում էր, որ ընկերության ամբիոնը ծառայեր ժողովրդի, հասարակության մեջ սեր ու հետաքրքրություն առաջացնելու դեպի իր հարազատ լեզուն ու գրականությունը, պատմությունն ու ողջ մշակույթը, և որ այդ հետաքրքրությունը լիներ լուրջ, խորը ու ոչ մակերեսային:

Հսկայական էր ընկերության դերը հայ գրականության և գրողի ժողովրդականացման ուղղությամբ: Ժամանակակիցների, օրինակ՝ Ստեփան Զորյանի վկայությամբ, 10-ական թվականների մեր իրականության մեջ հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթները ամենահուզառաբական երևույթն էին: Դրանք դրավում էին ամենաբազմազան հասարակության չերտեր անկախ սոցիալական խորությունից: Նույնիսկ Թիֆլիսի մոտակա գավառների մտավորականությունը աշխատում էր ներկա լինել բոլոր դասախոսություններին, որոնց մշտապես հաջորդում էր գեղարվեստական մաս, երգ, երաժշտություն, ասմունք, ներկայացնում էին տարբեր պլեսների բեմադրություններ, ամբողջովին կամ հատվածաբար՝ ժամանակի հայտնի դերասանների մասնակցությամբ: Երեկույթների դրական-երաժշտական մասը նույնպես իր հերթին նպաստում էր ընթերցող հասարակության, մարդու հասարակական-գեղարվեստական դաստիարակությանը, շեշտվում էր գրողի և գրականության հսկայական դերը հասարակության կյանքում, նրա ցանկացած ոլորտում: Պատահական չէ, որ այնտեղ իբրև երաժիշտ

կատարողներ ու երգիչներ հանդես էին գալիս իրենք՝ գրողները, նույնիսկ վարչության անդամները՝ Դերենիկ Դեմիրճյանը իբրև ջութակահար, Նիկոլ Աղբալյանը՝ իբրև երգիչ և այլն:

Հազարավոր ունկնդիրները ծանոթանում էին հայ ու եվրոպական գրականության, գրականագիտության, երբեմն էլ լեզվաբանության ու հասարակական այլ գիտությունների նվաճումներին: Այսօր էլ բանասիրության կարևոր հիմնահարցերից է գրականագիտական աշխատություններ, մենագրություններ ու ժողովածուներ, հոդվածներ կարդացող ընթերցողների շրջանակի մեծացումը, գրականագիտության և կյանքի, գրողի և իրականության մերձեցումը: Ոմանք, հասնելով ծայրահեղության, այնքան մեծ ու վճռական նշանակություն են տալիս այդ առնչությանը, որ կարծում են, թե գրականության մասին բոլոր գիտական աշխատանքները պետք է ուղղակիորեն ու անմիջականորեն հասցեագրվեն միլիոնավոր ընթերցողների, հետևաբար և հանուն ընդհանուր մատչելիության կարելի է ու պետք է զոհել գիտականությունը: Ինչ խոսք, այս հայացքը մերժելի է, սակայն ակնհայտ է գրականագիտության մասսայականացման անհրաժեշտությունը:

Հայ գրողների կովկասյան ընկերությանը հաջողվեց թե՛ գրականությունը և թե՛ նրա մասին գիտությունը ավելի ու ավելի մոտեցնել ժողովրդական լայն զանգվածներին, ուժեղացնել գրողի, գիտնականի ու ընթերցողի անմիջական կապն ու չփումը: Այս հանգամանքը ևս մեծացնում է ընկերության գործունեության արդիական նշանակությունը: Քանի որ նույնիսկ այսօր և՛ գրականության, և՛ գրականագիտության գիտական ու հասարակական հեղինակությունը, չնայած նրա նախորդ տասնամյակներում նշանակալից ու անվիճելի նվաճումներին, կարիք ունի զգալի աճի: Այդ են վկայում ժամանակակից մի շարք քննադատներ ու տեսաբաններ: Ըստ Ա.Ս. Բուշմինի. «այդ հեղինակությունը ներկայումս չի գտնվում այն պատշաճ բարձրության վրա, որին նա արժանի է, իսկ գրականագիտության ինքնուրույն դերը այլ գիտությունների շարքում չունի բավարար համարում»[4]: Իր խոսքի շարունակության մեջ գրականագետը կոչ է անում գրականության ու գրականագիտության գործիչներին՝ չհաշտվել ստեղծված իրավիճակի հետ:

*Գրականության և գրականագիտական գիտելիքների լուսաբանումը մեծ և պատասխանատու գործ է: Գրականագիտությունը, արվեստագիտությունը ավելի, քան հասարակական մյուս գիտություննները, իրենց բնույթով լայն հնարավորություններ ունեն գիտական խնդիրների մասսայական առաջադրման և, անշուշտ, այդ հնարավորությունները պետք է օգտագործեն մեծ չափերով: Գրականագետների դեկուցումները, բանավոր ելույթները հասարակական տարբեր երեկույթներում, գրողների ու գրական, արվեստի գործիչների ասուլիսները հենց այդ հնարավորությունների լավագույն ու ցայտուն դրսևորումներից են: Գրականագիտությունը՝ որպես մեկը հումանիտար գիտություններից, ունի կարևոր դեր հասարակության կուլտուրական զարգացման, գիտական դեկավարման գործում: Գրականագիտության և հատկապես քննադատության լայն և ընդհանուր, որոշակի խնդիրը այն է, որ նա ուսումնասիրի ու պրոպագանդի գրական երկի գեղարվեստական արժանիքները՝ նրա պատմական բովանդակության ու նշանակության համադրությամբ:*

*Եվ այս իմաստով խոշոր դեր ունեն գրական հաստատությունները, միությունները և խմբավորումները, որտեղ և որ ժամանակներում էլ նրանք գործելու լինեն:*

*Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը մի հատված է XX դարի առաջին տասնամյակներում Ռուսաստանում և այլ վայրերում ստեղծված գրական ֆոնդերի, հայ գրողի հեղինակային իրավունքի պատմությունից: Թումանյանի դեկավարած գրողների միավորման կարևորագույն նպատակը գրողի և գրականության պաշտպանությունն էր թե՛ բարոյապես և թե՛ նյութական օժանդակության: Իր ամբողջ կյանքում Թումանյանը դժվարին ժամանակի ընձեռած հնարավորության սահմաններում անում էր ամեն ինչ՝ հայ գրողին միայն գրականությանը նվիրվելու, «չխանգարվելու», ստեղծագործելու ամենատարրական պայմաններ ստեղծելու համար: Ընկերության մեջ հիմնված Գրական ֆոնդը յուրովի ստանձնեց գրողների արհմիության դերը, իր ուղի միջոցներով կարողացավ օգտակար լինել բազմաթիվ հայ կարիքավոր գրողներին ու նրանց ընտանիքներին (Տերյան, Փափազ-*

յան, Սիամանթո, Վարուժան, Դեմիրճյան, Իսահակյան, Լեո...), հրապարակեց հայ գրողների գեղարվեստական ստեղծագործությունները (Սայաթ-Նովա...), գրական երեկոներում ընթերցված դասախոսությունների մի մասը (Մանուկ Աբեղյան, Զապել Եսայան...) ու զբաղվեց նաև դրանց տարածման, վաճառքի խնդրով և այլն, և այլն: Սակայն ժամանակի ծայրահեղ անբարենպաստ պայմանները արգելեցին Թումանյանին նաև գրողների ընկերության միջոցով իրագործելու գրականությունն ու գրողին պաշտպանելու իր նվիրական երազն ու ցանկությունը, արվեստագետին՝ ոգևորվելու և ոգևորելու: Այնուամենայնիվ, ընկերությունը, հանդես գալով գրողի նյութական ու բարոյական շահերի պաշտպանությամբ, կարողացավ բարձրացնել գրողի հեղինակությունը, օրակարգում դնել նրա հեղինակային իրավունքի անձեռնմխելիության հարցը, թեկուզ չնչին չափով նեցուկ դառնալ նրան, գեթ փոքր-ինչ թեթևացնել կենցաղային հոգսերը նրա կյանքի դժվարագույն պայմաններում, հանել նրան անելանելի թվացող վիճակներից, հուսահատությունից և այլն:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը ձեռնամուխ եղավ նաև հայ գրականության թանգարանի հիմնադրմանը և հավաքեց դանազան նյութեր ու ձեռագրեր, որոնցից են հատկապես Արսեն Բագրատունու, Ղևոնդ Ալիշանի, Արսեն Այտնյանի, Խրիմյան Հայրիկի և Մ. Մամուրյանի նամակներն ու այլ ինքնագրերը (ՀԳԿՀ Ֆ, 45/15): Հետագայում տարբեր ճանապարհներով ՀՀ Եղիշե Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանին ի պահ հանձնվեցին հայ հին ու նոր գրականության տարբեր հեղինակների, գրական գործիչների գեղարվեստական ու գրական-հասարակական, քննադատական ու հրապարակախոսական ժառանգության մաս կազմող երկերի ինքնագրերը, նրանց իրերն ու անձնական արխիվը կազմող այլ նյութեր: Թերևս ամենից արժեքավորը դրանց մեջ Սայաթ-Նովայի ձեռագրերն էին, մի զգալի մասն էլ անցավ Թիֆլիսում ստեղծված Հայ արվեստի տան (Հայարտան) անօրինությանը (1923 թ. ապրիլից) (ՀԳԿՀ Ֆ, 156):

Հայ ժողովրդի պատմության քննվող շրջափուլում արտակարգ մեծ կարևորություն էր ներկայացնում հայ համընդհանուր գրական լեզվի վերջնական ձևավորման ու նրա մշակման խնդիրը,

որի շուրջ հատուկ դասախոսություններ կարդացին ընկերության նախագահը, Դ. Դեմիրճյանը և ուրիշներ: Արևելյան ու արևմտյան լեզուների ճուլման, բարբառների միաճուլման և օգտագործման, լեզվի հարստացման այլ աղբյուրների, զարգացման հեռանկարների մասին ընկերության բազմաթիվ երեկույթներում տեղի ունեցան սուր բանավեճեր, բախվեցին կարծիքներ, վիճանակվեցին գիտական լուրջ տեսակետներ, տարակարծությունների հետ միասին արտահայտվեցին ընդհանուր հայացքներ, արվեցին նորանոր գիտարկումներ, առաջադրվեցին հետաքրքիր հարցադրումներ: Այս ամենը վկայում է դարասկզբին գրական լեզվի մշակման հարցի շուրջ եղած երկու ճյուղավորումների՝ լրագրային-հրապարակախոսական և ժողովրդական ուղղությունների դոյությունը: Ընկերության անդամների զգալի մասը Թումանյանի ազդեցությամբ ու գլխավորությամբ դարձան ժողովրդական ուղղության ներկայացուցիչներ ու հետևորդներ:

Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը հետաքրքիր ու նոր փաստերով լրացնում է նաև հայ-ռուսական, հայ-վրացական, հայ-քրդական, հայ-ֆրանսիական, հայ-իսպանական, հայ-անգլիական գրական-հասարակական առնչությունների ու այլ ազգերի հետ ունեցած մշակութային կապերի պատմությունը: Բազմաթիվ վավերագրեր վկայում են հայ գրողների ընկերության և հատկապես Թիֆլիսի մշակութային բազմաթիվ միավորումների կապերի ու փոխհամագործակցության մասին: Հայ գրողները կազմակերպեցին մեծ թվով հոբելյաններ և իրենց հերթին մասնակցեցին այլազգի հասարակական հաստատությունների ձեռնարկած աշխարհի տարբեր գրողների, մշակույթի այլ գործիչների հոբելյաններին ու նրանց նվիրված հանդիսություններին:

Հատկապես Թումանյանի ջանքերով և այլ ազգերի՝ նրա անձի նկատմամբ ունեցած համընդհանուր սիրո շնորհիվ Հայ գրողների ընկերությունը դարձավ ժողովուրդների բարեկամության օջախ, որը գրականության միջոցով իր վոգբրիկ ներդրումը ունեցավ ազգերի հոգևոր մերձեցմանը:

Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը ապացույցն է նաև այն բանի, որ մի հասարակական մարմին, գրող-

ների համերաշխ մի կազմակերպություն տաղանդավոր ղեկավարվելու և ազգային մշակույթի, գրականության ու պատմության ավանդներն ու հարցերը ճիշտ ու հետաքրքիր հրամցնելու, լուսաբանելու, ժողովուրդների հոգևոր միասնության, համամարդկային արժեքների վերհանման ուղղությամբ լայն գործունեություն ծավալելու չնորհիվ կարող է ունենալ համազգային արձագանքներ, առաջ բերել համընդհանուր գրական չարժում, հայ ողջ իրականության մեջ Պոլսից մինչև Բաքու, Մոսկվայից մինչև Ալեքսանդրապոլ, Երևանից մինչև Դորիս... գրականությունը դարձնելով ազգային ինքնաճանաչման ու ինքնագիտակցության լավագույն միջոց՝ հսկայական աշխուժություն առաջացնել հայ գրական ողջ պրոցեսում, առաջ բերել գրական նոր չարժում և ղեկավարել այն:

Հարկ է նշել նաև, որ եթե չլինեին ընկերության կազմակերպած երեկույթները, դասախոսություններն ու գրական զրույցները և դրանց մասին մանրամասն ու հանգամանալից հաղորդումները ժամանակի մամուլում, այսօր մեզ շատ բան անծանոթ կլիներ Հ. Թումանյանի, Դ. Դեմիրճյանի, Ն. Աղբալյանի, Մ. Աբեղյանի, Լեոյի և այլ գրողների ու գրականագետների քննադատական-հրապարակախոսական ժառանգությունից, հետևաբար, և շատ ավելի դժվար կլիներ նրանց աշխարհայացքի գրականագիտական հայացքների վերլուծությունը, գեղարվեստական ստեղծագործությունների որոշ յուրահատկությունների բացահայտումը:

Ի վերջո, Հայ գրողների կովկասյան ընկերության պատմությունը զգալի չափով լրացնում է նրա մի չարք նշանավոր անդամների՝ Տերյանի, Սիամանթոյի, Դեմիրճյանի, Իսահակյանի, Շիրվանզադեի, Լեոյի, Վրթ. Փափազյանի և, հատկապես, Թումանյանի կենսագրությունները: Մեծ գրողի ու քաղաքացու կյանքը անխզելիորեն առնչվում է ընկերության գործունեությանը, նրա առօրյային: Գրական այդ միավորման պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում ճշգրիտ ասելու, թե Թումանյանը իր կյանքի մի ամբողջ տասնամյակի օրերի զգալի մասը երբ, ինչպես և որտեղ է անցկացրել, ինչ միջավայրում, ում հետ և ինչի մասին է զրուցել, ինչով է ապրել ու մտահոգվել, տխրել ու տառապել, ոգևորվել ու խանդավառվել, և այս իմաստով այն անգնահատելի դեր ունի ազգային մեծ գրողի կյանքի տարեգրու-

թյունը, որը կազմելու գործում նույնանուն է իր ժողովրդի պատմության, նրա կյանքի տարեգրության հետ:

Օրինաչափ է, որ գրականության ու հասարակական կյանքի կապը հանդիսացող գրողների ընկերության նախագահը պետք է միայն ու միայն Թումանյանը լիներ, որի համոզմամբ կյանքն իր ամբողջության մեջ չատ է մեծ ու «Կյանքը տիեզերական կյանքն է, և մարդու ամբողջ վեհությունն ու քաղցրությունն էլ հենց էն է, որ չրջապատի միջոցով ապրի էն մեծ կյանքով: ... Բայց մարդը չի կարողանում ապրել էն մեծ կյանքով, ապրում է միայն նրա մի մասով — մարդկության կյանքով: Սակայն նույնիսկ դրանով — մարդկության կյանքով ապրելու քչերն են ընդունակ: Չէ՞ որ կյանքն ինչպես անսահման մեծ է, էնպես էլ փոքր է անսահման... կա ազգային կյանք, պետական կյանք, դասակարգային կյանք, կուսակցական կյանք, ավելի նեղ՝ թայֆայական կյանք»:

Եվ ընկերության նախագահը առաջնորդում էր գրողներին դեպի կյանք, որպեսզի նրանք կարողանան արվեստագետներին բնորոշ սիրո պայծառ զգացմունքով, լույս սրտով կյանքը դարձնել ավելի քաղցր ու ավելիսիրելի,ավելի մարդկային, ավելի տիեզերական, որպեսզի նրանք դառնան հասարակության խիղճը, ժողովրդի ձայնը:


Թումանյանը մեր գրողներից ամենաժողովրդականն էր հայ գրական և հասարակական գործիչների մեջ: Նրան դիմում էին ամենքը և տառացիորեն ամեն ինչի համար՝ անհանգստացնելով գրական, հասարակական, ազգային, ընկերային կարևոր խնդիրներից սկսած մինչև կենցաղային ամենամանր հոգսերով: Զարմանցություն չի լինի, եթե ասենք, որ գրողների ընկերությունը առանց Թումանյանի գրեթե գոյություն չուներ: Եթե նա բացակայում էր քաղաքից կամ հիվանդ էր, հետաձգվում էին վարչության նիստերն ու ընդհանուր ժողովները, երեկույթներն ու դասախոսությունները: Ընկերության ձեռք բերած ճանաչումը, նրա՝ հայ գրական կյանքում և մեր մշակույթի տարբեր ոլորտներում ունեցած դերն ու նշանակությունը, այլազգի գործիչների ու հասարակական կազմակերպությունների կողմից վայելած հարգանքն ու համարումը մեծ չափով պայմանավորված էր Թումանյան-մար-

դու, գործչի ու բանաստեղծի անսահման մեծ հեղինակությամբ: Ամեն տարի միշտ միաձայն Թումանյանին ընկերության նախագահի պաշտոնում վերընտրելիս վարչության անդամները վստահ էին և չէին սխալվում, որ նա դարագլուխ է մեր գրականության պատմության մեջ, այն հազվագյուտ անհատներից մեկն է, որոնք միանգամից ու մեծ չափով բարձրացնում են ազգային մշակույթի արժեքը, նրա տեսակարար կշիռը:

Օրինաչափ էր հենց Թումանյանի նախագահությունը, քանի որ այդ շրջանի գրողներից ամենից շատ նա կարող էր աշխուժացնել հայ գրական կյանքը, որովհետև իր գրական-հասարակական բազմակողմանի գործունեությամբ եզակի տեղ է գրավում հայ մշակույթի, հասարակական մտքի պատմության մեջ: Հասարակական ցանկացած բնագավառի առնչվելիս Թումանյանը մատնանշում էր այդ ոլորտի ազգային զարգացման նորանոր ուղիներ, առաջ էր բերում նոր հոսանք և համընդհանուր աշխուժություն:

Օրինաչափ էր հենց Թումանյանի նախագահությունը, քանի որ այդ շրջանում ոչ ոք չէր կարող մրցել նրա հետ ազգային պարտքի մեծությամբ ու խորությամբ,էպիկական ուժով և թափով, ժողովրդի տարբեր խավերի մեջ թափանցելու, փոքրից մեծ բոլորի վրա ներգործելու զորությամբ, գրողներին համախմբելու, նրանց հավասարապես սիրելու և նրանց բոլորից սիրվելու իր բացառիկ ունակությամբ, որովհետև Թումանյանի հոգու մեծությունը անհուն էր, անեղը, տիեզերական:

*Տիեզերքում աստվածային մի*
*ճամբորդ է իմ հոգին...*
*Երկրից անցվոր, երկրի փառքին*
*անհաղորդ է իմ հոգին:*



# Հայ գրողների կովկասյան ընկերության կանոնադրությունը

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ-ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

*Թ Ի Ֆ Լ Ի Ս*

Էլէկտրատպ. Օր. Ն. Աղզանեանի, Պօլիցյ. 7

1912

*Թիֆլիսի նահանգական՝ Ընկերութիւնների վերաբերեալ խորհրդի 1912 թ. յունիսի 18-ին կայացրած օրագրական որոշման համաձայն «Հայ Գրողների Կովկասեան Ընկերութիւնը» մտցրած է ըէեստերում 180 համարի տակ, ներկայ կանոնադրութիւնը հաստատուած է և յիշեալ Ընկերութեան գործունէութիւնն սկսուելու համար արգելք չկայ: 1912 օգոստոսի 2:*

*Նահանգապետի փոխարէն*

*Փոխ-Նահանգապետ* **Ե. ՊԱՆՈՎ.**

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ-ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### *I. Ընկերութեան նպատակը.*

§ 1. *Հայ գրողների (հեղինակների, գիտնականների և լրագրողների Կովկասեան Ընկերութիւնը հետևեալ նպատակներն ունի.*

*ա. Իր անդամների նիւթական դրութեան բարւոքումը.*

*բ. Նրանց մտաւոր, բարոյական և գեղարուեստական զարգացման նպաստելը և*

*գ. Նիւթական փողադարձ օգնութիւն:*

§ 2. *Յիշեալ նպատակներին հասնելու համար ընկերութիւնն իրաւունք ունի՝*

*ա. Վարձել յարմար բնակարաններ, ձեռք բերել շարժական և անշարժ կայքեր իբրև սեպհականութիւն, այլև գիտնական, գրա-*

*կանական և դեղարուեստական երկերի հեղինակի իրաւունք և սեպհականացնել:*

*բ. Կազմակերպել ժողովներ, ներդործող օրէնսդրութիւնների պահպանութեամբ, քննելու ինչպէս յատուկ, այնպէս էլ ընդհանուր խնդիրներ՝ որոնք չօշափում են հայ գրողների շահերը:*

*գ. Պատշաճաւոր թոյլտուութեամբ բաց անել 1, բիւրօ իրաւական և բժշկական օգնութիւն հասցնելու, 2, տեղեկատու բիւրօ ընկերութեան անդործ անդամների համար աշխատանք գտնելու:*

*դ. Իննել իր անդամների կենցաղավարութիւնը, աշխատանքի պայմանները և կարիքները:*

*ե. Կազմակերպել հաշտարար միջնորդ դատարաններ փոխադարձ համաձայնութեամբ քննելու հրատարակիչների (և այն խմբագիրների, որոնք ունեն հրատարակչական շահեր) և գրողների միջև ծագած թիւրիմացութիւնները:*

*զ. Պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ հրաւիրել համաժողովներ, խորհրդակցութիւններ, թոշակներ հիմնել դպրոցական հաստատութիւններում, մրցանակ յայտարարել դիտական, գրական և դեղարուեստական երկերի համար:*

*է. Հիմնել յատուկ գրական ֆօնդ ընկերութեան անդամներին և նրանց ընտանիքներին միանուագ և մշտական նպաստ բաժանելու ինչպէս օժանդակութիւն կամ փոխառութիւն հետևեալ դէպքերում. ա). Հիւանդութեան, ծերութեան և ծայրահեղ կարիքի ժամանակ և բ). դիտական, գրական և դեղարուեստական կիսատ երկերն աւարտելու համար:*

*§ 3. Ընկերութիւնը, իր անդամների մտաւոր, բարոյական և դեղարուեստական զարգացման նպաստելու համար, պատշաճաւոր թոյլտուութեամբ և այս առարկայի համար ներդործող օրէնսդրութիւններով սահմանուած կանոնների պահպանութեամբ՝*

*ա. Կազմակերպում է մատենադարաններ, ընթերցարաններ, հասարակական դասախօսութիւններ, դիտական արշաւանքներ, համերգներ, ներկայացումներ, ընթերցումներ, դասընթացներ և զրուցատրութիւններ հանրակրթական և կեանքի այնպիսի ընթացիկ խնդիրներ պարզաբանելու համար, որոնք չօշափում են գրողների շահերը:*

և բ. Հրատարակում է, իր բերան թերթը, այս առարկայի համար ներգործող օրէնսդրութիւններով սահմանուած կանոնների պահպանութեամբ:

## II. Ընկերութեան կազմութիւնը եւ անդամների պարտականութիւնները

§ 4. Ընկերութեան անդամների թիւը սահմանափակուած չէ և սեռի խտրութիւն չի դրուում. անդամներն ընդունւում են Ընդհանուր ժողովից դաղտնի քուէարկութեամբ:

Ծանոթ. Ընկերութեան անդամ չեն կարող լինել անչափահաս աշակերտներ, դիւանորական ներգործական ծառայութեան մէջ գտնուող ստորին կարգի պինուորներ և իւնկերներ և իրաւունքների սահմանափակման դատապարտուած անձինք:

§ 5. Ընկերութեան անդամ լինել ցանկացողը յայտարարութիւն է տալիս այդ մասին Ընկերութեան վարչութեան. նոյնը անում է և Ընկերութեան ամեն մի անդամ, որ ուզում է դուրս գալ անդամութիւնից:

§ 6. Առանց յարգելի պատճառների 3 ամսուայ ընթացքում անդամավճար չը տուող անդամը Ընկերութիւնից հեռացած է համարւում, վերապահելով իրան իրաւնք նորից անդամագրուելու, պարտաւորուելով չվճարած անդամավճարը տալ Ընկերութեանը կրկին անդամագրուելիս:

§ 7. Ընկերութեան այն անդամները, որոնց գործունէութիւնը վնասում է Ընկերութեան նիւթական և բարոյական չահերին, հեռացւում են ընկերութիւնից ընդհանուր ժողովի 2/3 մեծամասնութեան որոշմամբ, երբ ներկայ են Ընկերութեան Թիֆլիս ապրող անդամների 2/3-ը, որը պարտաւոր է նախապէս լսել մեղադրուածի առաջ բերած բացատրութիւնը իրեն արդարացման համար:

Կողմերի պահանջմամբ կարելի է միջնորդ դատարան հիմնել խնդիրը քննելու համար:

§ 8. Ընկերութեան այն անդամները, որոնք թէ իրանց կամքով են հեռացել և թէ հեռացուած են, իրաւունք չունին Ընկերութեան տուած վճարը յետ պահանջելու:

§ 9. Իւրաքանչիւր անդամ ժողովի մեջ օգտւում է ձայնով և իրաւունք չունի այն ուրիշին յանձնելու:

## III. Ընկերութեան միջոցները.

§ 10. Ընկերութեան միջոցները կազմում են. ա, անդամական տարեկան 5-ական ռուբլի վճարները, որ տալիս են տարուայ սկզբին. բ, ընկերութեան կայքերի և ձեռնարկութիւնների եկամուտները, օրինակ. ամեն անդամ պատշաճաւուր իշխանութիւնից առանձնապէս թոյլատրուած դասախօսութիւնների, համերգների, ներկայացումների և թերթի հրատարակութեան եայլն, նոյնպէս և ընկերութեան դրամագլխի տոկոսները և դ, կամաւոր նուիրատուութիւններ:

§ 11. Ընկերութեան դումարները բաժանւում են՝ հիմնական և ընթացիկ դրամագլխների:

§ 12. Հիմնական դրամագլուխը կազմւում է այն աղբիւրներից ստացուած դումարների 25%-ից, որոնք յիշուած են III գլխի § 10-ի ա. բ. և գ. կէտերում, և ծախսւում է միայն ընդհանուր ժողովի 2/3 մեծամասնութեան որոշմամբ անհրաժեշտ նպատակներ բաշխելու, անշարժ կալուածք ձեռք բերելու և ուրիշ պետքերի համար, որոնք նախատեսուած են Ընկերութեան կանոնադրութեամբ:

§ 13. Ընթացիկ դրամագլուխը կազմւում է այն աղբիւրներից ստացուած դումարների 75%-ից, որոնք յիշուած են III գլխի § 10-ի ա. բ. և դ. կէտերում. և ծախսւում է ընդհանուր ժողովի (Հասարակ մեծամասնութեան) որոշմամբ նախահաշուի համաձայն պաշտօնական անձերի ռոճիկի, սովորական նպաստների և վոխատուութիւնների վրայ:

Ծանոթ. §§ 12 և 13-ի: Յատուկ նուիրատուիթիւնները դրծադրւում են համաձայն իրանց նշանակուիթեան:

§ 14. Ընկերուիթեան մէջ ստացուող գումարները չահեցողուիթեան համար պէտք է դրուին պետական վարկային հաստատուիթիւններից մէկում կամ պիտի փոխուին պետական կամ տէրուիթիւնից ապահովուած տոկոսաբեր թղթերի: Ընկերուիթեան գանձապահի մօտ առ ձեռն դրամ կարող է մնալ միմիայն ընդհանուր ժողովի որոշմամբ անհրաժեշտ մի գումար ընկերուիթեան ընթացիկ ծախսերի համար:

§ 15 Ընկերուիթեան այն գումարները, որ պոհւում են վարկային հիմնարկուիթիւններում, գանձապահը կարող է ստանալ վարչուիթեան նախագահի (կամ նրա փոխանորդի ) և վարչուիթեան անդամներից մեկի ստորագրուիթեամբ:

§ 16. Վարչուիթեան նախագահին իրաւունք է տրւում, անհրաժեշտ դէպքերում, վարչուիթեան թոյլտուիթեամբ, չարժական գումարներից նպաստներ տալ մինչև 100 ռուբլի, որի մասին նա զեկուցում է մօտակայ ընդհանուր ժողովին:

## IV. Ընկերութեան գործերի կառավարութիւնը:

§ 17. Ընկերուիթեան գործերի կառավարուիթիւնը յանձնւում է ընդ հանուր ժողովին և վարչուիթեան:

§ 18. Ընդհանուր ժողովը վճռում է բոլոր կարևոր գործերը. այն է՝ փոփոխում է կանոնադրուիթիւնը, հեռացնում է անդամներին, հաստատում է նախահաշիւը, հաշիւը և ինչպէս վարչուիթեան, այնպէս էլ վերաստուգող մասնաժողովի զեկուցումներն և առհասարակ միւս բոլոր հարցերն այս կանոնադրուիթեան սահմանում:

§ 19. Ընդհանուր ժողովները լինում են՝ հերթական, տարին մէկ անգամ, մարտ ամսից ոչ ուշ, վարչուիթեան նախաձեռնու-

թեամբ, և արտակարգ, որ դումարում է կարևոր դեպքերում վարչության նախաձեռնությամբ, վերաստուգող Յանձնաժողովի պահանջմամբ, կամ առնուազն 10 անդամի ցանկությամբ:

§ 20. Ընդհանուր ժողովները կանոնաւոր են համարւում երբ ներկայ են ժողովի ժամանակ Թիֆլիս գտնուած անդամների 1/3-ից ոչ պակաս: Եթե ընդհանուր ժողով չը կայանայ ընկերության անդամների օրինական թուի ներկայ չլինելու պատճառով, մի շաբաթից յետոյ նոր ժողով է հրաւիրւում, որ համարւում է օրինաւոր ինչքան անդամ էլ ներկայ գտնուի:

§ 21. Ընդհանուր ժողովներում բոլոր խնդիրները վճռւում են ձայների հաւասարակ մեծամասնութեամբ, բացի այն դէպքերից, երբ խնդիրը վերաբերում է կանոնադրութեան փոփոխութեան, անդամների հեռացման և հիմնական դրամադլխի դումարների ծախսելուն, երբ խնդիրը վճռելու համար անհրաժեշտ է ընկերութեան անդամների 2/3-ի ներկայութիւնը և ժողովի 2/3 մեծամասնութեան համաձայնութիւնը:

§ 22. Ընդհանուր ժողովը իր միջից ընտրում է Վարչութիւն 8 հոգուց բաղկացած և 3 փոխանդամ, իսկ գանձապահի պարտաւորութիւնը ժողովը ինքը դնում է վարչութեան անդամներից մէկի վրայ. մնացեալ պարտաւորութիւնները, ինչպէս օր. նախագահի, նախագահի օգնականի, քարտուղարի, վարչութեան անդամների և այլն, Վարչութեան անդամները բաժանում են իրանց միջ փոխադարձ համաձայնութեամբ: Վարչութեան անդամի հիվանդութեան, ժամանակաւոր բացակայութեան կամ հրաժարման դէպքում, նրա տեղը բռնում է փոխանդամը ձայների մեծամասնութեան կարգով: Ընկերութեան վարչութիւնը գտնւում է Թիֆլիս քաղաքում:

§ 23. Վարչութիւնը վարում է ընկերութեան բոլոր գործերը, հետեւելով ընդհանուր ժողովի ցուցմունքներին և տանելով նրանցից հրահանգներ, և առհասարակ իրագործում է ընդհանուր ժողովի որոշումները:

§ 24. Վարչութիւնն ընտրւում է 2 տարով:

Ծանոթ. Ընկերութեան գոյութեան առաջին տարին Վարչութեան անդամների 1/2-ը դուրս է գալիս վիճակով:

§ 25. Վարչութեան հեռացող անդամները կարող են վերընտրըւել:

§ 26. Վարչութեան նիստերը կայացած են համարւում, եթե բացի նախագահից ներկայ են առնուազն երեք անդամ:

§ 27. Վարչութեան ժողովներում բոլոր հարցերը վճռում են ձայների պարզ մեծամասնութեամբ:

§ 28. Վարչութիւնը պահում է մի մատեան բողոքների համար, որպիսին Վարչութիւնը քննում է մօտակայ նիստում և որոշում է կայացնում եղած բողոքների մասին: Վարչութեան այդ որոշումների մասին կարող են բողոքարկել ընդհանուր ժողովին:

Ընկերութեան իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի պահանջել այդ մատեանը ծանօթանալու:

§ 29. Դրամական հաշիւները վարում է գանձապահը Վարչութեան անմիջական հսկողութեամբ և համաձայն այն հրահանգի, որ կըմշակէ ժողովը այդ մասին:

## V. Ընկերութեան գործերի վերաապուգումը.

§ 30. Ընկերութեան դրամական գումարները, վաւերաթղթերը և մատեանները, ինչպէս նաև Վարչութեան հաշիւները, նախահաշիւը և գործունէութիւնը վերաստուգելու համար ընդհանուր ժողովը իր այն անդամներից, որոնք ընկերութեան գործերի կառավարութեան մէջ որև է պաշտօն չեն վարում, ընտրում է վերաստուգիչ յանձնաժողով երեք անդամից և երկու փոխանդամից բաղկացած:

§ 32. Վերաստուգիչ Յանձնաժողովն իրաւունք ունի հաշիւներն ստուգել իր հայեցողութեամբ, ընդհանուր ժողովի յանձնարա-

*րութեամբ, նոյնպէս և ընկերութեան առնուազն 10 անդամի պատճառաբանուած պահանջով:*

*§ 33. Ընկերութեան հաշիւը կազմւում է ամեն տարի և վերաստուգիչ Յանձնաժողովի ստուգելուց յետոյ՝ ներկայացւում է տարեկան ընդհանուր ժողովի հաստատութեան:*

*§ 34. Երբ հաշիւը հաստատւում է ընդհանուր ժողովից, տալւում է տեղական թերթերում և ծանուցւում անդամներին:*

## *VI. Ընդհանուր կանոնները.*

*§ 35. Ընկերութիւնը ունի կնիք իր անուան վերտառութեամբ:*

*§ 36. Ընկերութիւնն իրաւունք ունի ձեռք բերել անշարժ կալուածքներ, դրաւ դնել և ծախել այն, կնքել ամեն տեսակ պայմանագիրներ, կնքել առևտրական ձեռնարկութիւններ, այնպես էլ պաշտպանել իր իրաւունքները դատարանում ընդհանուր ժողովի կամ Վարչութեան որոշմամբ նշանակուած լիազօրների ձեռքով:*


*§ 37. Գործավարութեան մանրամասնութիւնները, հաշուէտուութեան կարգը և Վարչութեան ու վերաստուգիչ Յանձնաժողովի պարտաւորութիւնները սահմանւում են այն հրահանգներով, որ կազմւում է այս կանոնադրութեան սահմանում և հաստատւում ընդհանուր ժողովից:*

*§ 38. Յատկապէս ընկերութեան անդամների համար սահմանուած հիմնարկութիւնները, այն է՝ միջնորդ դատարանը, պարտք տալը, աշխատանք որոնելու բիւրօն և այլն, գործում են ընդհանուր ժողովից հաստատած հրահանգներով, որոնք կազմւում են այս կանոնադրութեան հիման վրայ:*

## *VII. Ընդհանուր կանոնները.*

*§ 93. Եթե անհրաժեշտ համարուի ընկերութիւնը փակել և վերջ դնել գործունէութեան, այդ խնդիրը վճռւում է երկշաբաթեայ*

*ընդմիջումով միմեանց յաջորդող ընդհանուր ժողովներում: Առաջին ժողովի (որին պէտք է ներկայ լինին ընկերութեան Թիֆլիս գտնուած անդամների առնուազն 1/3-ը) 2/3 մեծամասնութեան որոշմամբ դադարեցւում է ընկերութեան գործունէութիւնը և նրա աչխատանքները սահմանափակւում են գործերին վերջ տալով, որի համար ընտրւում է մի վակման մասնաժողով: Երկրորդ ժողովի որոշմամբ ընկերութեան գործունեութիւնը ընդհատւում է և վակման հետագայ գործողութիւնները կատարւում են համաձայն 1906 թուի ընկերութիւնների և միութիւնների վերաբերեալ ժամանակաւոր կանոնների երկրորդ մասի 29 և 32 յօդ. I բաժ. հիման վրայ:*



Վերնատան անդամները. նստած են՝ Ավետիք Իսահակյան, Ղազարոս Աղայան, Հովհաննես Թումանյան,
կանգնած են՝ Լևոն Շանթ, Դերենիկ Դեմիրճյան, 1903 թ.



Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Սեդրակ Թառայան,
Ալեքսանդր Շիրվանզադե, 1898 թ.



Հովհաննես Թումանյանը դերասան Կարապետ Գալֆայանի հետ, 1896 թ.



Ղազարոս Աղայան և Հովհաննես Թումանյան, 1902 թ.



Հովհաննես Կոստանյան, Հովհաննես Թումանյան,
Ավետիք Իսահակյան, 1901 թ.



# Ծանոթագրություններ

## Գրքում օգտագործված են հետևյալ հապավումները

*ԳԱԹ – Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան*

*ԳԳ – Գլխավոր գույքամատյան*

*ԹԹ – Թումանյանի թանգարան*

*ԹՖ – Թումանյանի ֆոնդ*

*ՀԳԿԸ ֆ – Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ*

*ՆԹ, ՀՋ – Նվարդ Թումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, 1987 թ.:*

*ՓԲ – Փաստաթղթերի բաժին*

## Բնագրի մեջ, փակագծերում նշվում են հետևյալ հրատարակություններից և մամուլից կատարվող մեջբերումները

*ԴԴ – Դերենեվիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, տասնչորս հատորով Ե., 1976-1987*

*ԵԼԺ – Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով. վիպագծերում հերթական հատորը և էջը. Երևան, 1988-1999:*

*ԹԺՀ – Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969 թ., վիպագծերում էջը:*

*Հ – «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, վիպագծերում միայն տարեթիվը և համարը:*

*Մ – «Մշակ» լրագիր, Թիֆլիս, վիպագծերում միայն տարե-*

թիվը և համարը:

ՈՒՀ – Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, գիրք 1-5, Երևան, 1964-1998 փակագծերում հերթական գիրքը և էջը:

## Ծանոթագրություններ

### Գլուխ ԱՌԱՋԻՆ

1. «Կռունկ» ամսագիր, Թիֆլիս, 1862, էջ 849:
2. «Երեսնամյակ Հայոց Բարեգործական ընկերության կովկասում 1881-1911», 1911, էջ 19:
3. Հր. Աճառյան, Հայոց գրականության պատմություն, Բ հրատ., Ա. մաս, Թիֆլիս, 1912, էջ 220:
4. Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հտ. 6, Ե., 1970, էջ 60:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում:
7. Լեո, Գր. Արծրունի, Թիֆլիս, հտ. 1, 1902, էջ 141:
8. «Տարազ», Թիֆլիս, 1893, N 18, մայիսի 2, էջ 286:
9. Այս մասին տես՝ Լ. Կարապետյան, «Նյութեր Հ. Թումանյանի հասարակական գործունեության» (Պատմա-Բանասիրական հանդես, Ե., 1979, N 3, էջ 147-154:
10. «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1892, N 4, ապրիլ, էջ 658:
11. Ա. Շահազիզյան, Հոբելյանի տարեդարձ Մոսկվա, 1893, էջ 7:
12. Ղազարոս Աղայան, Երկեր, հտ. 4, Ե., 1969, էջ 557:
13. ԹԹ, Նվարդ Թումանյանի արխիվ, բաժին 6/1, թղթ. 19, էջ 1:
14. Ա. Ինճիկյան, էջ 240:
15. Նույն տեղում, էջ 354:

*16. Համլիկ Աբեղյան «Թումանյանի ցարդ անծանոթ դրա-ռումները» հրատարակումը, ՈՒՀ, 4, 240-246:*

*17. Վարդգես Ահարոնյան, «Հովհաննես Թումանյան, Մարդը և բանաստեղծը», Բոստոն, 1936, էջ 136-141:*

*18. Ավ. Իսահակյան, երկերի ժողովածու 6 հատորով, Ե., 1979, հտ6, էջ 35:*

*19. Նույն տեղում, էջ 37:*

*20. Նույն տեղում, էջ 45:*

*21. «Լումա», ամսագիր, Թիֆլիս, 1905, 9-10 (նոյեմբեր-դեկ-տեմբեր), էջ 158:*

*22. «Տարազ» , Թիֆլիս, 1906, N 3,6:*

*23. «Վտակ», Թիֆլիս, 1908, N 51, 55:*

*24. «Մշակ» լրագիր, Թիֆլիս, 1908, N 228:*

*25. «Փայլակ» լրագիր, 1908, N 122: «Վտակ» լրագիր, Թիֆ-լիս, 1908, N 90:*

## Գլուխ ԵՐԿՐՈՐԴ

*1. «Ոստան», Կ. Պոլիս, 1912, Բ. եռամսյակ, էջ 466-467:*

*2.Հայ եկեղեցին դրերի գյուտը տոնում է հունիսի 14-ին, երբ այդ հանդեսը կատարվում է ի պատիվ «Սուրբ Թարգմանչացն մերոց՝ Սահակայ և Մեսրովբայ»: Հոկտեմբերի 13-ի տոնը Թարգ-մանչաց տոնն է, իսկ Թիֆլիսի հանճնաժողովը որոշումը կայացնե-լիս նկատի էր ունեցել Ալինյանի օրացույցը, որտեղ նշված է եղել տառերի գյուտի օրը՝ նոյեմբերի 26-ը (Հ, 1912, 149):*

*3. Լ. Կարապետյան, «Նյութեր Հովհաննես Թումանյանի հա-սարակական գործունեությունից», «Պատմա-բանասիրական հան-դես», Ե., 1979, էջ 15:*

*4. «Կանոնադրություն Հայ գլուղների կովկասյան ընկերու-թյան», Թիֆլիս, 1913, էջ 3:*

*5. «Հյուսիսափայլ» ամսագիր, Մոսկվա, 1862, ամսատետր 7, էջ 49:*

*6. «Կռունկ հայոց աշխարհին» , Թիֆլիս, 1862, հոկտեմ-*

բեր, էջ 855:

7. Ղ. Աղայան, Երկեր, հ. 4, Ե., 1969, էջ 549:

8. Վրթ Փափազյան, Գրականության մասին, Ե., 1962, էջ 47:

9. Նույն տեղում, էջ 172:

10. Ղ. Աղայան, Երկեր, հ. 3, Ե., 1963, էջ 191:

11. «Ընկեր», Թերթ, Թիֆլիս, 1911, N 4, 11, 13:

12. Շ. Հարությունյանի «Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրության մեջ նշված է սխալ ամսաթիվ՝ դեկտեմբերի 16/Ե., 1955, էջ 318:

13. ԳԱԹ (Ե. Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Հայ գրողների Կովկասյան ընկերության ֆոնդ, 265, այսուհետև տեքստում ՀԳԿԸ ֆ., և համարը, կամ Թումանյանի ֆոնդ (Թ ֆ և համարը):

14. Հետագա տարիներին վարչության անդամներ են ընտրվել Նիկոլ Աղբալյանը, Անուշավան Աբովյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Արշակ Ղազարյանը և ուրիշներ:

15. Թումանյանի այդ հոդվածը մենք առաջին անգամ հրապարակեցինք բանաստեղծի 125-ամյակի կապակցությամբ: Տե՛ս, «Հայաստանի Հանրապետություն» լրագիր, Ե., 1994, N 33, փետրվարի 19:

16. «Մշակ», 1914, N 21, 36, 52, «Հորիզոն», 1914, N 13, 19, ԳԱԹ, ՀԳԿԸ ֆ., N 43/2, 43/9:

17. «Հորիզոն» 1914, N 13, «Մշակ», 1914, N 36, ԳԱԹ, ՀԳԿԸ ֆ, N 43/9 (1914 թ. փետրվարի 20-ի օրագիր):

18. «Հորիզոն», 1914, N 19: Հեռագրում ասվում էր «...Թող հայտնի լինի, որ հայ ժողովուրդը հավիտյան պիտի պարտական մնա Թումանյանին: Ոչ մի հայհոյանք չպիտի կարողանա մթագնել մեր գրականության արևը: Նա կփայլի, քանի կենդանի է մեր ժողովուրդը և նրա մահից հետո ևս: Այդպես ահա ժամանակը կծաղրի մեր մամուլի անարգ թերիսղեսին»:

*[1]. Տե՛ս Մ. Աբեղյանի, Թ. Թորամանյանի և ուրիշների դասախոսությունների ծրագրերը. «Հորիզոն», 1916, NN 228, 235, 263, 290, նույն տեղում, 1917, NN 13, 23, 28, 39 և այլն: Երեկույթների տոմսը արժեր 40 կոպեկ, աշակերտների համար կամ անվճար էր կամ արժեր 10 կոպեկ, ուսուցիչների համար՝ 25: Տոմսերը հաճախ վաճառվել են «Ունիոն» ճաշարանում: Զեկուցումների համար դասախոսներին վճարվում էր սկզբում 10, հետո՝ 50 ռուբլի: Արտակարգ դեպքերում ավելի շատ: Վ. Բրյուսովին, օրինակ, վճարվել է 500 ռ.: Տե՛ս Բրյուսովի գրած ստացականը (ՀԳԿՀ ֆ, N 232):*

*[2]. Դասընթացներին մասնակցել ցանկացողների թիվը նույն տարում հասել է 600-ի. «Հորիզոն», 1916, NN 247, 116, 118, 124, 135, 141, 146, 158, 169, 181, 186,203, 208, 1917, N 93:*

*[3]. «Աշխատավոր» («Հառաջ»), 1919, N 47:*

*[4]. Նույն տեղում, 1920, N 24:*

*[5]. «Կարմիր աստղ», 1921, N 26:*

*[6]. Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Ե., 1987, էջ 242, այսուհետև՝ ՆԹ, ՀԶ, և էջը:*

*[7]. ԹԹ, նոր նյութեր, թղթ. 7: Այս, ինչպես և բազմաթիվ այլ նյութեր ու բանաստեղծի անձնական իրեր Թանգարանին էր անվճար տրամադրել Թումանյանի կրտսեր դուստրը՝ Թամար Թումանյանը, որը, իբրև իր հոր արժանի զավակ, իր անձնական միջոցներից հոգում էր Թանգարանի բազմաթիվ ծախսերը, կատարում էր Թումանյանական (և ոչ միայն) բազում միջոցառումների հետ կապված վճարումներ:*

*[8]. ԹԹ, Փ/Բ, N 3427:*

*[9]. ԹԹ, Նվ. Թումանյանի արխիվ, բաժին 6/1, թղթ. 20/37: «Վեմ», Ա., Փարիզ, 1933 թ. էջ 21:*

*[10]. ԹԹ, ՆԹ, ՀԶ, էջ 126:*

*[11]. «Գարուն» ամսագիր, Ե., 1984, N 4, էջ 14:*

*[12]. ՊԿՊԱ, ֆոնդ 205, 1դ. 528, էջ 22:*

*[13]. Նույն տեղում:*

[14]. Յանկացողները անդորրագրերը կարող էին ստանալ անձամբ Թումանյանից կամ գանձապահ Բորիս Երկայնաբազուկ-Արզումյանից: Թումանյանի նախագահած հանգանակիչ կոմիտեի անդամներն էին գաշնակից պետությունների դեսպանների կոմիտեի ներկայացուցիչ Ե. Յարոուն, իշխան Բորիս Երկայնաբազուկ Արզումյանը, քարտուղարն էր Տիգրան Հովհաննիսյանը: Գնդապետ Հասկելը իր ելույթներում հաճախ էր նշում, որ հայ որբերի ու գաղթականների վրա ծախսված գումարները մեծ մասամբ հավաքում, ուղարկում է Ամերիկայի հասարակ ժողովուրդը, բանվորն ու արհեստավորը, ողջ աշխատավորությունը: Ահա թե ինչու Թումանյանը առաջարկում է. «Ամեն մի հայ տուն պետք է իր վրա կամավոր ամսական տուրք վերցնի, ինչքան կարող է... Խոսքը կովկասյան հայության մասին է և առանձնապես Վրաստանի հայության:

Մեզ միայն կամավոր ամսական տուրքը կարող է ազատել էս սոսկալի դատապարտությունից, որ գալու է անխուսափելի: Ոչ ուրիշ ելք կա և ոչ էլ արդարանալու որևէ ճանապարհ» («Աշխատավոր», Թիֆլիս, 1920, N 16):

[15]. «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 1920, N 11 (83):

[16]. «Աշխատավոր», 1920, 55:

[17]. ԹԹ, ԳԳ (Գլխավոր գույքամատյան) 1070, Նոր նյութեր, թղթ. 42:

[18]. «Кавказское слово», 1918, 176, 22 августа.

[19]. «Աշխատավոր» (Հառաջ), 1919, N 80:

[20]. Նույն տեղում:

[21]. Նույն տեղում, N 105:

[22]. Նույն տեղում, N 113:

[23]. Նույն տեղում, N 124: Առաջին անգամ այս բանաձևը մենք հրապարակել ենք 1988 թ. հուլիսի 15-ին «Գրական թերթի» N 29-ում:

*[1]. Այդ նիստերի արձանագրությունների դժալի մասը պահվում են ԳԱԹ, ՀԳԿԸ ֆ, 41, 42/2, 42/5, 41, 43/20, 43/19, 43/23, 43/24, 57/1-2, 57/4:*

*[2]. «Հառաջ», Թիֆլիս, 1919, N 18:*

*[3]. «Աշխատավոր», 1920, N 72:*

*[4]. Նույն տեղում:*

*[5]. նույն տեղում, 1920, N 79:*

*[6]. Թումանյանը նույնը խոստանում է նաև Զոպանյանի մասին Իվեկյանի դասախոսության առթիվ ասված բացման խոսքում (1914, փետրվարի 6): Այս ելույթը մինչև օրս մնում է «Հորիզոնի» էջերում (Հ, 1914, 31):*

*[7]. Հայ նոր գրականության պատմություն 5 հատորով, հտ. 5, ե., 1979, էջ 65:*

*[8]. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հտ. 10, ե., 1962, էջ 475-476:*

*[9]. «Հառաջ», Թիֆլիս, 1919, N 39:*

*[10]. Նույն տեղում:*

*[11]. Հայ նոր գրականության պատմություն, հտ. 5, ե., 1979, էջ 139:*

*[12]. А. Бушмин, Наука о литературе, М., 1980, с. 37.*

*[13]. Թումանյանի պահանջով «Պատանի» հանդեսի խմբագրությունը կազմել էր երիտասարդ գրողների մի ցուցակ և ներկայացրել 1919 թ. հուլիսի 21-ին: Այդ ցանկում կային Ե. Չարենցի, Ստ. Զորյանի, Ա. Վշտունու, Պահարեի, Արմենուհի Տիգրանյանի և այլոց անուններ (ԳԱԹ, ՀԳԿԸ Ֆ, N 167/2):*

*[14]. ՆԹ, ՀՋ, էջ 131:*

*[15]. Նույն տեղում, էջ 132:*

*[16]. Гегель, Эстетика в 4-х тт, т.1, М., 1968, с. 57.*

*[17]. М. Храпченко, Горизонты художественного образа, М., 1981, с. 66.*

*[18]. А. Дремов, О художественном образе, Ս., 1961, р. 103.*

*[19]. М. М. Бахтин, Проблемы поэтики Достоевского,*

М., 1972, с. 325.

[20]. Նշված ընկերությունը «Общество для пособия нуждающимся литераторам и ученым» անվանումով հիմնվել է 1859 թ. Ա.Վ. Դրուժինինի, Ի.Ս. Տուրգենևի, Ն.Գ. Զերնիչևսկու ջանքերով: Այդ ֆոնդը օգնել էր Նադսոնին, Գարշինին, Ջանշիևին և այլ ռուս գրողների ու գրականագետների:

[21]. Նվիրատուների մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել ընկերության արխիվում (ԳԱԹ, ՀԳԿՀ Ֆ, 170, 40, 45/8, 59/9, 103/3, 41, 42/5, 59/4, 43/6, 97, 127):

[22]. Նվիրատուների անուններն ու գումարի չափը արձանագրվում էր ոչ միայն ընկերության արխիվում, այլև մամուլում, հատկապես «Հորիզոնի» էջերում, օրինակ՝ Հ, 1913, էջ 288, Հ, 1917, N 59:

[23]. Այս ամենի մասին տե՛ս ընկերության մուտքի ու ելքի մատյաններում (ՀԳԿՀ Ֆ, N 215), ստացականներում (նույն տեղում, NN 230, 231) օգնություն, փոխատվություն խնդրող դիմումներում (նույն տեղում, NN 100, 195, 43/7):

[24]. Վ. Տերյան, Երկեր, Ե., 1956, էջ 627:

[25]. Որպեսզի ասվածը չթողնի անհիմն հայտարարության տպավորություն, նշենք նման խնդրանքներ պարունակող պահպանված նամակներից միայն մի քանիսը, ԳԱԹ, Թ, 492, 847, 837, 739, 480, 6/84, 617, 762, 761, 1175, 1177, 1088, 1159, 1191 և այլն: Իսկ որքան նամակներ ու բանավոր խնդրանքներ չեն պահպանվել...

[26]. Գրեթե բոլոր հոդվածագիրները արժանին էին հատուցում Թումանյան-գրական գործչին ու հրապարակախոսին՝ գրողի համար կենսական կարևորության, սոցիալական հրատապ խնդիրները ժամանակին արծարծելու համար. Տե՛ս Հ, 1916 թ., NN 126, 127, 133, 152, 163, 144, 160, 115, նաև՝ Մ, 1916 թ., 120, 170, նաև Դ. Դեմիրճյան, Գրական ժառանգություն, հտ. 7, 1974, էջ 119:

[27]. Նույն տեղում, էջ 125:

[28]. Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 1969, N 2, էջ 21:

[29]. ԹԹ, Նոր նյութեր, թղթ. 7, ԳԳ, 1070): Այս խոստովանությունը Թումանյանը արել է Սայաթ-Նովայի ձեռագիր դավ-

թարը Հայաստանի լուսժողկոմին (Աշոտ Հովհաննիսյանի անունով) ուղարկելուց հետո, աշնանը:

30. «Նոր աշխատավոր», 1920, 3/75):

31. «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1913, NN 276, 277, 278:

32. Հ, 1915, N 82: Իրողությունն այն էր, որ Լեոն, սկզբում վստահելով Արմենյանի «Ճաշակին», սխալվել էր՝ կանխատես իր համաձայնությունը տալով Եղոյանի փոխադրությանը: Հենվելով այդ համաձայնության վրա՝ դերասանական ընկերակցությունը ծախսեր էր արել, որոնք առանց «Մելիքի աղջկա» բեմադրության չէին կարող հատուցվել: Եվ միայն ներկայացումից հետո արդյունքը Լեոյին չէր դոհացրել, և նա սկսել էր հրապարակայնորեն արտահայտել իր զայրույթն ու դժգոհությունը՝ դիմելով թե՛ Գրողների ընկերությանը և թե՛ դատարանին: Հեղինակային իրավունքի անձեռնմխելիության տեսանկյունից Լեոյին պարտավոր էին վարձատրել նրա պիեսի բեմադրության համար և այս հարցում Լեոն միանգամայն իրավացի էր:

33. Վարչության նիստերի մի շարք արձանագրություններ վկայում են, որ ընկերությունը զգալի ժամանակ է հատկացրել այդ հարցի քննությանը. ԳԱԹ, ՀԳԿԸ Ֆ, 44/6, 45/6, 44/7, 117):

34. Այդ վիճը ծավալվեց հիմնականում «Հորիզոնի» էջերում (Հ, 1916, NN 135, 137, 146, 147 և այլն):

## Գլուխ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1. Այս նամակը մեզ տրամադրել է բանասեղծ Լրտսեր դուստր, արժանահիշատակ Թամար Թումանյանը: Նամակը անթվակիր է, հավանաբար, գրվել է 1916 թ. վերջերին կամ 1917 թ. սկզբներին, քանի որ նամակում հիշատակվող Թումանյանի դատախոսությունը լեզվի մասին կայացել է 1916 թ. նոյեմբերի 25-ին: Տե՛ս ԹԹ, Ն. Թումանյանի արխիվ, բաժին 5, թղթ. 19:

2. ՆԹ, ՀԶ, էջ 109:

3. Նույն տեղում:

4. «Հորիզոն», 1914, N 95, 1915, N 60, 279, 1917, 5, 239, 1918,

1, 1919, 111. «Աշխատավոր» 1919, N 112, 123, «Հառաջ» , 1919, N37, «Նոր աշխատավոր», 1920, N 20, 92, 79, «Մշակ», 1920, N 58:

[5]. «Կարմիր աստղ» 1921, N 26:

[6]. «Նոր աշխատավոր», 1919, 215, 275:

[7]. «Աշխատավոր», 1919, N 97:

[8]. Նույն տեղում:

[9]. Նույն տեղում, N108-119:

[10]. ԳԱԹ, Դերենիկ Դեմիրճյանի ֆոնդ, N785:

[11]. «Հառաջ», 1919, NN 33, 36, 43, 44, 51, 54, «Աշխատավոր», 1919, NN 58, 60, 61, 65, 67, 73, 75, «Մշակ», 1919, NN 50, 51:

[12]. «Հառաջ», 1919, N 44:

[13]. «Աշխատավոր», 1919, N 58:

[14]. «Հառաջ», 1919, N 43:

[15]. «Աշխատավոր», 1919, N 61:

[16]. «Հառաջ», 1919, N 32:

[17]. Նույն տեղում, N 43:

[18]. Նույն տեղում:

[19]. «Հառաջ», 1919, N 43:

[20]. «Աշխատավոր», 1919, N 63:

[21]. ԳԱԹ, ՀԳԿԸ Ֆ, NN 97, 41, 215, 106/6, 213/8, 82, 213, 94, 90, 82, 205, 141, 106/4, 106/2-3, 106/10, 106/1

Հ, 1913, NN 92, 58, 98, 100, 109, 161, 277, 150, 225, 1914 թ. N 15, 22, 71, 84, 1915 թ., N 24, 1916 թ., NN 92, 288: 1917 թ., NN 32, 254: «Մշակ», 1916 թ., N 256: 1919 թ., N 54: «Աշխատավոր», 1919 թ., NN 47, 58, 80, 97, 238:

1920 թ., N 33 «Նոր աշխատավոր», 1920 թ., N 27/99, 38/110, 1919 թ., N 113

[22]. «Բաքու» լրագիր, 1916, N 282:

[23]. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, «Հայրենիքի ձայն» լրագիր, 1967, Հունվարի 15, N 3:

[24]. ԳԱԹ, Տիգրան Հովհաննիսյանի Ֆ, 264:

[25]. Այդ անհաջողության պատճառները հանգամանորեն տե՛ս Անուշավան Զաքարյան, «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920)», Ե., 1984:

[26]. «Արև» լրագիր, 1916, հունվարի 30, Բաքու:

[27]. Նույն տեղում, հունվարի 21:

[28]. "Кавказское слово", Тифлис, 1916, 15 января.

[29]. Տե՛ս Ն.Դ. Սոկոլովի նամակը Թումանյանին (1919 թ. փետրվարի 20), ԳԱԹ, ԹՖ, 984:

[30]. Туманян, соч. в 3 томах, Е., 1969. Հեռագրի պատճենը Հայաստան է ուղարկվել Ա.Վ. Խրապովիցկու՝ Նվարդ Թումանյանին Մոսկվայից հղված 1957 թ. հունվարի 16-ի նամակով: Հեռագիրը պահվում է Վ.Գ. Կորոլենկոյի թանգարանում՝ Պոլտավայում:

[31]. Հ, 1913 թ., 263, նաև ԳԱԹ, ՀԳԿԸ Ֆ, 82 (Հեռագրի տեքստը անդլերեն է, թարգմանությունն արվել է այդ օրերին «Հորիզոնի» աշխատակիցների կողմից:

[32]. ԹԹ, փ/Ր, ԹՖ, 3262:

## Վերջաբան

[1]. «Պատմա-Բանասիրական հանդես», Ե., 1978, N 3, էջ 181:

[2]. Նույն տեղում, էջ 181-192: Էդ. Ջրբաշյան «Հայ քննադատությունը 20-րդ դարի սկզբներին» հոդվածը:

[3]. Նույն տեղում, էջ 181:

[4]. А. Бушмин, Наука о литературе, М., 1980, с. 5.

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ


*Աբդուլ Համիդ 2-րդ – (1842-1918) – 40*

*Աբելյան Հովհաննես – (1865-1936) – 256, 258*

*Աբելյան Ներսես – լրագրող, ուսուցիչ – (1855- 1933) - 53*

*Աբեղյան Արտաշես – 55, 153, 162*

*Աբեղյան Հասմիկ – 308*

*Աբեղյան Մանուկ (1865-1944) – 103, 149, 150, 152, 191, 192, 210, 247, 288, 290, 310*

*Աբովյան Անուշավան – Թումանյանի մտերիմ ընկերներից - (1862-1936) – 31, 34, 310*

*Աբովյան Խաչատուր (1809-1948) – 22, 87, 89, 135, 157, 160, 198, 209, 226*

*Աբրահամյան Ռուբեն – 180, 190, 192, 207*

*Ագապյան Արշալույս – 158*

*Ադոլֆ Գուստավ – 22*

*Ադոնց Նիկողայոս (1871-1942) – 97*

*Ազատյան Ալ. – 67*

*Աթանասյան Աշոտ (Սալ-Ման) (1870-1941) – 54, 70, 102, 239, 251, 252,*

*Ալեքսանդրե Ջորջ – 274*

*Ալիխանով Կոստանդին – մեծահարուստ բանկային գործիչ – 213*

*Ալիխանյան Հ. Խաչակ (1876-1946) – 78*

*Ալիշան Ղևոնդ (1820-1901) – 151, 156, 257, 288*

*Ախվերդյան Գևորգ (1818-1861) – 138, 140, 141, 142, 144*

*Ահարոնյան Ավետիս (1866-1948) – 46, 49, 50, 67, 106, 172*

*Ահարոնյան Վարդգես (Վ.Մենակ) – 39, 166, 167, 168, 173, 174, 190, 207, 262, 308*

*Աղաբաբ Հակոբ (1875-1926) – 257*
*Աղայան Ղազարոս (1840-1911) – 24, 28, 32, 33, 35, 38, 39, 40, 41, 50, 51, 53, 54, 65, 66, 67, 70, 160, 209, 214, 308, 309, 310,*
*Աղայան Մուշեղ (1883-1966) – 270*
*Աղայան Մատթեոս – 255, 257*
*Աղանյան Գյուտ (1854-1919) – 24, 70, 151, 227, 247*
*Աղբալյան Նիկոլ (1875-1947) – 12, 35, 46, 50, 51, 81, 97, 103, 135, 137, 138, 139, 140, 142, 143, 144, 149, 157, 159, 164, 168, 171, 178, 179, 186, 187, 188, 194, 195, 207, 210, 220, 237, 238, 240, 241, 246, 247, 255, 263, 270, 273, 283, 286, 290, 310*
*Աճառյան Հրաչյա (1876-1953) – 20, 103, 308*
*Ամատունի Սահակ (1856-1917) – 206*
*Ամերիկյան Միհրդատ – 24*
*Ամիրյան Թ. – 269*
*Այգեկցի Վարդան – 137, 161*
*Այտնյան Արսեն (1825-1902) – 151, 288*
*Անանուն Դավիթ (1879-1943) – 233, 251*
*Անդրանիկ - տե՛ս Օզանյան Ա.*
*Անիչկով Ե. – 136*
*Անոփյան Ոնոփրիոս – 269*
*Առաքելյան Արամ – Թումանյանի Ներսիսյան դպրոցի դասընկերը, "Արև" (Բաքու) օրաթերթի և նրա հավելվածի դխտավոր խմբագիրը (1870-1933) - 30*
*Առաքելյան Համբարձում - հրատարակիչ, "Մշակի" խմբագիրը (1855-1918) - 55, 84, 86, 87, 88, 89, 90, 92, 94*
*Աստուր (Աստվածատրյան) Գևորգ - թարգմանիչ, բանաստեղծ (1868-1937) – 53, 144*
*Ասլյան Միսաք – Թումանյանի Ներսիսյան դպրոցի ուսուցիչներից (1860-1936) – 184*
*Ավետիսյան Մարգար - գրող, մանկավարժ (1880-1937) – 107, 234, 235, 242*
*Ավսարկիսով Ա. – 269*
*Ատրպետ (Մուրատյանց Սարգիս Մկրտչի) (1860-1937) - 69*
*Արամայիս – 218*
*Արտսխանյան Ավետիք – հրատարակիչ, "Մուրճի" խմբագիրը (1857-*

1912) – 24, 26, 27, 34, 63, 78, 79, 80, 208, 212
Արիստոտել (մ.թ.ա. 384-322) – 194, 200
Արիստոֆան (մ.թ.ա. 446-385) – 193
Արծրունի Գրիգոր (1845-1892) – 23. 24, 25, 27, 87, 153, 159, 164, 208, 308
Արծրունի Մեսրոպ Թարգմանիչ, թատերագիր (1847-1918) – 24, 25
Արծրունի Վահան (1857-1947) – 24
Արղության Երկայնաբազուկ Բորիս – 311
Արմենյան Արմեն - դերասան (1871-1965) – 227, 314
Արշակ - Էջմիածնի որբերից – 116
Արփիարյան Արփիար (1851-1908) – 20, 21
Ափինյան – 309

Բաբայան Գևորգ - 24
Բաբայան Լ. - 55
Բաբայան Սիմեոն – 269
Բագրատունի Արսեն (1790 - 1866) - 151, 288
Բալայան Սեդրակ – 33
Բախտին Միխայիլ – 203, 313
Բայրոն Ջորջ Գորդոն (1788 - 1824) – 40, 46, 47, 190
Բաչինջաղյան Գևորգ (1857 - 1925) – 41, 137, 139, 140, 144, 146, 149
Բարբյուս Անրի (1873 - 1835) – 275
Բարխուդարյան Արշակ – Թարգմանիչ – 31
Բարնով Վասիլի (1856 - 1934) – 256
Բելինսկի Վիսարիոն (1811 - 1848) – 194
Բերանժե Պիեռ Ժան (1780 - 1857) - 40, 217
Բերբերյան Հ. – 213
Բերբերյան Մինաս - (1871 - 1919) – 28, 153, 180, 185, 225, 247, 256, 283
Բյոռնս Ռոբերտ (1759 - 1796) – 217
Բոդլեր Շառլ (1821 - 1867) – 190
Բոցարիս Մարկոս (1790 - 1823) – 22
Բրայս Ջեյմս (1838 - 1922) – 274
Բրանդես Գեորգ (1842 - 1927) – 46, 47, 48
Բրյուսովա Իոաննա - 270
Բրյուսով Վալերի (1873 - 1924) – 109, 136, 151, 251, 260, 264, 265,266,

267, 268, 269, 270, 271, 311
Բունիաթյան Մ. – 80
Բուշմին Ալեքսեյ - 162, 286, 313, 317
Բուրչաքալյան Կ. – 67

Գալաջյան Տ. – 78, 262
Գալֆայան Կարապետ (1877 - 1945)– 37, 41
Գարշին Վսեվոլոդ (1855 - 1888) – 313
Գեգեչկորի Եվգենի (1880 – 1954) – 252
Գելեյշվիլի – 55
Գենջյան Հակոբ (Կարա-Դարվիշ) - 67, 70, 73
Գիգո - աշուղ – 141, 142
Գլադոլև - 55
Գյոթե Յոհան Վոլֆգանգ (1749 - 1832) – 40, 51, 217
Գյուզալյան Տ. - 78
Գոչ Մխիթար – 137, 161
Գոտիե Թեոֆիլ – 189
Գոտուա - 55
Գորդնեյ Դմիտրի – 252
Գորոդեցկի Սերգեյ (1884 - 1966) – 122, 174, 250, 251
Գրիբոեդով Ալեքսանդր (1795 - 1829) – 247, 255, 263
Գրիգոր - Էջմիածնի որբերից – 116
Գրիգորյան Լ. - 218
Գրիշաշվիլի Իոսեբ (1889 - 1966) – 146, 250, 256, 258
Գուլոյան Աբրահամ – 260, 262
Գևորգ - աշուղ – 262
Գևորգյան Մամիկոն – 29

Դաբաղյան Նորայր - Էջմիածնի որբերից – 117
Դանթե Ալիգիերի (1265 - 1321) – 193
Դավիթ Վարդապետ – 143
Դարվին Ջարլզ (1809 - 1882) - 217
Դեգվիչ Յուրի – 252
Դեմիրճյան Դերենիկ (1877 - 1956) – 32, 35, 36, 37, 39, 40, 41, 42, 46,

48, 50, 122, 137, 139, 140, 155, 158, 159, 168, 173, 183, 186, 193, 194, 197, 198, 201, 206, 207, 210, 214, 218, 219, 238, 246, 249, 256, 265, 266, 281, 285, 287, 289, 290, 310, 314, 315, 317

Դիաասամիճե Գրիգոր – 266

Դոդոխյան Գրիգոր – 269

Դոնսկոյ Դմիտրի – 22

Դոստոևսկի Ֆեոդոր (1821 - 1881) – 111, 262, 263

Դրեյֆուս Ալֆրեդ - 273

Դրյոմով Անատոլի - 197, 313

Դրուժինին Ալեքսանդր - 313

Դուբյան Պետրոս (1851 - 1972) – 157, 197

Եգյանց Կարապետ (1835 - 1905) – 23, 24

Եղոյան – 227, 314

Ենգիբարյան Գարեգին (1863 - 1920) – 213

Եսայան Զապել (1878 - 1937) – 175, 214, 288

Եվանգուլյանց Գևորգ - 24

Եվրիպիդես (մ.թ.ա. 480 - 406) – 40

Երզնկացի Կոստանդին (մոտ 1250 - 1314) – 161

Երզնկյան Արամայիս (1879 - 1938) - 55 - 207

Երիցյան Ալեքսանդր (1841 - 1902) – 25× 67

Երիցյան Վաղարշակ – տե՛ս Նորենց Վաղարշակ

Երմոլաև - 272

Զարդարյան Արիստակես (Ռուստեմ) (1864 - 1935) – 31, 32, 41, 63, 69, 70, 77, 80

Զարդարյան Ռուբեն (1874 - 1915) – 175, 241

Զաքարյան Անուշավան (1954) – 268, 316

Զոհրապ Գրիգոր (1861 - 1915) – 161, 169, 170, 171, 175, 186, 187, 188, 202, 203

Զոսիմա - 263

Զորյան Ստեփան (1890 - 1967) – 97, 250, 251, 285, 313

Էմին Մկրտիչ (1815 - 1890) – 26

*Էսքիլես (մ.թ.ա. 525 - 456) — 40*

*Թաղիադյան Մեսրոպ (1803 - 1858) — 20, 21*
*Թաղիանոսյան Երվանդ (1864 - 1948) — 233*
*Թամամչյան Ալեքսանդր — 214*
*Թամար Թագուհի (1160-ական թթ. կեսեր - 1213) — 217*
*Թառայան Սեդրակ (1862 - 1916) — 54, 262*
*Թերլեմեզյան Փանոս (1865 - 1941) — 41*
*Թիմուրյան Մ. — 22*
*Թյութունջյան Միհրան - էջմիածնի որբերից — 117, 125*
*Թոթովենց Վահան (1894 - 1937) — 72, 217*
*Թորամանյան Թորոս (1864 - 1934) — 97, 214, 310*
*Թորոսյան Ս. — 153, 247*
*Թոփչյան Բ. — 251*
*Թոփչյան Եղ. - 55*
*Թումանյան Աչխեն (1891 - 1968) —*
*Թումանյան Արտավազդ (1894 - 1918) - 242, 249*
*Թումանյան Թամար (1907 - 1989) — 8, 42, 120, 221, 311, 315*
*Թումանյան Նվարդ (1892 - 1957) - 29, 103, 119, 137, 184, 235, 242, 307, 308, 311, 315, 316*
*Թումանյան Մարիամ (1870 - 1947) — 32, 41, 46, 53, 54, 141*
*Թումանյան Սեդա (1905 - 1988) - 50*
*Թումանյան Տեր-Թադևոս (1854 - 1898) — 6*
*Թումանյան Ռոստոմ — Թումանյանի նշբայրը (1872 - 1916) - 90*
*Թումանյան Օլգա (1871 - 1971) - 50*

*Ժյուլ-Վեռն (1828 - 1905) — 195*
*Ժորդանիա Նոյ (1870 - 1953) - 252*

*Իբսեն Հենրիկ (1828 - 1906) — 217*
*Իզաբելլա - Իսպանիայի թագուհի (1830 - 1904) - 217*
*Իզմայիլյան Պողոս — 24*
*Իզմիրլյան Մատթեոս կաթողիկոս (1845 - 1910) - 86*
*Իզմիրյան Գրիգոր — 24*

*Ինճիկյան Արամ (1910 - 1975) – 11, 35, 38, 119, 308*
*Իսահակյան Ավետիք (1875 - 1957) – 32, 35, 36, 37, 39, 40, 41, 44, 49, 50, 51. 52, 97, 106, 149, 159, 161, 197, 287, 290, 309*
*Իփեկյան Գասպար (1881 - 1952) – 168, 171, 191, 207, 237, 240, 247*

*Լալայան Երվանդ (1864 - 1931) – 52, 53, 63, 69, 70, 79, 80, 81, 82, 94*
*Լացառս – 192*
*Լեյլի (Տեր-Մկրտչյան Փառանձեմ) (1892 - 1951) – 183*
*Լեո (Առաքել Բաբախանյան) (1860 - 1932) – 12, 19, 20, 24, 34, 35, 36, 41, 42, 46, 49, 63, 66, 68, 69, 70, 78, 87, 90, 97, 107, 109, 136, 139, 153, 154, 178, 179, 183, 185, 199, 200, 210, 214, 218, 226, 227, 238, 243, 246, 255, 257, 263, 268, 273, 283, 287, 290, 308, 314, 315*
*Լերմոնտով Միխայիլ (1814 - 1941) – 40*
*Լինչ Հենրի Ֆինիս Բլոս (1862 - 1913) – 255, 272*
*Լիսիցյան Ստեփան (1865 - 1947) – 70, 186, 190, 207, 237, 238, 240, 246*
*Լկոնտ դը Լիլ (1818 - 1894) – 189*
*Լյուիթես Գ. – 273*
*Լևոնյան Գարեգին (1872 - 1947) – 50, 173, 207, 251, 263*

*Խաժակ Գ. (Խաժակյան Գարեգին) (1867 - 1915) – 241*
*Խանզադյան Ծոլակ (1886–1935) – 77, 88, 97, 233, 264, 283*
*Խաչատրյան Արամ – 210*
*Խատիսյան Ալեքսանդր (1874–1945) – 55, 63, 220, 252, 266*
*Խատիսյան Գևորգ (Գիգա) (1878–1932) – 92, 225*
*Խնկոյան Աթաբեկ (1870 - 1935) – 97, 214, 257*
*Խոնդկարյան Արշավիր - դրոշ, թարգմանիչ - (1889 - 1957) – 164*
*Խոջիկ Հ. – 67*
*Խորենացի Մովսես – 135, 137, 154*
*Խորենի Վ. – 174, 251*
*Խրապովիցկի Ա. – 316*
*Խրապչենկո Միխայիլ – 196*
*Խրիմյան Հայրիկ (Մկրտիչ) (1820 - 1907) – 151, 209, 288*
*Խունդունց Հովսեփ - Ներսիսյան դպրոցի վերատեսուչ - 119*

*Ծատուրյան Ալեքսանդր (1865 - 1917) – 65, 76, 88, 162, 200, 247*
*Ծերեթելի Ակակի (1840 - 1915) – 255, 258*
*Ծերենց (1822 - 1888) – 153, 154, 246, 248*

*Կակաբիձե Ս. – 261*
*Կամենսկի Վասիլի – 191*
*Կանչելի Սանդրո – 252, 266*
*Կարամզին Նիկոլայ (1766 - 1826) – 23*
*Կարապետյան Լուսիկ (1921) – 12, 86, 308, 309*
*Կերն Աննա - 275*
*Կիրիլով – 263*
*Կլդիաշվիլի Դավիթ (1862 - 1931) – 257*
*Կոզլովսկի Լ. - 262*
*Կոլումբոս Քրիստափոր (1451 - 1506) – 217*
*Կոմիտաս (1869 - 1935) – 41, 241*
*Կոնիբեր Ֆրեդերիկ Կոռնելիևիչ (1851 - 1916) – 272*
*Կոռնել Պիեռ (1606 - 1684) – 217*
*Կոստանյան Հովհաննես – 76*
*Կովալևսկի Մաքսիմ – ռուս ազգագրագետ,իրավաբան (1857 - 1924) – 256*
*Կոտետաշվիլի Վ. – 258*
*Կորոլենկո Վլադիմիր (1853 - 1921) – 255, 272, 316*
*Կրասնեֆիլդ Վ. – 212*
*Կուրղինյան Շուշանիկ (1876 - 1927) – 183*

*Հազիրի - աշուղ – (1871 - 1922) 141, 142, 146, 270*
*Հախվերդյան Լևոն, (1924) – 119*
*Հակոբյան Հակոբ (1866 - 1937) – 53, 153, 183*
*Հակոբյան Պիոն (1826 - 2000) –*
*Հակոբյան Սիմոն - պրակտանագետ, լրագրող (1888 - 1937) – 283*
*Համբարձումյան Համազասպ (1880 - 1965) – 29*
*Հայկազյան Ծոլակ – 122*
*Հայնե Հայնրիխ (1797 - 1856) – 40, 190*
*Հայրիկ - Էջմիածնի որբերից – 116*
*Հասկել – 124, 311*

Հարությունյան Արշակ (1869 - 1936) – 70, 153, 178, 181, 237, 246
Հարությունյան Իսահակ (1863 - 1928) – 54, 122, 255
Հարությունյան Հ. –
Հարությունյան Շ. – 310
Հարությունյան Սամսոն (1869 - 1944) – 53, 77, 213
Հարությունյան Տիգրան –
Հաֆիզ Խորեզմի – (14 դարի երկրորդ կես – 15 դարի առաջին կես) - 262
Հեգել Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ (1770 - 1831) – 196, 313
Հերակլ Երկրորդ Թագավոր – 143
Հերակլես – 262
Հեքիմյան Սրապիոն (1832 - 1892) – 21
Հյուգո Վիկտոր (1802 - 1885) – 217
Հովհաննիսյան Աբգար (1849 - 1904) – 24, 25, 53
Հովհաննիսյան Աշոտ (1887 - 1972) - 314
Հովհաննիսյան Հայկ – 151
Հովհաննիսյան Հովհաննես (1864 - 1929) – 38, 76, 97, 106, 159, 162, 207. 214, 233, 246, 254
Հովհաննիսյան Տիգրան (1865 – 1921) – 32, 63, 69, 70, 103, 107, 139, 178, 201, 213, 219, 233, 238, 240, 264, 311, 316
Հովսեփյան Գարեգին – 53
Հրաչյա (Ազնիվ Մինասյան) (1853 - 1920) – 257
Հումբոլտ Վիլհելմ (1767 - 1835) – 192

Ղազանճյան Ա. – 173
Ղազարյան Արշակ – 155, 157, 164, 201, 240, 263, 310
Ղազարյան Գառնիկ (1888 - 1960) – 183
Ղարաջյան Գևորգ (1861 - 1936) - 53
Ղափանցյան Գրիգոր (1887 - 1957) – 104
Ղլտճյան Աբսեն (Սիմեոն) (1868 - 1944) – 30, 31
Ղուկաս կաթողիկոս (Ա. Կարնեցի) (1722 - 1799) – 143

Ճալճավաճե Իլյա (1837 - 1907) - 254
Ճուղուրյան Հարություն (1864 - 1938) – 158, 207

*Մալխասյան Ստեփանոս (1857 - 1947) – 239*
*Մալումյան Խաչատուր (1860 - 1915) – 24, 67*
*Մալումյան Ս. – 54*
*Մակինցյան Պողոս (1844 - 1937) – 88, 179, 180, 200, 235, 267, 283*
*Մամուրյան Մատթեոս (1830 - 1901) –151, 288*
*Մանանդյան Հակոբ (1873 - 1952) – 233*
*Մանդինյան Սեդրակ (1844 - 1915) – 74*
*Մանվելյան Լևոն (1864 - 1919) – 33, 97*
*Մաշադի Մահմադ Ֆարզալի –262*
*Մաշտոց Մեսրոպ – 309*
*Մառ Նիկոլայ (1864 - 1934) – 60, 103*
*Մասեհյան Հովհաննես (1864 - 1931) – 274*
*Մատենյան Մամբրե (1880 - 1920) – 103, 153, 155, 156, 157, 162, 163, 164, 165, 166, 169, 170, 171, 173, 175, 186, 189, 190, 193, 202, 203, 207, 212, 237, 238, 246, 247, 260, 268*
*Մարտիրոսյան Ռուբեն – 146*
*Մելիքյան Համբարձում (1861 - 1932) – 77, 213*
*Մելիք-Ազարյան Ալեքսանդր - ուսուցիչ – 53*
*Մելյան Մեսրոպ (քահանա) – 62*
*Մելոյան Գարեգին (1884 - 1939) – 218*
*Մենակ Վ. (տե՛ս Ահարոնյան Վ.)*
*Մեսյան Գևորգ (1883 - 1937) - 52*
*Մեսրոպ Եպիսկոպոս (Տեր-Մովսիսյան) (1864 - 1939) – 146*
*Մետեռլինկ Մորիս (1862 - 1949) – 174*
*Միսակ - Էջմիածնի որբևրից – 116*
*Միսակ - 218*
*Միտասար – 218*
*Միրզա Հյուսեին խան Քեմալի – 262*
*Միրզա Թաղի խան – 261*
*Միրիմանյան Հարություն - 22*
*Միցկևիչ Ադամ (1798 - 1855) – 40*
*Միքայելյան Կարեն (1885 - 1941) – 115, 116, 117*
*Միքելանջելո Բուոնարոտի (1849 - 1904) – 198*
*Մկրտչյան Լևոն (1933 - 2001) – 263*

*Մճեդիլիչվիլի – 250*
*Մյասնիկյան Ալեքսանդր (1886 - 1925) – 243*
*Մնակյան Մարտիրոս - դերասան, թատերական գործիչ (1837 - 1920) – 257*
*Մնացական - Էջմիածնի որբերից – 116*
*Մոլիեր Ժան-Բատիստ (1622 - 1673) – 217*
*Մռավյան Ասքանազ (1885 - 1929) – 173, 207*
*Մուրադյան Նահապետ – 114*
*Մուրացան (1854 - 1908) – 33, 66*

*Յարճանյան – տես Սիամանթո*
*Յարո (Հարո) (Ամերիկյան հանգանակիչ կոմիտեի նախագահ) – 124*

*Նաբոկով Վլադիմիր (1899 - 1977) – 212*
*Նադորսկի – 55*
*Նազոն Սեմյոն (1862 - 1887) – 313*
*Նազարեթյան Արամ – ուսուցիչ, Թումանյանի ընկերներից – 32, 33*
*Նազարյան Ստեփանոս (1812 - 1979) – 19, 20, 24, 66, 159*
*Նազարյան Տիգրան – "Աղբյուր" ամսագրի և "Տարազ" շաբաթաթերթի խմբագիր (1858 - 1926) – 54, 74*
*Նալբանդյան Միքայել (1829 - 1866) – 20, 23, 24, 109, 153, 154, 247, 275*
*Նակաշիձե Իլյա (1866 - 1923) - 260, 261, 266*
*Նավասարդյան Բագրատ – Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության հիմնադիր (1852 - 1934) – 21, 54, 59*
*Նար-Դոս (1867 - 1933) – 63, 67, 69, 106*
*Նարեկացի Գրիգոր (951 - 1003) – 137, 149, 160, 266, 316*
*Ներսիսյան Ջավահիր (Ջավո) – 44*
*Նիզամի Գյանջևի (1141 - 1209) - 262*
*Նիցշե Ֆրիդրիխ (1844 - 1900) – 40*
*Նորենց Վաղարշակ (Երիցյան Վաղարշակ) (1903 - 1967) – 117, 125*

*Շախհաթունյան Արշավիր (1885 - 1957) – 157*
*Շախովսկի Կ. – 269*
*Շահազիզ Սմբատ (1841 - 1907) – 24, 26, 27, 28, 70, 308*
*Շահազիզյան Երվանդ (1856 - 1951) - 28*
*Շահազիզյան Սիմեոն – 24, 28*

*Շահինյան Գ. – 183*
*Շահլամանյան Դավիթ (Դաթիկո) – Թումանյանի ընկերը – 30, 31*
*Շահնազարյան Արշակ (1872 - 1942) – 158*
*Շահվերդյան Վարդան (1872 - 1941) –*
*Շահվերդյան Վասիլ – 24*
*Շամչինյան Հարություն – 254*
*Շանթ Լևոն (1869 - 1951) – 32, 35, 37, 39, 40, 41, 42, 44, 46, 50, 51, 67, 97, 106, 161, 174, 191, 237, 238, 239, 240, 241*
*Շելլի Պերսի Բիշի (1792 - 1822) - 40*
*Շեստով Լև (Շվարցման Լև) (1866 - 1938) – 55*
*Շեքսպիր Վիլյամ (1564 - 1616) – 6, 40, 109, 192, 201, 217, 247, 273, 274, 275*
*Շիլլեր Ֆրիդրիխ (1759 - 1805) – 51, 190, 192*
*Շիրվանզադե Ալեքսանդր (1858 - 1935) – 12, 32, 33, 53, 63, 66, 68, 69, 70, 73, 74, 97, 106, 129, 155, 161, 163, 164, 165, 166, 173, 210, 214, 220, 240, 247, 290, 313*
*Շնորհալի Ներսես (1101- 1173) – 137*
*Շտայնթալ Հայման (1823 - 1899) – 192*

*Զալխուչյան Գրիգոր (1861 - 1937) – 66, 154, 162, 268*
*Զարենց Եղիշե (1897- 1937) – 12, 222, 288, 307, 313*
*Զերնիշևսկի Նիկոլայ (1828 - 1889) – 313*
*Զմշկյան Գևորգ (1837 - 1915) - 24*
*Զոպանյան Արշակ (1872 - 1954) – 62, 66, 161, 190, 313*

*Պալասանյան Ստեփան (1837 - 1889) – 24, 25*
*Պահարե (Պետրոսյան Հայկ) (1895 - 1968) - 183, 251, 313*
*Պանով Ե. – 79*
*Պատկանյան Ռաֆայել (1830 - 1892) – 22, 23, 38, 155, 156, 157, 160, 170, 208, 308*
*Պատկանյան Քերովբե (1833 - 1889) - 22*
*Պարթև Սահակ – 309*
*Պարոնյան Հակոբ (1843 - 1891) – 176*
*Պեշիկթաշլյան Մկրտիչ (1828 - 1868) – 20, 21, 256, 258*
*Պիճեկյան – 55*

Պլատոն Արիստոկլես (մ.թ.ա 428 - 348) – 200
Պողոս Նուպար փաշա (1851 - 1930)- 251, 252
Պոպովյան Ալեքսանդր – 225, 251
Պոտեբնյա Ալեքսանդր (1835 - 1891) – 192
Պուշյան Պերճ (1837 - 1907) – 24, 25, 33, 41, 53, 66, 67, 70, 160, 209
Պրեսանսե Ֆրանսիս – 255, 273
Պրյուդոմ Սյուլլի (1839 - 1907) – 190
Պուգաչով Եմելյան (1742 - 1775) – 23
Պուշկին Ալեքսանդր (1799 - 1837) – 43, 270
Ջալալյանց Ռ. – 24
Ջամալյան Արշակ – 165, 191
Ջամալյան Մարտիրոս – ուսուցիչ – 112, 113
Ջամի (1414 - 1492) – 262
Ջանչիև - 313
Ջավախեցի (Տեր-Գրիգորյան Ղազար) (1874 - 1937) - գյուղապիր, Վ.Տերյանի եղբայրը – 218
Ջավահիր (Ջավո) – տես՝ Ներսիսյան Ջավահիր
Ջավահիր – Ռաֆֆու քույրը – 214
Ջիվելեգով Ալեքսեյ (1875 - 1952) – 269
Ջրբաշյան Էդվարդ (1923 - 1999) - 5, 6, 7, 8, 119, 172, 177, 282, 284, 317

Ռազին Ստեփան (1630 - 1671)– 23
Ռամիշվիլի Ն. – 252
Ռասին Ժան (1639 – 1699) – 217
Ռեմզ Ուիլյամ – 272
Ռոբակիձե Գրիգորի -266
Ռուսթավելի Շոթա (12-րդ դար) - 217, 261
Ռուսինյան Նահապետ (1819 - 1876) – 21
Ռուստեմ – 262

Սաադի (1203–1292) - 262
Սալ-Ման – տես Աթանասյան Աշոտ
Սայադ ուլ Մյուլք – 261
Սայաթ-Նովա (1712 –1795) - 38, 41, 89, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 161, 178, 212, 247, 266, 270, 288, 314

*Սասունցի Դավիթ - 262*
*Սենկևիչ Հենրիկ (1846 –1916) – 40, 256, 258*
*Սերվանտես Միգել Սաավեդրա դե (1547–1616) - 109, 247, 273, 275*
*Սիամանթո (1878–1915) - 97, 161, 168, 172, 175, 184, 214, 241, 287, 290*
*Սիմե - 275*
*Սիմեոն կաթողիկոս (Ա.Երևանցի) (1710 - 1780)– 143*
*Սիմոնյանց Մ. – 24*
*Սիրունի Հակոբ (Ճոլոլյան) (1890 - 1973)– 172*
*Սկոտ Վալտեր (1771–1932) - 274*
*Սմիթ – 275*
*Սևի (աշուղ) - 262*
*Սևումյան Հովհաննես (1878 –1920) - 257*
*Սոբոլևսկի – 255*
*Սոլովյան Հովակիմ – 168, 173, 186, 190, 201, 283*
*Սոկոլով Նիկոլայ – 252, 316*
*Սողոմոն - Էջմիածնի որբերից – 116*
*Սոուտհամտոն – 217*
*Սոֆոկլես (մ.թ.ա. 496–406) - 40*
*Սպենդիարյան Ալեքսանդր (1871–1928) - 244*
*Սպենսեր – 192*
*Ստեպելտներ – 275*
*Ստեփանյան Մկրտիչ – 145*
*Սրվանձտյան Գարեգին (1840–1892) - 209*
*Սուլթանշահ Աննանիա (1832–1898) - 23*
*Սուլթանով Էյնալի բեկ – 260*
*Սունդուկյան Գաբրիել (1825 –1912) - 21, 24, 25, 153, 155, 164, 187, 188, 193, 208, 240, 246*
*Սուրենյան Վարդգես (1860–1921) - 60*
*Սուրխաթյան Հարություն (1882–1937) – 97, 171, 172, 174, 175,183, 185, 199, 239, 251, 273, 283*
*Վլսլաչյան Վ. – 71, 111, 207, 246, 260, 262, 263*
*Վամբեր – 272*
*Վանցյան Գրիգոր (1870–1908) - 30, 53, 78*
*Վարդազարյան Փիլիպոս (1858–1935) - 31, 32, 33, 41, 44, 70, 78*

Վարդանյան Գրիգոր (1868–1938) – 68
Վարդանյան Միքայել – 268
Վարդանյան Փիլիպոս (1842–1916) -
Վարդանյան Ցլորա (1881–1842) - 239
Վարուժան Դանիել (1884–1915) - 161, 172, 173, 174, 175, 214, 241, 250, 287
Վեռլեն Պոլ (1844–1896) - 174
Վեսելովսկի Ալեքսանդր (1838–1906) - 192
Վեսելովսկի Իվան – 271
Վեսելովսկի Յուրի (1872–1919) – 156, 269
Վերհառն Էմիլ (1855–1916) – 270
Վերմիշյան – 136
Վիլյամս Անյուրին – 274
Վշտունի Ազատ (1894–1958) – 190, 207, 214, 252, 313
Վորոնցով-Դաշկով Իլարիոն (1837–1916) – 27

Տաբիճե Տիցիան (1895–1937) – 252
Տել Վիլհելմ - 22
Տեն Հիպոլիտ (1828–1893) – 180
Տեր-Ավետիսյան Սմբատ - 251
Տեր-Ավետիքյան Ստեփան (1868–1837) - գրող – 143, 158, 207
Տեր-Գրիգորյան Էմին – թատերագիր – (1855–1939) - 25
Տեր-Գրիգորյան Հովհաննես – 246
Տեր-Գևորգյան Հակոբ -
Տեր-Գևորգյան Վ. – 102
Տեր-Դավթյան Գևորգ (1850–1934) - 255
Տեր-Հովհաննիսյան Խաչատուր – 248, 256
Տեր-Հովնանյան (Սայադյան) Արշալույս – 68
Տեր-Միրաքյան Հովհաննես (1856–1938) – 218 - 239
Տեր-Մկրտչյան Կարապետ (1866–1915) – 86
Տեր-Մովսիսյան Բագրատ –
Տերյան Վահան (1885–1920) - 12, 41, 77, 88, 97, 106, 107, 137, 161, 166, 167, 168, 170, 173, 183, 184, 207, 214, 242, 243, 247, 287, 290, 314
Տերտերյան Արսեն (1882–1953) – 239
Տիգրանյան Արմեն (1879–1950) – 137, 183, 252, 270

Տիգրանյան Արմենուհի - 313
Տյուզ Հակոբ - 19
Տոլստոյ Լև (1828–1910) - 43, 111, 201
Տոտոմյանց Վահան (1875–1952) – 269
Տուրգենև Իվան (1818–1883) - 313

Րաֆֆի (1835–1888) – 24, 25, 67, 153, 154, 155, 159, 160, 179, 188, 214, 246, 248
Ցուլուկիձե Մ. – 260

Ուայլդ Օսկար (1856–1900) – 174

Փափազյան Վրթանես (1866–1920) – 12, 33, 38, 41, 66, 97, 106, 214, 247, 257, 287, 290, 310

Քաթիպա Գամառ – տես՝ Պատկանյան Ռաֆայել
Քալանթար Ալեքսանդր - "Մշակի" խմբագիր, հրատարակիչ (1855–1913) - 55
Քալանթար Աշհարաբեգ Լոռու (1884–1942) – 55, 103
Քալաշյան Գ. – 269
Քանանյան Գևորգ (1836–1897) – 22
Քաջազնունի Հովհաննես (1868–1938) – 32, 50, 195, 196, 197, 199
Քիսո Պիեռ – 273
Քիշմիշյան Ալեքսանդր (1843–1914) – 24
Քյուֆեճյան Հակոբ - 172
Քուչակ Նահապետ – 161

Օգանեզաշվիլի Ալեքսանդր (1889–1932) – 262
Օզանյան Անդրանիկ (1865–1927) – 115, 126, 128, 251, 252
Օհանջանյան Հ. – 257
Օհանջանյան Ռ. – 233
Օհանջանյան Սաթենիկ – 119, 120, 256
Օմար Խայամ (1040–1123) – 262
Օտյան Երվանդ (1869–1926) – 106
Օտրեպև - 23

Ֆեթվաճյան Արշակ (1866–1947) – 207

Ֆիրդուսի Աբուլղասիմ (մոտ 940–1020 կամ 1030) – 217, 262
Ֆոն Կրեսս - Գերմանական պատվիրակության ղեկավար, գեներալ - 128
Ֆրանցյան Ե. – 232, 239
Ֆրանկելչտեյն - գեներալ – 129

# Բովանդակություն


ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ ..... 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 9

**Գլուխ ԱՌԱՋԻՆ**

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՄԻՆՉԵՎ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ..... 15

1. Հայ հասարակական ընկերությունների պատմությունից ..... 17
2. Գրական միավորումներ ստեղծելու փորձեր ..... 21
3. Հովհաննես Թումանյանը Հայ գրողների կովկասյան ընկերության նախապատրաստական շրջանում ..... 28

**Գլուխ ԵՐԿՐՈՐԴ**

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ..... 57

**Գլուխ ԵՐՐՈՐԴ**

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ..... 95

1. Գրողների ընկերության դերը հայ ազգային-հասարակական կյանքում ..... 97
2. Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ..... 108

**Գլուխ ՉՈՐՐՈՐԴ**

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 133
1. Հայ հին և նոր գրականության հարցեր ..... 135
2. Ժամանակի գրական ընթացքը ..... 161
3. Գրական քննադատության, գրականության տեսության և գեղարվեստի մի քանի հարցերի մասին ..... 176
4. Հայ գրական ընդհանուր-հանազգային լեզվի մշակման հարցի շուրջ ..... 104
5. Գրականության պաշտպանություն ..... 211

Գլուխ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ..... 229
1. Գրողների միավորման համազգային արձագանքները ..... 231
2. Մշակութային կյանքի ուղիներում կամ հոբելյանների մասին ..... 243
3. Հայ գրական կապերի պատմությունից ..... 259

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 293

ՎԵՐՋԱԲԱՆ ..... 277

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 305

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ..... 318

1500 гг.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220092394

Ա II
92394

## Սուսաննա



ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հյուսիսային համալսարանի հայ և ռուս բանասիրության ամբիոնի վարիչ:

Ծնվել է 1955 թ., Երևանում: Ավարտել է Երևանի Րաֆֆու անվան դպրոցը (1972), Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության բաժանմունքը (1979), հասարակական մասնագիտությունների բաժանմունքը (1979) գերազանցությամբ՝ ստանալով բանասերի և արվեստագետի որակավորում: Աշխատել է Հովհաննես Թումանյանի թանգարանում, Երևանի պետական, Ճարտարագիտական, Հյուսիսային համալսարաններում որպես գիտաշխատող և դասախոս: 1980 թ. ընդունվել է ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1986 թ.: Գիտահետազոտական աշխատանքները տպագրվում են 1981-ից: Հեղինակ է տասնյակ գիտական հոդվածների՝ նվիրված հայ քննադատական մտքի պատմությանը, մասնավորապես Սայաթ-Նովայի, Նիկոլ Աղբալյանի, Գրիգոր Զոհրապի, Դերենիկ Դեմիրճյանի գրական ժառանգությանը: Գրականագիտական նախասիրություններում առանձնահատուկ տեղ ունեն Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը: Հ. Թումանյանի մասին շուրջ 50 տպագիր գիտական հոդվածների, ուսումնասիրությունների և հրապարակումների հեղինակ է: Հայտնաբերել և գիտական շրջանառության մեջ է դրել Հ. Թումանյանի մի շարք ստորագրված և անստորագիր հոդվածներ, կազմել և ծանոթագրել է նրա երկերի գիտական լիակատար ժողովածուի 8-րդ հատորը, ինչպես նաև Թումանյանի կյանքի յոթ տարվա տարեգրությունը:

«Հայոց լեզու և խոսքի մշակույթ» առարկայի ծրագրային ուսումնամեթոդական դրույթներ» գիտամեթոդական ձեռնարկի հեղինակն է (Ե., 2006):

Ամուսնացած է, ունի երեք երեխա: